**Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների մասին**

Սույն հրապարակմամբ ներկայացվում է ՀՀ կառավարության 2011թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները փաստաթուղթը, որը ներառում է 146 միջոցառում և 93 գերակա խնդիր:

Ծրագրում հստակ նշված են յուրաքանչյուր միջոցառման անվանումը, նպատակը, կատարման պատասխանատու մարմինը, ժամկետը և ֆինանսավորման աղբյուրը:

Կռավարության գործունեության միջոցառումների ծրագիրը համադրվել է Հայաստանի Հանրապետության նախագահի նախընտրական ծրագրի հետ, յուրաքանչյուր միջոցառում և գերակա խնդիր ներկայացված է համապատասխան հիմնավորումով, դրանք ամփոփված և ներկայացված են առանձին հավելվածներում:

Կատարման վերահսկողությունն իրականացնում է ՀՀ կառավարության աշխատակազմը: Հասարակական վերահսկողություն և հրապարակայնություն ապահովելու նպատակով փաստաթուղթը տեղադրված է նաև ՀՀ կառավարության պաշտոնական կայքում (www.gov.am):

ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության
և հասարակայնության հետ կապերի վարչություն

Տնտեսական բարեփոխումների վերլուծական-
տեղեկատվական կենտրոն

13 հունվարի 2011 թվականի N 111 - Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174 հրամանագրի 21-րդ, 22-րդ, 23-րդ և 25-րդ կետերին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը  ո ր ո շ ու մ  է.

1. Հաստատել`

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը` համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի գերակա խնդիրները` համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների հիմնավորումները` համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի գերակա խնդիրների հիմնավորումները` համաձայն N 4 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. փետրվարի22
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունվարի 13-ի N 111-Ն որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Կատարողը | Համակատարողը | Ժամկետը | Ֆինանսա-կան ապահո-վումը | Հղում |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| **ՀՀ տարածքային կառավարման նախարարություն** | | | | | | |
| 1. «Սոցիալական աջակցու-թյան (ծառայությունների) բնա-գավառում համայնքի ղեկավարին պետության պատվիրակած լիազորության իրականացման մասին» Հայաստանի Հանրապե-տության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավա-րություն ներկայացնելը | տեղական ինքնակառավար-ման մարմիններին պետության պատվիրակած լիազորություն-ների իրականացման կարգերի և չափորոշիչների սահմանում, որոնք կնպաստեն տվյալ բնագավառում համայնքի կողմից մատուցվող ծառայու-թյունների որակի բարձրաց-մանը | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | մայիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ Սահմանա-դրության 107-րդ հոդված, «Տեղական ինքնակառա-վարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված, ՀՀ կառավա-րության 2008 թվականի հուլիսի 24-ի N 878-Ն որոշման ծրագրի 4.2.2-րդ բաժնի 8.2 –րդ կետ |
| 2. «Տեղական ինքնակառավարման մարմինների | տեղական ինքնակառավար-ման մարմինների կողմից | ՀՀ տարածքային կառավարման | | մայիսի 3-րդ | Ֆինանսա-վորում չի | ՀՀ կառավա-րության 2008 |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| կողմից ընդունվող իրավական ակտերի մշակման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավա-րություն ներկայացնելը | ընդունվող իրավական ակտերի տեսակների ներկայիս բազմազանության վերացում, համայնքների ղեկավարների աշխատակազմերում միասնական գործավարության ամրապնդում | նախարարություն | | տասնօրյակ | պահանջվում: | թվականի հուլիսի 24-ի N 878-Ն որոշման ծրագրի 4.2.2 –րդ բաժնի 6.2-րդ կետ |
| 3. «Համայնքների խոշորաց-ման և միջհամայնքային միավո-րումների ձևավորման հայեցա-կարգի վերջնական լրամշակված տարբերակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանա-գրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորում-ների ձևավորման հայեցակարգից բխող համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի իրա-կանացում, որը կնպաստի համայնքների կողմից ֆինան-սական միջոցների առավել օպտիմալ և նպատակային օգտագործմանը, ինչպես նաև համայնքների կառավարման արդյունավետության բարձրացմանը | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | հունիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավա-րության 2008 թվականի հուլիսի 24-ի N 878-Ն որոշման ծրագրի 4.2.2-րդ բաժնի 7.1-ին կետ |
| 4. «Տեղական ինքնակառա-վարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նա-խագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի համագործակցության գործունակ մեխանիզմների ներդրում, ինչը կնպաստի տեղական ժողովրդավարության ամրապնդմանը | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | հուլիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարու-թյան 2008 թվա-կանի հուլիսի 24-ի N 878-Ն որոշման ծրագրի 4.2.2-րդ բաժնի 2.1-ին կետ |
| 5. «Բնակչության տեղաշարժի պետական կարգավորման | բնակչության տեղաշարժի պետական կարգավորման | ՀՀ տարածքային կառավարման | | հոկտեմբերի 1-ին | | ՀՀ Նախագահի 2009 թ. մայիսի 6- |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| հայեցակարգի իրականացումն ապահովող գործողությունների ազգային ծրագրի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավա-րություն ներկայացնելը | հայեցակարգից բխող պետական շահագրգիռ մարմինների գործողու-թյունների և դրանց իրակա-նացման ժամկետների սահմանում | նախարարության միգրացիոն պետական ծառայություն | | տասնօրյակ | | ի ՆԿ-68-Ա կարգադրու-թյամբ հաստատված ԵՀՔ-ԵՄ գործողություն-ների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թթ. միջոցառումների ցանկի 88.Գ.34 տող և ՀՀ կա-ռավարության 2010 թ. ապրիլի 8-ի N 419-Ն որոշման հավելվածի միգրացիոն պետական ծառայության 4-րդ բաժնի միջոցառումների 1-ին կետի «բե ենթակետ |
| 6. «Տեղական տուրքերի և վճարների հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավա-րություն ներկայացնելը | տեղական տուրքերի և վճարների գանձման միասնական համակարգի ներդրում | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | ՀՀ կառավարու-թյան 2008 թվա-կանի հուլիսի 4-ի N 878-Ն որոշ-ման ծրագրի 4.2.2-րդ բաժնի 5.3-րդ կետ |
| 7. «Հայաստանի Հանրապե-տության Գեղարքունիքի մարզի | տարածքային զարգացածու-թյան անհամաչափությունների | ՀՀ տարածքային կառավարման | | դեկտեմբերի 3-րդ | դոնոր կազմակեր- | ՀՀ կառավարու-թյան 2008 թվա- |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 2012-2015 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | և անհամամասնությունների հաղթահարման նպատակով ծրագրի մշակում, մարզի զարգացման նպատակով ոչ միայն միջոլորտային և ներոլորտային, այլև տարածքային զարգացման համամասնությունների արտացոլում | նախարարություն | | տասնօրյակ | պություններ | կանի հուլիսի 24-ի N 878-Ն որոշման ծրագրի 4.2.2-րդ բաժնի 4-րդ կետ |
| 8. «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի 2012-2015 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տարածքային զարգացածության անհամաչափությունների և անհամամասնությունների հաղթահարման նպատակով ծրագրի մշակում, մարզի զարգացման նպատակով ոչ միայն միջոլորտային և ներոլորտային, այլև տարածքային զարգացման համամասնությունների արտացոլում | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | դոնոր կազմակերպություններ | ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N 878-Ն որոշման ծրագրի 4.2.2-րդ բաժնի 4-րդ կետ |
| 9. «Քաղաքաշինության բնագավառում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացման կարգերի և չափորոշիչների սահմանում, որոնք կնպաստեն տվյալ բնագավառում համայնքի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ Սահմանադրության 107-րդ հոդված, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված, ՀՀ կա-ռավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N 878-Ն որոշման ծրագրի 4.2.2-րդ բաժնի 8.1-ին կետ |
| **ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն** | | | | | | |
| 10. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 | Փոփոխությամբ կկանոնակարգվեն ներտնային | ՀՀ էներգետիկայի և բնական | | մարտի 1-ին | «ՀայՌուսգազարդ | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| թվականի հոկտեմբերի 29-ի N 1843-Ն որոշման մեջ փոփոխու-թյուններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշ-ման նախագիծը ՀՀ կառավարու-թյուն ներկայացնելը | գազասպառման համակարգի ծխատար ուղիների անվտանգ շահագործման դրույթները: | պաշարների նախարարություն | | տասնօրյակ | ՓԲԸ սեփական միջոցներ | |
| 11. «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Փոփոխությամբ կհստակեցվի արևային թանկ էլեկտրական էներգիայի պարտադիր` 15 տարվա ընթացքում գնման պարտավորությունը: | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | ապրիլի 1-ին տասնօրյակ | Լրացուցիչ ֆինանսա-վորում չի պահանջվում: | 2001 թվականին ընդունված «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետ |
| 12. «Հայաստանի Հանրապե-տության կառավարության 2004 թվականի մայիսի 6-ի N 669-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախա-գիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ ընդերքի մասին երկրա-բանական և այլ տեղեկա-տվության պահպանության կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու արդյունքում կլրացվի նաև երկրաբանական առաջնային նյութերի հանձնման և պահպանման կարգը | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | մայիսի 1-ին տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մաս |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 13. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի N 1055-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական գրանցման և հաշվառման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու արդյունքում կպարզեցվի ընդերքօգտագործման իրավունքի գրանցման մասին տեղեկանքի ձևը և տալու գործընթացը: | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | հունիսի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 6-րդ հոդվածի առաջին մասի 10-րդ կետ և 19-րդ հոդված |
| 14. «Հայաստանի Հանրապետությունում գործող էլեկտրաէներգետիկական ոլորտի տեխնիկական կանոնակարգերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | փոփոխական հոսանքի 400 կՎ լարման էլեկտրական ցանցերի նախագծման, կառուցման, վերակառուցման և շահագործման անհրաժեշտ դրույթների ներառում էլեկտրաէներգետիկական ոլորտի մի շարք տեխնիկական կանոնակարգերում, Իրան - Հայաստան նոր ԷՀԳ-ի կառուցման նորմատիվային բազայի ստեղծում՝ համահունչ ԵՄ-ի նորմերին | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | հուլիսի 1-ին տասնօրյակ | «ԲԷՑԷ ՓԲԸ սեփական միջոցներ | |
| 15. «Կենցաղային գազի սարքերի էլեկտրաանվտանգության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կապահովի կենցաղային գազի սարքերի էլեկտրական անվտանգության աստիճանի բարձրացում՝ այն համահունչ դարձնելով ԵՄ-ի նորմերին և շրջաբերականներին: | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | օգոստոսի 1-ին տասնօրյակ | «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ սեփական միջոցներ | |
| 16. «Գործող և հեռանկարային | Սեփականության տարբեր | ՀՀ էներգետիկայի և | | դեկտեմբերի | էներգահա- | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| Էլեկտրաէներգետիկական համակարգի կայունության ապահովման և համակարգային հակավթարային ավտոմատիկայի գործողության սկզբունքների ու հարաչափերի որոշման մեթոդիկայի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ձևերով կազմակերպությունների համար կստեղծվի միացյալ մեթոդիկա, ինչը թույլ չի տա առանձին կազմակերպությունների յուրովի մոտեցում ցուցաբերել սույն կարևորագույն խնդրին: | բնական պաշարների նախարարություն | | 1-ին տասնօրյակ | մակարդի կազմակերպությունների սեփական միջոցներ | |
| 17. «Ավելացված արժեքի հարկի մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կապահովի նոր կառուցվող միջուկային էներգաբլոկի ներդրումների համար նպաստավոր պայմաններ, և ներդրողների համար կսահմանվեն հարկային արտոնություններ: | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկ(ներ)ի կառուցման մասին» ՀՀ օրենք |
| 18. «Իրան-Հայաստան նավթամթերքատարի վերաբերյալ նախագծման, կառուցման և շահագործման նորմաների հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կապահովի Իրան-Հայաստան նավթամթերքատարի վերաբերյալ նախագծման, կառուցման և շահագործման նորմատիվային դաշտի ստեղծումը: | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ 2010 թվականի հունվարի 23-ին կայացած նիստի N 02/11.3/[30874]-10 արձանագրության 3-րդ կետի «զ» ենթակետ |
| **ՀՀ բնապահպանության նախարարություն** | | | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 19. «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Գործող օրենքի 3-րդ հոդվածի 1-ին ենթակետով սահմանված` Կարմիր գրքի կենդանատեսակների որսի և (կամ) ոչնչացման դեպքում կենդանական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների համապատասխանեցում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն որոշմամբ հաստատված` ՀՀ կենդանիների նոր Կարմիր գրքում ընդգրկված կենդանիների ցանկերին (ցանկերում ընդգրկված տեսակների և դրանց անվանումների ճշտում): Այդ նկատառումներով խնդրո առարկա ենթակետից կհանվեն կենդանիների այն տեսակները, որոնք ներկայումս հանվել են ՀՀ կենդանիների Կարմիր գրքից և կավելացվեն այն տեսակները, որոնք ներառվել են ՀՀ կենդանիների նոր Կարմիր գրքում: | ՀՀ բնապահպանության նախարարություն | | հունիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ վարչապետի 2010 թ. ապրիլի 7-ի N 229-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 4-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 20. «Հայաստանի Հանրապետության տարածքում տեխնածին աղտոտված հողերի մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տեխնածին աղտոտված հողերի որակի ուսումնասիրության և գնահատման հստակ, համապարփակ մեթոդաբանության առկայություն, որը կապահովի հողերի որակի և բաղադրության լիարժեք և մանրազնին ուսումնասիրություն՝ մոնիթորինգի ցուցանիշներին և քիմիական աղտոտվածության՝ ըստ ինդիկատորների (չափորոշիչների) գնահատման սանդղակին համապատասխան, ինչպես նաև տեղեկատվական բանկի ստեղծման հնարավորություն | ՀՀ բնապահպանության նախարարություն | | հուլիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2006 թ. մայիսի 18-ի N 19 արձանագրային որոշում, ՀՀ կառավարության 2007 թ. փետրվարի 15-ի N 191-Ն որոշում |
| 21. «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2012 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների կատարման ապահովում, այդ թվում՝ Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության, հիդրոկենսաբանական, հիդրոօդերևութաբանական, ինժեներաերկրաբանական մոնիթորինգի իրականացման, շրջակա միջավայրի մոնիթորինգի բարելավման, ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման, ձկան և | ՀՀ բնապահպանության նախարարություն | | օգոստոսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մաս |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| | խեցգետնի պաշարների հաշվառման, աղբավայրերի բարեկարգման և անխափան աղբաթափման, արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության, «Սևանե ԱՊ գիտական ուսումնասիրությունների և անտառատնտեսական աշխատանքների, ինչպես նաև Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնմանը, պահպանությանը, վերարտադրմանն ու օգտագործմանն ուղղված այլ միջոցառումների կատարման ապահովում | | | | | |
| ՀՀ ֆինանսների նախարարություն | | | | | | |
| 22. «Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակական և արժութային սահմանափակումները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակական և արժութային սահմանափակումներ | ՀՀ ֆինանսների նախարարություն | | դեկտեմբերի 1-ին տասնօրյակ | | ՀՀ կառավարության 2008 թ. հուլիսի 24-ի «ՀՀ կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագրի «4.4.2. Սոցիալական պաշտպանությունը» բաժնի 3-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 23. «Աուդիտի միջազգային ստանդարտները հրապարակելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավա-րություն ներկայացնելը | թարգմանված և հրապարակ-ված աուդիտի միջազգային ստանդարտներ | ՀՀ ֆինանսների նախարարություն | | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ասիական զարգացման բանկ և (կամ) այլ դոնոր կազմակեր-պություն | ՀՀ կառավա-րության 2008 թ. հուլիսի 24-ի «ՀՀ կառավարության 2008-2012 թվա-կանների գործու-նեության միջո-ցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշմամբ հաս-տատված միջո-ցառումների ծրագրի «4.3.2. Գործարար և ներդրումային միջավայր» բաժնի 5-րդ կետ |
| **ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն** | | | | | | |
| 24. «Արտակարգ իրավիճակ-ների հետևանքով բնակչությանը պատճառված վնասի գնահատման և փոխհատուցման կարգը հաստա-տելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավա-րություն ներկայացնելը | արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած բնակչությանը պետության կողմից ցուցաբերվող աջակցության ապահովում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն | ապրիլի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «զ» ենթակետ, ՀՀ վար-չապետի 2010 թվականի հուլիսի 26-ի N 588-Ա որոշ-մամբ հաստատ-ված ցանկի 5-րդ կետ |
| 25. «Քաղաքացիական պաշտ-պանության տեսանկյունից` | պատերազմի ժամանակ հատուկ, կարևորագույն | ՀՀ արտակարգ | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | սեպտեմբերի 3-րդ | Ֆինանսա-վորում չի | «Քաղաքացիա-կան պաշտպա- |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| բնակավայրերի գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում և գոտևորման նախագծերում հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների գործունեության կայունության ապահովման և նպատակահարմար տեղաբաշխման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | նշանակություն ունեցող օբյեկտների խոցելիության նվազեցման ապահովում | իրավիճակների նախարարություն | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | տասնօրյակ | պահանջվում: | նության մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «բ» կետ, ՀՀ վարչապետի 2010 թվականի հուլիսի 26-ի N 588-Ա որոշմամբ հաստատված ցանկի 8-րդ կետ |
| 26. «Կառավարման, կապի ու ազդարարման համակարգերը հիմնելու և դրանց բնականոն գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման, բնակչության և կառավարման մարմինների ազդարարման գործընթացի ապահովում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Քաղաքացիական պաշտպանության մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետ, ՀՀ վարչապետի 2010 թվականի հուլիսի 26-ի N 588-Ա որոշմամբ հաստատված ցանկի 9-րդ կետ |
| 27. «Պաշտպանական կառույցների շինարարության և ապահովման կարգը սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | բնակչության պատսպարման միջոցառումների կազմակերպման գործընթացի ապահովում | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Քաղաքացիական պաշտպանության մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «բ» կետ, ՀՀ վարչապետի 2010 թվականի հուլիսի 26-ի N 588-Ա որոշմամբ հաստատված ցանկի 10-րդ կետ |
| **ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն** | | | | | | |
| 28. «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան | հանրապետության մարզադպրոցների, մարզական | ՀՀ սպորտի և երիտասարդության | - | ապրիլի 3-րդ | ՀՀ պետական բյուջե | ՀՀ կառավարության 2008 թվա- |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | քոլեջների, մարզաձևերի ազգային ֆեդերացիաների և այլ մարզական հասարակական կազմակերպությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդում, ժամանակակից մարզագույքով և մարզասարքերով ապահովում | հարցերի նախարարություն | | տասնօրյակ | | կանի հուլիսի 24-ի N 878-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 4.4.5-րդ բաժնի 1-ին կետի 1.15-րդ ենթակետ |
| **ՀՀ սփյուռքի նախարարություն** | | | | | | |
| 29. «Սփյուռքի երիտասարդության Հայաստան պարբերական այցելությունների՝ «Արի տուն» 2011 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | 1) սփյուռքահայ երիտասարդության ծանոթացում իրական հայրենիքի հետ, նրանց մեջ ազգային արժեքային համակարգի սերմանում, ազգային ինքնագիտակցության զորացում, իրենց հասակակիցների հետ ծանոթությունների հաստատում.<br>2) Հայաստան-սփյուռք կապերի սերտացում, զբոսաշրջության խթանում | ՀՀ սփյուռքի նախարարություն | ՀՀ տարածքային կառավարման նախարարություն<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ մշակույթի նախարարություն<br>ՀՀ առողջապահության նախարարություն<br>ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br>ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | փետրվարի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե<br>ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ | ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Երևանի քաղաքա-պետարան (համաձայնությամբ) | | | |
| 30. «Համահայկական մասնագիտական համաժողովների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ծրագիրը հնարավորություն կտա հայտնաբերելու և գնահատելու սփյուռքի մասնագիտական ներուժը, ձևավորելու միասնական կառուցակարգեր, ինչպես նաև ի հայտ բերելու հայրենիքում և սփյուռքում այդ ներուժի օգտագործման հնարավորությունները: | ՀՀ սփյուռքի նախարարություն | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br>ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա<br>Երևանի պետական համալսարան | մարտի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե<br>ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ | ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշում |
| 31. «Սփյուռքի զարգացման հեռանկարները գլոբալացվող աշխարհում» թեմայով միջազգային համաժողովի կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Միջոցառումը կնպաստի սփյուռքը որպես հասկացություն ընկալմանը, տվյալ երկրում նրա գործունեության, իրավունքների ու պարտականությունների ապահովմանը՝ դրա վերաբերյալ ՄԱԿ-ի կողմից հնարավոր փաստաթղթի ընդունմամբ: Նախատեսվում է ընդունել համաժողովին մասնակից՝ սփյուռք ունեցող պետությունների ներկայացուցիչների հայտարարություն՝ ուղղված միջազգային կառույցներին: | ՀՀ սփյուռքի նախարարություն | ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա | մարտի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե<br>ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ | ՀՀ կառավարության 2009 թ. օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշում |
| 32. «ԱՊՀ տարածաշրջանի հայ համայնքների կրթա-մշակութային | Հայաստան - ԱՊՀ հայ համայնքների գործակցության խթանում, | ՀՀ սփյուռքի նախարարություն | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | սեպտեմբերի 3-րդ | ՀՀ պետական բյուջե | ՀՀ կառավարության 2009 թ. |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| խնդիրների լուծմանն օժանդակության ծրագրի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | այդ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն օժանդակության ապահովում | | ՀՀ կրթության և գիտության նախարարություն<br>ՀՀ մշակույթի նախարարություն<br>ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարություն | տասնօրյակ | ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ ֆինանսական աղբյուրներ | օգոստոսի 20-ի նիստի N 34 արձանագրության 29-րդ կետով հավանության արժանացած «Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշում |
| **ՀՀ առողջապահության նախարարություն** | | | | | | |
| 33. «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները Հայաստանի Հանրապետությունում ներդնելու և դեղերի շրջանառության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոններով սահմանված պահանջների տեղայնացման միջոցառումների իրականացում | ՀՀ առողջապահության նախարարություն | | փետրվարի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2010 թ. նոյեմբերի 25-ի «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները հաստատելու մասին» N 1603-Ն որոշման 3.1-ին կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 34. «Հոգեբուժական կազմակեր-պությունում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին» ՀՀ կառավա-րության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | սանիտարական նորմերին և հիգիենիկ նորմատիվներին հա-մապատասխան, գիտականորեն հիմնավորված արդյունքների հիման վրա, հոգեբուժական բժշկական հաստատություն-ներում բուժվող` հոգեկան խանգարումից տառապող անձանց օրական սննդի, ինչպես նաև հանդերձանքի, հիգիենիկ պարագաների չափերի և դրանց շահագործման առավելագույն ժամկետների սահմանում | ՀՀ առողջապահու-թյան նախարարություն | | մարտի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | «Հոգեբուժական օգնության մա-սին» Հայաստանի Հանրապետու-թյան օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ կետ |
| 35. «Մարդու վերարտադրողա-կան առողջության և վերարտադրո-ղական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի վերանայում, որով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակների ու բժշկա-կան գործելակերպի սահմա-նումը լիազոր մարմնի փոխա-րեն կվերապահվի ՀՀ կառա-վարությանը` նկատի ունենա-լով այն հանգամանքը, որ կարգով պետք է կարգավորվեն նաև փոխնակ և կենսաբա-նական մոր անաշխատունա-կության ժամանակահատ-վածի, նպաստների, ծննդի գրանցման հետ կապված առանձնահատկությունները, որոնց կարգավորումը ՀՀ կառավարության իրավասու-թյունների շրջանակում է | ՀՀ առողջապահու-թյան նախարարություն | | ապրիլի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | |
| 36. «Հայաստանի Հանրապե-տության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 15-ի N 2121-Ն | Կիրառմշակվեն ՀՀ կառավարու-թյան 2005 թվականի նոյեմբերի 15-ի N 2121-Ն որոշման պա- | ՀՀ առողջապահու-թյան նախարարություն | | ապրիլի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հանջները՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության և եվրոպական մոտեցումներին համապատասխան, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ ապահովելու կենսաբանական անվտանգության հարցերը: | | | | | |
| 37. «Արյան և արյան բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | արյան և արյան բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության ազգային ծրագրի հաստատում, որով կսահմանվեն արյան անհրաժեշտ պաշարների հավաքագրման մեթոդներն ու եղանակները, արյան և դրա բաղադրամասերի անվտագության և որակի ապահովման միջոցառումները, արյան դոնորության վերաբերյալ քարոզչության միջոցառումները, փոխներարկումային բժշկական օգնության անվտանգության և որակի ապահովման միջոցառումները և ոլորտի զարգացմանն ուղղված այլ միջոցառումներ | ՀՀ առողջապահության նախարարություն | | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 38. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | հիվանդությունների ցանկի վերանայում` անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի հատկացման բարելավում, ինչպես նաև անվճար կամ արտոնյալ պայմաններով ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատությունների միջոցով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի վերանայում | ՀՀ առողջապահության նախարարություն | | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | |
| 39. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ բնակչությանը մատուցվող արյունաբանական, փոխներարկումային և մանկաբարձագինեկոլոգիական ծառայությունների մասնագիտական որակավորման և տեխնիկատեխնոլոգիական պահանջներին համապատասխան մակարդակների աստիճանակարգում | ՀՀ առողջապահության նախարարություն | | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | - |
| 40. «Արյան, դրա բաղադրամասերի պահպանման և տեղափոխման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | արյան, դրա բաղադրամասերի` բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում պահպանման ռեժիմները, պատասխանատուներին, պահպահման ժամկետներին, կարգին, ինչպես նաև տեղափոխման եղանակներին, միջոցներին, կարգին ներկայացվող պահանջները | ՀՀ առողջապահության նախարարություն | | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 41. «Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի ռազմավարական ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կհաստատվի վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի համալիր և համապարփակ ծրագիր, որի արդյունքում կիրականացվեն վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործընթացների արդիականացումը և համապատասխանեցումը միջազգային, այդ թվում՝ նաև Եվրամիության պահանջներին, ապահովելով Հայաստանի բնակչության լիարժեք պաշտպանությունը վարակիչ հիվանդություններից: | ՀՀ առողջապահության նախարարություն | | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի նիստի N 44 արձանագրային որոշման «Ռազմավարական ուղղություններ» 3-րդ բաժնի 1-ին ռազմավարության 1-ին կետ |
| 42. «Արյան, դրա բաղադրամասերի շրջանառության ոլորտում կիրառվող բժշկական փաստաթղթերի ձևերը և դրանց լրացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | արյան, դրա բաղադրամասերի շրջանառության ոլորտում կիրառվող բժշկական փաստաթղթերի ցանկի, ձևերի, լրացման կարգի և փաստաթղթերը վարելու ընթացակարգին ներկայացվող պահանջների սահմանում | ՀՀ առողջապահության նախարարություն | | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | |
| 43. «Դեղերի, սննդային և կենսաակտիվ հավելումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | դեղերի, սննդային և կենսաակտիվ հավելումների շրջանառության ոլորտի հարաբերությունների՝ ժամանակակից իրողություններին և պահանջներին համապատասխան օրենսդրական կարգավորում, մասնավորապես, դեղերի ստեղծման, գրանցման և հետգրանցումային | ՀՀ առողջապահության նախարարություն | | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| | դիտարկման հիմնական սկզբունքների, դեղերի արտադրությանը, պատրաստմանը, փաթեթավորմանը, պիտակավորմանը, մակնշմանը ներկայացվող հիմնական պահանջների, դեղերի, դեղանյութերի ներմուծմանը, արտահանմանը, դեղերի մանրածախ և մեծածախ իրացման հետ կապված հարաբերությունների առանձնահատկությունների, դեղերի շրջանառության նկատմամբ հսկողության կարգի սահմանում | | | | | |
| **ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն** | | | | | | |
| 44. «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տրանսպորտի առանձին տեսակների հստակեցում և դրանցով փոխադրումների իրականացման կանոնների սահմանում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | հուլիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետ |
| 45. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների բնագավառում անվտանգության պահանջների ապահովում ու վերահսկողություն | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ը» կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 46. « Հայաստանի Հանրապե-տության կառավարության 2007 թվականի հունիսի 21-ի N 819-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | լիցենզավորված կազմակեր-պությունների կողմից շահա-գործվող տրանսպորտային միջոցների և լիցենզավորող մարմնի կողմից տրամադրված ներդիրների համամասնության կարգավորում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | հունիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | «Լիցենզավոր-ման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 47. « Հայաստանի Հանրապե-տության կառավարության 2007 թվականի մարտի 22-ի N 655-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառա-վարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | լիցենզավորման գործընթացի ընթացքում լիցենզավորող մարմին –հայտատու – իրա-վասու պետական այլ մար-միններ գործընթացային հարաբերությունների հստա-կեցում և ապօրինի գործու-նեությամբ զբաղվելու հնարա-վորությունների բացառում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | հուլիսի 1-ին տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | «Լիցենզավոր-ման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 48. «Ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ցանկը և դրանց փոխադրման համար տրամադրվող թույլտվությունների ժամկետները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապե-տությունում ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող տարբեր տիպի վտանգավոր բեռների դասակարգում՝ ըստ վտանգավորության աստի-ճանի, և դրանց փոխադրման համար տրամադրվող թույլտվությունների ժամկետների սահմանում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | մայիսի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսա-վորում չի պահանջվում: | «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 49. «Միջպետական, միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցի կազմման, հաստատման և համաձայնեցման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետությունում մեկ ընդհանուր միասնական երթուղային ցանցի ստեղծման աշխատանքների կազմակերպում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետ |
| 50. «Հայաստանի Հանրապետությունում ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման և կառավարման մեթոդիկան սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հայաստանի Հանրապետությունում կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների տիպի ճիշտ ընտրություն, վարորդների և տրանսպորտային միջոցների աշխատանքի ռացիոնալ կազմակերպում, ինչպես նաև ուղևորահոսքին համապատասխան երթուղիների սխեմաների և չվացուցակների մշակման մեթոդաբանության սահմանում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետ |
| 51. «Ռադիոհաղորդակցության սարքավորումների օգտագործման ստուգման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ռադիոսարքավորումների օգտագործման ստուգումների անցկացման գործընթացի կանոնակարգում, «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համար հիմք` համապատասխան ստուգումների անցկացման և տեխնիկական եզրակացություն տալու համար | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | հոկտեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետ |
| 52. «Արտակարգ իրավիճակ- | արտակարգ իրավիճակների և | ՀՀ տրանսպորտի և | | հոկտեմբերի | Ֆինանսա- | «Էլեկտրոնային |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| ների և ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման և կառավարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ռազմական դրության պայմաններում ոլորտի իրավասու մարմնի և էլեկտրոնային հաղորդակցության ցանցերը տիրապետող անձանց իրավահարաբերությունների կանոնակարգում | կապի նախարարություն | | 3-րդ տասնօրյակ | վրում չի պահանջվում: | հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետ |
| 53. «Ռադիոալեհավաք կառույցների շինարարության, ներկրման և լուսավորման կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ռադիոալեհավաք կառույցների շինարարության, ներկրման և լուսավորման աշխատանքների համապատասխան տեխնիկական նորմերի և ստանդարտների կիրառման կանոնակարգում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | նոյեմբերի 1-ին տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 11-րդ կետ |
| 54. «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | տեխնիկական և կազմակերպչական բնույթի միասնական պահանջների, պաշտոնական ինտերնետային կայքերի անվտանգության ապահովման միասնական մեխանիզմների և պաշտոնական կայքերում բովանդակության ներկայացման նկատմամբ պահանջների սահմանում | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | 2009 թ. հունիսի 26-ի ՀՀ Նախագահի «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» ՆԿ-97-Ն կարգադրություն |
| 55. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի N 1113-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | փոստային կապի ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործում և համապատասխանեցում եվրոպական երկրներում գործող փոստային կապի ոլորտի օրենսդրական դաշտին | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մաս |
| **ՀՀ քաղաքաշինության նախարարություն** | | | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 56. «Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից բխող` Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է պատասխանատու պետական կառավարման մարմինների և ՀՀ վարչապետի 2009 թ. հուլիսի 31-ի N 650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովում ընդգրկված համակատարող այլ մարմինների համատեղ աշխատանքների արդյունքում ստեղծել Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից բխող` Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարումն ապահովող իրավական հիմքեր: | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | | փետրվարի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ-ի կողմից 2004 թ. մարտի 2-ին վավերացված Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիա, միջազգային պայմանագրեր, ՀՀ վարչապետի 2009 թ. հուլիսի 31-ի N 650-Ն որոշում |
| 57. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է քաղաքաշինական գործունեության հստակ կարգավորման բնագավառում ներդնել համալիր կառուցապատման սկզբունքը, սահմանել համաձայնեցված կառուցապատման նախագծերի կամ սխեմաների նկատմամբ միասնական պահանջներ և չափորոշիչներ, պարզեցնել քաղաքաշինական փաստաթղթերի համաձայնեցման գործընթացը և էականորեն կրճատել իրագործման ժամկետները: | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | | մարտի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1-ին և 19-րդ հոդվածներ |
| 58. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 | Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է ավարտ- | ՀՀ քաղաքաշինության | | սեպտեմբերի 2-րդ | Ֆինանսավորում չի | «Քաղաքաշինության մասին» ՀՀ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ված շինարարության շահագործման փաստագրման ընթացակարգի ժամկետների կրճատում և բազմաբնակարան բնակելի շենքերի փոստային բաժանորդային պահարանների պարտադիր տեղադրման պահանջների ամրագրում: | նախարարություն | | տասնօրյակ | պահանջվում: | օրենքի 10.1-ին հոդված |
| 59. «Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) հանգստի, զբոսաշրջության և առողջարանային կենտրոնների կազմակերպման նպատակով առանձնացված տարածքներում քաղաքաշինական գործընթացների իրականացման կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է ՀՀ համայնքների (բնակավայրերի) առանձնացված տարածքներում քաղաքաշինական գործունեության միասնական կառուցապատման սկզբունքների և չափորոշիչների կիրառմամբ, բնական պաշարների նպատակային օգտագործմամբ ստեղծել տվյալ տարածաշրջանի առանձնահատկություններին բնորոշ, բնակավայրի բնապահպանական, բնակլիմայական և պատմականորեն ձևավորված ճարտարապետական միջավայրին համահունչ ու գեղագիտական չափանիշները բավարարող զբոսաշրջության, հանգստի և առողջարանային կենտրոններ, իրագործել ՀՀ համայնքների (բնակավայրերի) տարածական զարգացման միջոցառումներ` ուղղված տեղի բնակչության զբաղվածության, զբոսաշրջության զարգացման և ենթակառուցվածքների արդիականացման գործընթացին: | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1-ին և 19-րդ հոդվածներ |
| 60. «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և | Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է կտրուկ նվազեցնել ինքնակամ | ՀՀ քաղաքաշինության նախարարություն | | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | ՀՀ կառավարության 2010 թ. փետրվարի 11-ի |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | շինարարության դեպքերի թիվը և օպերատիվ ու արդյունավետ վերացնել դրանց հետևանքները: | | | | | N 5 արձանագրային որոշման 18-րդ կետ |
| **ՀՀ կրթության և գիտության նախարարություն** | | | | | | |
| 61. «2011/2012 ուսումնական տարվա ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կսահմանվեն գիտական առաջնակարգ ուղղություններին համապատասխան գիտամանկավարժական կադրերի պատրաստման թվաքանակները` ըստ ՀՀ պետական բուհերի և գիտական կազմակերպությունների: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | - | մարտի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե | ՀՀ կառավարության 2001 թ. հուլիսի 20-ի N 662 որոշման կարգի 8-րդ կետ |
| 62. «Ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ավագ դպրոցների ցանցը կընդլայնվի ևս 40 ավագ դպրոցով: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | մարտի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե | ՀՀ կառավարության 2008 թ. հուլիսի 24-ի N 878 որոշման ծրագրի 4.4.3-րդ բաժնի 3-րդ կետ |
| 63. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. ապրիլի 8-ի N 439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կհամադրվեն հանրակրթության ոլորտում ներկայումս գործող բոլոր կրթական չափորոշիչները: Կներդրվի հանրակրթության միասնական չափորոշիչ: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | ապրիլի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մաս |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 64. «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2011/2012 ուսումնական տարվա՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման իրավունքով (վճարովի) առկա ուսուցմամբ բակալավրիատի կրթական ծրագրով տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հանրապետության տնտեսության և գիտության զարգացման կարիքներին համապատասխան՝ կսահմանվեն բակալավրի որակավորմամբ կադրերի պատրաստման թվաքանակներն ըստ բուհերի: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | ապրիլի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե | «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մաս, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ մաս |
| 65. «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2011/2012 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հանրապետության տնտեսության և գիտության զարգացման կարիքներին համապատասխան՝ կսահմանվեն մագիստրոսական որակավորմամբ կադրերի պատրաստման թվաքանակներն ըստ բուհերի: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | ապրիլի 3-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե | «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մաս, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ մաս |
| 66. «Հայաստանի Հանրապետության միջին և նախնական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման (նպաստի ձևով փոխհատուցման) 2011/2012 ուսումնական տարվա ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Հանրապետության աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ կսահմանվեն նախնական և միջին մասնագիտական որակավորմամբ կադրերի պատրաստման թվաքանակներն ըստ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների: | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | մայիսի 2-րդ տասնօրյակ | ՀՀ պետական բյուջե | «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխի 36-րդ հոդվածի 4-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| 67. Հայաստանի Հանրապետության կառավարություն 2006 թվականի հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | 2010 թ. մշակված նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության 19 պետական կրթական չափորոշիչների հիման վրա ՀՀ կառավարության որոշման փոփոխված և լրացված ցանկ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն | | մայիսի 2-րդ տասնօրյակ | Ֆինանսավորում չի պահանջվում: | «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետ |
| | 70. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգում բարեփոխումների իրականացում, այդ թվում՝ Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների միասնական էլեկտրոնային ռեեստրի ստեղծում | - կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազայի ստեղծում<br>- քաղաքային բնակավայրերում ինքնակամ զբաղեցված հողամասերի առկայությամբ գույքի օրինական մասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սահմանափակման վերացում<br>- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կորպորատիվ ցանցի տրամաբանական միացում այն բոլոր ցանցերին, որոնք օգտվում են և որոնց տվյալները անհրաժեշտ են անշարժ գույքի ռեեստրի վարման համար<br>- իրավունքի պետական գրանցման վկայականների ձևաթղթերի փոփոխություն<br>- անշարժ գույքի չափագրման (տեղազննության աշխատանքների իրականացման կանոնակարգում (տեղեկատվության տրամադրման համար տեղազննության իրականացման պահանջի վերացուււմ, գույքի չափագրման պահանջ միայն առաջնային գրանցման կամ դիմումի հիման վրա` փոփոխությունների առկայության դեպքում)<br>- անշարժ գույքի չափագրման աշխատանքների մասնակի մասնավորեցում<br>- Երևան քաղաքում սպասարկման գրասենյակների ստեղծում<br>- Երևան քաղաքում տարածքային ստորաբաժանումների քանակի |

| | | |
|---|---|---|
| | | օպտիմալացում<br>- անշարժ գույքի կադաստրի տվյալների վերաբերյալ տեղեկատվություն (այդ թվում` նաև միասնական տեղեկատվություն) ստանալու համար դիմումների առցանց` կոմիտեի պաշտոնական վեբ-կայքի միջոցով ներկայացման, այդ թվում նաև էլեկտրոնային վճարման համակարգի ներդրում<br>- որոշ կատեգորիաների դիմողների համար իրավունքի պետական գրանցման դիմումների և իրավահաստատող փաստաթղթերի առցանց ներկայացման համակարգի ներդրում<br>- կադաստրային գործերի էլեկտրոնային արխիվի նյութերի` ինտերնետ համացանցի միջոցով առցանց դիտարկման և փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների ներբեռնման համակարգի ներդրում |
| | 71. 2011 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միջոցների հաշվին իրականացնել ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների սահմանների ամրացման աշխատանքները | - ՀՀ Վայոց ձորի մարզի 44 համայնքի տեխնիկական նախագծի կազմում և համաձայնեցում անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ<br>- կադաստրային, տեղագրական և համայնքների վարչական սահմանների նկարագրման քարտեզների համադրում և դրա արդյունքում առաջացած անճշտությունների ուղղում<br>- համայնքների վարչական սահմանների փոխադրումը բնության մեջ (դաշտային դիտարկումներ, շրջադարձային և հանգուցային կետերի նշահարում, արտաքին ձևավորում, ուրվագծերի կազմում, սահմանանիշերի հանձնում տեղական ինքնակառավարման մարմիններին)<br>- սահմանանիշերի դաշտային դիտարկումների արդյունքների հավասարակշռում, կոորդինատների հաշվարկում, կատալոգի կազմում<br>- տեխնիկական հաշվետվության կազմում |
| ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն | 72. Պետական անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքների և պետական ոչ առևտրային ու այլ կազմակերպություններին պետական անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքների գրանցման ապահովում | - պետական անշարժ գույքի հողհատկացման հիմքերի ձեռքբերում, դրանց նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման ապահովում<br>- հանրակրթական դպրոցներ պետական ոչ առևտրային և այլ կազմակերպություններին անհատույց օգտագործման տրամադրված պետական անշարժ գույքի օգտագործման պայմանագրերի կնքում և պայմանագրից բխող իրավունքների գրանցման ապահովում |
| | 73. Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական շենք, շինությունների տակ գտնվող, ինչպես նաև դրանց սպա- | համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող շենքերի, շինությունների տակ գտնվող, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ հողամասերի պատկանելիության ճշգրտում և համապատասխան |

| | | |
|---|---|---|
| | սարկման և օգտագործման համար անհրա-ժեշտ հողամասերի նկատմամբ գույքային իրավունքների հստակեցում | առաջարկների ներկայացում |
| | 74. Պետական գույքի հաշվառման բազայի ընդլայնում | պետական գույքի հաշվառման բազայում միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների, կամուրջների, ջրատարների և ջրամբարների, ինչպես նաև ոչ նյութական ակտիվների հաշվառում |
| | 75. Վարչության ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային կազմա-կերպություններում կառավարման արդյունավետության բարձրացում | վարչության ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդմանն ուղղված աշխատանքների իրականացում |
| ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն | 76. Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի գործարկում | - համակարգի շահագործումն իրականացնող ծառայողների ուսուցում<br>- համակարգի շահագործում |
| | 77. Թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի ներդրում | - ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժինների կառուցվածքում ոստիկանության հենակետերի ստեղծում |
| | 78. Երևան քաղաքի հասարակական կարգի պահպանության ծառայության կատարելագործում | - Երևան քաղաքի հասարակական վայրերում տեսադիտման սարքավորումների ձեռքբերում և համակարգի ներդրում<br>- ոստիկանության Երևան քաղաքի վարչության կազմում ոստիկանության ուժերի և միջոցների օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծում<br>- պարեկապահակետային ծառայության վերակարգերի աշխատանքում նոր մեթոդների ներդրում (առանց տրանսպորտային միջոցի իրականացվող ծառայության կրճատում)<br>- պարեկապահակետային ծառայությանն անհրաժեշտ հանդերձավորումով, հատուկ միջոցներով և զենքով ապահովում |
| | 79. Երևան քաղաքում և հանրապետության մյուս խոշոր քաղաքներում, ինչպես նաև մայրուղիներում արագության վերահսկման ավտոմատ համակարգի ներդրում | - տեխնիկական միջոցների ձեռքբերում և ներդրում |
| | 80. Վարորդական վկայական ստանալու | - Երևան քաղաքում քննական ավտոդրոմի կառուցում |

| | | |
|---|---|---|
| | գործնական և տեսական քննության պայմանների բարելավում | - Երևան քաղաքում մեկ ստորաբաժանման միջոցով վարորդական վկայականների տրման աշխատանքների կազմակերպում |
| ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե | 81. ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ռազմավարական ծրագրի իրականացում | - կոմիտեի մասնագիտական կազմի համալրում բարձր որակավորում ունեցող կադրերով, նոր կադրերի պատրաստում, վերապատրաստում<br>- ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրության համապատասխանեցում ԱԷՄԳ-ի և ԵՄ-ի պահանջներին<br>- անվտանգության վերլուծության ու գնահատման կարողությունների ուժեղացում և տեսչական ստուգումների անցկացման արդյունավետության բարձրացում<br>- «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի գործունեության կատարելագործում |
| ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | 82. Ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարձրացման, ընթացակարգերի պարզեցման և նորագույն տեխնոլոգիաների կիրառման նպատակով «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրի շահագործումը | - «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի կոնցեսիոների կողմից ներդրումների իրականացումը (ընդհանուր 160 մլն ԱՄՆ դոլարի կապիտալ ներդրումից 2009 թվականին՝ 31 մլն, 2010 թվականին՝ 71 մլն և 2011 թվականին՝ 58 մլն),<br>- մատուցվող օդանավակայանային ծառայությունների որակի բարձրացման ապահովման նպատակով նոր տեխնոլոգիաների կիրառումը<br><br>- օդանավակայանային ընթացակարգերի պարզեցում (համապատասխանեցումը քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) և Եվրամիության պահանջներին) |
| | 83. Քաղաքացիական ավիացիայի ոլորտում Հայաստանի Հանրապետության երկկողմանի հարաբերությունների ընդլայնում | - «Հայաստանի Հանրապետության կառավարության և Քուվեյթի պետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի ստորագրմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունների իրականացում<br>- «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սերբիայի Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի ստորագրմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր անհրաժեշտ գործողությունների իրականացում |
| | 84. Հայաստանի Հանրապետությունում փոքր | - Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիային |

| | | |
|---|---|---|
| | ավիացիայի ներդրմանն առընչվող միջոցառումների իրականացում | առընչվող ձեռնարկատիրությամբ զբաղվող անձանց հետ բանակցությունների վարում՝ նրանց փոքր ավիացիայի ոլորտը ընդգրկելու նպատակով<br>- փոքր ավիացիայի հետ կապված խնդիրներին և զարգացումներին հասարակության լայն շերտերին տեղեկացում գլխավոր վարչության պաշտոնական կայքի և ԶԼՄ-ների միջոցով |
| ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ պետական եկամուտների կոմիտե | 85. Հարկային հսկողության մեխանիզմների արդիականացում | - ՀՀ-ում պիտակավորման ենթակա ապրանքների պիտակավորման համակարգի ներդրում<br>- ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում<br>- ռիսկերի կառավարման հիման վրա ԱԱՀ-ի գերավճարների հայտերի ուսումնասիրության համակարգի ներդրում<br>- երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների հարկային մարմնի տեղեկատվական բազայում ինտեգրում և կիրառման ընթացակարգերի մշակում<br>- էներգետիկայի, կապի և հանքարդյունաբերության ոլորտներում ստուգումների իրականացման ուղեցույցերի մշակում և ներդրում |
| | 86. Հարկ վճարողների սպասարկման ծառայությունների որակի բարձրացում | - հարկային և մաքսային մարմինների կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ավելացում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացվող հաշվետվությունների քանակի էական ավելացում և հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի ներդրում<br><br>- հարկ վճարողների առնվազն մեկ նոր սպասարկման կենտրոնի գործարկում և սպասարկման միասնական ստանդարտների ներդրում, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվության հրապարակում<br>- հարկ վճարողների հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի (Call center) գործարկում |
| | 87. ՀՀ կա ՊԵԿ-ի կառավարման արդյունավետության բարձրացում | - «Հարկատու 3է էլեկտրոնային համակարգի նոր ենթահամակարգերով (մոդուլներով) համալրում՝ այդ թվում՝ կամերալ ուսումնասիրությունների համակարգի ներդրում<br>- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնի ներդրման ծրագրի գործարկում, այդ թվում՝ հարկային և մաքսային ծառայողների համապարփակ և պարտադիր ուսուցման ծրագրի ներդրում<br>- հարկային և մաքսային մարմիններում վերլուծական կարողությունների ուժեղացում<br>- չկատարված հարկային պարտավորությունների աճի և նոր ապառքների |

| | | |
|---|---|---|
| | | կուտակման ռիսկերի կանխարգելում<br>- միջազգային լավագույն փորձի հիման վրա հարկային մարմնի հիմնական բիզնես գործընթացների վերակազմակերպման և ավտոմատացման ծրագրի նախագծում և իրականացում<br>- հարկային և մաքսային ծառայողների առաջխաղացման և խրախուսման համակարգի ներդրում |
| | 88. Մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատում | - մաքսային հայտարարագրի վճարման էլեկտրոնային համակարգի ներդրում<br>- մաքսային ձևակերպումների առանձին փուլերի էլեկտրոնային հաշվառում<br>- մաքսային մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և հսկողության համակարգի ներդրում<br>- սահմանային անցման կետերի արդիականացում և եվրոպական չափանիշերին համապատասխանեցում |
| | 89. Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը» (Doing Business) վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավում | - ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրից բխող գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացմամբ «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային դասակարգման սանդղակում «Հարկերի վճարում» և «Արտաքին առևտուր» բաղադրիչներով Հայաստանի դիրքի բարելավման ապահովում |
| ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե | 90. Հանրապետության մի շարք քաղաքների և գյուղական բնակավայրերի ջրամատակարարման բարելավում, մատակարարվող խմելու ջրի որակի ապահովում, կայուն և հուսալի ջրամատակարարում, ջրի կորուստների կրճատում, ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացում՝ նախորդ տարվա նկատմամբ առնվազն 1 ժամով (իսկ կառավարման պայմանագրերով նախատեսված լինելու դեպքում՝ պայմանագրերով նախատեսված չափերով), Սևանա լճի բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում, նոր ներդրումային ծրագրերի համար դոնոր կազմակերպությունների հետ բանակցությունների վարում, ինչպես նաև խմելու և ոռոգման ոլորտներում շուրջ 500 կմ ջրագծերի և ջրանցքների վերանորոգման ու կառուցման աշխատանքների իրականացում, այդ թվում՝ Աբովյան, Նոյեմբերյան, Չարենցավան, Ագարակ, | - Ասիական զարգացման բանկի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման բանկի, Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող՝ «Ջրամատակարարման և ջրահեռացման {սեկտերի} ծրագրի», «Լոռու (Վանաձոր) և Շիրակի (Գյումրի) մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավում» ծրագրի, «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման» ծրագրի (լրացուցիչ ֆինանսավորում) իրականացման ապահովում<br>- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող «Սևանա լճի բնապահպանական ծրագրի» շրջանակներում Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կոյուղաջրերի մաքրման կայանների կառուցում, ինչպես նաև Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան և Ջերմուկ քաղաքների կոյուղու ցանցերի վերանորոգում<br>- «ՀՀ կառավարության և Աբու Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Արփա-Սևան» թունելների վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված թունելի որոշ հատվածների վերականգնում, վերանորոգում և շինարարություն<br>- Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից ֆինանսավորվող Սևանա լճի բնապահպանական երկրորդ ծրագրի ներգրավ- |

| | | |
|---|---|---|
| | Արթիկ, Վանաձոր, Մարալիկ քաղաքներում ջրամատակարարման համակարգերի վերականգնում և ջրամատակարարման բարելավում | ման ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացում |
| | 91. Ջրային տնտեսության ոլորտի ընկերությունների և ջրային համակարգերի կառավարման բարեփոխումների շարունակություն | - «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում մասնավոր կառավարման գործընթացի շարունակության ապահովում<br>- «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերություններում մասնավոր կառավարիչների հետ կնքված պայմանագրերով 2011 թվականի համար նախատեսված ցուցանիշների կատարման ապահովում<br>- ոռոգման համակարգերի մասնակցային կառավարման ամրապնդում, ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում<br>- ոռոգման համակարգերի շահագործման հուսալիության և արդյունավերտության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում<br>- ջրամատակարար ընկերությունների սպասարկման դաշտից դուրս գտնվող գյուղական բնակավայրերում ջրամատակարարման կառավարման բարելավմանն ուղղված ուսումնասիրությունների իրականացում |
| | 92. Մարմարիկի ջրամբարի շահագործման հանձնում | Մարմարիկի ջրամբարի շահագործման հանձնման ապահովում |
| Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով | 93. Մրցակցային միջավայրի բարելավում | կենտրոնացվածության բարձր աստիճան ունեցող ապրանքային շուկաների ինստիտուցիոնալ ուսումնասիրություն և այդ շուկաներում օրենսդրության պահանջների հնարավոր խախտումների բացահայտում |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունվարի 13-ի N 111 - Ն որոշման

## Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Հիմնավորումները |
|---|---|
| 1 | **2** |
| | **ՀՀ տարածքային կառավարման նախարարություն** |
| 1. | **«Սոցիալական աջակցության (ծառայությունների) բնագավառում համայնքի ղեկավարին պետության պատվիրակած լիազորության իրականացման մասին» ՀՀ օրենքի նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ Սահմանադրության 107-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքի ղեկավարի լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են օրենքով: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի՝ պետության պատվիրակած լիազորություններն իրականացվում են օրենքով կամ կառավարության սահմանած կարգով: Ներկայումս մշակվում են տարբեր բնագավառներում համայնքի ղեկավարին պետության պատվիրակած լիազորությունների իրականացման կարգերը սահմանող օրինագծեր:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջները կատարելու նպատակով 2011 թվականին նախատեսվում է ՀՀ կառավարություն ներկայացնել «Սոցիալական աջակցության (ծառայությունների) բնագավառում համայնքի ղեկավարին պետության պատվիրակած լիազորության իրականացման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Իրավական ակտի ընդունմամբ կարգավորվում են սոցիալական աջակցության (ծառայությունների) բնագավառում համայնքի ղեկավարին պետության պատվիրակած լիազորության իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները: |

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունումից հետո կբավարարվեն ՀՀ Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջները, ինչպես նաև կհաստատվի սոցիալական աջակցության (ծառայությունների) բնագավառում համայնքի ղեկավարին պետության պատվիրակած լիազորության իրականացման կարգը: |
| 2. | **«Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի մշակման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ համայնքներում ներդրված «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի» (ՀԿՏՀ) միջոցով ստեղծվում, գրանցվում, պահպանվում և արտածվում են տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերը, դրանց նախագծերը և անհրաժեշտ այլ փաստաթղթեր: Սակայն գրեթե բոլոր համայնքների պահանջով համակարգում առկա փաստաթղթերի առաջարկվող ձևերը ենթարկվում են փոփոխությունների՝ դրանք համապատասխանեցվելով համայնքներում կիրառվող «յուրահատուկ» ձևերին, որոնք շատ դեպքերում չեն համապատասխանում «ՀՀ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին: Ձևերի բազմազանությունը դժվարացնում է ՀԿՏՀ-ի սպասարկման և ծրագրի թարմացման աշխատանքները (յուրաքանչյուր համայնքի պետք է ցուցաբերել առանձին մոտեցում): Բացի դրանից՝ ձևերի բազմազանությունը բարդություններ է առաջացնում ակտերի նկատմամբ իրավական վերահսկողություն և պետական իրավական փորձաքննություն իրականացնող մարմինների համար:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Վերոնշյալ խնդիրներին լուծում տալու համար առաջարկվում է մշակել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի, դրանց նախագծերի, քաղվածքների և այլ փաստաթղթերի մշակման մեթոդական ուղեցույց, ինչի արդյունքում այդ իրավական ակտերը կբավարարեն գործող օրենսդրության պահանջները և կիրառելի կլինեն բոլոր տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի մշակման մեթոդական ուղեցույցի մշակում և ներդրում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի, դրանց նախագծերի ունիֆիկացում: |
| 3. | **«Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի վերջնական լրամշակված տարբերակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ Սահմանադրության 110-րդ հոդվածի համաձայն՝ համայնքները կարող են միավորվել կամ բաժանվել՝ անկախ տեղական հանրաքվեների արդյունքից և օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել միջհամայնքային միավորումներ: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլուխը սահմանում է միջհամայնքային միավորումների կազմավորման, այդ միավորումների մարմինների ձևավորման ընդհանուր դրույթները:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներկայացվող հայեցակարգի նախագիծն անդրադառնում է համայնքների խոշորացմանը և միջհամայնքային միավորումների ստեղծմանն առնչվող մանրամասներին: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Ներկայացվող հայեցակարգի ընդունմամբ ուրվագծվում են այն մեխանիզմներն ու միջոցցառումները, որոնք հիմք կդնեն Հայաստանում համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ինստիտուտների կայացմանը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայեցակարգի ընդունումից հետո կսկսվի ՀՀ վարչատարածքային բաժանման օպտիմալացման գործընթացը: |
| 4. | **«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ` օրենք) 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն` «Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները, որոնց դիմաց նրանք ստորագրում են:»: Սակայն լինում են դեպքեր, երբ ավագանու անդամը ստորագրում է ավագանու նիստի օրակարգի կոնկրետ հարցի դիմաց, սակայն հրաժարվում է ստորագրել ավագանու նիստի ամփոփ արձանագրությունը: Արդյունքում առաջանում է երկակի ընկալմամբ մի իրավիճակ, երբ արձանագրությունների ստորագրությունները հաշվարկելիս ստացվում է մի արդյունք, իսկ ավագանու որոշումների ստորագրությունները հաշվարկելիս` մեկ այլ արդյունք: Առաջին դեպքում դա կարող է դառնալ ավագանու անդամի լիազորությունների դադարեցման հիմք (օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմնավորմամբ), 2-րդ դեպքում` ոչ բավարար հիմք: Վերջնական արդյունքում դա բերում է համայնքի ղեկավարի և ավագանու անդամների վիճաբանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ժամանակավոր խաթարման:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է սահմանել ավագանու նիստերին` ավագանու անդամների մասնակցության արդյունքում արձանագրությունների ստորագրման պարտադիր պայմանը, ինչպես նաև այդ դրույթի խախտման հետևանքները:<br>**2. Կարգավորման առարկան.**<br>Իրավական ակտի ընդունմամբ սահմանվում են ավագանու նիստերի արձանագրությունները` ավագանու անդամների կողմից ստորագրելու պարտադիր պայմանը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունումից հետո կնվազեն ավագանու անդամների կողմից ավագանու նիստերի արձանագրությունները չստորագրելու դեպքերը: |
| 5. | **«Բնակչության տեղաշարժի պետական կարգավորման հայեցակարգի իրականացումն ապահովող գործողությունների ազգային ծրագրի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունումից հետո |

<table>
<tr><td></td><td>անհրաժեշտ է ընդունել «Բնակչության տեղաշարժի պետական կարգավորման հայեցակարգի իրականացումն ապահովող գործողությունների ազգային ծրագրի մասինե ՀՀ կառավարության որոշումը:<br>2004 թ. ՀՀ կառավարության կողմից «Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգիե ընդունումից հետո բնագավառում առաջացել են նոր իրողություններ և մարտահրավերներ, որոնց ազդեցությամբ միգրացիոն հոսքերի ծավալներն ու ուղղությունները կրել են քանակական և որակական էական փոփոխություններ: Նշվածն անհրաժեշտություն է առաջացրել ոլորտի մարտահրավերներին դիմակայելու նպատակով մշակելու և ընդունելու բնակչության տեղաշարժի պետական կարգավորման հայեցակարգը, որն էլ իր հերթին թելադրում է գործողությունների ազգային ծրագրի ընդունում:<br>Միջոցառումը նախատեսված է ՀՀ Նախագահի 2009թ.-ի մայիսի 6-ի ՆՆԿ-68-Ա կարգադրությամբ հաստատված՝ Եվրոպական հարևանության քաղաքականության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011թթ. միջոցառումների ցանկով:<br>1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Միգրացիայի բնագավառում առաջացած նոր իրողություններով պայմանավորված կմշակվի միգրացիայի և ապաստանի ոլորտում համապարփակ ազգային քաղաքականությունը սահմանող փաստաթղթի իրականացումն ապահովող ազգային գործողությունների ծրագիր:<br>2. Կարգավորման առարկան<br>Նշված գործողությունների ծրագրով կսահմանվեն հայեցակարգում նշված գերակա խնդիրների լուծմանն ուղղված կոնկրետ միջոցառումները, դրանց իրականացման համար պատասխանատու պետական մարմինները և միջոցառումների իրականացման ժամկետները:<br>3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Փաստաթղթի ընդունմամբ կապահովվի միգրացիայի և ապաստանի ոլորտում պետական քաղաքականությունը սահմանող հայեցակարգով սահմանված գերակա խնդիրների կատարումը բնագավառում գործառույթներ ունեցող պետական մարմինների միջոցով:</td></tr>
<tr><td>6.</td><td>«Տեղական տուրքերի և վճարների հայեցակարգը հաստատելու մասինե ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի<br>1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասինե ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման դիմաց սույն օրենքով սահմանված կարգով և չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է: Ներկայումս տարբեր իրավական ակտերով տեղական տուրքերի և վճարների գանձումն ընկալվում է տարբեր կերպ:<br>1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>2011 թվականին նախատեսվում է մշակել տեղական տուրքերի և վճարների հայեցակարգ և սահմանված կարգով այն ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը:<br>2. Կարգավորման առարկան<br>Հայեցակարգի ընդունումից հետո կկատարվեն համապատասխան փոփոխություններ առանձին իրավական ակտերում:<br>3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը<br>Տեղական տուրքերի և վճարների գանձման ունիֆիկացում:</td></tr>
<tr><td>7.</td><td>«ՀՀ Գեղարքունիքի մարզի 2012-2015 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասինե ՀՀ կառավարության որոշման նախագծի</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որդեգրած տարածքային համաչափ զարգացվածության համատեքստում կարևոր նշանակություն ունեն մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը: Այս գործընթացում նախարարությունը նախատեսում է միանման մեթոդիկայով մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի 2012-2015թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը:<br>**2. Կարգավորման առարկան** հանդիսանում է մարզերի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրերի գործունեության արդյունքում նախատեսվում է մարզերում կրճատել աղքատությունը, զարգացնել ենթակառուցվածքները, բարենպաստ պայմաններ ստեղծել ՓՄՁ-ների զարգացման համար, որոնցով պայմանավորված կբարելավվեն մարզերի սոցիալ-տնտեսական պայմանները: |
| 8. | **«ՀՀ Տավուշի մարզի 2012-2015 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը**)<br>ՀՀ կառավարության որդեգրած տարածքային համաչափ զարգացվածության համատեքստում կարևոր նշանակություն ունեն մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը: Այս գործընթացում նախարարությունը նախատեսում է միանման մեթոդիկայով մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ՀՀ Տավուշի մարզի 2012-2015թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը:<br>**2. Կարգավորման առարկան** հանդիսանում է մարզերի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրերի գործունեության արդյունքում նախատեսվում է մարզերում կրճատել աղքատությունը, զարգացնել ենթակառուցվածքները, բարենպաստ պայմաններ ստեղծել ՓՄՁ-ների զարգացման համար, որոնցով պայմանավորված կբարելավվեն մարզերի սոցիալ-տնտեսական պայմանները: |
| 9. | **«Քաղաքաշինության բնագավառում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ Սահմանադրության 107-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքի ղեկավարի լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են օրենքով: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են օրենքով: Ներկայումս մշակվում են տարբեր բնագավառներում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման կարգերը սահմանող օրինագծեր:<br>**1.2 առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջները կատարելու նպատակով 2011 թվականին նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել «Քաղաքաշինության բնագավառում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Իրավական ակտի ընդունմամբ կարգավորվում են քաղաքաշինության բնագավառում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման ընթացքում ծագող հարաբերությունները: |

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունումից հետո կբավարարվեն ՀՀ Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջները, ինչպես նաև կհաստատվի քաղաքաշինության բնագավառում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման կարգը: |
| | **ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն** |
| 10. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի N 1843-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Տեխնիկական կանոնակարգի ընդունումից հետո ներտնային գազասպառման համակարգում առաջ են եկել նոր խնդիրներ, որոնց լուծումը կբերի համակարգի անվտանգության աստիճանի բարձրացմանը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործում է գազի տնտեսությունում տարրերի տեխնիկական շահագործման կանոններ և աշխատանքի անվտանգության պահանջներ տեխնիկական կանոնակարգը, որի կիրարկման ժամանակ ի հայտ են եկել վրիպակներ և ներտնային ծխաօդատար համակարգի սպասարկման ժամանակ պահանջվում էր անպայման ներտնային ծխաօդատար համակարգի մաքրում, մինչդեռ պետք է ստուգվի այդ համակարգի կեղտոտվածությունը և նոր անհրաժեշտության դեպքում մաքրվի:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կկանոնակարգվեն ներտնային գազասպառման համակարգի ծխաօդատար ուղիների անվտանգ շահագործման խնդիրները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ներտնային գազասպառման համակարգ:<br>**3. Իրավական ակտի դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ներտնային գազասպառման համակարգի շահագործման անվտանգության աստիճանի բարձրացում : |
| 11. | **«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Համաձայն 2001 թվականի մարտի 21-ի «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ` օրենք) 59-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի` էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից 15 տարվա ընթացքում փոքր հիդրոէլեկտրակայանների կողմից և էներգիայի վերականգնվող աղբյուրների կիրառմամբ արտադրվող ամբողջ էլեկտրական էներգիան (հզորությունը) ենթակա է գնման` շուկայի կանոններով սահմանված կարգով:<br>Ներկայումս արևային էներգիայի օգտագործման ֆոտովոլտաիկ կայանների տեղակայված հզորության կառուցման ինքնարժեքը, ի համեմատություն վերականգնվող էներգետիկայի այլ ոլորտների, բարձր է: ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգում նման թանկ էլեկտրական էներգիայի սպառման անհրաժեշտությունը չկա և առաջիկա տարիներին չի առաջանա:<br><br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Որպես օրինակ պետք է նշել, որ 2010 թվականին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն և ՀՀ հանրային ծառայությունները |

| | |
|---|---|
| | կարգավորող հանձնաժողով է դիմել մասնավոր ընկերություն, որը նախատեսում էր Հայաստանում կառուցել 3ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտաիկ էլեկտրակայան, և ներկայացրել էր 1 կվտ.ժ արտադրված էլեկտրական էներգիայի դիմաց 35 եվրո ցենտ սակագնի սահմանման հայտ:<br>Պետք է նշվի, որ արևային էներգիայի կիրառմամբ արտադրվող էլեկտրաէներգիայի ինքնարժեքը բերում է վերջնական սպառողի համար սահմանվող սակագնի զգալի աճին:<br>Բազմաթիվ իրավաբանական անձանց համար օրենքի վերոհիշյալ դրույթը հիմք է հանդիսանում դիմել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին կառուցման լիցենզիա ստանալու և հետագայում արևային էներգիայի կիրառմամբ արտադրվող էլեկտրաէներգիայի պարտադիր գնման պահանջ իրենց կողմից ներկայացնելու համար:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը խմբագրել՝ սահմանափակելով օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի գործողության շրջանակները` ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգի համար արևային էլեկտրական էներգիայի անհրաժեշտության մասին հայտերը վերապահելով էներգետիկայի ոլորտում պետական քաղաքականությունն իրականացնող լիազոր մարմնին, իսկ օրենքի կիրարկումն ապահովող հատուկ կարգի և պայմանների սահմանումը` ՀՀ կառավարությանը: Մասնավորապես, առաջարկվում է 2001 թվականին ընդունված «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի առաջին պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ. «Արևային էներգետիկայի ոլորտում սույն կետի գործողությունը տարածվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված հատուկ կարգով և պայմաններով` էներգետիկայի ոլորտում պետական քաղաքականությունն իրականացնող լիազոր մարմնի ներկայացրած հայտի հիման վրա:»:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետը:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.**<br>«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետում առաջարկվող փոփոխության ընդունման դեպքում կիստակեցվի արևային թանկ էլեկտրական էներգիայի պարտադիր` 15 տարվա ընթացքում գնման պարտավորությունը: |
| 12. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 6-ի N 669-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Սկզբնական երկրաբանական նյութերը ներկայումս հիմնականում գտնվում և պահպանվում են ընդերքօգտագործողների մոտ, սակայն, համաձայն Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի, վերջիններս պետք է հանձնվեն լիազոր մարմնին:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող փոփոխություններով և լրացումներով կսահմանվի սկզբնական երկրաբանական նյութերի հանձնումը լիազոր մարմնին՝ պահպանման:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Առաջարկվող փոփոխություններով և լրացումներով կկարգավորվի սկզբնական երկրաբանական նյութերի հանձնման և պահպանման գործընթացը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բոլոր սկզբնական երկրաբանական տեղեկատվությունները կգտնվեն լիազոր մարմնի տնօրինման ներքո: |

| | |
|---|---|
| 13. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի N 1055-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ընդերքօգտագործման իրավունքի գրանցման վերաբերյալ տեղեկանք տալու ընթացքում վերջինիս ձևի մեջ ներառված են բազմաթիվ տվյալներ, որոնք ամրագրված են հանքային իրավունքի փաստաթղթերի փաթեթում, որն անհարկի կրկնություն է:<br><br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող փոփոխություններով և լրացումներով կսահմանվի ընդերքօգտագործման իրավունքի գրանցման վերաբերյալ ընդերքօգտագործողին տրամադրվող տեղեկանքի նոր ձև:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Առաջարկվող փոփոխություններով և լրացումներով հնարավորինս կպարզեցվի ընդերքօգտագործման իրավունքի գրանցման վերաբերյալ տեղեկանքն ընդերքօգտագործողին տրամադրելու ընթացակարգն ու ձևը:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Առաջարկվող փոփոխություններով և լրացումներով կպարզեցվի ընդերքօգտագործման իրավունքի գրանցման վերաբերյալ տեղեկանքի ձևը և վերջինս տալու գործընթացը: |
| 14. | **«Հայաստանի Հանրապետությունում գործող էլեկտրաէներգետիկական ոլորտի տեխնիկական կանոնակարգերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Լրացնել ՀՀ-ում գործող լարման ստանդարտ մեծությունները ևս մեկ 400 կՎ լարման ստանդարտով:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ-ում 400 կՎ լարման համար տեխնիկական նորմատիվներ չկան: Նոր Իրան Հայաստան ԷՀԳ կառուցման համար նշված նորմերն անհրաժեշտ են:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Լրամշակել գործող տեխնիկական կանոնակարգերը՝ ներառելով 400 կՎ լարման համար ԵՄ նորմերը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նորմատիվային դաշտի կատարելագործում:<br>**3. Իրավական ակտի դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Փոխհական հոսանքի 400 կՎ լարման էլեկտրական ցանցերի նախագծման, կառուցման, վերակառուցման և շահագործման անհրաժեշտ դրույթների ներառում էլեկտրաէներգետիկական ոլորտի մի շարք տեխնիկական կանոնակարգերում, Իրան-Հայաստան նոր ԷՀԳ կառուցման նորմատիվային բազայի ստեղծում, համահունչ ԵՄ-ի նորմերին: |

| | |
|---|---|
| 15. | **«Կենցաղային գազի սարքերի էլեկտրաանվտանգության վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»**<br>**ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Ժամանակակից կենցաղային գազի սարքերը համալրված են նաև էլեկտրական մասերով:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գազի սարքերի նկատմամբ էլեկտրաանվտանգության պահանջներ սահմանված չեն, ինչը կարող է բերել մարդկանց կյանքի նկատմամբ ռիսկայնության:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Լրացնել գազի սարքերի անվտանգության ապահովման նորմատիվային դաշտը՝ մշակելով նոր տեխնիկական կանոնակարգ:<br>**Իրավական ակտի դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կկանոնակարգվեն կենցաղային գազի սարքերի էլեկտրական անվտանգության խնդիրները՝ համահունչ դարձնելով այն ԵՄ-ի նորմերին և շրջաբերականներին: |
| 16. | **«Գործող և հեռանկարային էլեկտրաէներգետիկական համակարգի կայունության ապահովման և համակարգային հակավթարային ավտոմատիկայի գործողության սկզբունքների ու հարաչափերի որոշման մեթոդիկայի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>ՀՀ նորմատիվային դաշտն անհրաժեշտ է լրացնել:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող ԷԷՀ բացակայում են կայունության ապահովման և համակարգային հակավթարային ավտոմատիկայի գործողության սկզբունքների ու հարաչափերի որոշման մեթոդիկաները, առավել ևս դրանք չկան նաև ԷԷՀ զարգացման հաջորդ փուլերի համար:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մշակել մեթոդիկա, որի կիրառությունը կլինի պարտադիր՝ սեփականության տարբեր ձևերով կազմակերպությունների համար:<br>**2. Իրավական ակտի դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սեփականության տարբեր ձևերով կազմակերպությունների համար կստեղծվի միացյալ մեթոդիկա, ինչը թույլ չի տա առանձին կազմակերպությունների յուրովի մոտեցում սույն կարևորագույն խնդրին: |
| 17. | **«Ավելացված արժեքի հարկի մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»**<br>**ՀՀ օրենքի նախագծի մասին ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Նոր ատոմային էներգաբլոկի կառուցման ներդրողների համար նպաստավոր պայմանների ստեղծում:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Որպեսզի ռազմավարական ներդրողների համար ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման նախագիծը լինի ավելի գրավիչ, անհրաժեշտ է |

| | |
|---|---|
| | ներդրումային դաշտի համար ստեղծել այնպիսի պայմաններ, որ նոր միջուկային էներգաբլոկում արտադրվող էլեկտրական էներգիայի սակագինը լինի մրցունակ և ներքին սպառողների համար այն լինի մատչելի: Այդ նպատակով անհրաժեշտ է ՀՀ առանձին օրենքներով ռազմավարական ներդրողների համար սահմանել հարկային արտոնություններ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (2009 թվականի մարտի 19-ի N ՀՕ-65-Ն) 61-րդ հոդվածի` մեծ ծավալի ներդրումների դեպքում ՀՀ կառավարության որոշմամբ տրվում են խրախուսող արտոնություններ` ԱԱՀ – ի գումարների վճարման ժամկետը կարող է հետաձգվել 3 տարի ժամկետով: Բայց, քանի որ նոր միջուկային էներգաբլոկի կառուցման տևողությունը մոտ 6-7 տարի է, ուստի առաջարկվում է ՀՀ օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ, համաձայն դրանց ռազմավարական ներդրողների համար կսահմանվեն ավելի մեղմ հարկային պայմաններ, ինչպես նաև նոր միջուկային էներգաբլոկում արտադրվող էլեկտրական էներգիայի սակագինը կլինի ավելի մրցունակ և ներքին սպառողների համար մատչելի:<br>**2. Իրավական ակտի դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ներդրողների համար հարկային արտոնությունների սահմանում: |
| 18. | **«Իրան-Հայաստան նավթամթերատարի վերաբերյալ նախագծման, կառուցման և շահագործման նորմաների հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**<br>**Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Անհրաժեշտ է սահմանել նոր կառույցի համար նախագծման, կառուցման և շահագործման նորմաներ:<br>**Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Առ այսօր Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ կառույց չի եղել և անհրաժեշտ է ստեղծել նորմատիվային դաշտ:<br>**Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կմշակվի նորմատիվ իրավական ակտ համահունչ միջազգային նմանատիպ ակտերին, որը կներառի նախագծման, կառուցման և շահագործման նորմեր:<br>**Իրավական ակտի դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կապահովի Իրան-Հայաստան նավթամթերատարի վերաբերյալ նախագծման, կառուցման և շահագործման աշխատանքները |
| | **ՀՀ բնապահպանության նախարարություն** |
| 19. | **«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը/ նպատակը**<br>«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի մշակումը նախատեսված է ՀՀ վարչապետի 2010թ. ապրիլի 7-ի N 229-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 4-րդ կետով:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը սահմանում է բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագները և դրա հաշվարկման ու գանձման կարգը: ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «Հայաստանի |

| | |
|---|---|
| | Հանրապետության կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին» N 71-Ն որոշմամբ հաստատվել է կենդանիների նոր Կարմիր գիրքը (նոր ցանկը): Քանի որ դրա հետևանքով անհամապատասխանություն է առաջացել այս երկու իրավական ակտերի միջև, անհրաժեշտություն է առաջացել օրենքի` Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներին վերաբերող դրույթները համապատասխանեցնել նոր ցանկին:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է օրենքի` կենդանիների Կարմիր գրքին վերաբերող դրույթները համապատասխանեցնել այդ գրքում գրանցված կենդանիների տեսակներին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Բնապահպանական իրավախախտումների հետևանքով Կարմիր գրքում գրանցված կենդանիների նոր տեսակների համար պատճառված վնասի հատուցման սակագների սահմանումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին ենթակետով սահմանված` Կարմիր գրքի կենդանատեսակների որսի և (կամ) ոչնչացման դեպքում կենդանական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների համապատասխանեցում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն որոշմամբ հաստատված` ՀՀ կենդանիների նոր Կարմիր գրքում ընդգրկված կենդանիների ցանկին (ցանկում ընդգրկված տեսակների և դրանց անվանումների ճշտում): Այդ նկատառումներով խնդրո առարկա ենթակետից կհանվեն կենդանիների այն տեսակները, որոնք ներկայումս հանվել են ՀՀ կենդանիների Կարմիր գրքից և կավելացվեն այն տեսակները, որոնք ներառվել են ՀՀ կենդանիների նոր Կարմիր գրքում: |
| 20. | **«Հայաստանի Հանրապետության տարածքում տեխնածին աղտոտված հողերի մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը/ նպատակը**<br><<Հայաստանի Հանրապետության տարածքում տեխնածին աղտոտված հողերի մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման ընդունումը պայմանավորված է հողերի որակի և բաղադրության լիարժեք ու մանրազննին ուսումնասիրության և տեղեկատվական բանկի ստեղծման անհրաժեշտությամբ` տեխնածին աղտոտված հողերի մոնիթորինգի իրականացման հաստատված մեթոդաբանության հիման վրա:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հողը բնական պաշարների հիմնական բաղկացուցիչ մասերից է և մարդածին ներգործության ազդեցության ներքո հողերի ոչ արդյունավետ օգտագործումը հանգեցնում է ամբողջ էկոհամակարգի խախտմանը: Հայաստանը պատկանում է սակավահող, երիտասարդ հողային ծածկույթով երկրների թվին, որի պատճառով չափազանց արդիական է հողերի կայուն կառավարման համար անհրաժեշտ հողերի որակի, վիճակի, վնասակար ներգործության հետևանքով դրանց ֆիզիկաքիմիական ցուցանիշների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվական բազայի առկայության խնդիրը: Տեխնածին աղտոտված հողերի (բացառությամբ կառուցապատված և կառուցապատման համար նախատեսված, ինչպես նաև անտառային հողերի) մոնիթորինգի իրականացման հաստատված մեթոդաբանության բացակայությունը հանգեցնում է մի շարք բնապահպանական խնդրների լուծման բարդեցմանը: (ՀՀ կառավարության 30.10.2008թ. N 1207-Ն որոշմամբ հաստատված կայուն զարգացման ծրագրի 12.5 գլխի 735, 750, 751 և 752-րդ կետեր):<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հողերի (բացառությամբ կառուցապատված, կառուցապատման համար նախատեսված և անտառային հողերի) պահպանության և մոնիթորինգի |

| | |
|---|---|
| | բնագավառում պետական կառավարման մարմին է հանդիսանում ՀՀ բնապահպանության նախարարությունը (ՀՀ կառավարության 19.02.2009թ. N 276-Ն որոշում), որի իրավասություններից է հողերի պահպանության արդյունավետ կառավարման, մասնավորապես, պետական վերահսկողության կազմակերպման նպատակով հողերի վիճակի մոնիթորինգի իրականացման, դրա մասին տեղեկատվության ստացման, հավաքագրման և փոխանակման գործընթացի կանոնակարգումը:<br>Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է մշակել աղտոտված հողերի որակի ուսումնասիրության և գնահատման հստակ, համապարփակ մեթոդաբանություն, որը կապահովի հողերի որակի և բաղադրության լիարժեք և մանրազննին ուսումնասիրություն՝ մոնիթորինգի ցուցանիշներին և քիմիական աղտոտվածության առաջնային ինդիկատորների գնահատման սանդղակին համապատասխան:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Տեխնածին աղտոտված հողերի մոնիթորինգի իրականացման մեթոդաբանության մշակում<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հաստատված և միջազգային ստանդարտներին համապատասխան՝ տեխնածին աղտոտված հողերի որակի ուսումնասիրության և գնահատման հստակ, համապարփակ մեթոդաբանության առկայություն, որը կապահովի հողերի որակի և բաղադրության լիարժեք և մանրազննին ուսումնասիրություն՝ մոնիթորինգի ցուցանիշներին և քիմիական աղտոտվածության, ըստ ինդիկատորների, չափորոշիչների գնահատման սանդղակի: Դա էլ իր հերթին կստեղծի տեղեկատվական բանկի ներդրման հնարավորություն: |
| 21. | **«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2012 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը/ նպատակը**<br>«Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2012 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման անհրաժեշտությունը բխում է «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 12, 13 և 14-րդ հոդվածներից և «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքից:<br>Ծրագրի նախագիծը նպատակ ունի ապահովելու Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերի պահպանության, լճի էկոլոգիական հավասարակշռի վերականգնման և Սևանա լճի ջրհավաք ավազանի կենսաբազմազանության բնականոն ներդաշնակ զարգացմանն ու բնական պաշարների կայուն օգտագործմանն ուղղված 2012թ. նախատեսված ծրագրերի ու միջոցառումների պարտադիր կատարումը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն համալիր ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման տարեկան համամասնությունները, որոնք սահմանում է կառավարությունը, պետք է արտացոլվեն Սևանա լճի մասին տարեկան ծրագրերում:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող իրավական ակտով ներկայացվելու են համալիր ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման 2012թ. տարեկան համամասնությունները՝ արտացոլված 2012թ. տարեկան ծրագրում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ծրագրի կարգավորման առարկան Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերն են:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի կիրառման դեպքում ակնկալվում է 2012 թ. ընթացքում Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի էկոհամակարգերի, բնական պաշարների պահպանության և կայուն օգտագործման, այդ թվում՝ Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի գետերի ջրերի աղտոտվածության, հիդրոկենսաբանական, |

| | |
|---|---|
| | հիդրոօթերևութաբանական, ինժեներաերկրաբանական մոնիթորինգի իրականացման, շրջակա միջավայրի մոնիթորինգի բարելավման, ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման, ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման, աղբավայրերի բարեկարգման և անխափան աղբաթափման, արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների վերարտադրության, «Սևանե ԱՊ-ի գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների, ինչպես նաև Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնմանը, պահպանությանը, վերարտադրմանն ու օգտագործմանն ուղղված այլ միջոցառումների կատարման ապահովում ու տեղի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման ապահովում՝ ստեղծելով նախադրյալներ հետագա տարիների առաջընթացի համար: |
| **ՀՀ ֆինանսների նախարարություն** | |
| 22. | **«Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակական և արժութային սահմանափակումները սահմանելու մասինե ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Կուտակային կենսաթոշակների մասինե ՀՀ օրենքի նախագիծը ներկայացված է ՀՀ Ազգային ժողովի 2-րդ ընթերցմամբ՝ քննարկման: Համաձայն օրենքի նախագծի կամավոր կուտակային կենսաթոշակների բաղադրիչը Հայաստանի Հանրապետությունում կներդրվի օրենքը հրապարակվելու օրվան հաջորդող 10-րդ օրը: Հաշվի առնելով այն, որ 2011թ. կամավոր կուտակային ֆոնդերը կիրականացնեն ներդրումային գործընթացը, անհրաժեշտ է որպեսզի ՀՀ կառավարությունը սահմանի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակական և արժութային չափանիշներ, որի նպատակն է նվազեցնել առկա ռիսկերը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Միջոցառման իրականացման արդյունքում ՀՀ օրենսդրությամբ կսահմանվեն կամավոր կուտակային ֆոնդերի ակտիվները ֆինանսական գործիքներում ներդրման քանակական և արժութային սահմանափակումները:<br>**3. Իրավական ակտերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կամավոր կուտակային ֆոնդերի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակական և արժութային սահմանափակումների սահմանմամբ կիրականացվի կամավոր կենսաթոշակային ներդրումային ակտիվների դիվերսիֆիկացիա և ռիսկերի կառավարում: |
| 23. | **«Աուդիտի միջազգային ստանդարտները հրապարակելու մասինե ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող աուդիտի ստանդարտները հաստատվել են հիմք ընդունելով Հաշվապահների միջազգային դաշնության կողմից 2000թ. հունվարի 1-ին հրապարակված աուդիտի միջազգային ստանդարտները: 2000 թվականից հետո զգալիորեն փոփոխվել են աուդիտի միջազգային ստանդարտները: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործող աուդիտի ստանդարտները զգալիորեն տարբերվում են աուդիտի միջազգային ստանդարտներից:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետությունում աուդիտի միջազգային ստանդարտների ներդրմամբ աուդիտորական գործունեության ոլորտը կկարգավորվի միջազգային չափանիշներին համապատասխան:<br>**3. Իրավական ակտերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված իրավական ակտի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական գործունեությունը կիրականացվի միջազգային չափանիշներին համապատասխան: |

| ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն | |
|---|---|
| 24. | **«Արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը պատճառված վնասի գնահատման և փոխհատուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը պատճառված վնասի գնահատման և փոխհատուցման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի «զ» կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի հուլիսի 26-ի N 588-Ա որոշմամբ հաստատված ցանկի 5-րդ կետի պահանջներից:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկա վիճակում արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը պատճառված վնասի փոխհատուցումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 19-ի «Տարերային աղետների դեպքում պետական միջամտության քաղաքականության հայեցակարգի մասին» N 726 որոշմամբ:<br>Արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը պատճառված վնասի գնահատման և փոխհատուցման կանոնակարգումը կնպաստի տուժած բնակչությանն անհրաժեշտ օգնություն ցուցաբերելուն:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը պատճառված վնասի գնահատման և փոխհատուցման կարգում կտրվեն լուծումներ օրենսդրորեն չկարգավորված խնդիրներին՝ հաշվի առնելով արտակարգ իրավիճակներ առաջացրած աղետը և դրա ծավալները: Անհրաժեշտ է հստակեցնել աղետի դեպքում առաջին օգնության կազմակերպումը, վնասի հետագա փոխհատուցման մեխանիզմները, ինչպես նաև հստակեցնել պետական աջակցությունը՝ միանվագ օգնություն անօթևան մնացած, վթարային կամ շահագործման համար վտանգավոր դարձած բնակարանների, մարդկային զոհեր ունեցած կամ հաշմանդամներ դարձած անդամներով ընտանիքներին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Աղետի հետևանքով բնակչությանը պատճառված վնասի գնահատման և հասցված վնասի ֆինանսական կամ նյութական փոխհատուցման մեխանիզմների սահմանում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառումը թույլ կտա կանոնակարգել արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը պատճառված վնասի գնահատման և փոխհատուցման գործընթացը: |
| 25. | **«Քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից՝ բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում և գոտևորման նախագծերում հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների գործունեության կայունության ապահովման և նպատակահարմար տեղաբաշխման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>«Քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից՝ բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում և գոտևորման նախագծերում հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների գործունեության կայունության ապահովման և նպատակահարմար տեղաբաշխման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «բ» կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի հուլիսի 26-ի N588-Ա որոշմամբ հաստատված ցանկի 8-րդ կետի պահանջներից: |

| | |
|---|---|
| | **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Տնտեսության զարգացմանը զուգընթաց առաջ են եկել նոր ռիսկեր և վտանգներ, դժվար վերահսկելի վտանգավոր գործընթացներ՝ ինտենսիվ շինարարություն, համատեղ օբյեկտների գոյացում, պայթունահրդեհավտանգ միավորումների առաջացում և այլն, որոնց գնահատման և վերահսկման համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ և չափանիշներ:<br>Արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանությունը լինելով ազգային անվտանգության մի բաղադրիչ, նոր հրամայականներ է առաջ քաշում՝ արտացոլում օրենսդրության մեջ որպես մարդու հիմնական իրավունք և պետության խնդիր, պաշտպանվածության իրավական երաշխիքների և գործուն մեխանիզմների ձևավորում:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br><br>Քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից՝ բնակավայրերի գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում և գոտնորման նախագծերում կայունության ապահովումը և նպատակահարմար տեղաբաշխումը պետք է կատարվի հաշվի առնելով նրանց խոցելիության աստիճանը և վարքի կանխատեսումը: Խոցելիության աստիճանի գնահատման աշխատանքները կատարվում են իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնագիտացված կազմակերպությունների կողմից:<br>**2. Կարգավորման առարկան**<br><br>Քաղաքացիական պաշտպանության տեսանկյունից՝ բնակավայրերի գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում և գոտնորման նախագծերում հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների գործունեության կայունության ապահովումը և նպատակահարմար տեղաբաշխումը նպաստում է բնակչության պաշտպանության պատրաստվածության գերակայության առավել վտանգավոր տարածքներում ապահովմանը, առավել վտանգավոր տարածքներում իրավական ռիսկերի հաշվառմանը՝ արտահայտված տնտեսական կորուստների և վնասների չափանիշներով:<br>**3. Իրավական ակտերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Որոշման նախագծի ընդունումը պայմաններ կստեղծի հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության, ռիսկերի նվազեցման և հետևանքների մեղմացման հետ կապված հարցերի առաջնահերթ լուծման համար, ինչպես նաև կնպաստի հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների խոցելիության նվազեցման ապահովմանը: |
| 26. | **«Կառավարման, կապի ու ազդարարման համակարգերը հիմնելու և դրանց բնականոն գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը):**<br>Սույն կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «ե» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի «ա» կետերի պահանջներից:<br>Ի կատարումն ՀՀ վարչապետի 2010 թվականի հուլիսի 26-ի N 588-Ա որոշմամբ սահմանված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» և «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների իրականացման պլան-ժամանակացույցի 9-րդ կետի՝ անհրաժեշտ է մշակել |

«Կառավարման, կապի ու ազդարարման համակարգերը հիմնելու և դրանց բնականոն գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» որոշում:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Հայաստանի Հանրապետությունում հեռախոսակապի ծառայությունները մատուցվում է երեք ընկերությունների կողմից՝ մեկ քաղաքային և երեք բջջային:

Քաղաքային հեռախոսակապի բարելավման նպատակով <<Արմենտել>>ՓԲԸ-ի կողմից իրականացվել է ավտոմատ հեռախոսակայանների թվայնացման գործընթաց, որի արդյունքում ավտոմատ հեռախոսակայաններից ապամոնտաժվել են <<Պ-160, Պ-164>> ղեկավարման վահանակները՝ պարզաբանելով թե թվային կայանների միջոցով հնարավոր չէ աշխատեցնել ազդարարման սարքավորումները:

Հայաստանի Հանրապետության մարզերի գյուղական համայնքներում <<Արմենտել>>ՓԲԸ-ի կողմից ապամոնտաժվել են ֆիզիկական հեռախոսագծերը, և հեռախոսակապի տրամադրումն իրականացվել է ռադիոհեռախոսների միջոցով, որոնց միջոցով ևս հնարիավոր չէ աշխատեցնել ազդարարման սարքավորումները:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ԱԻ-ի և ՔՊ-ի ոլորտների կառավարման համակարգերը կարիք ունեն լուրջ և հետևողական բարեփոխման ու հզորացման:

Այսօրվա դրությամբ, կախված տնտեսական, ֆինանսական դժվարություններից և ղեկավար մարմինների սուբյեկտիվ վերաբերմունքից ու հնարավորություններից, դեռևս ոչ բոլոր պետական կառավարման մարմինների կողմից են ստեղծվել պահեստային կառավարման կետեր, իսկ ստեղծված պահեստային կառավարման կետերը հիմնականում չեն կահավորված անհրաժեշտ գույքով, կապի միջոցներով՝ որոնք կարող են ապահովել հուսալի և մշտական կապ, ինչպես նաև չեն համապատասխանում ՔՊ-ի ինժեներատեխնիկական նորմերին: Համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների կողմից պահեստային կառավարման կետեր հիմնականում չեն ստեղծվել:

Հայաստանի Հանրապետության կենտրոնացված ազդարարման համակարգն ստեղծվել է 1974 թվականին, որը ներկայումս բաղկացած է խորհրդային տարիներին մեզ ժառանգություն ստացած ազդարարման սարքավորումներից՝ <<Պ-160, Պ-164>> ղեկավարման վահանակներից և եռաֆազ սնուցմամբ աշխատող էլեկտրաշչակներից: Կենտրոնացված ազդարարումն իրականացվում էր ֆիզիկական հեռախոսագծերի միջոցով: Ներկայումս ազդարարման սարքավորումների մեծ մասը բացակայում է, իսկ եղածներն էլ հնարավոր չէ լիովին շահագործել:

**2. Կարգավորման առարկան**

Կառավարության սույն որոշումը կանոնակարգելու է արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության համակարգի կառավարման, կապի և ազդարարման գործընթացները, ինչպես նաև դրանց հիմնման և բնականոն գործունեության ապահովման ձևերն ու ժամկետները:

Համաձայն <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> և <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքների՝ լիազոր մարմինը մշակում է քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ոլորտներին վերաբերվող պլաններ և ծրագրեր, ապահովում դրանց սահմանված կարգով ներկայացումը հաստատման և կազմակերպում դրանց կատարումը:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Սույն նախագիծը ներկայացվում է պատերազմի սպառնալիքի, հակառակորդի կողմից օդային հարձակման, արտակարգ իրավիճակների սպառնալիքի կամ առաջացման դեպքում բնակչությանն օպերատիվ ազդարարելու և <<Քաղաքացիական պաշտպանության մասին>>, <<Բնակչության պաշտպանության մասին>> ՀՀ օրենքներով նախատեսված միջոցառումների իրականացման ժամանակ հուսալի, կայուն ու անընդհատ կառավարման և կապի ապահովման համար:

| | |
|---|---|
| 27. | **<<Պաշտպանական կառույցների շինարարության և ապահովման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br><<Պաշտպանական կառույցների շինարարության և ապահովման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի <<ը>> կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի հուլիսի 26-ի N 588-Ա որոշմամբ հաստատված ցանկի 10-րդ կետի պահանջներից:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><br>Ներկա վիճակում առկա է բնակչության պաշտպանության կազմակերպման թույլ և անբավարար մակարդակ՝ ապաստարանների և այլ պատսպարման միջոցների ոչ պիտանի և քիչ պիտանի ֆոնդ:<br>Արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ բնակչության պատսպարումն իրականացվում է պաշտպանական կառույցների միջոցով, որը պետք է համապատասխանի ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերի պահանջներին:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նոր շինարարություն ծավալելիս ՀՀ օրենսդրությամբ պարտադրել կառուցելու ապաստարաններ, հրդեհամարման համակարգեր և փրկարարական աշխատանքներին նպաստող այլ համակարգեր:<br>Բնակավայրերի տարաբնակեցման և զարգացման ծրագրերում հաշվի առնել ինչպես բուն բնակավայրերի դիրքի ընտրությունը, այնպես էլ արտադրական հզորությունների նպատակահարմար բաշխումն արտակարգ իրավիճակների և պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության կազմակերպման տեսանկյունից:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Պաշտպանական կառույցների համակարգը, որն ապաստարանների և թաքստոցների ամբողջություն է, կախված պաշտպանական կառույցների տեղակայման վայրից և նշանակությունից, ապահովում է բնակչության պատսպարումը: Կարգավորման առարկա է հանդիսանում պաշտպանական կառույցների շինարարության նախապես պլանավորումը, նախագծումը, պահպանման ու շահագործման և վերանորոգման միջոցառումների ապահովումը:<br>**3. Իրավական ակտերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագիծը թույլ կտա բարձրացնել պաշտպանական կառույցների հուսալիությունը, ապահովել պատսպարման միջոցառումների կազմակերպման գործընթացի կանոնակարգված իրականացումը: |
| **ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն** | |
| 28. | **«Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Մարզական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստման համար մարզակառույցները ժամանակակից մարզական գույքով ապահովելը, նրանց նյութատեխնիկական պայմանների բարելավումը<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** |

| | |
|---|---|
| | Ոչ բոլոր մարզակառույցներն են համալրված անհրաժեշտ և ժամանակակից մարզագույքով և մարզասարքերով: 2010 թվականին տրամադրվել է 21 անվանում մարզագույք՝ 30 կազմակերպությունների: 2011 թվականի համար հայտ են ներկայացրել 60-ից ավելի կազմակերպություններ՝ շուրջ 350 անուն մարզագույքի համար: Առաջացել է մարզակառույցներն անհրաժեշտ գույքով ապահովելու խնդիր:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>2011 թվականին 50.000.000 դրամի շրջանակներում անհրաժեշտ մասնագիտական մարզագույքի և մարզասարքերի ձեռքբերում և բաշխում: Մասնագիտական մարզագույքի և մարզասարքերի ձեռքբերման և բաշխման աշխատանքների համակարգում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Մարզադպրոցներում մարզումների համար բավարար պայմանների ստեղծում՝ մարզադպրոցներին տրամադրելով համապատասխան մարզագույք:<br>**3.Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Մարզադպրոցների մարզագույքի պահանջարկի թեկուզ մասնակի բավարարում: |
| | **ՀՀ սփյուռքի նախարարություն** |
| 29. | **«Սփյուռքի երիտասարդության Հայաստան պարբերական այցելությունների՝ «Արի Տունե 2011 թվականի ծրագիրը հաստատելու մասինե ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2008թվականի հուլիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>> N 878-Ն և ՀՀ կառավարության 2009թվականի օգոստոսի 20-ի <<Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին>> N34 նիստի արձանագրային որոշումների դրույթներից:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ սփյուռքի նախարարությունը 2009 թվականից իրականացնում է «Սփյուռքի երիտասարդության այցելություններ Հայաստան>> ծրագիրը՝ «Արի տունե խորագրով:Ծրագրի նպատակն է աշխարհասփյուռ հայ երիտասարդներին ճանաչելի դարձնել Հայաստան-հայրենիքը, նպաստել երիտասարդական կապերի ամրապնդմանը, նրանց մեջ սերմանել ազգային արժեքների նկատմամբ հարգանք և անհրաժեշտ վերաբերմունք, սփյուռքահայ երիտասարդությանը ծանոթացնել հայ ժողովրդի ավանդույթներին ու սովորույթներին, հայ ընտանիքին, հայ մարդու հոգեկերտվածքին, աջակցել Հայաստան-սփյուռք կրթամշակութային մերձեցմանը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագիրն իրականացվում է 6 ամիս տևողությամբ՝ մայիս-հոկտեմբեր ամիսներին՝ փուլերով, յուրաքանչյուրը՝ 2 շաբաթ տևողությամբ: Ծրագրին մասնակցում են 14-20 տարեկան սփյուռքահայ պատանիներ և աղջիկներ:<br>2009 թվականին ծրագրին մասնակցել են շուրջ 300, իսկ 2010 թվականին՝ շուրջ 600 մարդ: Մասնակիցների թվի շարունակական աճն անհրաժեշտություն է առաջացնում հյուրընկալող ընտանիքների բազայի ստեղծմանը զուգահեռ կիրառել նաև մասնակիցների հյուրընկալման ճամբարային տարբերակը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Արի տունե ծրագրի շրջանակներում ՀՀ սփյուռքի նախարարության միջոցներով կազմակերպվում է միջոցառումների լայն ծրագիր, որի ընթացքում իրականացվում են սփյուռքի և հայաստանցի երիտասարդ հասակակիցների ակտիվ շփումներ, հայրենակցական կապերի ստեղծում, ծանոթացում ՀՀ պատմա-մշակութային հուշարձաններին, հայոց պատմությանը, շրջայցեր Հայաստանի տեսարժան վայրեր, համերգների, թատերական ներկայացումների, ցուցահանդեսների, փառատոների դիտումներ:<br>Իրականացվում են նաև ուսուցողական ծրագրեր՝ հայոց լեզու, գրականություն, հայ ժողովրդի և հայ եկեղեցու պատմություն, մասնակցություն երգի, պարի, գեղարվեստի խմբակներին: Կազմակերպվում են հանդիպումներ նշանավոր մարդկանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական |

| | |
|---|---|
| | պաշտոնյաների հետ։<br>2010 թ. ծրագրի իրականացման արդյունքները վկայում են, որ նրա շարունակականությունը նպաստում է հայապահպանությանն ու հայադարձությանը, երիտասարդների միջև հաղորդակցության միասնական ցանցի ստեղծմանը։<br>**3. Իրավական ակտերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքները**<br>Ելնելով վերոգրյալից՝ «Արի տունե 2011 թ. ծրագիրը հաստատելու մասինե ՀՀ կառավարության որոշման նախագծի հաստատմամբ կապահովվի ծրագրի շարունակականությունը՝ դրանից բխող դրական բոլոր միտումներով։ |
| 30. | **«Համահայկական համաժողովների կազմակերպման 2011 թվականի ծրագիրը հաստատելու մասինե ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը /նպատակը/**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2008թվականի հուլիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>> N 878-Ն և ՀՀ կառավարության 2009թվականի օգոստոսի 20-ի <<Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին>> N 34 նիստի արձանագրային որոշումների դրույթներից։<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ելնելով Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման դրույթներից՝ ՀՀ կառավարությունը նախատեսում է ստեղծել սփյուռքի գիտական,կրթական,տնտեսական,մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմներ։ Այդ ուղղությամբ կարևոր քայլ էին 2009 և 2010թվականների ընթացքում կազմակերպված համաժողովները,որոնց արդյունքում ստեղծվեցին մասնագիտական ընկերակցություններ,մշակվեցին գործունեության ծրագրեր։ Ներկայումս առկա է այդ աշխատանքները շարունակական դարձնելու,ձևավորված մեխանիզմները մշտապես հղկելու անհրաժեշտությունը։<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագիրը հնարավորություն կտա հայտնաբերելու, հաշվառելու և համախմբելու սփյուռքի մասնագիտական ներուժը, ձևավորելու ընդհանուր մոտեցում համահայկական խնդիրների լուծման համար։<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծի հաստատմամբ կկարգավորվի 2011թվականին նախատեսված համաժողովների կազմակերպման գործընթացը։<br>**3. Իրավական ակտերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքները**<br>Ծրագրի նախագծի հաստատումը հնարավորություն կտա 2011 թվականին կազմակերպելու մի շարք համաժողովներ՝ «Ճարտարապետների համահայկական 2-րդ համաժողովե, «Սփյուռքի հայկական համայնքների ղեկավարների տարածաշրջանային համաժողովներե, «Սփյուռքի երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների հավաքե,<<Սփյուռքի ԶԼՄ-ների երիտասարդ լրագրողների դպրոց>> ։ |
| 31. | **<<Սփյուռքի զարգացման հեռանկարները թեմայով միջազգային համաժողովի կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման նախագիծը բխում է ՀՀ կառավարության 2008թվականի հուլիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>> N 878-Ն և ՀՀ կառավարության 2009թվականի օգոստոսի 20-ի <<Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին>> N 34 նիստի արձանագրային որոշումների դրույթներից;<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանը սփյուռք ունեցող այլ երկրներից տարբերվում է նրանով, որ հայկական սփյուռքը ներառում է աշխարհի հայության 2/3-ը։Ուստի շատ կարևոր է, որ սփյուռքը, որպես երևույթ, ունենա իր պաշտպանվածության երաշխիքները, լինի միջազգային կառույցների ուշադրության ներքո, հաշվի առնվեն սփյուռքի առաջացման պատճառները և տրվեն զարգանալու, ազգային արմատներից չկտրվելու միջազգայնորեն ընդունելի հնարավորություններ։ |

| | |
|---|---|
| | **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծի հաստատումը հնարավորություն կտա Հայաստանում կազմակերպել համաժողով, որին մասնակից կդառնան սփյուռք ունեցող տարբեր երկրների պետական լիազորված մարմինների ղեկավարներ, ովքեր կարող են համատեղ ընդունել հայտարարություն՝ ուղղված միջազգային կառույցներին:Համաժողովը հնարավորություն կտա, որ հայկական սփյուռքը դառնա նախաձեռնող այդ բնագավառում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծի հաստատմամբ կյանքի կկոչվի <<Սփյուռքի զարգացման հեռանկարները>> թեմայով համաժողովի կազմակերպումը, որի արդյունքում համակողմանիորեն կբնորոշվի <<Սփյուռք>> երևույթը, կընդունվի նրա վերաբերյալ հայտարարություն:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքները**<br>Համաժողովը կնպաստի հայկական սփյուռքի բարոյական զորացմանն ու համախմբմանը՝ ընդդեմ մարդկության դեմ ուղղված հանցանքների և հանուն պատմական արդարության հաղթանակի: |
| 32. | **«ԱՊՀ տարածաշրջանի հայ համայնքների կրթամշակութային խնդիրների օժանդակության ծրագրի մասինե ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2008թվականի հուլիսի 24-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>> N 878-Ն և ՀՀ կառավարության 2009թվականի օգոստոսի 20-ի <<Հայաստան-սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին>> N 34 նիստի արձանագրային որոշումների դրույթներից:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ի տարբերություն մյուս տարածաշրջանների՝ ԱՊՀ հայ համայնքները վերջին 2 տասնամյակներին դարձել են ավելի հայահոծ՝ ի հաշիվ Հայաստանից մեկնածների: Դրան հակառակ, մեծացել է ուծացման վտանգը. նոր սերունդը հաճախում է ռուսական դպրոցներ, հայ երիտասարդությունը դժվարանում է խոսել մայրենի լեզվով: Արդյունքում՝ կարող է օտարվել ազգային արմատներից:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ԱՊՀ տարածաշրջանի համար կրթամշակութային ծրագրի մշակումն ու ընդունումը թույլ կտա հատկապես երիտասարդությանը վերադարձնել իրենց արմատներին, նրանց մեջ զորացնել ազգային ինքնության գիտակցությունը, պատասխանատվություն սերմանել մայր հայրենիքի բախտի ու ճակատագրի հանդեպ, ամրապնդել կապերը մայր հայրենիքի հետ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ԱՊՀ տարածաշրջանի հայկական համայնքներն ունեն այն առանձնահատկությունը,որ վերջին տարիներին Հայաստանից գնացածների սերունդը տիրապետում է մայրենի լեզվին, բազմաթիվ թելերով կապված է հայրենիքի հետ, ավելի հաճախ է լինում Հայաստանում, ուստի ավելի դյուրին է նրանց երեխաներին ներգրավել արևելահայերենով դասավանդվող մեկօրյա կամ հանրակրթական դպրոցներում, ապահովել հայկական մշակույթի հետ նրանց արդյունավետ շփումը, նրանց այցելությունները Հայաստան և ՀՀ բուհերում նրանց կրթություն ստանալը:<br>**3. Իրավական ակտերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքները**<br>Չնայած ԱՊՀ տարածաշրջանի ընդարձակ լինելուն, հայության հիմնախնդիրները գրեթե նույնական են և մեկ ընդհանուր ծրագիր մշակելն ամբողջ տարածաշրջանի համար հնարավորություն կտա ավելի արդյունավետորեն նպաստել հայապահպանության գործին, սերտացնել մայր հայրենիքի հետ նրանց կապերը,ինչպես նաև նպաստել հայրենադարձությանը: |
| **ՀՀ առողջապահության նախարարություն** | |
| 33. | **Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները Հայաստանի Հանրապետությունում ներդնելու և դեղերի շրջանառության ոլորտում բարեփոխումների ժամանակացույցից բխող միջոցառումների իրականացում** |

| | |
|---|---|
| | **1. Միջոցառման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջոցառման անհրաժեշտությունը  պայմանավորված է դեղերի արտադրության ոլորտում ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 25-ի «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները հաստատելու մասին» N 1603-Ն որոշումը կիրարկելու և  դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները ներդնելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունննների ներկա վիճակը**<br>ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 25-ի « Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները հաստատելու մասին» N 1603-Ն որոշմամբ սահմանվել են դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները, որոնց ներդրման համար որոշման 3-րդ կետով նախատեսվում է սահմանել ժամանակացույց՝ դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները Հայաստանի Հանրապետությունում ներդնելու և դեղերի շրջանառության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու նպատակով:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 25-ի «Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնները հաստատելու մասին» N 1603-Ն որոշման 3-րդ կետով նախատեսված ժամանակացույցը որոշմամբ նախատեսվում է ընդունել 2011թ. հունվարի 1-ից հետո մեկամսյա ժամկետում, որով կնախանշվեն այն միջոցառումները որոնք ուղղված կլինեն դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնների ներդրմանը և դեղերի շրջանառության ոլորտում բարեփոխումների իրականացմանը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Դեղերի պատշաճ արտադրական գործունեության կանոնների ներդրման միջոցառումների իրականացման  հետ կապված հարաբերություններն են:<br>**3. Իրավական ակտի կատարման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Դեղերի արտադրության և արտադրության գործընթացում որակի հսկողության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում: |
| 34. | **«Հոգեբուժական կազմակերպությունում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի ընդունումը  բխում է «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի պահանջներից  և պայմանավորված է հոգեբուժական բժշկական հաստատություններում պահվող հոգեկան խանգարումներով տառապող անձանց սոցիալական պաշտպանության համապատասխան երաշխիքների ապահովման անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**<br>Ներկայումս հոգեբուժական կազմակերպությունում պահվող անձանց սննդի, հանդերձանքի նվազագույն ստանդարտներ սահմանված չեն:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները՝**<br>«Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով ամրագրված պահանջը կատարելու և հոգեբուժական հաստատություններում պահվող հոգեկան խանգարումներով տառապող անձանց սոցիալական պաշտպանության համապատասխան երաշխիքների ապահովման նպատակով  կմշակվի «Հոգեբուժական կազմակերպությունում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:<br>**2. Կարգավորման առարկան** |

| | |
|---|---|
| | Հոգեբուժական կազմակերպությունում պահվող անձանց սննդի, հանդերձանքի նվազագույն չափաբաժինների սահմանումն է: **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** Նախագծի ընդունմամբ հնարավոր կլինի ամբողջությամբ կարգավորել և միասնական մոտեցում ցուցաբերել հոգեբուժական կազմակերպություններում գտնվող հոգեկան խանգարումներով տառապող անձանց օրական սնուցման նվազագույն նորմերի, հագուստի, կոշիկի, անկողնային պարագաների տեսակների, քանակի և վերջիններիս շահագործման ժամկետների վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա ապահովել հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց սննդի, հագուստի, կոշիկի, անկողնային պարագաների նվազագույն անհրաժեշտ պահանջները: |
| 35. | **«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի** <br><br> **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** <br> Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով ամրագրված և առողջապահության ոլորտի պետական լիազոր մարմնի իրավասությունների շրջանակից դուրս գտնվող հարցերի կանոնակարգման անհրաժեշտությամբ: <br> **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը** <br> Գործող օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանում է ՀՀ առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը: Գործնականում վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ոլորտը լայն է և վերաբերում է ոչ միայն առողջապահության ոլորտին, այլ նաև օժանդակ տեխնոլոգիաների կիրառման արդյունքում ծնված երեխաների գրանցման խնդիրներին, փոխնակ և կենսաբանական մայրերի անաշխատունակության ժամկետների, նրանց անաշխատունակության նպաստներ տրամադրելու հետ կապված խնդիրներին՝ հարցեր, որոնց կարգավորումը դուրս է առողջապահության ոլորտի պետական լիազոր մարմնի իրավասությունների շրջանակից և կարող է կանոնակարգվել կառավարության որոշմամբ: <br> **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները՝** <br> Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ոլորտը կանոնակարգելու և տարբեր գերատեսչությունների իրավասություններին վերաբերող հարցերը կանոնակարգելու նպատակով նախատեսվում է փոփոխություն կատարել «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում՝ սահմանելով, որ օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակները, բժշկական գործելակերպը փոխնակ և կենսաբանական մայրերի անաշխատունակության ժամկետների, նրանց անաշխատունակության նպաստներ տրամադրելու հետ կապված առանձնահատկությունները կսահմանվեն ՀՀ կառավարության կողմից: <br> **2. Կարգավորման առարկան**: Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգի, մեթոդների տարատեսակների ու բժշկական գործելակերպի սահմանման իրավասությունը ՀՀ կառավարությանը վերապահելն է: <br> **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> Նախագծի՝ կառավարության հավանությանն արժանանալու և ԱԺ-ում ընդունվելու դեպքում վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը կսահմանվեն ՀՀ կառավարության կողմից: |
| 36. | **«ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 15-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի** |

| | |
|---|---|
| | **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 15-ի N 2121-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է  ախտածին միկրոօրգանիզմների՝ ժամանակակից գիտական բացահայտումներին համապատասխան, միջազգայնորեն ընդունված չափանիշներով դասակարգված և կենդանիների ու մարդու համար ընդհանուր ախտածիններով համալրված ցանկի առկայությամբ: Վերջինս հնարավորություն կընձեռի առավել արդյունավետ ապահովելու կենսաբանական անվտանգության հարցերը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**<br>Հայաստանի Հանրապետությունում ախտածնության 1-4-րդ խմբերի միկրոօրգանիզմների ցանկը ներկայումս կանոնակարգվում է ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 15-ի N 2121-Ն որոշմամբ: Սակայն վերջինս կարիք ունի լրամշակման, քանի որ միկրոօրգանիզմների դասակարգումը չի համապատասխանում միջազգային մոտեցումներին: Ինչպես նաև գործող իրավական ակտը վերաբերում է միայն մարդու համար ախտածնության 1-4-րդ խմբի միկրոօրգանիզմներին, իսկ այսօր արձանագրվող բազմաթիվ զոոնոզ հիվանդությունների հարուցիչներ ընդհանուր են մարդկանց և կենդանիների համար, նոր ծագող հիվանդությունների գրեթե 75%-ը ունի կենդանական ծագում, ինչպես նաև դեռևս մարդու համար ոչ ախտածին կենդանական ծագման հարուցիչները վաղը կարող են դառնալ մարդու համար ախտածին, ինչպես վկայում է միջազգային վիճակագրությունը վերջին 40 տարվա համար:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով նախատեսվում է համալրել ախտածնության 1-4-րդ խմբի միկրոօրգանիզմների ցանկը՝ ներառելով մարդկանց և կենդանիների համար ընդհանուր նոր ախտածին միկրոօրգանիզմներ, ինչպես նաև միկրոօրգանիզմների դասակարգումը համապատասխանեցնել միջազգային մոտեցումներին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ախտածնության 1-4-րդ խմբի միկրոօրգանիզմների՝ լրամշակած ցանկը սահմանելն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի նախագծի ընդունման դեպքում ախտածնության 1-4-րդ խմբի միկրոօրգանիզմների ցանկը կհամալրվի մարդու և կենդանիների հիվանդություններ առաջացնող 1-4-րդ խմբերի նոր միկրոօրգանիզմներով, ինչպես նաև այդ միկրոօրգանիզմների դասակարգումը կհամապատասխանի միջազգային մոտեցումներին: |
| 37. | **«Արյան և արյան բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության  ազգային ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարություն որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Որոշման անհրաժեշտությունը պայմանավորված է արյան և արյան բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության ոլորտում միասնական քաղաքականությամբ պայմանավորված համաձայնեցված միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում արյան և արյան բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության ոլորտում միջոցառումներ սահմանող  իրավական ակտ ընդունված չէ, ինչը որոշակի առումով խոչընդոտում է արյան ծառայության համակարգի զարգացմանը Հայաստանում:<br>**1.2. առկա  խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով նախատեսվում է կանոնակարգել արյան անհրաժեշտ պաշարների հավաքագրման մեթոդներն ու եղանակները, արյան և դրա բաղադրամասերի |

| | |
|---|---|
| | անվտանգության և որակի ապահովմանն ուղղված միջոցառումները, արյան դոնորության քարոզչությանն ուղղված միջոցառումները, փոխներարկումային բժշկական օգնության անվտանգության և որակի ապահովմանն ուղղված միջոցառումները, արյան ծառայության համար անհրաժեշտ կադրերի, սարքավորումների, նորագույն մեթոդների ապահովմանն ուղղված միջոցառումները,արյան և դրա բաղադրամասերի շրջանառության տեղեկատվական համակարգի (արյան ռեեստրի) վարմանն ուղղված միջոցառումները և ոլորտին առնչվող այլ հարաբերություններ :<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշման կարգավորման առարկան արյան ազգային ծրագիրը կազմող միջոցառումների սահմանումն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունմամբ ակնկալվում է միասնական քաղաքականությամբ պայմանավորված միջոցառումների համապարփակ ծրագրի իրականացման արդյունքում արյան և արյան բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության ոլորտում ծառայությունների որակի, մատչելիության և անվտանգության աստիճանի բարձրացում, դոնորության հանրային իրազեկման աստիճանի բարձրացում, ոլորտում անհրաժեշտ կադրային և տեխնոլոգիական համալրում: |
| 38. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1717-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ ՀՀ-ում որոշ հիվանդություններ (ՄԻԱՎ/ՁԻԱՀ, հեմոֆիլիա, ուղեղի կաթված (հեմոռագիկ, իշեմիկ) տարեցտարի գրանցվող աճի պայմաններում դարձել են առողջապահական կարևորագույն հիմնախնդիր և լուծման նոր մոտեցումների անհրաժեշտություն ունեն:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**<br>Ներկայումս ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, հեմոֆիլիայի, ուղեղի կաթվածների (հեմոռագիկ, իշեմիկ) դեմ արդյունավետ պայքարի, այդ թվում` կանխարգելման աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը շարունակում են մնալ Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի այդ հիվանդությունների դեմ պայքարի կարևորագույն օղակը: Կանխարգելման աշխատանքների ոլորտում խիստ կարևոր այդ հիվանդությունների դեմ անհրաժեշտ դեղորայքային ապահովումը, ինչը բնակչության բոլոր խմբերի համար մատչելի և հասանելի չեն, թանկ արժողության պատճառով:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ելնելով վերոհիշյալից և գիտակցելով (ՄԻԱՎ/ՁԻԱՀ, հեմոֆիլիա, ուղեղի կաթված (հեմոռագիկ, իշեմիկ) հիվանդությունների հիվանդացության նվազեցման առողջապահական, սոցիալական և տնտեսական նշանակությունը՝ առաջարկվում է ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1717-Ն որոշման N 2 հավելվածում փոփոխություններ կատարել և ՄԻԱՎ/ՁԻԱՀ, հեմոֆիլիա, ուղեղի կաթված (հեմոռագիկ, իշեմիկ) հիվանդությունները ներառել այն հիվանդությունների ցանկում, որոնց առկայության դեպքում ամբուլատոր-պոլիկլինիկական, դիսպանսերային և հիվանդանոցային բժշկական հաստատությունների միջոցով դեղերը հիվանդներին կտրվեն անվճար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հիվանդությունների ցանկի լրացումն է, որի արդյունքում բնակչությանը դեղերը կտրամադրվեն անվճար կարգով:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ հնարավոր կլինի հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, հեմոֆիլիայի, ուղեղի կաթվածների (հեմոռագիկ, իշեմիկ) հիվանդություններով տառապող անձանց ապահովելու անհրաժեշտ որակյալ դեղերով: |
| 39. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N1936-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու** |

| | |
|---|---|
| | **մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է արյունաբանական, փոխներարկումային (տրանսֆուզիոլոգիական, պերֆուզիոլոգիական), մանկաբարձական, գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման տեսակների իրականացմանն անհրաժեշտ մասնագիտական որակավորման և տեխնիկական հագեցվածության պարտադիր պահանջների և պայմանների՝ ժամանակակից բժշկության պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ։<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թ. մարտի 27-ի N 276-Ն որոշմամբ ամրագրվել է ՀՀ-ում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը, իսկ մինչ այժմ գործող 2002 թ. դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշմամբ սահմանված պահանջները չեն բավարարում վերոհիշյալ ցանկով ներկայացված արյունաբանական, փոխներարկումային (տրանսֆուզիոլոգիական, պերֆուզիոլոգիական), մանկաբարձական, գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման տեսակների իրականացմանն անհրաժեշտ առաջադրվող արդի պահանջները։<br>**1.2. առկա խնդիրների առաջրկվող լուծումները**<br>Վերոհիշյալ բժշկական ծառայությունների գործող միջազգային ժամանակակից չափանիշներին հնարավորինս ավելի համապատասխանեցման համար գործնականորեն անհրաժեշտ է ՀՀ կառավարության ներկայումս գործող 2002 թ. դեկտեմբերի 5-ի N 1936-Ն որոշման մեջ կատարվող փոփոխություններով ամրագրել այդ ծառայությունների մասնագիտական որակավորման և տեխնիկական հագեցվածության պարտադիր պահանջներն ու պայմանները՝ ըստ մակարդակների՝ հաշվի առնելով ինչպես գիտության և տեխնիկայի ու բժշկական տեխնոլոգիաների առաջընթացի միջազգային վերջին տվյալները, այնպես էլ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական առանձնահատկություններն ու հնարավորությունները։<br>**2. Կարգավորման առարկան**<br>Արյունաբանական, փոխներարկումային (տրանսֆուզիոլոգիական, պերֆուզիոլոգիական), մանկաբարձական, գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման տեսակների իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական որակավորման և տեխնիկական հագեցվածության պարտադիր պահանջների և պայմանների սահմանում։<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>1) ըստ մասնագիտական ներուժի, տեխնիկական, տեխնոլոգիական հագեցվածության աստիճանի՝ կտարբերակվեն մանկաբարձակագինեկոլոգիական ծառայությունների մակարդակները, ինչով կբարելավվի ինչպես մատուցող ծառայությունների որակը, այնպես էլ առավել նպատակաուղղված և ռացիոնալ կդառնա այդ ծառայությունների համար պետական պատվերի շրջանակներում իրականացվող ֆինանսավորումը.<br>2)արյունաբանական, փոխներարկումային (տրանսֆուզիոլոգիական, պերֆուզիոլոգիական) ծառայություննում համապատասխան գործառնական ստորաբաժանումների համակարգը և որակական ու տեխնիկատեխնոլոգիական հագեցվածության պահանջները կհամապատասխանեցվեն արյունաբանական ծառայությունների ներկայացվող ժամանակակից պահանջներին։ |
| 40. | **«Արյան, դրա բաղադրամասերի պահպանման և տեղափոխման կարգը հաստատելու մասինե ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Որոշման անհրաժեշտությունը պայմանավորված է արյան, դրա բաղադրամասերի պահպանման և տեղափոխման հարաբերությունները ՀՀ օրենսդրորեն կարգավորելու անհրաժեշտությունից։<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս արյան, դրա բաղադրամասերի պահպանման և տեղափոխման կարգ սահմանված չէ՝ ինչը տրամադրվող արյան փոխներարկումային բժշկական օգնության որակի պահպանման տեսանկյունից ռիսկեր է պարունակում։ |

| | |
|---|---|
| | **1.2. առկա  խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող որոշման նախագծով նախատեսվում է սահմանել արյան և դրա բաղադրամասերի որակական հատկանիշների ապահովման նպատակով դրանց պահպանման հատուկ ջերմային և անվտանգության պայմաններ, պահանջներն ու ժամկետները, ինչպես նաև այդ պահպանումն իրականացնող պատասխանատուներին:<br>Բացի դրանից, արյան և դրա բաղադրամասերի տեղափոխման ժամանակ վերջիններիս որակական և անվտանգության ցուցանիշների անփոփոխությունն ապահովելու համար առաջարկվում է տեղափոխման համար սահմանել  հատուկ սարքավորումների և (կամ) տրանսպորտային միջոցների առկայություն` սառցային համապատասխան շղթայի պահպանմամբ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշման կարգավորման առարկան արյան, դրա բաղադրամասերի  պահպանման և տեղափոխման հետ կապված հարաբերություններն են:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման արդյունքում ակնկալվում է տեղափոխվող, պահպանվող արյան, դրա բաղադրամասերի անվտանգության ապահովում: |
| 41. | **«Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի ռազմավարական ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի ռազմավարական ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է  Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի  «Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների ներդրման ռազմավարությանը և միջազային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների ներդրման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 44  արձանագրային որոշման N 2 հավելվածի «Ռազմավարական ուղղություն 3» բաժնի Ռազմավարություն 1-ի, 1-ին կետի  պահանջներով, ինչպես նաև միջազգային և եվրոպական մոտեցումներին համապատասխան վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործողությունների կազմակերպմամբ և իրականացմամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**<br>Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործընթացը ներկայումս իրականացվում է ընդհանուր նորմատիվ-իրավական ակտերի` հիմնականում սանիտարահամաճարակային նորմերի և կանոնների հիման վրա, որոնցով կանոնակարգվում են համաճարակաբանության ոլորտի մի շարք հարցեր: Վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի ոլորտում գործողությունները կազմակերպվում և իրականացվում են ելնելով իրավիճակից և կատարված վերլուծությունների հիման վրա: Այս ուղղությամբ առկա չէ համապարփակ ռազմավարություն և միջոցառումների ծրագիր:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով նախատեսվում է սահմանել վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի ռազմավարական ուղղությունները և առանձին ռազմավարությունները, ինչպես նաև այդ ռազմավարություններին համապատասխան միջոցառումների ծրագիր` իր ժամանակացույցով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի միջոցառումների ռազմավարության և միջոցառումների ցանկի սահմանումն է: |

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի նախագծի ընդունման դեպքում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործընթացի իրականացման համար կապահովվի ռազմավարության առկայությունը: Վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի միջոցառումները կկրեն ծրագրային բնույթ` հստակ ժամանակացույցով, կլինեն համալիր, համակարգված, կարդիականացվեն վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի գործընթացները և համաճարակաբանական հսկողության համակարգը: |
| 42. | **«Արյան, դրա բաղադրամասերի շրջանառության ոլորտում կիրառվող բժշկական փաստաթղթերի ձևերը և դրանց լրացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Որոշման անհրաժեշտությունը պայմանավորված է արյան, դրա բաղադրամասերի շրջանառության ոլորտում կիրառվող բժշկական փաստաթղթերի միասնականացման, դրանցում ներառվելիք անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը ՀՀ օրենսդրորեն ամրագրելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս արյան, դրա բաղադրամասերի շրջանառության ոլորտում կիրառվող բժշկական փաստաթղթերի ձևերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվող նախագծով կսահմանվեն արյան դոնորության, արյան փոխներարկման, հետազոտման, դոնորի իմունացման և արյան փոխներարկման հետ կապված այլ բժշկական միջամտությունների համար անհրաժեշտ փաստաթղթերը, դրանց վարման և լրացման կարգերը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշման կարգավորման առարկան արյան, դրա բաղադրամասերի շրջանառության ոլորտում կիրառվող բժշկական փաստաթղթերի ձևերի և դրանց լրացման կարգի սահմանումն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Արյունաբանական ծառայության ոլորտում կիրառվող բժշկական փաստաթղթերի միօրինականացում, անհրաժեշտ բժշկական տեղեկությունների ներառման պարտադիրության սահմանում: |
| 43. | **«Դեղերի, սննդային և կենսաակտիվ հավելումների մասին» ՀՀ օրենքի նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի անհրաժեշտությունը պայմանավորված է դեղերի շրջանառության ոլորտում քաղաքականության վերանայման և նոր, առավել արդյունավետ, ժամանակակից պահանջներին համապատասխան մոտեցումների և մեխանիզմների սահմանման անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը**<br>«Դեղերի մասին» գործող ՀՀ օրենքն ընդունվել է դեռևս 1998 թվականին և ներկայումս այն չի կարող ամբողջությամբ կանոնակարգել ինչպես դեղերի, այնպես էլ սննդային և կենսաակտիվ հավելումների հետ կապված հարաբերությունների ամբողջ շրջանառությունը` նկատի ունենալով դեղերի շրջանառության ոլորտում առկա մի շարք նոր հարաբերությունների, հասկացությունների առկայությունը, որոնք չեն կարգավորվում գործող օրենքով և առաջացնում են բազմաթիվ բարդություններ օրենքի կիրառման ոլորտում:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** |

| | |
|---|---|
| | «Դեղերի, սննդային և կենսաակտիվ հավելումների մասինէ ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է կանոնակարգել Հայաստանի Հանրապետությունում դեղերի, դեղանյութերի, սննդային, կենսաակտիվ հավելումների շրջանառության հետ կապված հարաբերությունները՝ բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով, անվտանգ և որակյալ կենսաակտիվ հավելումներով և դրանց մասին հավաստի տեղեկատվությամբ ապահովելու նպատակով: Մասնավորապես, նախագծի մշակման արդյունքում՝<br>1) հստակ կսահմանվեն դեղերի, սննդային և կենսակտիվ հավելումների շրջանառության ոլորտում կիրառվող հասկացությունները.<br>2) կսահմանվեն դեղերի շրջանառության պետական կառավարման հիմնական ուղղությունները՝ տարանջատելով այդ ոլորտում ՀՀ կառավարության, լիազոր պետական մարմնի իրավասությունները.<br>3) կսահմանվեն դեղերի ստեղծման, գրանցման և հետգրանցումային դիտարկման հիմնական սկզբունքները.<br>4) սահմանվում են դեղերի արտադրությանը, պատրաստմանը, դրանց փաթեթավորմանը, պիտակավորմանը, մակնշմանը ներկայացվող հիմնական պահանջները.<br>5) կկանոնակարգվեն դեղերի, դեղանյութերի ներմուծման, արտահանման և պահպանման հետ կապված հարաբերությունները.<br>6) կսահմանվեն դեղերի մանրածախ և մեծածախ իրացման հետ կապված հարաբերությունների առանձնահատկությունները.<br>7) կսահմանվի դեղերի գովազդման կարգը.<br>8) կկանոնակարգվեն դեղերի ոչնչացման հետ կապված հարաբերությունները.<br>9) կսահմանվի դեղերի շրջանառության նկատմամբ հսկողության կարգը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Դեղերի, սննդային և կենսաակտիվ հավելումների շրջանառության ոլորտում հարաբերությունների առավել նոր և գործուն օրենսդրական մեխանիզմների սահմանումն է:<br>**3. Իրավական ակտի կատարման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Բնակչությանն անվտանգ, արդյունավետ, որակյալ, մատչելի դեղերով, անվտանգ և որակյալ սննդային ու կենսաակտիվ հավելումներով ապահովելու նպատակով առավել արդյունավետ ու գործուն օրենսդրական մեխանիզմների սահմանում: |
| ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն | |
| 44. | **<<Տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2011 թվականի ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ցանկում առաջարկվում է ընդգրկել <<Տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը՝ հաշվի առնելով տրանսպորտի առանձին տեսակների գործունեության հետ կապված իրավահարաբերությունները հստակեցնելու անհրաժեշտությունը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br><<Տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 1998 թվականին, երբ Հայաստանի Հանրապետությունում գործող տրանսպորտային համակարգն էապես տարբերվում էր հանրապետությունում ներկայումս գործող տրանսպորտային համակարգից: Տրանսպորտի առանձին տեսակների զարգացումը գտնվում է տարբեր մակարդակների վրա, ուստի պահանջվում են տարբեր մոտեցումներ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով տրանսպորտի առանձին տեսակների զարգացման տեմպերը և միջազգային շուկայում մրցակցությանը դիմակայելու հրամայականը՝ |

| | |
|---|---|
| | անհրաժեշտ է տրանսպորտի ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին՝ հաշվի առնելով միջազգային համաձայնագրերի և եվրոպական երկրների տրանսպորտի ոլորտը կարգավորող դիրեկտիվների պահանջները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Տրանսպորտի առանձին տեսակների զարգացումը հանգեցնում է նոր ձևավորվող հարաբերությունների, որոնք իրավական կարգավորման անհրաժեշտություն ունեն: Տրանսպորտի համակարգի զարգացման պրոցեսում ձևավորվում են տրանսպորտային նոր ծառայություններ, որոնք պետք է կանոնակարգվեն:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><<Տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի ընդունումն ակնկալում է տրանսպորտի առանձին տեսակների գործունեության օրենսդրական դաշտի բարեփոխում, տրանսպորտի ոլորտի լիարժեք իրավական կարգավորում, ինչպես նաև օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերի ընդունում: |
| 45. | **<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց կատարումն անհնար է կամ անընդունելի, կամ որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն:<br>Սույն նախագծի անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ դրանով անհրաժեշտ է պատասխանատվության միջոցներ նախատեսել պարտադիր տեխնիկական զննության, սեղմած բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և բալոնների պարբերական վկայագրման՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր կատարման ենթակա պարտականությունները խախտելու համար:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս <<ՀՀ տրանսպորտային տեսչության մասին>> ՀՀ օրենքով, ինչպես նաև քննարկման փուլում գտնվող <<Հայաստանի Հանրապետության տրանսպորտային տեսչության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում նախատեսված են պարտականություններ, որոնց համար բացակայում են ներգործության միջոցներ, ինչի հետևանքով լիազոր մարմնի (ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն) կողմից վերահսկողական գործառույթների արդյունքները մնում են անհետևանք, իսկ իրավախախտում կատարած անձինք՝ անպատիժ:<br>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավական հետևանքներ չառաջացնող նորմերը կրում են դեկլարատիվ բնույթ և դրանց արդյունավետ կիրառումն առանց համապատասխան օրենքում այդ նորմերը խախտելու համար ներգործության միջոցներ սահմանելու անհնարին է, ուստի այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է համապատասխան լրացումներ կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, որով կնախատեսվեն համապատասխան ներգործության միջոցներ, մասնավորապես, տեխնիկական արատորոշման կայաններում, գազաբալոնային համակարգով շահագործվող տրանսպորտային միջոցների՝ տեղադրման և շահագործման, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիների օգտագործման, օրենքով նախատեսված պարտականությունները խախտելու համար:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքում:<br>**2. Կարգավորման առարկան** |

| | |
|---|---|
| | Սույն նախագծի կարգավորման առարկան տրանսպորտի ոլորտում՝ արատորոշման կայաններ, գազաբալոնային համակարգեր տեղադրող և շահագործող, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիների շահագործման տրանսպորտի մասին ՀՀ օրենսդրությամբ ներկայացվող պահանջների խախտման համար համապատասխան վարչական պատասխանատվության միջոցների սահմանումն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սույն նախագծի ընդունման արդյունքում կսահմանվեն համապատասխան ներգործության միջոցներ տրանսպորտի ոլորտում, տրանսպորտի մասին ՀՀ օրենսդրությամբ պարտադիր կատարման ենթակա պահանջների խախտման համար, ինչը կնպաստի տրանսպորտի բնագավառում լիազոր մարմնի կողմից իրականացվող վերահսկողական գործառույթների արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև թույլ կտա պատասխանատվության ենթարկել նշված բնագավառում իրավախախտումներ կատարած անձանց և կանխել այլ անձանց կողմից նմանատիպ իրավախախտումների կատարումը: |
| 46. | **<<ՀՀ կառավարության 2007 թ. հունիսի 21-ի N 819-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտում փոփոխության անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտում առաջարկվող փոփոխությունը նպատակ է հետապնդում ապահովելու կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող լիցենզավորված կազմակերպությունների կողմից շահագործվող տրանսպորտային միջոցների և լիցենզավորող մարմնի կողմից տրամադրված ներդիրների հաշվարկի և դրանց նկատմամբ վերահսկողության հնարավորությունը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը տրամադրվում է առնվազն մեկ տրանսպորտային միջոցի առկայության դեպքում: Մրցույթի անցկացումից հետո տրանսպորտային միջոցները չեն համալրվում լիցենզավորող հանձնաժողովի կողմից և ներդիրներ չեն ստանում:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացումից հետո, ինչպես նաև ընթացիկ փոփոխությունների դեպքում բոլոր տրանսպորտային միջոցները ներկայացնել լիցենզավորող հանձնաժողովին՝ համալրման և ներդիր ստանալու նպատակով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիաների և ներդիրների տրամադրման գործընթացը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><<Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 2007 թ. հունիսի 21-ի N 819-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագծի նպատակը լիազոր մարմնի կողմից ՀՀ տարածքում կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների հաշվառման և վերահսկողություն իրականացնելու գործընթացի կարգավորումն է: |
| 47. | **<<ՀՀ կառավարության 2007թ. մարտի 22-ի N 655-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտում փոփոխության անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտում առաջարկվող փոփոխությունը նպատակ է հետապնդում համապատասխանեցնել լիցենզավորման կարգը նախկին ընդունված որոշումներին և հստակեցնել լիցենզավորող մարմնի, լիցենզավորված կազմակերպությունների և իրավասու պետական այլ մարմինների փոխադարձ |

| | |
|---|---|
| | տեղեկատվական գործընթացը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>**ա)** լիցենզավորման պարտադիր պահանջների ցանկից հանվել են վարորդի մասին տեղեկությունները, իսկ հանձնաժողովի անդամի կողմից լրացվող համապատասխանության թերթիկում պահանջվում է վարորդի մասին տեղեկատվություն.<br>**բ)** լիցենզիայի ներդիրներն ուժը կորցրած ճանաչելու մասին տեղեկանքը (ձև N 10) ստանալուց հետո լիցենզավորված անձն այն ներկայացնում է ճանապարհային ոստիկանություն՝ դեղին պետհամարանիշը հանձնելու նպատակով: Սակայն հաճախ այս գործառույթը չի իրականացվում և ուժը կորցրած ներդիրի պայմանում տրանսպորտային միջոցը շարունակվում է ապօրինի շահագործվել դեղին համարանիշով:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է լիցենզավորման կարգում ճանապարհային ոստիկանության հետ փոխադարձ տեղեկատվական կապն ապահովող գործառույթ սահմանել՝ ապօրինի գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը բացառելու նպատակով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ուղևորափոխադրումներ այլևս չիրականացնելու դեպքում դեղին հիմնագույնի համարանիշները և գրանցման ժամանակավոր կտրոնը հանձնելու և հիմնական համարանիշը հետ ստանալու գործընթացը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><<Հայաստանի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 2007 թ. մարտի 22-ի N 655-Ն որոշման մեջ առաջարկվող փոփոխությունների կիրառման դեպքում կկարգավորվի համապատասխանության թերթիկում պահպանված անհամապատասխանությունը և կբացառվի ուժը կորցրած ներդիրի պայմանում տրանսպորտային միջոցի դեղին հիմնագույնի համարանիշներով՝ որպես տաքսի ավտոմեքենա հետագա ապօրինի շահագործման հնարավորությունը: |
| 48. | **<<Ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ցանկը և դրանց փոխադրման համար տրամադրվող թույլտվությունների ժամկետները սահմանելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><<Ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ցանկը և դրանց փոխադրման համար տրամադրվող թույլտվությունների ժամկետները սահմանելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռներն ըստ վտանգավորության աստիճանի դասակարգելու և դրանց փոխադրման համար տրամադրվող թույլտվությունների ժամկետները հստակ սահմանելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ փոխադրելու բնագավառը կանոնակարգված չէ: Այդ նպատակով մշակվել է <<Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունումով պայմանավորված է ոլորտը կանոնակարգող մի շարք ենթաօրենսդրական ակտերի մշակումը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով վտանգավոր բեռների փոխադրումների յուրահատկությունները՝ կապված դրանց անվտանգության ապահովման, վտանգավոր բեռների փոխադրումների ոլորտում մարդկանց կյանքի ու առողջության պահպանման, շրջակա միջավայրի պաշտպանության և անվտանգ երթևեկության պահանջների հետ, անհրաժեշտ է սահմանել այն վտանգավոր բեռների ցանկը, որոնք հնարավոր է փոխադրել ավտոմոբիլային տրանսպորտով: Կարևոր է նաև տարբեր վտանգավոր բեռների փոխադրումների համար սահմանել թույլտվությունների տրամադրման ժամկետները՝ կախված փոխադրվող բեռի |

| | |
|---|---|
| | վտանգավորության աստիճանից և փոխադրման հաճախականությունից:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման գործընթացի կանոնակարգումը և միջազգային չափանիշներով սահմանված պահանջներին համապատասխանեցնելն օրվա հրամայական է, քանի որ կապված է անվտանգության և շրջակա միջավայրի պաշտպանության հետ:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման նախագծով կսահմանվեն ավտոմոբիլային տրանսպորտով թույլտվության առկայությամբ փոխադրվող վտանգավոր բեռների ցանկը և տրանսպորտի ոլորտի պետական լիազոր մարմնի կողմից դրանց տրամադրվող թույլտվությունների ժամկետները: |
| 49. | **<<Միջպետական, միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցի կազմման, հաստատման և համաձայնեցման կարգը սահմանելու մասին>>** *ՀՀ* **կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><<Միջպետական, միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցի կազմման, հաստատման և համաձայնեցման կարգը սահմանելու մասին>> *ՀՀ* կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է *Հ*այաստանի *Հ*անրապետությունում մեկ ընդհանուր միասնական երթուղային ցանցի ստեղծման անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ոլորտը կանոնակարգվում է <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> *ՀՀ* օրենքով, *ՀՀ* կառավարության 2007 թ. դեկտեմբերի 27-ի <<*Հ*այաստանի *Հ*անրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին>> N 1587-Ն և *ՀՀ* կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի <<*Հ*այաստանի *Հ*անրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին>> N 762 որոշումներով:<br>Միջպետական, միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիները ներկայումս կազմվում են առանձին-առանձին՝ ըստ անհրաժեշտության, հաշվի առնելով հնարավոր ուղևորահոսքն ու պահանջարկը, սակայն դրանք չեն համաձայնեցվում ընդհանուր երթուղային ցանցի հետ, դրա բացակայության պատճառով, որը երբեմն հանգեցնում է նոր բացվող և գործող երթուղիների չվացուցակների և սխեմաների հակասությունների:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտություն է առաջացել հանրապետության համար մշակել մեկ միասնական երթուղային ցանց, որը հաշվի կառնի առկա ուղևորահոսքը, երթուղին սպասարկելու համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների տեսակներն ու քանակը, տարբեր երթուղիների համակարգված սխեմաները և չվացուցակները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշման ընդունումը կկանոնակարգի *Հ*այաստանի *Հ*անրապետությունում միջպետական, միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցի կազմման, հաստատման և համաձայնեցման ընթացակարգերը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման դեպքում կմշակվի միջպետական, միջմարզային, ներմարզային և ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների մեկ միասնական համաձայնեցված երթուղային ցանց, կսահմանվեն դրույթներ ներմարզային և ներքաղաքային երթուղիների հաստատման և համաձայնեցման |

| | |
|---|---|
| | համար: Հանրապետությունում նոր երթուղիները կբացվեն միասնական երթուղային ցանցի շրջանակներում` ուսումնասիրությունների արդյունքում, կբացվեն կամայական գործող երթուղիները, կիեշտա ոլորտի վերահսկողությունը: |
| 50. | **<<Հայաստանի Հանրապետությունում ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման և կառավարման մեթոդիկան սահմանելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտը նպատակ է հետապնդում Հայաստանի Հանրապետությունում կանոնակարգելու և առավել օպտիմալ կազմակերպելու կանոնավոր ուղևորափոխադրումները :<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետությունում կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնում են մրցութային եղանակով ընտրված կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց ընտրության մրցույթի անցկացման պայմանները սահմանված են ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին>> N 762 և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին>> N 1587-Ն որոշումներով: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայումս հանրապետությունում ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպումը և կառավարումը որևէ իրավական ակտով չի կանոնակարգվում, անհրաժեշտություն է առաջացել սահմանել Հայաստանի Հանրապետությունում ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման և կառավարման մեթոդիկան:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ըստ օրվա ժամերի ուղևորահոսքի առկայության`<br>ա) տրանսպորտային միջոցի տիպի ճիշտ ընտրություն, որը կբերի ուղևորների փոխադրման հարմարավետ պայմանների ապահովման, երթևեկության վրա ծախսված ժամանակի և փոխադրման ինքնարժեքի օպտիմալացման,<br>բ) վարորդների և տրանսպորտային միջոցների աշխատանքի ռացիոնալ կազմակերպում, որը կբերի ուղևորափոխադրումների անվտանության բարձրացման և մեքենա-ժամերի նվազագույն ծախսի,<br>գ) երթուղիների ուղեգծերի և չվացուցակների ճշգրիտ կազմում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հայաստանի Հանրապետությունում կանոնավոր ուղևորափոխադրումների օպտիմալ կազմակերպում և կառավարում, անվտանգության բարձրացում: |
| 51. | **<<Ռադիոհաղորդակցության սարքավորումների օգտագործման ստուգման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><<Ռադիոհաղորդակցության սարքավորումների օգտագործման ստուգման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման ընդունումը նպատակ ունի ապահովել <<Էլեկտրոնային հաղորդակցության մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթի պահանջների իրականացումը` ռադիոհաղորդակցության սարքավորումների օգտագործման ուսումնասիրությունների և ստուգումների անցկացման ու տեխնիկական եզրակացությունների |

| | |
|---|---|
| | տրամադրման կանոնակարգմամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը հիմնականում կարգավորվում է <<Էլեկտրոնային հաղորդակցության մասին>> ՀՀ օրենքի դրույթներով, գերատեսչական և այլ իրավական ակտերով:<br>Նշված իրավական ակտերում նախատեսված չէ ռադիոհաղորդակցության սարքավորումների օգտագործման ստուգման և ուսումնասիրության կարգը, որի բացակայության հետևանքով հնարավորություն չի ընձեռնվում լիարժեք կանոնակարգել հանրապետություն ներմուծվող և հետագայում շահագործվող սարքավորումների օգտագործումը՝ վնասակար ազդեցությունները և ճառագայթումները բացառելու համար:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սույն հիմնավորման 1.1-ին կետում թվարկված խնդիրների լուծման համար առաջարկվում է ներդնել ռադիոհաղորդակցության սարքավորումների օգտագործման ստուգման կարգը, որն իրավական հիմք կհանդիսանա համապատասխան ստուգումներ անցկացնելու և տեխնիկական եզրակացություններ տալու համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սույն կարգի կարգավորման առարկան ռադիոհաղորդակցության սարքավորումների օգտագործման ստուգման անցկացման գործընթացի կանոնակարգումն է, որի վերջնական նպատակը ոլորտում տիրող իրավիճակի համապատասխանելիության ապահովումն է <<Էլեկտրոնային հաղորդակցության մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթի պահանջներին:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սույն կարգի ընդունումը թույլ կտա կանոնակարգել ռադիոսարքավորումների օգտագործման ստուգումների անցկացման գործընթացը և կհանդիսանա <<Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության համար իրավական հիմք՝ համապատասխան ստուգումներ անցկացնելու և տեխնիկական եզրակացություն տալու համար: |
| 52. | **<<Արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման և կառավարման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1.1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>**<<**Արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման և կառավարման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը պայմանավորված է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների լիարժեք իրականացման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների և ռազմական դրության պայմաններում ոլորտի իրավասու մարմնի և էլեկտրոնային հաղորդակցության ցանցերը տիրապետող անձանց իրավահարաբերությունների կանոնակարգման անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը հիմնականում կարգավորվում է <<Էլեկտրոնային հաղորդակցության մասին>> ՀՀ օրենքի դրույթներով, գերատեսչական և այլ իրավական ակտերով:<br>Նշված իրավական ակտերում սահմանված չեն արտակարգ իրավիճակների և ռազմական դրության պայմաններում իրավասու մարմնի գործառույթների իրականացմանն ուղղված դրույթներ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սույն հիմնավորում 1.1-ին կետում ներկայացված խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է ընդունել արտակարգ իրավիճակների և |

| | |
|---|---|
| | ռազմական դրության  պայմաններում իրավասու մարմնի գործառույթների կանոնակարգման կարգը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սույն կարգի կարգավորման առարկան արտակարգ իրավիճակների և ռազմական դրության  պայմաններում իրավասու մարմնի գործառույթների կանոնակարգումն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սույն կարգի ընդունումը թույլ կտա կանոնակարգել արտակարգ իրավիճակների և ռազմական դրության պայմաններում ոլորտի իրավասու մարմնի և էլեկտրոնային հաղորդակցության ցանցերը տիրապետող անձանց իրավահարաբերությունները: |
| 53. | **<<Ռադիոալեհավաք կառույցների շինարարության, ներկրման և լուսավորման   կանոնները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><<Ռադիոալեհավաք կառույցների շինարարության, ներկման և լուսավորման   կանոնները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը նպատակ ունի կանոնակարգել ռադիոալեհավաք կառույցների շինարարության, ներկրման և լուսավորման աշխատանքների իրականացումը համապատասխան տեխնիկական նորմերի և ստանդարտների կիրառմամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը հիմնականում կարգավորվում է <<Էլեկտրոնային հաղորդակցության մասին>> ՀՀ օրենքի դրույթներով, գերատեսչական և այլ իրավական ակտերով:<br>Ռադիոալեհավաք կառույցների շինարարության, ներկրման և լուսավորման   տեխնիկական նորմերը հաստատող իրավական ակտ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս չկա:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սույն հիմնավորման 1.1-ին կետում թվարկված   խնդիրների լուծման համար առաջարկվում է ընդունել ռադիոալեհավաք կառույցների շինարարության, ներկրման և լուսավորման   կանոններ, ինչը թույլ կտա համապատասխան տեխնիկական նորմերի և ստանդարտների կիրառմամբ ապահովել նշված գործառույթների իրավական կարգավորումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սույն կանոնների կարգավորման առարկան ռադիոալեհավաք կառույցների շինարարության, ներկրման և լուսավորման աշխատանքներն են, որի արդյունքում կապահովվի օդագնացության և մարդու առողջության անվտանգությունը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սույն կարգի ընդունումը   թույլ կտա կանոնակարգել ռադիոալեհավաք կառույցների շինարարության, ներկրման և լուսավորման աշխատանքները՝ տեխնիկական նորմերին և ստանդարտներին համապատասխան: |
| 54. | **<<Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Համաձայն ՀՀ Նախագահի 2009 թ. հունիսի 26-ի <<Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին>> ՆԿ-97-Ն կարգադրության՝անհրաժեշտ է մշակել <<Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը:<br>Որոշման նախագծի նպատակը Հայաստանի Հանրապետությունում  պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի տեխնիկական, |

| | |
|---|---|
| | տեխնոլոգիական և կազմակերպչական բնույթի խնդիրները, անվտանգության ապահովման մեխանիզմները, ինչպես նաև բովանդակության նկատմամբ միասնական մոտեցումները կարգավորելն է: <br> **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Ներկայումս ՀՀ օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետությունում լիարժեք կարգավորված չեն պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի ստեղծման, շահագործման և սպասարկման միասնական մոտեցումներ: Միջոցառումներ են ձեռնարկվում պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի անվտանգության ապահովման ուղղությամբ: <br> Հաճախ պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի վրա հարձակումներ են տեղի ունենում հակերների կողմից, ուստի անհրաժեշտ է ցուցաբերել միասնական մոտեցում ինտերնետային կայքերի անվտանգության ապահովման խնդիրներն իրականացնելու ուղղությամբ: <br> **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> Առաջարկվող որոշման նախագծի ընդունումը կկարգավորի Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի տեխնիկական և կազմակերպչական բնույթի խնդիրները, միասնական տեխնոլոգիական միջոցների կիրառումը՝ ծրագրային ապահովում և մասնագիտական պատրաստվածություն, անվտանգության ապահովում, ինչպես նաև բովանդակության նկատմամբ միասնական մոտեցումներ: <br> **2. Կարգավորման առարկան** <br> Որոշման նախագիծը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի ստեղծման, շահագործման և սպասարկման միասնական քաղաքականությունը: <br> **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> Որոշման նախագծի ընդունումը և կիրարկումը կապահովի Հայաստանի Հանրապետությունում պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի տեխնիկական և կազմակերպչական բնույթի խնդիրների լուծումները, անվտանգության ապահովման մեխանիզմները, ինչպես նաև պետական մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության ներկայացման նկատմամբ միասնական մոտեցումները: |
| 55. | **<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. հուլիսի 21-ի N 1113-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի** <br> **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** <br> <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. հուլիսի 21-ի N 1113-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> և <<Փոստային կապի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունմամբ: <br> **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> <<Փոստային կապի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> և <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունումից հետո խնդիր առաջացավ համապատասխան փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. հուլիսի 21-ի <<Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի ծառայությունների, բացառությամբ դրամական միջոցների փոստային փոխադրությունների, մատուցման գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին>> N 1113-Ն որոշման մեջ: <br> **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** |

| | |
|---|---|
| | Ներկայացված նախագծով առաջարկվում է համապատասխան փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի ծառայությունների՝ բացառությամբ դրամական միջոցների փոստային փոխադրությունների, մատուցման գործունեության լիցենզավորման կարգում և լիցենզիայի ձևում։<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծի կարգավորման առարկան փոստային կապի ծառայությունների մատուցման գործունեության կարգավորումը, սպառողների իրավունքների պաշտպանության նպաստումը, զարգացող շուկայական հարաբերությունների կարգավորումը և ծառայությունների որակի բարձրացումն է։<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման հիմնական նպատակներից է փոստային ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործումը, ինչպես նաև փոստային կապի բնագավառի զարգացման քաղաքականության իրականացման ապահովումը։ |
| | ՀՀ քաղաքաշինության նախարարություն |
| 56. | **«Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը ( նպատակը)**<br>«Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը պայմանավորված է «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի պահանջների ապահովման, Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի հիմնադրույթներից բխող առաջնահերթ պարտավորությունների տարանջատման և պետական կառավարման մարմինների միջև դրանց բաշխման, իրագործման ժամկետների սահմանման ու համապատասխան իրավական հիմքերի ստեղծման անհրաժեշտությամբ։<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2004 թվականի մարտի 23-ին Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Եվրոպայի խորհրդի լանդշաֆտի կոնվենցիան։<br>ՀՀ վարչապետի 2009 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրագործման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» N 650-Ա որոշման 3-րդ կետի հանձնարարականի համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարությանը վերապահվել են համապատասխան պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ միջոցառումների իրագործումն ապահովող գործընթացի համակարգման լիազորություններ։<br>Բնական ու մշակութային ժառանգության պահպանության և կառավարման, տարածքային պլանավորման, տեղական ինքնակառավարման և անդրսահմանային համագործակցության ոլորտներում անհրաժեշտ է ներդնել Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի հիմնադրույթները, որոնք ներկայումս ամրագրվելու են առաջնահերթ միջոցառումների տեսքով՝ «Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում, մասնավորապես, ՀՀ լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման, լանդշաֆտների պահպանության, կառավարման և պլանավորման ռազմավարության, լանդշաֆտի դերի և նշանակության մասին ՀՀ քաղաքացիական և համայնքային ծառայողների իրազեկվածության հիմնախնդիրները։<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված հիմնախնդիրները լուծելու համար անհրաժեշտ է ստեղծել իրավական հիմքեր, որոնք համապատասխանեցված կլինեն Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի հիմնադրույթներին և նպատակներին ու ամրագրել դրանք «Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում՝ տարանջատելով առաջնահերթ պարտավորությունները՝ բաշխելով դրանք պետական կառավարման մարմինների միջև և սահմանելով կատարման |

| | |
|---|---|
| | իրատեսական ժամկետներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կանոնակարգման ենթակա են Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից բխող` Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկի մշակման, ժամկետների սահմանման, համակատարողների աշխատանքների կազմակերպման, միջոցառումների իրագործման կամ համապատասխան իրավական հիմքերի ստեղծման խնդիրները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է պատասխանատու պետական կառավարման մարմինների և ՀՀ վարչապետի 2009 թ. հուլիսի 31-ի N 650-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովում ընդգրկված համակատարող այլ մարմինների համատեղ աշխատանքների արդյունքում ստեղծել Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայից բխող` Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարումն ապահովող իրավական հիմքեր: |
| 57. | **«ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 792-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ե ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը ( նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է սահմանված կարգով մշակված և ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ արդեն իսկ համաձայնեցված կառուցապատման նախագծեր կամ սխեմաներ ունեցող քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներում (տարածքներում) հողհատկացումների և հողերի գործառնական նշանակության փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների, ինչպես նաև առանձին օբյեկտների կամ համալիրների ճարտարապետահատակագծային առաջադրանքների նախագծերի համաձայնեցման ընթացակարգի պարզեցման անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքներում քաղաքաշինական գործընթացներն իրականացվում են ՀՀ համայնքների կողմից, որոշ քաղաքաշինական փաստաթղթերի, մասնավորապես, հողերի գործառնական նշանակության փոփոխության, հողհատկացման, ճարտարապետահատակագծային առաջադրանքների համաձայնեցման պարտադիր պայմանով, ինչն էապես բարդացնում է բուն գործընթացն ու երկարաձգում դրա համար նախատեսված ժամկետները:<br>Առկա խնդիրները պայմանավորված են համալիր կառուցապատման սկզբունքի բացակայությամբ և փաստաթղթերի համաձայնեցման գործող ընթացակարգով:<br>Նշված խնդիրների առկայությամբ քաղաքաշինական գործունեության արդյունքները բավարար չեն և խաթարում են տարածական համաչափ զարգացման միջավայրի հիմունքները` որոշ դեպքերում հակասելով նաև ծրագրային փաստաթղթերի պահանջներին ու տվյալ բնակավայրին բնորոշ ճարատարապետահատակագծային լուծումներին:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ընթացակարգերում անհրաժեշտ է ներդնել համալիր կառուցապատման սկզբունքը, որի արդյունքում արդեն իսկ համաձայնեցված կառուցապատման նախագծով կամ սխեմայով սահմանվող միասնական պահանջներն ու չափորոշիչները կկիրառվեն տվյալ տարածքում քաղաքաշինական գործունեության բոլոր օբյեկտների նկատմամբ և հետագայում չեն պահանջի ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ լրացուցիչ համաձայնեցում ընթացիկ խնդիրների լուծման համար, որի արդյունքում կպարզեցվի փաստաթղթերի համաձայնեցման վերոհիշյալ ընթացակարգը և էապես կնվազի այն իրագործելու համար պահանջվող ժամկետը:<br>**2. Կարգավորման առարկան** |

| | |
|---|---|
| | Կանոնակարգման ենթակա են հատուկ կարգավորման ենթակա տարածքներում ՀՀ համայնքների կողմից իրականացվող քաղաքաշինական գործունեության, միասնական պահանջների և չափորոշիչների սահմանման, ինչպես նաև քաղաքաշինական փաստաթղթերի համաձայնեցման գործառույթների օպտիմալացման և դրանց իրագործման ժամկետների կրճատման խնդիրները։<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է ներդնել քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման բնագավառում համալիր կառուցապատման սկզբունքը, սահմանել համաձայնեցված կառուցապատման նախագծերի կամ սխեմաների նկատմամբ միասնական պահանջներ և չափորոշիչներ, պարզեցնել քաղաքաշինական փաստաթղթերի համաձայնեցման գործընթացը և էականորեն կրճատել իրագործման ժամկետները։ |
| 58. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է «Գործարարությամբ զբաղվելը Հայաստանում» բարեփոխումների շրջանակներում Հայաստանի վարկանիշի բարձրացման համար մի շարք առաջնահերթ միջոցառումների իրագործման, այդ թվում՝ ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» N 626-Ն որոշմամբ սահմանված ժամկետների կրճատման անհրաժեշտությամբ։<br>Նշված իրավական ակտում նախատեսվում է նաև կատարել համապատասխան լրացում՝ «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով սահմանված բազմաբնակարան բնակելի շենքերի փոստային բաժանորդային պահարանների վերաբերյալ դրույթի ապահովման համար։<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հաշվի առնելով ՀՀ կառավարության 2010 թ. հունվարի 21-ի N 97-Ն որոշմամբ հաստատված «Գործարարությամբ զբաղվելը (Doing Business) Հայաստանում» բարեփոխումների շրջանակներում կազմված՝ Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիրը և համապատասխան մեթոդաբանությունը՝ ավարտված շինարարության շահագործման փաստագրման՝ ներկայումս սահմանված ժամկետները նախատեսվում է վերանայել՝ ընթացակարգերն օպտիմալացնելու միջոցով։<br>«Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջի կատարմանը համապատասխան՝ ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 8-ի «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» N 626-Ն որոշման մեջ անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ որպես պարտադիր պահանջ, նոր կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերում փոստային բաժանորդային պահարանների տեղադրման՝ ՀՀ օրենքով սահմանված պահանջն ապահովելու նպատակով։<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված իրավական ակտում անհրաժեշտ է կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որոնք կամրագրեն ավարտված շինարարության շահագործման փաստագրման ընթացակարգի ժամկետների կրճատման և փոստային բաժանորդային պահարանների պարտադիր տեղադրմանն առնչվող դրույթներ։<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կանոնակարգման ենթակա են Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրից բխող կառուցապատման ընթացակարգերի վերանայման պահանջով պայմանավորված՝ ՀՀ կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգի ժամկետների կրճատման և «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածով ամրագրված փոստային բաժանորդային պահարանների տեղադրման պարտադիր պահանջի հետ կապված խնդիրները։ |

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է ավարտված շինարարության շահագործման փաստագրման ընթացակարգի ժամկետների կրճատում և բազմաբնակարան բնակելի շենքերի փոստային բաժանորդային պահարանների պարտադիր տեղադրման պահանջների ամրագրում: |
| 59. | **«ՀՀ համայնքներում (բնակավայրերում) հանգստի, զբոսաշրջության և առողջարանային կենտրոնների կազմակերպման նպատակով առանձնացված տարածքներում քաղաքաշինական գործընթացների իրականացման կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը ( նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է ՀՀ համայնքներում (բնակավայրերում) առողջարանային և զբոսաշրջության կենտրոնների ու բնակչության հանգստի վայրերի ստեղծման համար առանձնացվող տարածքներում քաղաքաշինական միջավայրի կազմակերպման խնդիրների կանոնակարգման, քաղաքաշինական գործընթացների իրականացմանն առնչվող հատուկ պահանջների և կառուցապատման միասնական չափորոշիչների սահմանման անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս, հանրապետության համայնքներում (բնակավայրերում) առողջարանային և զբոսաշրջության կենտրոնների կազմակերպման գործընթացը կանոնակարգված չէ` չեն մշակվել տվյալ բնակավայրին բնորոշ բնապահպանական և գեղագիտական չափանիշներին բավարարող կառուցապատման միասնական սկզբունքներ, բնական ռեսուրսների նպատակային օգտագործման, ինչպես նաև տվյալ տարածաշրջանում գոյություն ունեցող պատմական ու մշակութային արժեքների գնահատման նկատմամբ հատուկ մոտեցումներ, որոնք կնպաստեին տվյալ տարածքների կենսագործունեության բնականոն զարգացման ընթացքին և ենթակառուցվածքների արդիականացմանը, զբոսաշրջության զարգացմանը, որոշ դեպքերում նաև լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ համայնքներում (բնակավայրերում) առողջարանային և զբոսաշրջության կենտրոնների ու բնակչության հանգստի վայրերի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է առանձնացնել հատուկ գոտիներ և մշակել տվյալ տարածքների առանձնահատկություններից բխող քաղաքաշինական գործունեության միասնական սկզբունքներ և չափորոշիչներ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կանոնակարգման ենթակա են ՀՀ համայնքներում (բնակավայրերում) առողջարանային և զբոսաշրջության կենտրոնների ստեղծման համար առանձնացված տարածքների նպատակային օգտագործման, շրջակա բնական միջավայրի և պատմական ու մշակութային արժեք ներկայացնող գեղագիտական չափանիշները բավարարող կառուցապատման սկզբունքների պահպանման խնդիրները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է ՀՀ համայնքների (բնակավայրերի) առանձնացված տարածքներում քաղաքաշինական գործունեության միասնական կառուցապատման սկզբունքների և չափորոշիչների կիրառմամբ, բնական պաշարների նպատակային օգտագործմամբ ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների և մասնավոր ներդրողների միջոցներով ստեղծել տվյալ տարածաշրջանի առանձնահատկություններին բնորոշ, բնակավայրի բնապահպանական, բնակլիմայական և պատմականորեն ձևավորված ճարտարապետական միջավայրին համահունչ ու գեղագիտական չափանիշները բավարարող զբոսաշրջության, հանգստի և առողջարանային կենտրոններ` եվրոպական նմանատիպ կենտրոնների ստեղծման փորձի կիրառմամբ, ինչպես նաև իրագործել ՀՀ համայնքների (բնակավայրերի) տարածական զարգացմանն ուղղված այլ միջոցառումներ` տեղի բնակչության զբաղվածության ու զբոսաշրջության զարգացման և ենթակառուցվածքների արդիականացման համար: |
| 60. | **«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախածի** |

<table>
<tr><td></td><td>
1. Իրավական ակտի անհրաժեշտությունը ( նպատակը)<br>
Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է ինքնակամ շինարարության դեմ պայքարի արդյունավետ միջոցների մշակման անհրաժեշտությամբ:<br>
1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>
Ներկայումս «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով ինքնակամ շինարարության կանխարգելման, կասեցման և հետևանքների վերացման նպատակով ՀՀ քաղաքաշինության նախարարությանը, որպես քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի, չեն վերապահվել պետական վերահսկողություն իրականացնելու իրավասություններ, որի հետևանքով խնդիրներ են առաջանում համայնքների ղեկավարների կողմից ինքնակամ շինարարության կանխարգելման, կասեցման և հետևանքների վերացման ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու, ինչպես նաև նրանց կողմից դիտավորությամբ վերոհիշյալ լիազորությունները չիրականացնելու արդյունքում համապատասխանաբար վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու, ինչպես նաև քրեական պատասխանատվության միջոցներ կիրառելու նպատակով ՀՀ դատախազությանը հաղորդումներ ներկայացնելու հարցերում:<br>
Արդյունքում, ներկայումս ինքնակամ շինարարության դեմ պայքարի արդյունավետությունը բավարար չէ:<br>
1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>
Օրենքի նախագծով անհրաժեշտ է ՀՀ քաղաքաշինության նախարարությանը վերապահել իրավասություններ ինքնակամ շինարարության կանխարգելման, կասեցման և հետևանքների վերացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, համայնքների ղեկավարների կողմից իրենց լիազորությունները չիրականացնելու դեպքերում վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու, ինչպես նաև ՀՀ օրենքով սահմանված դեպքերում ՀՀ դատախազությանը համապատասխան հաղորդումներ ներկայացնելու համար:<br>
2. Կարգավորման առարկան<br>
Կանոնակարգման ենթակա են ինքնակամ շինարարության նկատմամբ իրականացվող վերահսկողության և հսկողության իրականացման մեխանիզմներն ու այդ հարաբերությունների կարգավորման խնդիրները:<br>
3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը<br>
Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է կտրուկ նվազեցնել ինքնակամ շինարարության դեպքերի քանակը և օպերատիվ ու արդյունավետ վերացնել դրանց հետևանքները:
</td></tr>
<tr><td colspan="2">ՀՀ կրթության և գիտության նախարարություն</td></tr>
<tr><td>61.</td><td>
«2011/2012 ուսումնական տարվա ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի<br>
1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)<br>
Հայաստանի Հանրապետությունում ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի միջոցով գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստումը սահմանվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի, 25-րդ հոդվածի 2-րդ կետի, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների համաձայն:<br>
1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>
Պետական պատվերի ձևավորման այս փուլն ուղղված է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետում հռչակված կրթության շարունակության սկզբունքի կենսագործմանը և նույն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետում, ինչպես նաև «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերում ամրագրված մրցութային կարգով՝ անվճար և վճարովի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության իրավունքի պետական երաշխիքների ապահովմանը:<br>
Հաշվի առնելով 2010/2011 ուսումնական տարվա ընթացքում մագիստրոսական կրթական աստիճան ստացող շրջանավարտների թիվը, արդի սուղ
</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | ֆինանսավորումը, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման հետ կապված խնդիրները և այլ հանգամանքներ՝ ներկայացվում է ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելության տեղերի նվազագույն թիվը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ուսուցման տեղերը կտեղադրվեն համապատասխան բուհերում և գիտական կազմակերպություններում՝ ըստ գիտության բնագավառների և մասնագիտությունների:<br>**2. Կարգավորման առարկան**<br>1) ՀՀ գիտական կազմակերպություններում և բուհերում հետբուհական կրթության և գիտահետազոտական աշխատանքների, ինչպես նաև գիտամանկավարժական կադրերի երիտասարդացման ու սերնդափոխության ապահովում.<br>2) գիտության գերակա ուղղություններով կադրերի պատրաստման և միջազգային ճանաչում ունեցող գիտական դպրոցների պահպանման ու զարգացման անհրաժեշտություն.<br>3) հանրապետությունում ժողովրդավարական գործընթացների խթանման և կրթության հումանիտարացման հետ կապված՝ նորագույն և հեռանկարային գիտական ողղությունների, հասարակագիտական մասնագիտությունների և հումանիտար գիտելիքների զարգացման ապահովում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է ապագա խոստումնալից երիտասարդ գիտնականների արտահոսքը հանրապետությունից կանխելու նպատակով երիտասարդ մասնագետների համար գիտական աշխատանքներով զբաղվելու որոշակի պայմանների ստեղծում: |
| 62. | **«Ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2008թ. ապրիլին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ավագ դպրոցների համակարգի ռազմավարական ծրագիրը, որի նպատակը ավագ դպրոցում կրթության որակի բարելավումն է և առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ստեղծումը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ավագ դպրոցում ծրագրային ծանրաբեռնվածության, հանրակրթության չափորոշչի, առարկայական ծրագրերի ու դասագրքերի փոփոխման ու ուսումնական նյութի վերաբաշխման անհրաժեշտությունը շարունակում է մնալ որպես հանրակրթության որակի ապահովման հիմնախնդիրներից մեկը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հանրակրթության որակի բարձրացման խնդրում կարևորվում է ավագ դպրոցների արդյունավետ համակարգի ձևավորումը, ինչը հնարավորություն կտա հաղթահարել առկա հիմնախնդիրները և ապահովել սովորողների լիարժեք պատրաստվածությունը՝ իրենց նախընտրած մասնագիտությամբ ուսումը շարունակելու համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>2010/2011 ուսումնական տարում շարունակվել է եռամյա ավագ դպրոցի ծրագրի ներդրումը, որի հաջողությամբ էլ մեծապես պայմանավորված է հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլը: Դրան համապատասխան շարունակվելու են ավագ դպրոցի դասագրքերի տպագրության, մանկավարժական կադրերի վերապատրաստման գործընթացները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հանրակրթական դպրոցների ավագ դասարանների համախմբման միջոցով կշարունակվի առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ընդլայնման գործընթացը, որում կիրականացվի հոսքային խորացված ուսուցում՝ ապահովելով սովորողների լիարժեք պատրաստվածությունը հետագա մասնագիտական կրթությանն ու գործունեությանը: 2011թ. ամբողջովին կներդրվի եռամյա ավագ դպրոցի ծրագիրը: |
| 63. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. ապրիլի 8-ի N439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության** |

| | |
|---|---|
| | **որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Սույն որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետի պահանջներով: ՀՀ կառավարության որոշման նախագիծը կկանոնակարգի «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված հանրակրթական հիմնական ծրագրերի (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) կատարման ապահովմանն ուղղված` ամբողջական մեկ միասնական չափորոշչի միջոցով հանրակրթության բովանդակության կառուցման մոդելավորումը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գործող չափորոշիչն ընդունվել է միջնակարգ կրթության պետական չափորոշչի մասնակի խմբագրման արդյունքում, քանի որ հանրակրթության պետական չափորոշչի մշակելուն անհրաժեշտ էր տևական ժամանակ, իսկ հանրակրթության կազմակերպման խնդիրների լուծման համատեքստում հրատապ էր այս փաստաթղթի ընդունումը:<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետության համակարգում գործում է 3 չափորոշիչ՝<br>«Հանրակրթության պետական չափորոշչի ձևավորման և հաստատման կարգն ու հանրակրթության պետական չափորոշիչը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի 771-Ն և հունիսի 17-ի N 900-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված՝ հանրակրթության պետական չափորոշիչը, որը սահմանում է հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, կրթական ծրագրի առավելագույն ծավալը, ըստ կրթական մակարդակների շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, սովորողների գնահատման համակարգը:<br>ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006 թ. նոյեմբերի 11-ի N 875 Ա/Ք հրամանով հաստատված՝ չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության պետական չափորոշիչը և թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության պետական չափորոշիչը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ զարգացման մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ կկարգավորվեն հանրակրթական հիմնական ծրագրերի (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) կազմման բովանդակային դաշտի իրավական հիմքերը: Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ հանրակրթության պետական չափորոշչի նորմերն ու դրույթները պարտադիր են Հայաստանի Հանրապետության կրթության կառավարման մարմինների, հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար` անկախ դրանց կազմակերպական-իրավական ու սեփականության ձևերից և ենթակայությունից:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սույն իրավական ակտը կկարգավորի հանրակրթական տարբեր ծրագրերին և սովորողներին ներկայացվող բովանդակային ընդհանրական պահանջների ձևավորման հիմքերը, հանրակրթական հիմնական ծրագրերով (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) ուսուցման կազմակերպման, հենքային ուսումնական պլանների կազմումը, սովորողների գիտելիքների գնահատման համակարգին ներկայացնող ընդհանրական մոտեցումները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հանրակրթության պետական չափորոշիչը կհամապատասխանեցվի «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներին` ներառելով կրթական բոլոր ծրագրերի բովանդակությանը և յուրացմանը ներկայացվող ընդհանրական պահանջները: Հանրակրթության պետական չափորոշչի նոր խմբագրությունը կիրառելի կլինի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար: |
| 64. | **«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2011/2012 ուսումնական տարվա՝ ըստ մասնագիտությունների պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման** |

| | |
|---|---|
| | **իրավունքով (վճարովի) առկա ուսուցմամբ բակալավրիատի կրթական ծրագրով տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ ենթակետի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջներից:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2006 թ. հունիսի 27-ի N 1183-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգով՝ բուհերին հատկացվող բակալավրի կրթական ծրագրի տեղերի բաշխումը կատարվում է հետևյալ սկզբունքներով՝<br>Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը համալրվում են մրցութային կարգով և պահպանվում են բարձր առաջադիմությամբ սովորող և հասարակական ակտիվություն ու պատշաճ վարքագիծ ունեցող ուսանողների համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված անվճար տեղերի (ուսանողական նպաստից օգտվողների) ընդհանուր գումարի սահմաններում: Առաջին կուրս ընդունված ուսանողներին, ՀՀ կառավարության կողմից ըստ մասնագիտությունների հաստատված տեղերին համապատասխան, պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերը տրվում են ընդունելության մրցույթի արդյունքներով: Պահանջվող առաջադիմությունը չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղում սովորելու իրավունքից, և ազատված տեղերը մրցութային կարգով տրամադրվում են առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անվճար (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) և վճարովի (բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ) համակարգերին հատկացվող տեղերը ձևավորվում են ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև բուհերի կողմից ներկայացված հայտերի հիման վրա՝ հաշվի առնելով նաև պետության գերակա ուղղությունները, տարածաշրջանային զարգացման խնդիրները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագիտական կրթության ապահովում, բակալավրի կրթական ծրագրով ընդունելության գործընթացի կանոնակարգում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունումը կապահովվի հանրապետության տնտեսության և գիտության զարգացման կարիքներին համապատասխան բակալավրի որակավորմամբ մասնագիտական կադրերի պատրաստումը: |
| 65. | **«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների 2011/2012 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով տեղերն ըստ մասնագիտությունների հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Կրթության մասին»ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ ենթակետի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջներից:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Բարձրագույն կրթության երկաստիճան համակարգում երկրորդ աստիճանի (մագիստրատուրայի) մրցութային ընդունելությունն իրականացվում է |

| | |
|---|---|
| | առաջին աստիճանի (բակալավրիատի) գնահատականների հաշվառմամբ՝ մրցութային կարգով` համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի: Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) բարձրագույն կրթության տեղերը տրամադրվում և պահպանվում են բարձր առաջադիմությամբ սովորող և հասարակական ակտիվություն ու պատշաճ վարքագիծ ունեցող ուսանողների համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված անվճար տեղերի (ուսանողական նպաստից օգտվողների) ընդհանուր գումարի սահմաններում՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2006 թ. հունիսի 27-ի N 1183-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգի պահանջներով:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մագիստրոսի կրթական ծրագրին հատկացվող անվճար (պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ) տեղերը ձևավորվում են ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև բուհերի կողմից ներկայացված հայտերի հիման վրա:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագիտական կրթության ապահովում, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության գործընթացի կանոնակարգում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված նախագծի ընդունմամբ կապահովվի հանրապետության տնտեսության և գիտության զարգացման կարիքներին համապատասխան գիտահետազոտական ու գիտամանկավարժական աշխատանքի կարողություններ և հմտություններ ունեցող մագիստրոսի որակավորմամբ մասնագիտական կադրերի պատրաստումը: |
| 66. | **«Հայաստանի Հանրապետության միջին և նախնական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման (նպաստի ձևով փոխհատուցման) 2011/2012 ուսումնական տարվա ընդունելության տեղերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներից:<br>Իրավական ակտի նպատակը մրցութային հիմունքներով նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնական հաստատություններ ընդունելության կազմակերպումն է` ըստ անվճար ուսուցման տեղերի:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնական հաստատություններ ընդունելությունն իրականացվում է մրցութային հիմունքներով`ըստ առկա ուսուցմամբ մասնագիտությունների հատկացված տեղերի` անվճար կամ վճարովի հիմունքով: Անվճար ուսուցմամբ տեղերի համար մրցույթին մասնակցում է տվյալ մասնագիտության համար նախատեսված բոլոր քննություններից դրական միավորներ ստացած դիմորդը: Առաջին հերթին ընդունվում է մրցութային առարկաներից ստացած գնահատականների առավելագույն գումար ունեցող դիմորդը: Քննություններից ստացած գնահատականների գումարների հավասարության դեպքում սահմանվում են նախապատվություններ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ նախնական(արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման (նպաստի ձևով փոխհատուցման) ընդունելության տեղերը ձևավորվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ուղարկված շրջաբերականի հիման վրա՝ գերատեսչությունների, ինչպես նաև նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող այլ ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված հայտերով: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ընդունելության գործընթացի կանոնակարգում, կրթական ծառայությունների մատուցման մրցակցային դաշտի ապահովում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>2011-2012թթ. ուսումնական տարվա համար նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների 7655 անվճար ուսուցման (նպաստի ձևով փոխհատուցման) ընդունելության տեղեր` հաստատված ՀՀ կառավարության որոշմամբ: |
| 67. | **«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, ՀՀ կառավարության 2000 թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարություն 2006 թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2006 թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշմամբ հաստատված նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը ներառում են այն մասնագիտությունները և որակավորումները, որոնց գծով ներկայումս նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում մասնագիտական կրթություն է իրականացվում: Աշխատաշուկայի փոփոխության և զարգացման իրողությունները ցույց են տալիս, որ որոշ մասնագիտություններ, որոնց գծով մասնագետների պահանջ է առաջացել, ցանկում ներառված չեն, իսկ որոշ մասնագիտությունների համար էլ անհրաժեշտ է անվանման փոփոխություն կատարել: Հաստատված ցանկի սահմաններում ուսումնական հաստատությունները չեն կարող նման մասնագիտությունների գծով մասնագիտական կրթական ծրագիր իրականացնել:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Առաջացած խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է փոփոխություն և լրացումներ կատարել հաստատված ցանկում` դրանում ներառելով նոր մասնագիտություններ և որակավորումներ, փոխել որոշ մասնագիտությունների և որակավորումների անվանումը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի լրացում և ճշտում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները հնարավորություն կունենան այդ մասնագիտությունների գծով մասնագիտական կրթություն իրականացնել:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գործատուները հնարավորություն կունենան իրենց աշխատատեղերը համալրել համապատասխան մասնագետներով: Դրական փոփոխություններ տեղի կունենան զբաղվածության ոլորտում: Մասնագիտական կրթության և աշխատաշուկայի կապերը կտեղափոխվեն փոխադարձ արդյունավետ դաշտ, կբարելավվի սոցիալական գործընկերության հարաբերությունների վիճակը: |
| 68. | **«Հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Միջազգային չափանիշներին ու պահանջներին համապատասխանող կրթության, գիտության և ինովացիայի սերտ համագործակցության ու |

| | |
|---|---|
| | փոխգործակցության միջավայրի ձևավորում, գիտական, գիտատեխնիկական և  գիտամանկավարժական կադրերի պատրաստման ժամանակակից, ավելի արդյունավետ համակարգի, եղանակների ու մեխանիզմների ներդրում:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Չի ապահովվում գիտելիքի ստեղծման և կիրառման շղթայի համաչափ զարգացումը, խզվել է հիմնարար հետազոտություններ-կիրառական հետազոտություններ-ինովացիոն գործունեություն կապը, անբավարար է գիտական և գիտակրթական կազմակերպությունների ենթակառուցվածքների ու նյութատեխնիկական բազայի մակարդակը, ցածր է գիտական ներուժի վերարտադրության արդյունավետությունը: Արդյունքում շարունակվում է գիտական կադրերի, առաջին հերթին, երիտասարդների արտահոսքը գիտության ոլորտից, խաթարվել է կայացած ավանդույթների ու միջազգային ճանաչում ունեցող գիտական, գիտակրթական դպրոցների սահուն ու նպատակային սերնդափոխության գործընթացը, վտանգավոր սահմանագծին է մոտեցել, ինչպես գիտական դպրոցների պահպանումն ու զարգացումը, այնպես էլ բուհերում որակյալ գիտամանկավարժական կազմ ապահովելու  հարցը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հետազոտական համալսարանի ձևավորում: Հետազոտական համալսարանը կրթական, գիտական և ինովացիոն գործունեության միասնականության սկզբունքի վրա գործող և բարձրագույն ուսումնական հաստատության ու գիտական կազմակերպության գործառույթները զուգակցող բարձրագույն ուսումնական հաստատություն է կամ գիտական կազմակերպություն: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ հետազոտական համալսարանը բարձրագույն կրթության, գիտական հետազոտությունների ու մշակումների իրականացման և բարձր մասնագիտական որակավորում ունեցող գիտական, գիտատեխնիկական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման ամենաարդյունավետ եղանակն է:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Բարձրագույն ուսումնական հաստատության և գիտական, գիտատեխնիկական ու գիտամանկավարժական կադրերի պատրաստման միջազգային արդի չափանիշներին համապատասխանող համակարգի ներդրում, գիտական ներուժի վերարտադրության արդյունավետության բարձրացում, կրթության, գիտության և ինովացիոն գործունեության ինտեգրում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Գիտական հետազոտությունների և կրթական գործընթացի բոլոր մակարդակների (մագիստրատուրա, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, վերապատրաստում և ստաժավորում) ինտեգրման  արդյունքում կձևավորվի  միջազգային չափանիշներին համապատասխանող գիտակրթական կազմակերպություն, կբարձրանա գիտական, գիտատեխնիկական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման արդյունավետությունը, տնտեսության մասնավոր հատվածից գիտությանը հատկացվող ներդրումների ծավալները, գիտական արդյունքի առևտրայնացման աստիճանը: |
| 69. | **«Հիմնական և միջնակարգ կրթության ավարտական փաստաթղթերի նմուշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>12-ամյա կրթական ծրագրերին համապատասխան (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) հիմնական և միջնակարգ կրթության ավարտական փաստաթղթերի ձևերի մշակում և ընդունում:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործում է հիմնական և միջնակարգ կրթության մեկական նմուշի ավարտական փաստաթղթի ձև, սակայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո հանրակրթական հիմնական ծրագրերից (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ)  յուրաքանչյուրին համապատասխան անհրաժեշտ է մշակել հիմնական և միջնակարգ կրթության ավարտական փաստաթղթերի ձևեր:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Յուրաքանչյուր հանրակրթական ծրագրին համապատասխան  հիմնական և միջնակարգ կրթության ավարտական փաստաթղթերի ձևերի մշակում: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Տարբեր հանրակրթական ծրագրեր ուսումնասիրող սովորողներին տրվող հիմնական և միջնակարգ կրթության սույն փաստաթղթերով կկարգավորվեն նրանց կրթության արդյունքների արձանագրման միասնական ձևանմուշները և դրանց հետ կապված իրավահարաբերությունները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Հիմնական և միջնակարգ կրթության ավարտական փաստաթղթերը լիովին կհամապատասխանեցվեն 12-ամյա կրթության ծրագրերին: |
| 70. | **«Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցման 2012/2013 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Կրթության մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներից:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Մասնագիտության տակ հասկանում ենք գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամբողջությունը, որոնք ձեռք են բերվում կրթության արդյունքում և ապահովում են որոշակի մասնագիտական խնդիրների առաջադրում ու լուծում, որից ելնելով բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտության որակավորումը սահմանում է ուսուցման, որոշակի մասնագիտական խնդիրներ լուծելու պատրաստվածության աստիճանը:<br>ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկին համապատասխան յուրաքանչյուր տարի հաստատվում է ՀՀ բուհերի ընդունելության հաջորդ տարվա մասնագիտությունների ցանկը: Այն նախատեսված է պետական և ոչ պետական կրթական հաստատություններում հետևյալ հիմնահարցերի լուծման համար՝ մասնագետների ընդունելության հետ կապված հարցերի կանոնակարգում, կրթության մեջ արտոնագրային գործունեության և վիճակագրական հաշվառման կարգավորում, ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի ինտեգրում միջազգային կրթական տարածքին:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Բուհերում գործող մասնագիտությունների ինտեգրացում, ինչպես նաև մասնագետների պատրաստման զուգահեռականության վերացում բուհերում՝ ելնելով նրանց հիմնական ուղղվածությունից:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելության ապահովում և պետության համար առաջնային ու կարևորություն ներկայացնող բնագավառներում մասնագետների պատրաստում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունումը կապահովվի հանրապետության տնտեսության և գիտության զարգացման կարիքներին համապատասխան մասնագիտական կադրերի պատրաստումը, ինչպես նաև համապատասխանեցումն աշխատուժի շուկայում բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում պահանջող մակարդակին: |
| ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | |
| 71. | **«Հայաստանի Հանրապետությունում ոչխարաբուծության զարգացման ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ծրագրի նպատակը ոչխարաբուծության զարգացմանը խթանելն է, հանրապետությունում ոչխարների գլխաքանակն ավելացնելն է՝ այն հասցնելով բնատնտեսական ներուժին համապատասխան և բնապահպանական առումով անվնաս մակարդակի:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ոչխարաբուծությունը զարգանում է իր արտադրատնտեսական իրական հնարավորությունների 25-30 |

| | |
|---|---|
| | %-ի սահմաններում, մինչդեռ այն` ցածր ռիսկայնության, առկա հնարավորությունների լիարժեք օգտագործման և ցածր ինքնարժեքով մթերքների արտադրության առումով բավականին հեռանկարային է ՀՀ-ի համար: Ավելին, վերջին երկու տարիներին հանրապետությունից Իրանի Իսլամական Հանրապետություն կենդանի ոչխարների արտահանման հաջողված փորձերը և արաբական մի շարք երկրների գործարարների կողմից Հայաստանում աճեցված ոչխարների ձեռքբերման վերաբերյալ առաջարկությունները հուսալի երաշխիք են հանդիսանում այս ոլորտի ներդաշնակ զարգացման համար:<br>Այս հանգամանքը ոչխարաբուծությունը մեր հանրապետությունում կարող է դարձնել մրցունակ ոլորտ:<br>Ուստի անհրաժեշտ է մշակել ոչխարաբուծության զարգացմանն ուղղված համալիր միջոցառումներ, որոնք կխթանեն ոչխարաբուծական մթերքների և հումքի արտադրությանն ու արտահանմանը և կնպաստեն լեռնային ու բարձր լեռնային գյուղական ազգաբնակչության եկամուտների ավելացմանը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հանրապետության ոչխարաբուծության ճյուղում ստեղծված վիճակի համակողմանի ուսումնասիրության արդյունքում բացահայտել ճյուղի զարգացմանը խոչընդոտող գործոնները և մշակել միջոցառումներ` առկա խնդիրների համակարգված լուծման ուղղությամբ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ծրագրով կսահմանվեն տոհմային բարձր հատկանիշներ ունեցող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի ավելացման մեխանիզմները, ոչխարաբուծության մասնագիտացման նախընտրելի ուղղությունները, կերային բազայի ապահովման հնարավորությունները և այլն:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումը հնարավորություն կընձեռի հանրապետություն ներկրել համաշխարհային լավագույն մսատու ցեղերի` էգ և արու տոհմային գառներ և կազմակերպել դրանց տեղական վերարտադրությունը` մաքուր բուծման և տրամախաչման միջոցով, ինչի արդյունքում 2011 թվականին կստացվի 1500, 2012 թ.` 3000, իսկ 2013 թ. և դրան հաջորդող տարիներին` 4500-ական տոհմային գառներ, որոնց 50%–ը կմատակարարվի հանրապետության ոչխարաբուծական տնտեսություններին:<br>Բացի դրանից՝ համաձայն մուլտիպլիկացիայի էֆեկտի՝ հանրապետությունում աճեցված կենդանիներից, 2013 թվականից սկսած, տարեկան կստացվի ևս շուրջ 5,0 հազար գլուխ սերունդ, իսկ ներկրված տոհմային խոյերով, 2011 թվականից սկսած, տարեկան կտրամախաչվեն ավելի քան 10 հազար տեղական ցեղերի մաքիներ: |
| 72. | **«Ձվի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նորմատիվ իրավական մեկ ակտով կամրագրվեն թռչնի ձվի արտադրությանը, անվտանգությանը, փաթեթավորմանը, մակնշմանը, փոխադրմանը, պահմանը և իրացմանը ներկայացվող պահանջները, որի արդյունքում կբարձրանա բնակչությանն անվտանգ սննդամթերքով ապահովելու մակարդակը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում են կենդանական ծագման մթերքի վերաբերյալ տեխնիկական երկու կանոնակարգեր, որոնք կարգավորում են մսի ու մսամթերքի, կաթի ու կաթնամթերքի արտադրության հետ կապված հարաբերությունները: Ասպարեզից դուրս է մնացել բնակչության սննդակարգում առաջնային տեղ զբաղեցնող և սննդային թունավորումների առաջացման տեսանկյունից վտանգ ներկայացնող սննդային թռչնի ձուն: Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչությանը հասցեագրված սպառողների զանգվածային բողոքներն ու առաջարկությունները վերաբերում են նաև թռչնի ձվի իրացման հետ կապված առաջացող խնդիրներին, որոնք պայմանավորված են ձվի սննդային անվտան-գության, մակնշման, փաթեթավորման, նույնականացման, համապատասխանության հավաստման պահանջները սահմանող միասնական նորմատիվ իրավական ակտի բացակայությամբ ու հետևաբար սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործոնների ավելացմամբ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Տեխնիկական կանոնակարգի նախագծի մշակումն ու սահմանված կարգով ընդունումը կնպաստի նշված հիմնախնդիրների լուծմանը` հաշվի առնե-լով Եվրամիության սահմանումները և Կոդեքս Ալիմենտարիուսի ստանդարտներով Հայաստանի Հանրապետության համար կիրառելի պահանջներն ու |

| | |
|---|---|
| | նորմերը, կմշակվեն արտադրության և շրջանառության փուլերում թռչնի ձվին ներկայացվող անվտանգության և սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործոնների նվազմանը և (կամ) կանխմանն ուղղված պարտադիր պահանջները, արտադրանքի նույնականացման և համապատասխանության հավաստման և պետական վերահսկողության ընթացակարգերը։<br>**2. Կարգավորման առարկան**<br>Առաջարկվող իրավական ակտով կսահմանվեն թռչնի ձվին ներկայացվող տեխնիկական պահանջները և սպառողական բնութագրերը, նշված սննդամթերքին առնչվող անվտանգության չափորոշիչները։<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>1) սննդի շղթայում թռչնի ձվի շրջանառության բոլոր փուլերում կբարձրանա պետական վերահսկողության և մոնիթորինգի արդյունավետությունը.<br>2) զգալիորեն կնվազեն թռչնի ձվի սպառման արդյունքում սննդային գործոնով պայմանավորված հիվանդությունների և թունավորումների ռիսկերը.<br>3) թռչնի ձվի շրջանառությունը հանրապետության պարենային շուկայում կհամապատասխանեցվի Եվրամիության չափանիշներին.<br>4) կբարձրանա տեղական արտադրության ձվի մրցունակությունն արտաքին շուկաներում։ |
| 73. | **«Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է սննդամթերքի անվտանգության ոլորտի օրենսդրության բարելավման, Եվրոպական հարևանության քաղաքականության՝ Հայաստանի Հանրապետության եվրոպական միության գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թթ. միջոցառումների ցանկի 132.Ե.22-րդ և 141.Ե.24-րդ կետերի և Եվրամիության հետ խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի նախապատրաստական միջոցառումների կատարման, ինչպես նաև իրացվող սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացման և արտահանման խթանման անհրաժեշտությամբ։<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Սննդամթերքի անվտանգության մասին» գործող օրենքը մշակվել է Եվրոպական պառլամենտի և Եվրոպական խորհրդի 2002 թվականի հունվարի 28-ի N 178/2002/EC կանոնակարգի դրույթների հիման վրա, սակայն այն ամբողջությամբ չի կարգավորում սննդամթերքի անվտանգության համակարգը, մասնավորապես բացակայում են առաջին անգամ արտադրվող կամ շուկայահանվող նորահայտ և հատուկ նշանակության սննդամթերքի ու սննդային հավելումների շուկայահանման և սննդի շղթայում ընդգրկված տնտեսավարողների գործունեության իրականացման վայրի մասին լիազոր մարմնի կողմից տեղեկատվության հավաքագրման ընթացակարգերը։ Բացի դրանից՝ անհրաժեշտ է ՀՀ գործող օրենքը լրացնել նոր հասկացություններով, իսկ որոշ հասկացություններ, որոնցում թարգմանության հետ կապված տեղ են գտել որոշակի անհամապատասխանություններ, ճշգրտել և ամբողջությամբ համապատասխանեցնել միջազգայնորեն ընդունված հասկացություններին։<br>Վերը նշված օրենսդրական բացթողումները խոչընդոտում են մինչև շուկայահանումն առաջին անգամ արտադրվող կամ շուկայահանվող նորահայտ և հատուկ նշանակության սննդամթերքի ու սննդային հավելումների անվտանգության նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը, իսկ սննդի շղթայում ընդգրկված տնտեսավարողների ցանկի բացակայությունը սահմանափակում է լիազոր մարմնի հնարավորությունները ոլորտի ընդհանուր վիճակի մասին տեղեկատվության հավաքագրման, համապատասխան վերլուծությունների իրականացման և պետական վերահսկողության ու մոնիթորինգի ծրագրերի կազմման, վերահսկողության արդյունավետության բարձրացման ու այդ նպատակով ծախսվող պետական միջոցների խնայողության համար։<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** |

| | |
|---|---|
| | Առկա խնդիրների լուծման համար առաջարկվում է «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ գործող օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որոնցով կսահմանվեն ՀՀ-ում առաջին անգամ արտադրվող կամ շուկայահանվող նորահայտ և հատուկ նշանակության սննդամթերքի ու սննդային հավելումների շուկայահանման ընթացակարգերը և սննդի շղթայում ընդգրկված տնտեսավարողների վրա կդրվի իրենց գործունեության իրականացման վայրի մասին լիազոր մարմնին տեղեկատվություն տրամադրելու պահանջը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սննդամթերքի անվտանգության համակարգի բարելավման նպատակով օրենքում տեղ գտած անճշտությունների շտկում և բացթողումների լրացում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենքի նախագծի ընդունմամբ՝<br>- մինչև շուկայահանումը հանրապետությունում առաջին անգամ շուկայահանվող սննդամթերքը կենթարկվի անվտանգության նկատմամբ փորձաքննության, որպեսզի կանխարգելվի հնարավոր վտանգի ռիսկը,<br>- լիազոր մարմինը կունենա սննդի շղթայում ընդգրկված տնտեսավարողների մասին տվյալների բազա, ըստ որի կկազմվեն տեսչական ստուգումների ու մոնիթորինգի ծրագրերը՝ միաժամանակ նպաստելով տեսչական գործունեության ընդգրկման շրջանակի ու արդյունավետության մակարդակի բարձրացմանն ու սպառողների շահերի պաշտպանությանը: |
| 74. | **«Գյուղատնտեսական հողատեսքերի օգտագործման բարելավման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Երկրագնդի գլոբալ տաքացումն իր բացասական ազդեցությունն է թողել աշխարհի շատ երկրների գյուղատնտեսության արտադրության վրա: Այդ բացասական ազդեցություններից անմասն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որտեղ հողերի մելիորատիվ-էկոլոգիական վիճակի վատթարացումը, ինչպես նաև դրանց բերրիության անկումը պայմանավորված է ինչպես մի շարք բնական պայմանների փոփոխությամբ, այնպես էլ անտրոպոգեն գործոններով: Այդ գործոնների շարքում հարկ է նշել այնպիսի բնական պայմաններ, ինչպիսիք են՝ հողերի խոնավ հագեցման գործակցի նվազման միտումը, օդի ջերմաստիճանների տատանումների աճը, տեղումների քանակի կրճատումը, հողառաջացման պայմանների փոփոխությունը, կենսաբազմազանության նվազումը, ինչպես նաև անտրոպոգեն գործոնների արդյունքում առաջացող հողերի դեգրադացման գործընթացները՝ պայմանավորված հեղեղումների ակտիվացմամբ, հողում հումուսի և սննդատարրերի կրճատմամբ, հողերի աղակալմամբ և ալկալիացմամբ:<br>Նշված իրավիճակում հողերի մելիորատիվ-էկոլոգիական վիճակի բարելավման և դրանց բերրիության բարձրացման համար, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 14-ի N 26 որոշումը, անհրաժեշտ է մշակել այնպիսի միջոցառումներ, որոնց իրականացման դեպքում կապահովվի բույսերի բնական աճը, կկանխվի հողերի գերխոնավացումը, երկրորդային աղակալումը, ալկալիացումը և հողերի բերրիության անկումը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս, հանրապետությունում, կապված մի շարք գործոնների հետ, ցածր տեխնիկական զինվածության, հողերի մասնատվածության, պարարտանյութերի օգտագործման ցածր մակարդակի, ոռոգման ջրի սակավության, սոցիալական պայմանների առկայության, գյուղատնտեսական հողատեսքերի օգտագործման արդյունավետությունը գտնվում է բավականաչափ ցածր մակարդակի վրա: Հանրապետության տարբեր տարածաշրջաններում մեծ տոկոս են կազմում գյուղատնտեսական հողերը չմշակելու և հողերից հրաժարվելու դեպքերը: Անարդյունավետ հողօգտագործման պատճառները տարբեր են՝ կախված գյուղատնտեսական հողերի բնակլիմայական գոտիների առանձնահատկություններից, տարածաշրջանի ազգաբնակչության սոցիալ-տնտեսա-կան վիճակից և այլ գործոններից:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագրով նախատեսվում է հանրապետության բնակլիմայական տարբեր գոտիներում ուսումնասիրել գյուղատնտեսական հողերի օգտագործման ներկա վիճակը, բացահայտել դրանց անարդյունավետ օգտագործման պատճառները, մշակել հողերի արդյունավետության բարձրացման միջոցառումների |

| | |
|---|---|
| | համակարգ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ծրագրով նախատեսվում է կարգավորել գյուղատնտեսական հողերի բերրիության հետևյալ ցուցանիշները՝<br>- հողերի ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկությունները,<br>- հողերի սննդային ռեժիմը,<br>- հողերի ջրային ռեժիմը,<br>- հողերի աղաջրային ռեժիմը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացման արդյունքում կբարձրանա հողերի բերրիության մակարդակը, կկանխվի հողերի դեգրադացիան, կապահովվեն գյուղացիական տնտեսությունների համար բարձր և կայուն եկամուտներ, գյուղական բնակավայրերում կկրճատվի աղքատության մակարդակը: |
| 75. | **«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման նպատակը սննդամթերքի անվտանգության բնագավառում իրականացվող պետական վերահսկողության ժամանակ բացառելու տարբեր մարմիններում վերահսկողական գործառույթների կրկնորդման և տնտեսավարող սուբյեկտներում ստուգումների թվաքանակի նվազման բացառումն է:<br>Առաջարկությունը բխում է «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի (2004 թ. դեկտեմբերի 21-ի ՀՕ-134-Ն) 9-րդ հոդվածի 7-րդ մասի և 17-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս, համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի (հետագայում՝ օրենք) 17-րդ հոդվածի 1-ին մասի, նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 7-րդ հոդվածի 2-րդ մասով և 9-րդ հոդվածի, 7-րդ, 11-19-րդ մասերով սահմանված պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները: Սակայն, համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 238.2-րդ հոդվածի դրույթների՝ վերը նշված պահանջների խախտման դեպքերում օրենսգրքի 158-րդ հոդվածի համապատասխանաբար 5-րդ, 6-րդ, 11-րդ, 13-րդ և 14-րդ մասերով նախատեսված վարչական գործերը քննում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչությունը: Բացի դրանից՝ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանվել են վաճառվող սննդամթերքի մակնշման վերաբերյալ պահանջներ, որոնք հիմնականում կրկնում են «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի դրույթները և որոնց նկատմամբ հսկողությունը վերապահված է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը, սակայն, այն իրականացնում են նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Արդյունքում վերահսկողական միևնույն գործառույթները կատարում են տարբեր մարմիններ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հիմք ընդունելով «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի, 9-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի N 557-Ն որոշման դրույթները՝ անհրաժեշտություն է առաջանում նշված վերահսկողական գործառույթները կենտրոնացնել մեկ լիազոր մարմնում՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում: Այդ նպատակով առաջարկվում է օրենքի մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ:<br>**2. Կարգավորման առարկան** |

| | |
|---|---|
| | Սույն նախագծով նախատեսվում է կարգավորել սննդամթերքի անվտանգության բնագավառում պետական վերահսկողության օրենսդրական դաշտը։<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունման և կիրառման դեպքում կհստակեցվի սննդամթերքի անվտանգության բնագավառում պետական վերահսկողությունը, կբացառվի տարբեր մարմինների կողմից կամային ստուգումների իրականացումը։ Արդյունքում գործնականորեն կխնայվեն տնտեսավարող սուբյեկտների միջոցները, որը կնպաստի սննդամթերքի առևտրով զբաղված կազմակերպությունների գործունեության զարգացմանը։ |
| 76. | **«Գյուղատնտեսության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Գյուղատնտեսության, ինչպես նաև գյուղական համայնքների կայուն ու համաչափ զարգացման բնագավառներում ծառացել են օրենսդրական կարգավորում պահանջող մի շարք հիմնահարցեր, որոնք վերաբերում են գյուղատնտեսական մթերքների արտադրության խթանմանը, ոլորտի ներդրումային գրավչության և մրցունակության բարձրացմանը, ներքին շուկայի, տեղական ապրանք արտադրողների շահերի պաշտպանությանը, ինչպես նաև գյուղաբնակների կենսապայմանների բարելավմանը։<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Գյուղատնտեսության ոլորտի հիմնական հասկացությունների, ճյուղի զարգացման պետական քաղաքականության սկզբունքների, նպատակների, ուղղությունների օրենսդրական հստակեցման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետության՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանը հետանդամակցային ժամանակահատվածում գյուղատնտեսության ոլորտում սակագնային և ոչ սակագնային կարգավորման ուղղությամբ ստանձնած պարտավորությունների շրջանակներում գլոբալ մրցակցության առկա ռիսկերի (մարտահրավերների) մեղմումը և, մյուս կողմից, ընձեռվող հնարավորությունների արդյունավետ օգտագործումը պահանջում են բարենպաստ իրավաօրենսդրական դաշտի ձևավորման միջոցով կատարելագործել (հստակեցնել) իրականացվող ագրարային քաղաքականությունը։<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Օրենքի՝ սահմանված կարգով ընդունման դեպքում՝ կկարգավորվեն մրցունակ ագրարային հատվածի ձևավորման գործընթացում ծագող իրավահարաբերությունները, ինչպես նաև կհստակեցվեն գյուղատնտեսության կայուն զարգացման պետական աջակցության հիմնական ուղղությունները և մեխանիզմները։ Օրենքի ընդունմանը սահմանված կարգով կհաջորդի ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունումը, որը նույնպես հնարավորություն կընձեռի լրացնել առկա օրենսդրական բացերը։<br>**2. Կարգավորման առարկան**<br>Օրենքով սահմանվելու են գյուղատնտեսության զարգացման պետական քաղաքականության սկզբունքները, նպատակները, ինչպես նաև կարգա-վորվելու են բուսական և կենդանական ծագման սննդամթերքի տեղական արտադրության, ներմուծման, արտահանման բնագավառներում ծագած հարաբերությունները և պետական աջակցության գերակայությունները։<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենքի ընդունմամբ կսահմանվեն գյուղատնտեսության զարգացման քաղաքականության հիմնական սկզբունքները, նպատակները, հասկացությունները, ոլորտի ներդրումային գրավչության և մրցունակության բարձրացմանը նպատակաուղղված պետական աջակցության ուղղությունները՝ ելնելով այդ ոլորտը կարգավորող Եվրամիության երկրների լավագույն փորձից։ |
| 77. | **«Մարդու սպառման համար նախատեսված կենդանական ծագման մթերքի պաշտոնական վերահսկողության որոշակի կանոններ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի** |

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

«Մարդու սպառման համար նախատեսված կենդանական ծագման մթերքի պաշտոնական վերահսկողության որոշակի կանոններ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է սննդամթերքի անվտանգության ոլորտի օրենսդրության և վերահսկողության ընթացակարգերի բարելավման, եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011թթ. միջոցառումների ցանկի 132.Ե.22-րդ և 141.Ե.24-րդ կետերի և Եվրամիության հետ խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի նախապատրաստական միջոցառումների կատարման, ինչպես նաև իրացվող սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացման և արտահանման խթանման անհրաժեշտությամբ:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս հանրապետությունում կենդանական ծագման մթերքի անվտանգության նկատմամբ պետական վերահսկողության պահանջները սահմանված են «Սննդամթերքի անվտանգության մասին» և «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքներով և դրանցից բխող մի շարք՝ ՀՀ կառավարության որոշումներով, մասնավորապես, կենդանական սպանդից գոյացած մթերքների, ձկան, ջրային կենդանիների ու ձկնամթերքի, կաթի և կաթնամթերքի անասնաբուժասանիտարական փորձաքննության, կենդանիների սպանդից գոյացած մթերքի դրոշմման, անասնաբուժական պետական հսկման ենթակա բեռների անասնաբուժական ուղեկցող փաստաթղթեր տալու կարգերով և այլն, որոնք կարիք ունեն վերանայման ու Եվրամիության կողմից ընդունված պահանջներին համապատասխանեցման: Միաժամանակ, «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի պահանջով պետք է սահմանվեր անասնաբուժական պետական վերահսկողության իրականացման կարգ, որը դեռևս սահմանված չէ:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակման համար հիմք կընդունվի Եվրոպական պառլամենտի և Եվրոպայի խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի «Մարդու սպառման համար նախատեսված կենդանական ծագման մթերքի պաշտոնական վերահսկողության որոշակի կանոններ սահմանելու մասին» N 854/2004 կանոնակարգը՝ կենդանական ծագման մթերքի համար սահմանվելիք առանձնահատուկ պահանջների ապահովման նկատմամբ պետական վերահսկողությունը Եվրամիության ընդունված չափանիշներով և ընթացակարգերով իրականացնելու նպատակով:

**2. Կարգավորման առարկան**

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը նպատակաուղղված է սննդամթերքի անվտանգության համակարգի, մասնավորապես, կենդանական ծագման մթերքի անվտանգության ապահովման նկատմամբ իրականացվող պետական վերահսկողության համակարգի բարելավմանը և Եվրամիության ընդունված պահանջներին համապատասխանեցմանը:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

ՀՀ կառավարության որոշման նախագծով կկանոնակարգվի անասնաբուժական պետական վերահսկողությունը, մասնավորապես՝

- կսահմանվեն տեսուչների գիտելիքներին և ունակություններին ներկայացվող պահանջները, որոնք այնուհետև կներառվեն նրանց ՔԾ-ի պաշտոնի անձնագրերում,
- կսահմանվեն կենդանական ծագման մթերքի անվտանգության նկատմամբ իրականացվելիք վերահսկողության և մոնիթորինգի ընդգրկման շրջանակներն ու հաճախականությունը,
- ըստ կենդանիների տեսակների՝ կսահմանվեն նախասպանդային և հետսպանդային տեսողական զննության և ֆիզիկաքիմիական ու մանրէաբանական հետազոտությունների ընդգրկման շրջանակները և այն վտանգները (հիվանդությունները), որոնց նկատմամբ հետազոտությունը պարտադիր է,
- կսահմանվեն տնտեսությունում սպանդի ենթարկված և կենդանի կենդանիներին սպանդանոց փոխադրմանն ուղեկցող սանիտարական սերտիֆիկատի ձևերը և այլն, ինչը կնպաստի անասնաբուժական տեսչական վերահսկողության և վտանգների բացահայտման մակարդակի բարելավմանը՝ ապահովելով կենդանական ծագման սննդամթերքի անվտանգության մակարդակի բարձրացումն ու սպառողների շահերի պաշտպանությունը:

| | |
|---|---|
| | |
| ՀՀ մշակույթի նախարարություն | |
| 78. | **«ՀՀ կառավարության մի շարք որոշումներում լրացումներ կատարելու մասինե ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Իրավական ակտի ընդունումը պայմանավորված է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասինե ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասինե N 438 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներով:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնե ՊՈԱԿ-ի և իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից 2006-2008 թթ. հաշվառվել են ՀՀ Տավուշի, Լոռու, Շիրակի, Արմավիրի, Արագածոտնի, Արարատի մարզերում մոտ 1540 նորահայտ օբյեկտների պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, որոնք, պետական ցուցակներում ընդգրկելու նպատակով, կներկայացվեն ՀՀ մշակույթի նախարարության փորձագիտական հանձնաժողովի եզրակացությանը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվառված օբյեկտներին նորահայտ հուշարձանի կարգավիճակ շնորհելու նպատակով քննարկում փորձագիտական հանձնաժողովի նիստում և հուշարձանների պետական ցուցակներում ընդգրկման նպատակով ՀՀ կառավարության որոշման նախագծի կազմում:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Նորահայտ հուշարձանների պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկում, պահպանական գոտիների նախագծերի կազմում և դրանց պահպանության գործընթացի կազմակերպում:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Պետական ցուցակում ընդգրկված պատմամշակութային հուշարձանի անխաթար պահպանություն, այդ գործընթացներին պետական հոգածության ապահովում: |
| 79. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. օգոստոսի 22-ի N 1356-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասինե ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**<br><br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. օգոստոսի 22-ի N 1356-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասինե ՀՀ կառավա-րության որոշման նախագծի մշակումն ու ընդունումը պայմանավորված է ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային արժեքների պահպանության գործակալության կանոնադրությամբ ամրագրված մի շարք գործառույթները ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ: Գործակալության կանոնադրությունը հաստատվել է ավելի վաղ, քան ոլորտը կարգավորող` ներկայումս գործող իրավական ակտերի մեծ մասը, ինչի արդյունքում առաջացել են հակասություններ` ՀՀ օրենսդրությամբ ամրագրված, գործակալության կանոնադրության մեջ նշված և գործակալության կողմից փաստացի իրականացվող գործառույթների միջև: Այսպես` կանոնադրությունում մի շարք գործառույթներ |

նախատեսված չեն իրավական որևէ ակտով, փաստորեն չեն իրականացվում և դրանք անհրաժեշտ է հանել, իսկ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված մի շարք գործառույթներ իրականացվում են գործակալության կողմից և դրանք անհրաժեշտ է ավելացնել նրա կանոնադրության մեջ:

**1.2. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-176-Ն, 30.12.04 թ.) սահմանված են մշակութային արժեքների պահպանության ոլորտի պետական լիազոր մարմնի մի շարք իրավասություններ, որոնց մեծ մասի իրականացումը նախատեսված չէ նախարարության աշխատակազմի մշակութային արժեքների պահպանության գործակալության կանոնադրությամբ, սակայն պետք է որ հանդիսանան գործակալության գործառույթներ: Դրանք են՝

1) պետական պահոցներում պահպանվող մշակութային արժեքների արտահանման (բացառությամբ ժամանակավոր արտահանման դեպքերի) արգելումը.

2) այլ պետությունների տարածքում գտնվող ազգային մշակութային արժեքների հաշվառման մատյանի կազմումը.

3) վերջին 50 տարում մահացած այն հեղինակների ցանկի կազմումը, որոնց ստեղծագործությունները Հայաստանի Հանրապետությունից կարող են արտահանվել միայն մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագրի հիման վրա.

4) Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային այն արժեքների ցանկի մշակումը, որոնց արտահանումը և ժամանակավոր արտահանումը Հայաստանի Հանրապետության տարածքից արգելվում է.

5) պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքների պահպանական ցուցակի կազմումը.

6) արտահանման կամ ժամանակավոր արտահանման համար հայտագրված՝ կերպարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի մշակութային արժեք չհամարվող ստեղծագործությունների և մշակութային նշանակության առարկաների լուսանկարների շրջերեսին դրանց իսկության վավերացումը.

7) Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս մշակութային արժեքների անհետացման, կորստի, հափշտակության փաստերի վերաբերյալ տեղեկատվության տարածումը.

8) պետական սեփականություն համարվող, ինչպես նաև մշակութային արժեքների պահպանական ցուցակում գրանցված կամ գրանցման ենթակա ժամանակավոր արտահանվող մշակութային արժեքների հաշվառումը.

9) սահմանված ժամկետում չվերադարձված արժեքների հետբերման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը.

10) արտահանվող, ժամանակավոր արտահանվող և ներմուծվող մշակութային արժեքների վիճակագրության վարումը.

11) ժամանակավոր արտահանվող և ժամանակավոր արտահանումից վերադարձված մշակութային արժեքների իսկության արձանագրումը.

12) հետախուզման մեջ գտնվող մշակութային արժեքն արտահանման համար ներկայացնելու դեպքում դրա մասին իրավապահ մարմիններին անհապաղ հայտնումը:

Բացի դրանից՝ գործակալության ներկայիս կանոնադրությամբ ամրագրված մի շարք գործառույթներ օրենքով կամ իրավական որևէ այլ ակտերով սահմանված չեն և ժամանակավրեպ են: Դրանցից են՝

1) մշակութային արժեքների արտահանման և ժամանակավոր արտահանման, ժամանակավոր արտահանումից վերադարձման ու մշակութային արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման դեպքերում մշակութային արժեքների արվեստաբանական ու պատմամշակութային փորձաքննության իրականացումը.

2) ժամանակավոր արտահանվող մշակութային արժեքների վերադարձման նպատակով իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ օրենքով նախատեսված կարգով գրավի պայմանագրերի կնքումը.

3) մշակութային արժեքների արտահանման և ներմուծման պետական խորհուրդ օրենքով նախատեսված կարգով և դեպքերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող ընտանեկան մասունքների կամ հիշատակ հանդիսացող մշակութային արժեքների արտահանման թույլտվության վերաբերյալ միջնորդության ներկայացումը.

| | |
|---|---|
| | 4) մշակութային արժեքների արտահանման և ներմուծման պետական խորհրդի գործունեության կազմակերպման-տեխնիկական ապահովումը.<br>5) Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և ժամանակավոր ներմուծվող մշակութային արժեքների գրանցումը.<br>6) արվեստաբանական և պատմամշակութային փորձաքննությունը, ինչպես նաև այդ արժեքների մասին սեփականության իրավունքի ճշտման նպատակով տեղեկատվության հրապարակումը:<br>Միաժամանակ, 2008 և 2010 թթ. փոփոխություններ են կատարվել նաև ՀՀ մշակույթի նախարարության կանոնադրությունում, ինչն առաջացնում է գործակալության գործառույթները վերոհիշյալ իրավական ակտերի դրույթներին համապատասխանեցնելու անհրաժեշտություն:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Գործակալության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով կապահովվի գործակալության կողմից փաստացի իրականացվող գործառույթների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանվածներին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Մշակութային արժեքների պահպանության և շրջանառության ոլորտի կարգավորում:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>1) կապահովի գործակալության կողմից իրականացվող գործառույթների իրականացման անհրաժեշտ իրավական հիմքերը.<br>2) կհստակեցվեն նախարարության աշխատակազմի կենտրոնական ապարատի մշակութային արժեքների ոլորտի քաղաքականության գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների և ծառայություններ մատուցող գործակալության գործառույթները.<br>3) կհստակեցվեն գործակալության կառուցվածքն ու դրա ստորաբաժանումների գործառույթները: |
| 80. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի N 484-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և թանկարժեք մետաղներից և քարերից պատրաստված թանգարանային առարկաների հաշվառման և պահպանության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1.Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակ)**<br>Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդում ընդգրկված են թանկարժեք մետաղներից ու թանկարժեք քարերից պատրաստված թանգարանային առարկաներ, որոնք Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության անքակտելի մասն են կազմում: Դրանք հաշվառված են թանգարաններում և առանձին գրանցված համապատասխան գրքերում: Սույն որոշման նպատակը բոլոր թանգարանների համար այդ հաշվառման չափորոշիչների սահմանումն է:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2007 թվականի ապրիլի 5-ի «Հայաստանի Հանրապետության թանկարժեք մետաղների ու թանկարժեք քարերի պետական պահուստների և դրանց բաղկացուցիչ մաս կազմող թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ազգային պահուստի համալրման, պահպանության, օգտագործման, ծախսման, հաշվառման, ինչպես նաև դրանց տեղաբաշխման և գտնվելու վայրերը որոշելու կարգը հաստատելու մասին» N 484-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետով սահմանված պահանջը տարածվում է բոլոր պետական մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների վրա, այն է՝ պետական մարմիններում, պետական հիմնարկներում ու կազմակերպություններում գտնվող թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և դրանցից պատրաստված իրերի (այսուհետ՝ իրեր) հաշվառումն իրականացնում են համապատասխան պետական մարմինը, պետական հիմնարկը և կազմակերպությունը՝ խիստ հաշվառմամբ (հաշվառման քարտերի և գրքերի միջոցով), որոնց ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը՝ գանձարանի ներկայացմամբ: Գրքերը կարվում, էջակալվում են, վերջին էջում գրվում է էջերի թիվը, օրը, ամիսը և ստորագրվում համապատասխան մարմնի ղեկավարի կողմից: Հաշվառման քարտերի և գրքերի ձևը հաստատվել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունիսի 27-ին N 539-Ն հրամանով, ինչը տարբերվում է թանգարանային առարկաների հաշվառման |

| | |
|---|---|
| | սկզբունքներից` ինչը ենթադրում է ավելի մանրամասն և գիտական չափանիշներին համապատասխան գրանցումներ հատուկ մատյաններում և քարտերում: Նշված երկու սկզբունքներով սահմանված տարբեր պահանջների տարբերության հետևանքով, «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն, թանգարանների նկատմամբ կիրառվում է տուգանք:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի N 484-Ն որոշման մեջ կատարելով փոփոխություն, այն է` որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետում նշելով «Բացառությամբ թանգարաններից» և հաստատելով թանկարժեք մետաղներից ու թանկարժեք քարերից պատրաստված թանգարանային առարկաների հաշվառման և պահպանության կարգը` կստեղծվեն իրավական հիմքեր հարցի կարգավորման համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Թանգարանային առարկաների հաշվառման և պահպանության կարգավորում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բոլոր թանգարանների թանկարժեք մետաղներից ու թանկարժեք քարերից պատրաստված թանգարանային առարկաների հաշվառման ընդհանուր չափորոշիչների սահմանումը կվերացնի հակասությունը թանգարանային առարկաների հաշվառման և պահպանության կարգի, «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ֆինանսների նախարարության պահանջների միջև:<br>Թանգարաններում պահվող թանկարժեք մետաղներից ու թանկարժեք քարերից պատրաստված թանգարանային առարկաների գիտական նկարագրության շնորհիվ հստակ պատկերացում կկազմվի պահպանվող արժեքների վերաբերյալ: |
| 81. | **«Հայաստանի Հանրապետությունում մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչները և մշակութային տարածքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2010 թ. հունվարի 15-ի N 8-Ա որոշմամբ հաստատված` «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից բխող միջոցառումների ցանկի 5-րդ կետի պահանջների կատարման ապահովում:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ժամանակակից կյանքում ձևավորվող արժեքային նոր հարաբերություններն իրենց կնիքն են դնում տարածության կազմակերպման ձևերի վրա: Ավելին, սոցիալական գործընթացների ազդեցությունը տարածության վրա ներգործում է նաև մինչև այդ պատմականորեն ձևավորված ավանդական միջավայրի վրա: Արդի տեղեկատվական դաշտի մատչելիության պայմաններում առավել արագընթաց են դարձել գլոբալիզացիայի միտումները, որոնք լուրջ վտանգ են ներկայացնում ազգային, ավանդական ոչ նյութական մշակութային արժեքների կենցաղավարման համար: Այսօր Հայաստանի Հանրապետությունում դեռևս ուսումնասիրված չեն այն տարածքները, որտեղ ավանդաբար ստեղծվել և շարունակում են ստեղծվել ոչ նյութական մշակութային արժեքներ: Հանրությունը մեծամասամբ տեղեկացված չէ այս կամ այն տարածքների մասին, որտեղ հնարավոր կլինի ականատես լինել կենցաղավարող որևէ ավանդական մշակույթի:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է մշակել ոչ նյութական մշակութային տարածքների չափորոշիչներ և դրանց հիման վրա գրանցել այդ տարածքները, ստեղծել նպաստավոր պայմաններ դրանց բնորոշ ոչ նյութական մշակութային արժեքների հետագա կենսունակության համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Մշակութային տարածքների գրանցման գործընթացը: |

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>3.1. Իրավական ակտի ընդունումը հնարավորություն կստեղծի`<br>➢ պահպանել ոչ նյութական մշակութային ժառանգությունը որպես միասնական ավանդական կենցաղի տարածք և ապահովել նրա կենսունակությունը.<br>➢ բարձրացնել մեր ժողովրդի ոչ նյութական մշակութային ժառանգության հարցերով զբաղվող մշակութային, գիտական հիմնարկների, կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, անհատ հետազոտողների կողմից կատարվող ուսումնասիրությունների ու աշխատանքների արդյունավետությունը.<br>➢ պահպանել ազգային փոքրամասնությունների ժողովրդական ավանդույթները, ուսումնասիրել նրանց մշակույթի զարգացումը, աշխուժացնել տարածաշրջանային և միջազգային համապատասխան կառույցների հետ համագործակցությունը` ապահովելով ոչ նյութական մշակութային արժեքներ ստեղծող, պահպանող և փոխանցող համայնքների, խմբերի հնարավորինս լայն մասնակցությունն այդ ժառանգության պահպանության, զարգացման և տարածման գործին:<br>3.2. Ոչ նյութական մշակութային տարածքների ուսումնասիրությունն ու հանրայնացումը`<br>1) մեծ հետաքրքրություն կառաջացնի միջազգային կրթական, գիտական և մշակութային շրջանակներում` արմատավորելով հայկական միասնական մշակույթի մասին պատկերացումները.<br>2) մեծապես կնպաստի Հայաստանի ճանաչմանը և հայանպաստ տրամադրությունների տարածմանը, հայագիտական ուսումնասիրությունների խթանմանը.<br>3) նոր թափ կհաղորդի երկրի զարգացման կարևորագույն ուղղություններից` զբոսաշրջության զարգացմանը և հիմքեր կստեղծի ներդրումների համար, միջազգային տնտեսական, գիտական և մշակութային ոլորտներում միջազգային կազմակերպությունների` Հայաստանի հետ կապերի հաստատմանն ու սերտացմանը.<br>4) հիմքեր կստեղծի պատմամշակութային ժառանգության առավել արժեքավորները ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցուցակներում ընդգրկելու համար:<br>Իրավական ակտի հաստատումից հետո ակնկալվում է նաև ոչ նյութական մշակութային ժառանգությունը պաշտպանելու, պահպանելու և զարգացնելու գործում հանրության իրազեկվածության բարձրացում և, կոնկրետ գործողությունների իրականացմամբ, հասարակական ներուժի ներգրավում ոչ նյութական մշակութային ժառանգության զարգացմանը: |
| **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** | |
| 82. | **«2011 թվականի պետական նպաստների չափերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով նախատեսված է, որ յուրաքանչյուր տարի պետք է ՀՀ կառավարության կողմից սահմանվեն պետական նպաստների չափերը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2010 թվականի պետական նպաստների չափերը ՀՀ կառավարության կողմից սահմանվել են 2010 թվականի հունվարին: 2011 թվականի պետական նպաստների վճարումը հնարավոր չի լինի դրանց չափերը սահմանված չլինելու դեպքում:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել համապատասխան որոշման նախագիծ:<br>**2. Կարգավորման առարկան** |

| | |
|---|---|
| | Նախագծով առաջարկվում է հաստատել ընտանեկան նպաստի բազային մասի, երեխաներին տրվող հավելումների, միանվագ դրամական օգնությունների, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի, երեխայի ծննդյան միանվագ նպաստի, զոհված` Հայաստանի ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձանց ընտանիքի նպաստի չափերը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Բնակչությանը վճարվող պետական նպաստների` 2011թ. չափերի սահմանում և դրանց վճարում: |
| 83. | **«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայացվող ՀՀ կառավարության որոշման նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով:<br>Նախագծի նպատակը ժամանակավոր անաշխատունակության նպաստների նշանակման ու վճարման հետ կապված հարաբերությունների ամբողջական կարգավորումն է:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ժամանակավոր անաշխատունակության նպաստների նշանակումն ու վճարումը կանոնակարգվում է «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքով:<br>Հաշվի առնելով 2008 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունները (երբ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարը փոխարինվեց պարտադիր սոցիալական ապահովության վճարի` ներառվելով ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտներում) և կենսաթոշակային բարեփոխումները` մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի նախագիծը:<br>Նախագիծը ՀՀ Ազգային ժողովն ընդունել է 2010 թվականի հոկտեմբերի 27-ին (ներկայացվել է ՀՀ Նախագահի ստորագրմանը):<br>Նախագծի ընդունման դեպքում ուժը կորցրած կճանաչվի «Ժամանակավոր անաշխատունակության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, հետևաբար, ժամանակավոր անաշխատունակության նպաստների նշանակումը և վճարումը կարգավորող` ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 30-ի N 571-Ն որոշումը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ըստ այդմ, անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը սահմանելու է`<br>1) անաշխատունակության նպաստ նշանակող և վճարող` Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմինը.<br>2) առողջարանային բուժման նպաստի իրավունք տվող հիվանդությունների ցանկը.<br>3) քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձի նպաստի հաշվարկման և վճարման կարգը.<br>4) նպաստի հաշվարկման, նշանակման և վճարման կարգը.<br>5) ժամանակավոր անաշխատունակության թերթիկի ձևը, լրացման ու տրամադրման կարգը.<br>6) օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված ժամանակավոր անաշխատունակության թերթիկը նպաստի նշանակման համար հիմք համարվելու կարգը.<br>7) չստացված նպաստը վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանք ներկայացնելու կարգը և այլն:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Իրավական ակտի ընդունումը կապահովի ժամանակավոր անաշխատունակության նպաստների նշանակումը և վճարումը` ըստ սահմանված կարգերի: |
| 84. | **«Դատավորի կենսաթոշակի նկատմամբ սահմանվող հավելավճարը նշանակելու և վճարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայացվող ՀՀ կառավարության որոշման նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է «Դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով:<br>Նախագծի նպատակը դատավորի կենսաթոշակի նկատմամբ սահմանվող հավելավճարը նշանակելու և վճարելու հետ կապված հարաբերությունների ամբողջական կարգավորումն է:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ Ազգային ժողովը 2010 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունել է «Դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել «Դատավորի կենսաթոշակի նկատմամբ սահմանվող հավելավճարը նշանակելու և վճարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Դատավորի կենսաթոշակի նկատմամբ սահմանվող հավելավճարը նշանակելու և վճարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը սահմանելու է`<br>1) դատավորի կենսաթոշակի նկատմամբ սահմանվող հավելավճարը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին աշխատավարձը հաշվարկելու կարգը.<br>2) դատավորի կենսաթոշակի նկատմամբ սահմանվող հավելավճարը հաշվարկելու (վերահաշվարկելու), նշանակելու և վճարելու կարգը.<br>3) դատավորի կենսաթոշակի նկատմամբ սահմանվող հավելավճարի իրավունք տվող ստաժը հաշվարկելու կարգը.<br>4) մինչև «Դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը` դատավորի պետական կենսաթոշակի նկատմամբ սահմանված հավելավճարը վերահաշվարկելու և վճարելու կարգը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի ընդունման դեպքում իրավական կարգավորում կստանան դատավորի կենսաթոշակի նկատմամբ սահմանվող հավելավճարը հաշվարկելուն (վերահաշվարկելուն), նշանակելուն և վճարելուն առնչվող հարաբերությունները: |
| 85. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1783-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Մշակվել է «Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որը, ՀՀ վարչապետի հանձնարարականի համաձայն, ներառվել է կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքների նախագծերի փաթեթի մեջ (նախատեսվում է, որ մինչև տարեվերջ կընդունվի ամբողջությամբ):<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաձայն «Փախստականների մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 27.11.2008թ.)` Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձի` անձը հաստատող փաստաթուղթը փախստականի վկայականն է:<br>Ըստ այդմ, «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքին համապատասխան, այս անձանց սոցիալական ապահովության քարտ է հատկացվել փախստականի վկայականի հիման վրա:<br>ՀՀ Ազգային ժողովը 2008 թ. նոյեմբերի 27-ին ընդունել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը, որի 30-րդ հոդվածին համապատասխան |

| | |
|---|---|
| | փախստականի անձը և Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հաստատող և Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու համար նախատեսված վավեր փաստաթուղթ է սահմանվել կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>«Սոցիալական ապահովության քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո անհամապատասխանություններ կառաջանան «Սոցիալական ապահովության քարտերի մասին ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում սոցիալական ապահովության քարտերի համակարգ ներդնելու մասին N 1783-Ն որոշման դրույթների միջև:<br>Ըստ այդմ, առաջարկվում է փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1783-Ն որոշման մեջ` որոշմամբ հաստատված կարգի դրույթները համապատասխանեցնելով օրենքի դրույթներին:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ներկայացվող նախագծով կկարգավորվեն փախստականի կարգավիճակ ունեցող անձանց կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի հիման վրա սոցիալական քարտ հատկացնելուն առնչվող հարաբերությունները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենքն ընդունվելու դեպքում կկարգավորվի փախստականի կարգավիճակ ունեցող անձանց սոցիալական քարտ տրամադրելու գործընթացը` դրանով իսկ աջակցելով նրանց սոցիալական պաշտպանության իրավունքների իրականացմանը: |
| 86. | **«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայացվող ՀՀ կառավարության որոշման նախագծի անհրաժեշտությունը պայմանավորված է կենսաթոշակային բարեփոխումներով:<br>Նախագծի նպատակը կենսաթոշակների նշանակման ու վճարման հետ կապված հարաբերությունների ամբողջական կարգավորումն է:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ Ազգային ժողովը 2010 թվականի հունիսի 24-ին 1-ին ընթերցմամբ ընդունել է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի նախագիծը (նախատեսվում է, որ մինչև տարեվերջ կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքների նախագծերի փաթեթը կընդունվի ամբողջությամբ):<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագիծն ընդունվելուց հետո անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը սահմանելու է`<br>1) կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմինների ցանկը, կենսաթոշակ նշանակելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, կենսաթոշակ նշանակելու համար դիմելու, կենսաթոշակ նշանակելու, հաշվարկելու (վերահաշվարկելու), կենսաթոշակի տեսակը փոխելու, կենսաթոշակ վճարելու և կենսաթոշակի գործ (փաստաթղթեր) վարելու կարգը.<br>2) աշխատանքային ստաժը հաշվարկելու կանոնները.<br>3) զինվորական ծառայության ստաժը հաշվարկելու կանոնները.<br>4) երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող պաշտոնների ցանկը.<br>5) մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկը. |

| | |
|---|---|
| | 6) երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող և զինվորական ծառայությունը շարունակող զինծառայողի ամսական դրամական բավարարմանը տրվող հավելումների չափերը և տրամադրման կարգը, դրամական բավարարման մեջ մտնող վճարումների տեսակների ցանկը. <br>7) սոցիալական վճարներ կատարելը և աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերին ներկայացվող պահանջները (վավերապայմանները). <br>8) կենսաթոշակառուի մահվան պատճառով չստացված կենսաթոշակի գումարը վճարելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը. <br>9) կենսաթոշակի վկայականի ձևը: <br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br>Իրավական ակտի ընդունումը կապահովի պետական կենսաթոշակների նշանակումը և վճարումը` ըստ սահմանված կարգերի: |
| 87. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 30-ի N 533-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի** <br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** <br>ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207–Ն որոշմամբ հաստատված՝ կայուն զարգացման ծրագրի համապատասխան ռազմավարական գերակայության իրականացման, մասնավորապես, զբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպման իրավական հիմքերի ապահովում: <br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br>Համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատված՝ կայուն զարգացման ծրագրի նպատակների և ռազմավարական գերակայությունների՝ զբաղվածության ոլորտում պետական քաղաքականությունն ուղղված է լինելու աշխատուժի մրցունակության շարունակական բարձրացմանը, աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամամասնության մեղմմանը, երիտասարդների, այդ թվում՝ գյուղաբնակ երիտասարդության զբաղվածության ապահովմանը: <br>Խնդիր է գյուղական բնակչության, հատկապես երիտասարդների թերզբաղվածությունը, ոչ գյուղատնտեսական զբաղվածության ոչ բավարար մակարդակը, զբաղմունքների բազմազանեցումը, այլ ոլորտի ճյուղերի զարգացման խրախուսումը և ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծումը: <br>**1.2. առկա խնդիրները և առաջարկվող լուծումները** <br>Համաձայն ՀՀ օրենսդրության՝ գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող անձինք համարվում են զբաղված և չեն կարող մասնակցել զբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում կազմակերպվող մասնագիտական ուսուցման դասընթացներին: <br>«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող անձանց թույլատրել ընդգրկվելու նշված դասընթացներին: Նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը, որի ընդունումից հետո անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել նաև ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 30-ի N 533-Ն որոշման մեջ: <br>**2. Կարգավորման առարկան** <br>Գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպումը: <br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում են հետևյալ հիմնական արդյունքները** <br>Գյուղական համայնքների աշխատունակ բնակչության մասնագիտական ունակությունների և որակների բարձրացում և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցում: |
| 88. | **«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի** |

| | |
|---|---|
| | **Հանրապետության օրենքի նախագիծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրությամբ հավանության է արժանացել պետական նպաստների համակարգում տեղեկատվության հավաքագրման արդյունավետության մեծացման միջոցառումների ժամանակացույցը: Ժամանակացույցով նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում պարզվել է, որ անհրաժեշտ են որոշակի փոփոխություններ կատարել «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով` պետական նպաստների իրավունքի իրականացման ժամանակ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման մեխանիզմները սահմանող դրույթներում:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>2010 թվականի ընթացքում պետական նպաստների նշանակման և վճարման իրավակիրառական պրակտիկայի ընթացքում ի հայտ են եկել խնդիրներ, որոնք դժվարացնում են պետական նպաստների իրավունքի իրականացումը, այդ գործընթացը դարձնում անարդյունավետ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նշված նախագծի ընդունմամբ կհստակեցվեն և կպարզեցվեն պետական նպաստների նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները: Վերանայվելու են ներկայացվող փաստաթղթերի ցանկը և դրանց ձեռքբերման, տեղեկատվության հավաքագրման մեխանիզմները: Նշվածի միջոցով կմեծացվի նաև ընտանեկան նպաստի հասցեականության մակարդակը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Պետական նպաստների նշանակման համար անհրաժեշտ փաստաթղթերի նոր ցանկի և տեղեկատվության հավաքագրման նոր մեխանիզմների առկայություն: |
| 89. | **«Երեխայի իրավունքների պաշտպանության 2012 թվականի միջոցառումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը(նպատակը)**<br>«Երեխայի իրավունքների պաշտպանության 2012 թվականի միջոցառումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման ընդունումը բխում է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներից:<br>Նպատակը յուրաքանչյուր հաջորդ տարվա համար երեխաների խնամքին, բուժմանը, կրթությանը, հոգևոր դաստիարակությանը, մշակութային արժեհամակարգի ձևավորմանը, նրանց ֆիզիկական և մտավոր համալիր զարգացմանը, սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ուղղված ծրագրերի պլանավորումն է:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշման դրույթներին համապատասխան ՀՀ-ում իրականացվում են երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի բարեփոխումներ: Երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառի առկա խնդիրներն են`<br>• երեխաների իրավունքների պաշտպանության գործող եռաստիճան համակարգի զարգացումը.<br>• մանկատներում, խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում, հատուկ հանրակրթական հաստատություններում երեխաների քանակի նվազեցումը, հոսքի կանխարգելումը. |

| | |
|---|---|
| | • երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների պայմանների բարելավումը.<br>• մոր և մանկան առողջության պահպանման պետական նպատակային ծրագրի կատարման ապահովումը.<br>• պետության կողմից երաշխավորված երեխաների անվճար բուժօգնության և սպասարկման ապահովումը.<br>• երեխաների անհետաձգելի հիվանդանոցային բուժօգնության ծառայության և վերականգնողական բուժօգնության բարելավումը.<br>• հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների կրթության մատչելիության և հավասար պայմանների ապահովումը.<br>• նախադպրոցական կրթության մատչելիության ապահովումը.<br>• իրավախախտում կամ հանցագործություն կատարած անչափահասների սոցիալ-հոգեբանական վերականգնման և վերադաստիարակման ապահովումը.<br>• հոգևոր դաստիարակության և զարգացման, մշակութային արժեհամակարգի ձևավորման ապահովումը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հաշվի առնելով առկա խնդիրները՝ տարեկան կտրվածքով նախանշել երեխաների իրավունքների պաշտպանության ծրագրում ներառվող միջոցառումները, սահմանել դրանցում ընդգրկված երեխաների թիվը և պահանջվող ֆինանսական հատկացումները՝ կարևորելով երեխայի շահերի առաջնահերթությունը, նրա նկատմամբ խտրականության բացառման և հավասար հնարավորությունների, ինչպես նաև ընտանեկանին մոտ միջավայրի ապահովումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Տարեկան ծրագիրն ուղղված է երեխաների սոցիալական ապահովությանը, առողջապահական խնդիրների բարելավմանը, կրթական ոլորտի բարեփոխումներին, հանգստի, ժամանցի և մշակութային կյանքի կազմակերպմանը, անչափահասների սոցիալ-հոգեբանական վերականգնմանը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Երեխաների խնամքին, բուժմանը, կրթությանը, հոգևոր դաստիարակությանը, մշակութային արժեհամակարգի ձևավորմանը, նրանց ֆիզիկական և մտավոր համալիր զարգացմանը, սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ուղղված 2012 թվականի ծրագրերի, դրանցում ընդգրկված երեխաների թվի, ֆինանսական հատկացումների սահմանումը՝ կարևորելով երեխայի շահերի առաջնահերթությունը, նրա նկատմամբ խտրականության բացառման և հավասար հնարավորությունների, ինչպես նաև ընտանեկանին մոտ միջավայրի ապահովումը: |
| 90. | **«Զբաղվածության կարգավորման 2012 թվականի պետական ծրագրին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի կատարման ապահովում, մասնավորապես, 2012 թվականի զբաղվածության պետական ծրագրերի համար նախատեսվող շահառուների թվի, ՀՀ պետական բյուջեից ֆինանսական հատկացումների չափերի սահմանում:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ բնակչության զբաղվածության պետական կարգավորման ծրագրերը և դրանց վերաբերյալ հանրապետական համաձայնեցման կոմիտեի եզրակացությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեում ներառելու և ՀՀ ԱԺ ներկայացնելու համար: Նպատակը յուրաքանչյուր հաջորդ տարվա զբաղվածության պետական ծրագրի պլանավորումն է՝ հաշվի առնելով ՀՀ պետական բյուջեի հնարավորությունները, աշխատաշուկայի վիճակը և զարգացման միտումները:<br>**1.2. առկա խնդիրները և առաջարկվող լուծումները**<br>Տարեկան կտրվածքով զբաղվածության պետական քաղաքականության շրջանակներում իրականացվող ծրագրերի, դրանց համար անհրաժեշտ բյուջետային միջոցների և ակնկալվող արդյունքների կանխորոշում՝ հաջորդ տարվա ՀՀ պետական բյուջեի ձևավորման գործընթացներում հաշվի առնելու նպատակով:<br>**2. Կարգավորման առարկան** |

| | |
|---|---|
| | Զբաղվածության ամենամյա պետական ծրագրերի կազմակերպման գործընթացը: **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում են հետևյալ հիմնական արդյունքները** Աշխատաշուկայի կանխատեսվող առաջարկի և պահանջարկի հիման վրա 2012 թվականի զբաղվածության պետական ծրագրերի, շահառուների թվի, ՀՀ պետական բյուջեից ֆինանսական հատկացումների չափերի սահմանումը: |
| 91. | **«Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2012թ. տարեկան ծրագրին և միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի** <br><br> **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** <br> Որոշման ընդունումը բխում է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ, 42-րդ և 43-րդ հոդվածների պահանջներից: Տարեկան ծրագիրը կապահովի հաշմանդամության ոլորտում տարբեր գերատեսչությունների և կազմակերպությունների կողմից նախատեսված ծրագրերի և միջոցառումների փոխհամաձայնեցված գործողությունների իրականացումը` ուղղված հաշմանդամների հիմնահարցերի համակողմանի լուծմանը, նրանց համար հավասար հնարավորությունների ապահովմանը, վերականգնողական ծրագրերի իրականացմանը, զբաղվածության ապահովմանը, ներառական կրթության զարգացմանը և նրանց ներառմանը հասարակություն: <br> **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Ներկայումս հաշմանդամության ոլորտում իրականացվող միջոցառումների հիմքում ընկած է հաշմանդամության սոցիալական մոդելը, ինչը ենթադրում է հավասար հնարավորությունների և հավասար պայմանների ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար, ինչը հնարավորություն կտա նրանց լիարժեք մասնակցելու հասարակական կյանքին: Ոլորտում առկա խնդիրներն են` <br> • ՀՀ գործող օրենսդրությունը լիովին համապատասխանեցրած չի ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթներին. <br> • հաշմանդամություն ունեցող անձանց համար կենսագործունեության բոլոր ոլորտներում հավասար ու մատչելի պայմանների և հավասար հնարավորությունների ոչ բավարար լինելը. <br> • համայնքային վերականգնողական ցերեկային կենտրոնների ոչ բավարար քանակը: <br> **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> Հաշմանդամների համար հավասար հնարավորություններ և մատչելի պայմաններ ապահովելու համար անհրաժեշտ է կատարել օրենսդրական բարեփոխումներ` հիմնվելով ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթների վրա: Ընդլայնել վերականգնողական միջոցառումների ցանկը, ստեղծել ցերեկային վերականգնողական կենտրոններ ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետության բոլոր մարզերում: <br> **2. Կարգավորման առարկան** <br> Հաշմանդամության ոլորտում տարբեր գերատեսչությունների և կազմակերպությունների կողմից առողջապահական, կրթական, զբաղվածության, մատչելիության ապահովման, սպորտի, մշակույթի և այլ բնագավառներում իրականացվող ծրագրերն են: <br> **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված` տարբեր գերատեսչությունների և կազմակերպությունների կողմից 2012թ. համար նախատեսվող միջոցառումների, դրանց կատարման ժամկետների և այդ միջոցառումների համար նախատեսվող ֆինանսական հատկացումների սահմանում: |
| 92. | **«Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2012 թվականի պետական ծրագրին և ծրագրի իրականացումն** |

**ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

«Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2012 թվականի պետական ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի N 27 արձանագրային որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի երկրորդ պարբերությունից:

ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2012 թվականի պետական ծրագրի և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկի նպատակը ժողովրդագրական բացասական միտումների հնարավորինս մեղմումն ու ժողովրդագրական իրավիճակի կայունացմանն ուղղված միջոցառումների իրականացումն է:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

ՀՀ-ում ժողովրդագրական զարգացումները հիմնականում դեռևս անբարենպաստ են: Չնայած 2010 թվականի հունվարի մեկի դրությամբ գրանցված ծնունդների թվին (44.413 կենդանածին, ինչը 3228-ով ավելի է, քան 2009 թվականին)՝ հանրապետությունում շարունակում է ցածր մնալ ծնելիության մակարդակը, որը պայմանավորող հիմնական գործոններից են բնակչության վերարտադրողական վարքագծի փոփոխությունը, վերարտադրողական ֆունկցիայի խանգարումները և անպտղությունը, հղիության կրելախախտը, ինչպես նաև ամուսնությունների ոչ բավարար թիվը, ամուսնունակ կոնտինգենտի թվի նվազումը, նյութական, բնակարանային, կենցաղային պայմանների պատճառով ամուսնության ժամկետի հետաձգումը կամ դրանից հրաժարումը: Հանրապետությունում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների վրա ուղղակի ներգործություն է ունենում գործազրկության մակարդակը: Գործազուրկների շրջանում շարունակում է բարձր մնալ կանանց թիվը: Համեմատած 2010 թվականի տարեսկզբի գործազրկության ցուցանիշի հետ (99308 գործազուրկ)՝ 2010 թվականի հուլիսի 1-ի դրությամբ նկատվել է գործազրկության մակարդակի աճ (1954-ով ավելի):

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Հաշվի առնելով առկա խնդիրները՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2012 թվականի պետական ծրագիրը պետք է իրականացվի հետևյալ ուղղություններով՝

1) ծնելիության խթանում՝ երեխաներ ունենալու և մեծացնելու համար բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով.
2) երիտասարդ ընտանիքների ձևավորման գործընթացի վրա նպատակային ներազդման միջոցով բնակչության ամուսնական կառուցվածքի բարելավում.
3) կյանքի միջին տևողության ավելացում.
4) վերարտադրողական տարիքի անձանց արտագաղթի ծավալների նվազեցում.
5) ներգաղթի խթանմանն ուղղված համարժեք քաղաքականության մշակում.
6) բնակչության տարածքային տեղաբաշխման անհամաչափության նվազեցում.
7) ժողովրդագրական զարգացմանն առնչվող իրավական դաշտի կատարելագործում:

Վերջիններիս հնարավոր է հասնել ֆինանսական և մարդկային ռեսուրսների համախմբման, պետական կառույցների ակտիվ աշխատանքի միջոցով:

**2. Կարգավորման առարկան**

«Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2012 թվականի պետական ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծով սահմանվում են ՀՀ ժողովրդագրական քաղաքականության առաջնահերթ ուղղություններով իրականացվող միջոցառումները, դրանց կատարողները, ժամկետները և ֆինանսական աղբյուրը:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

«Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2012 թվականի պետական ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման իրականացման արդյունքում ակնկալվում է՝ ՀՀ ժողովրդագրական իրավիճակի զարգացումների հիման վրա 2012 թ. համար ծնելիության խրախուսմանը, բնակչության առողջության, այդ թվում՝ նաև

| | |
|---|---|
| | վերարտադրողական առողջության բարելավմանը, մահացությունների նվազեցմանը, ժողովրդագրական զարգացմանն առնչվող իրավական դաշտի կատարելագործմանն ուղղված միջոցառումների սահմանում՝ ըստ կատարման ժամկետների, ֆինանսավորման աղբյուրների և կատարողների, դրանով իսկ նպաստելով ՀՀ ժողովրդագրական բացասական միտումների հնարավորինս դանդաղեցմանը, դրական միտումների ամրապնդմանը և իրավիճակի բարելավման նախապայմանների ստեղծմանը: |
| 93. | **«Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված է մինչև 2012 թվականը Հայաստանում ներդնել ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգ: 2010 թվականի հունիսի 17-ին ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի կազմակերպման հայեցակարգը, որով նախատեսված է գործող օրենսդրությունը համապատասխանեցնել հայեցակարգով նախատեսված դրույթներին:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված են սոցիալական ծառայությունների 7 տեսակ, ինչպես նաև սահմանված է, որ կարող են տրամադրվել նաև օրենքով չարգելված սոցիալական ծառայություններ ևս: Սոցիալական ծառայություններից յուրաքանչյուրի համար սահմանված է տրամադրման կարգ, որը չի համապատասխանում հայեցակարգի դրույթներին:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծով առաջարկվում է փոփոխություններ կատարել «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում, որով կսահմանվեն համապատասխան դրույթներ՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումն ապահովելու համար:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նշված նախագծի ընդունմամբ կապահովվի ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրում՝ բարձրացնելով սոցիալական ծառայությունների որակը և մատչելիությունը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Սոցիալական ծառայությունների համալիր (լրակազմով) տրամադրման համակարգի ներդրման իրավական հիմքի առկայություն: |
| 94. | **«Աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հիմնական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը(նպատակը)**<br>Իրավական ակտի նախագծի մշակման անհրաժեշտությունը բխում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի և 248-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից, որի նպատակը աշխատավայրում աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման օրենսդրական հիմքերի ապահովումն է՝ Եվրամիության չափանիշներին համապատասխան:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ աշխատանքային օրենսգիրքն ուժի մեջ է մտել 2005թ. հունիսից, սակայն մինչև օրս չեն ընդունվել աշխատանքի անվտանգության և աշխատողների առողջության պահպանման վերաբերյալ համապատասխան իրավական ակտեր, որոնք պետք է ամբողջացնեն աշխատանքային հարաբերությունների կարգավորումն աշխատանքի պաշտպանության ոլորտում: Ներկայումս ՀՀ-ում աշխատանքի անվտանգության, հիգիենայի և առողջության բնագավառում |

| | |
|---|---|
| | օրենսդրությունը հիմնականում չի համապատասխանում եվրոպական չափանիշներին:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի, 248-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին, ինչպես նաև եվրոպական չափանիշներին համապատասխան` անհրաժեշտ է մշակել և ներդնել աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հիմնական կանոններն ու նորմերը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հիմնական կանոնների և նվազագույն նորմերի սահմանումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Եվրամիության չափանիշներին (դիրեկտիվներին) համապատասխան աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման օրենսդրական կանոնակարգում, աշխատանքի վայրում առողջ և անվտանգ պայմանների ապահովում, դժբախտ պատահարների և մասնագիտական հիվանդությունների կանխարգելում: |
| 95. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N730-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>2007թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվեցին ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները, ինչը հնարավորություն տվեց հստակ սահմանելու բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում բնակվող ծերերի և հաշմանդամների կենսապահովման համար անհրաժեշտ` բնակելի տարածքի, սննդամթերքի, հագուստի, անկողնային ու տնտեսական պարագաների չափաքանակները և սպասարկող անձնակազմի թիվը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված չափորոշիչները հաստատություններում կիրարկելու ընթացքում այս 3 տարվա ընթացքում առաջ են եկել որոշ խնդիրներ, և դրանց լուծման նպատակով տուն-ինտերնատներից, տնային պայմաններում սոցիալական սպասարկման կենտրոնից և ցերեկային խնամքի կենտրոններից ստացվել են առաջարկություններ չափորոշիչները, մասնավորապես, սննդամթերքի որոշ տեսակների (մակարոնեղեն, ձավարեղեն) չափաքանակները և սպասարկող անձնակազմի թիվը վերանայելու վերաբերյալ: Այսօրվա դրությամբ տուն-ինտերնատում մեկ խնամողն սպասարկում է 50 խնամվողի, իսկ անկողնային հիվանդների դեպքում` 20 խնամվողի, ինչը, բնականաբար, թույլ չի տալիս լիարժեք խնամք իրականացնել:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախատեսվում է վերանայել գործող չափանիշները, մասնավորապես, ավելացնել սպասարկող անձնակազմի թիվը և սննդամթերքի որոշ տեսակների օրական չափաքանակը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարության որոշման կարգավորման առարկան միայնակ տարեցների և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների ոլորտը կարգավորող հարաբերություններն են:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Չափորոշիչների վերանայման արդյունքում ծեր և հաշմանդամ քաղաքացիներին տրամադրվող խնամքի և սոցիալական սպասարկման ծառայությունների որակը կբարելավվի հիմնականում սպասարկող անձնակազմի թվի ավելացման շնորհիվ: Մասնավորապես, նախատեսվում է ավելացնել սանիտարների և բուժքույրերի թիվը շուրջօրյա խնամքի հաստատություններում, որպեսզի մեկ սպասարկողը ծառայություններ մատուցի առնվազն 30 խնամվողի, իսկ անկողնային հիվանդների դեպքում` առնվազն 10 խնամվողի, ներկայիս 20-ի փոխարեն: |

| | |
|---|---|
| 96. | **«Ծերացման հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությանը և գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ծերացման հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության մշակումը բխում է ծերացման հարցերով մադրիդյան միջազգային գործողությունների պլանի հանձնառություններից, որոնց միացել է նաև Հայաստանը: Այն համընկնում է ՀՀ կառավարության կողմից հաստատված կայուն զարգացման ծրագրի դրույթներին, որոնք, ի թիվս այլ գերակայությունների, ներառում են սոցիալական աջակցության պետական ծրագրերում տարեցների սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացումը:<br>Ռազմավարության նպատակը ծերացման հիմնախնդիրների և տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման առաջնահերթությունների սահմանումն է, տարեցների սոցիալական պաշտպանության ուղղությամբ առաջիկա տարիներին իրականացվելիք` սոցիալ-առողջապահական, մշակութային, հասարակական ակտիվության բարձրացմանն ուղղված հիմնական ծրագրերի նախանշումն է:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս սոցիալական ապահովության համակարգի միջոցով ծերերին ցուցաբերվում են սոցիալական, առողջապահական, իրավաբանական ու հոգեբանական ծառայություններ, սակայն այն, ինչ ներկայումս իրագործվում է, բավարար չէ տարեցների համար արժանապատիվ կյանք ապահովելու` մեր պետության որդեգրած և սահմանադրական սկզբունքի տեսակետից, թե որակական առումով, և թե քանակական:<br>Տարեցներին խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ են տրամադրվում բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում` տուն-ինտերնատներում (7 տուն-ինտերնատում` 1140 խնամվող), ինչպես նաև տնային պայմաններում (սպասարկվողների թիվը`4800) և ցերեկային կենտրոններում (27 ցերեկային կենտրոններում`2250 այցելու), սակայն Հայաստանի Հանրապետությունում գործող հաստատությունները և ծառայությունների ծավալն ու տեսականին բավարար չեն ապահովելու տարեցների առկա պահանջմունքները: Հանրապետությունում բացակայում են ծերաբանության և ծերաբուժության համակարգերը: Կարիք կա անկողնային անբուժելի հիվանդների հաստատության (հոսպիս) ստեղծման:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված խնդիրների լուծումը տեսնում ենք ռազմավարության և դրա իրականացման համար գործողությունների ծրագրի ընդունման մեջ, որով կհստակեցվեն տարեցների ոլորտի առաջիկա հինգ տարվա զարգացման առաջնահերթությունները և ուղղությունները:<br>Ռազմավարությունը ծերացման հիմնախնդիրների լուծման համար ուղենշում է սոցիալական և առողջապահական ծառայությունների համակարգի զարգացում և դրա արդյունքում տարեցների կյանքի որակի բարելավում, որը ներառում է առողջապահական և սոցիալական ծառայությունների տրամադրման մատչելի պայմանների ու մեխանիզմների սահմանում, ծառայությունների տրամադրման ծավալի և տեսակների ընդլայնում (համայնքային ցերեկային կենտրոնների ստեղծում, սոցիալական տների կազմակերպում և այլն), տարեցների` համայնքային կյանքին մասնակցության ակտիվացում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կարգավորման առարկան ծերացման հիմնահարցերին և տարեցների սոցիալական պաշտպանությանն առնչվող հարաբերություններն են:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է`<br>1) առաջիկա հինգ տարվա ընթացքում, ըստ գործողությունների ծրագրի ժամկետների, հանրապետության համայնքներում ստեղծել տարեցների ցերեկային կենտրոններ (յուրաքանչյուր տարի որպես թիրախ ընտրելով մեկ-երկու համայնք` 50-100 շահառուի սպասարկման համար).<br>2) զարգացնել սոցիալական բնակարանների կազմակերպման աշխատանքները, մասնավորապես, 2011 թ.-ին Մարալիկում բնակեցնել երկու շենք` 35 բնակչի համար և, ըստ ժամանակացույցի, շարունակել այդ գործընթացը և Մարալիկում և այլ համայնքներում:<br>3) հանրապետությունում ներդնել ծերաբույժի և ծերաբանի մասնագիտությունները և այլն: |

| | |
|---|---|
| | Ռազմավարությունից  բխող գործողությունների ծրագրում ընդգրկված՝ վերը նշված և մյուս բոլոր միջոցառումները հիմք կհանդիսանան տարեցների սոցիալական պաշտպանության ամենամյա ծրագրերի մշակման և իրականացման համար: |
| 97. | **ՀՀ կառավարության  2005 թվականի դեկտեմբերի 29-ի  N 2317-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում առաջարկվող փոփոխությունների համատեքստում, ինչպես նաև ՀՀ կառավարության 2010թ. հունիսի 17-ի N 23 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած պետական նպաստների համակարգում տեղեկատվության հավաքագրման արդյունավետության բարձրացման միջոցառումների իրականացման նպատակով անհրաժեշտություն կա փոփոխություններ և լրացումներ կատարել նաև ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N2317-Ն որոշման մեջ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նշված օրենքն ընդունվելուց հետո խնդիրներ կառաջանան օրենքով և ՀՀ կառավարության որոշմամբ կարգավորվող հարաբերություններում և 2012 թվականին անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների փաստագրման աշխատանքների իրականացումը հնարավոր չի լինի առանց դրանց կիրառումն ապահովող իրավական ակտի ընդունման:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել համապատասխան որոշման նախագիծ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծով առաջարկվում է հստակեցնել հարակից բազաներից ստացվող տեղեկատվության ստացման մեխանիզմները, ժամկետները և կիրառման արդյունավետությունը, ինչպես նաև կարգավորել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառման գործընթացը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ընտանիքների անապահովության գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության ստացման (այդ թվում՝ հարակից տեղեկատվական բազաներից) նոր կարգի առկայություն: |
| 98. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության  2006 թվականի հունվարի 12-ի N110-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2317-Ն որոշման մեջ  փոփոխությունների կատարումը ենթադրում է փոփոխություններ կատարել նաև  ՀՀ կառավարության 2006 թ. հունվարի 12-ի N 110-Ն որոշման մեջ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N2317-Ն որոշման մեջ  փոփոխությունների կատարումը խնդիրներ կառաջացնի նաև ՀՀ կառավարության 2006 թ. հունվարի 12-ի N 110-Ն որոշմամբ կարգավորվող հարաբերություններում և 2012 թվականին անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների փաստագրման աշխատանքների իրականացումը հնարավոր չի լինի առանց դրանց կիրառումն ապահովող իրավական ակտի ընդունման:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Մշակել և ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել համապատասխան որոշման նախագիծ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառման, ընտանեկան նպաստի նշանակման և վճարման գործընթացի կարգավորում: |

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ընտանեկան նպաստի նշանակման և վճարման համար ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառման նոր կարգի առկայություն: |
| ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | |
| 99. | **«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման պետական աջակցության 2011 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ծրագրի ընդունման և իրականացման նպատակը Հայաստանում տեղեկատվական և գիտելիքի վրա հիմնված առաջադեմ հասարակության և զարգացած ու համաշխարհային ճանաչում ունեցող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կայացմանն աջակցելն է: Մասնավորապես, ծրագրի ընդունումը պայմանավորված է հետևյալ նպատակներին հասնելու անհրաժեշտությամբ.<br>- Հայաստանում գիտատար տնտեսության զարգացումը, ընդհանուր տնտեսության մրցունակության բարձրացումը.<br>- ՏՀՏ-ի կիրառման ընդլայնում՝ Հայաստանն առաջատար ՏՀՏ-ի երկրների շարքում որպես կայացած և զարգացող էլեկտրոնային տնտեսությամբ և ՏՀՏ-ի ուղղվածություն ու լայն տարածում ունեցող էլեկտրոնային հասարակությամբ երկիր դասելու նպատակով.<br>- ոլորտի արդյունավետության աճի պահպանում և առավել զարգացում.<br>- որակյալ աշխատուժի աճի պահպանում և առավել զարգացում:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրներն են՝<br>- ՏՏ-ի ոլորտում գործունեության ծավալման և ՏՏ-ի գործիքների համատարած կիրառման համար բարենպաստ գործարար միջավայրի և համաշխարհային չափանիշներին համապատասխանող անհրաժեշտ ՏՀՏ-ի ենթակառուցվածքների թերիություն.<br>- էլեկտրոնային գրագիտության համեմատաբար ցածր մակարդակ.<br>- Հայաստանի ՏՏ-ի արտադրանքի և ծառայությունների արտահանման շուկաների սահմանափակություն.<br>- Հայաստանում համաշխարհային ճանաչում ունեցող ՏՏ-ի կազմակերպությունների սահմանափակ ներկայություն:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>1) էլեկտրոնային գրագիտության բարձրացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում.<br>2) ոլորտի ամբողջական վիճակագրական և հաշվետվական պարզեցված ընթացակարգերով համակարգի իրականացում.<br>3) ոլորտի զարգացմանն ուղղված պետական նպատակային ծրագրերի մշակում և իրականացում.<br>4) մասնավոր հատվածի կողմից իրականացվող ծրագրերի խթանում, մասնավորապես, «Համակարգիչ բոլորի համար» ազգային ծրագրի իրականացում. |

| | |
|---|---|
| | - ՏՏ-ի լուծումների և արտադրանքի նկատմամբ տեղական պահանջարկի ձևավորման խթանում.<br>- ոլորտային միջոցառումների իրականացում՝ ուղղված հասարակության իրազեկմանը, հայկական ՏՏ-ի արտադրանքի պարբերական ներկայացմանն ու առաջմղմանը, ոլորտի ապագա զարգացումների և հաջորդ սերնդի անելիքների քննարկմանը.<br>- ՏՏ-ի ոլորտում հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատում և ընդլայնում.<br>- Հայաստանի վարկանիշի ձևավորում՝ որպես ՏՏ-ի տարածաշրջանային կենտրոն, այդ թվում՝ նպաստելով Հայաստանում մի շարք միջազգային նշանակության միջոցառումների պարբերական անցկացմանը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարությունը կարևորելով ՏՏ-ի արդյունաբերության զարգացումը ոչ միայն որպես առանձին ոլորտ, այլ նաև որպես Հայաստանի տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության բարձրացման և համաշխարհային տնտեսության մրցունակությունն ապահովելու հիմնական գործոն, հատուկ շեշտադրել է Հայաստանում ՏՏ-ի ոլորտի արդյունավետության շարունակական աճի ապահովումը, տնտեսության այլ բնագավառներում ոլորտի արտադրանքի և ծառայությունների կիրառումն ու երկրում տեղեկատվական հասարակության ձևավորումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվում է երկրում գիտելիքահենք տնտեսության ձևավորման ուղղությամբ իրական հնարավորությունների ստեղծում: |
| 100. | **«Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման պետական աջակցության 2011 թվականի ծրագիրը հաստատելու մասինե ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ակտի ընդունումը պայմանավորված է հետևյալ խնդիրների լուծման անհրաժեշտությամբ՝<br>1) ազգային ինովացիոն համակարգի ձևավորում և համապատասխան սկզբունքների մշակում.<br>2) ինովացիոն հիմնադրամների և վենչուրային կապիտալի գործունեության ձևավորում.<br>3) մարզային բնակչության մասնագիտական և ձեռնարկատիրական ունակությունների ձևավորում:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրներն են՝<br>1) Շիրակի մարզի և հանրապետության գիտաարտադրական ներուժի զարգացում՝ արտադրական և գիտական սուբյեկտների մտավոր, տեղեկատվական, նյութատեխնիկական ու ֆինանսական ռեսուրսների ինտեգրման և ակտիվացման ճանապարհով.<br>2) ներդրումային միջոցների ներգրավում (այդ թվում՝ օտարերկրյա)՝ առաջադեմ տեխնոլոգիաների ձեռքբերմանն աջակցելու նպատակով.<br>3) հասցեական աջակցության տրամադրում գիտատար արտադրանք նախաձեռնողներին և արտադրողներին. |

| | |
|---|---|
| | 4) գիտատեխնիկական, մտավոր և կադրային ներուժի պահպանման ու զարգացման պայմանների ձևավորում, երիտասարդ կադրերի պատրաստում. <br> 5) գիտակրթական, գործարար և պետական հատվածների փոխշահավետ համագործակցության զարգացում: <br> **2. Կարգավորման առարկան** <br> Տարածքային համաչափ զարգացման տեսանկյունից կարևորվում են Հայաստանի մարզային քաղաքների տնտեսական զարգացման տեմպերի արագացումն ու ներդրումային ակտիվության խրախուսումը, մարզերում հանրային ծառայությունների տեղայնացման աստիճանի և ֆինանսների, ապրանքների ու ծառայությունների հասանելիության աճը, համայնքային ենթակառուցվածքների գնահատումը, դրանց կարգաբերումն ու զարգացումը: <br> **3. Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվող արդյունքը** <br> Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվում է Գյումրիում տեխնոպարկի հիմնումը: |
| 101. | **«Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի ֆիզիկայի բնագավառում արդիական գիտական ներուժի ապահովման 2011 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի** <br> **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** <br> Ծրագրի կատարումը նպատակաուղղված է Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի գործունեության առաջնահերթ ուղղություններում նախանշված խնդիրների որակական նոր մակարդակով լուծմանը՝ մեծացնելով երիտասարդների դերը ոլորտի զարգացման գործում, գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերի թվի կայուն աճի, գիտական ներուժի արդյունավետ նպատակային վերարտադրության ապահովմանը: <br> Ծրագրի ընդունման և իրականացման նպատակը Հայաստանում առկա գիտական և տեխնոլոգիական ներուժի զարգացումն ապահովելն է, մասնավորապես, ծրագրի ընդունումը պայմանավորված է հետևյալ նպատակներին հասնելու անհրաժեշտությամբ՝ <br> 1) Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի մասնագետների, այդ թվում՝ ուսանողների և ասպիրանտների մասնակցությունը CERN-ի մեծ հադրոնային կոլայդերի (LHC) երկրորդ թողարկմամբ սկսվող ATLAS միջազգային գիտափորձերին. <br> 2) լաբորատորիայի գիտնականների մասնակցությունը CERN-ի գիտափորձերում կիրառվող աննախադեպ բարդ փորձարարական սարքավորումների նախագծմանը և ստեղծմանը. <br> 3) վերոնշյալ փորձարարական սարքավորումների վրա վերապատրաստված մասնագետների փորձի հետագա կիրառումը լաբորատորիայի նոր արագացուցչային սարքավորումների շահագործման և երիտասարդ կադրերի ուսուցման գործընթացում. <br> 4) լաբորատորիայի միջազգային գիտական համագործակցության լայն կապերի հաստատումը, որոնց շնորհիվ լաբորատորիան հաջողությամբ կշարունակի իր մասնակցությունը միջազգային գիտական դրամաշնորհներ ստանալու մրցույթներին. <br> 5) առաջատար տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված ԳՐԻԴ-ի ենթակառուցվածքների զարգացման աշխատանքների շնորհիվ՝ լաբորատորիայի հաշվիչ կենտրոնի վերակառուցումը նոր տեխնոլոգիաների վերաբերյալ համաշխարհային տեղեկատվության կուտակման, մշակման և համակարգման կենտրոնի: <br> **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրներն են՝ |

| | |
|---|---|
| | 1) ATLAS, ALICE, CMS գիտափորձերում մասնակցությունն արագացուցչային չափումներին և կուտակված տվյալների մշակումներին.<br>2) գիտափորձի ծրագրային ապահովման փաթեթների (AliEn, AliRoot) տեղադրումը լաբորատորիայում.<br>3) մասնակցությունը ATLAS գիտափորձի աշխատանքներին` նվիրված սկալյար Հիգսերի և նրա սուպերսիմետրիկ մասնիկների որոնմանը.<br>4) CMS գիտափորձում ուսումնասիրությունը գերբարձր էներգիաների պրոտոնային փնջերի (√s = 14 ՏէՎ) փոխազդեցություններից ստացված կոշտ երկու պոմերոնների փոխանակման դեպքերը.<br>5) ALICE գիտափորձում մյուոնային սպեկտրաչափի երկրաչափական հսկողության իրականացումը: ALICE ԳՐԻԴ համակարգում փորձագիտական համակարգի մշակումը` ALICE-ի տվյալների անխափան կուտակումն ապահովելու նպատակով.<br>6) ATLAS, ALICE, CMS գիտափորձերում մասնակցությունը պրոտոն-պրոտոնային և միջուկ-միջուկային փոխազդեցություններից ստացված փորձարարական տվյալների մշակմանը և ֆիզիկական վերլուծությանը.<br>7) պրոտոն-պրոտոնային փոխազդեցություններում մեզոնների (ρ, ω, Φ, J/ψ, Υ) ծնման պրոցեսների հետազոտումը.<br>8) միջուկ-միջուկային փոխազդեցությունների վերաբերյալ տվյալների մշակումը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ծրագրի կատարումը նպատակաուղղված է Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի գործունեության առաջնահերթ ուղղություններում նախանշված խնդիրների որակական նոր մակարդակի լուծմանը` մեծացնելով երիտասարդների դերը ոլորտի զարգացման գործում, գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերի թվի կայուն աճի, գիտական ներուժի արդյունավետ նպատակային վերարտադրության ապահովման գործում:<br>Հաշվի առնելով գիտական արդյունքի օբեկտիվ չափանիշները` ազգային գիտական լաբորատորիայի երիտասարդ գիտնականները կխրախուսվեն աշխատանքների արդյունավետությունը և որակը բարձրացնելու նպատակով: Լուսաբանելով երիտասարդ գիտնականների խրախուսման գործընթացը` կբարձրացվի գիտական աշխատողների վարկանիշը և հետաքրքրություն կառաջանա երիտասարդների մոտ գիտության նկատմամբ: Խրախուսման միջոցով կզարգացվի, կբարելավվի և կբարձրացվի երիտասարդ գիտնականների գիտելիքների և հմտությունների մակարդակը: Խրախուսման գործընթացը կիրականացվի յուրաքանչյուր տարի, նախորդ օրացուցային տարվա գիտական և գիտատեխնոլոգիական արդյունքների հիման վրա: Խրախուսման արժանի երիտասարդ գիտնականների ընտրության ընթացքում մարդկային գործոնը նվազեցնելու նպատակով կսահմանվեն աշխատանքների արդյունքի օբեկտիվ չափանիշներ և համապատասխան բալային համակարգ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Ծրագրի շրջանակում կնախատեսվեն միջոցառումներ, որոնք կնպատակաուղղվեն Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի միջազգային գիտական համագործակցության հետագա զարգացմանը և բարձր որակավորման մասնագետների պատրաստմանը:<br>**3. Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման արդյունքում կպատրաստվեն բարձրակարգ մասնագետներ՝ տարրական մասնիկների և ատոմային միջուկների ֆիզիկայի տեսական և փորձարարական ուսումնասիրությունների համար: |
| 102. | **«Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2012 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** |

| | |
|---|---|
| | ՓՄՁ-ի պետական աջակցության 2011 թվականի ծրագրի նպատակը (գերակայությունը) նորարարություններ և ժամանակակից տեխնոլոգիաներ ներդնող ու կիրառող («ագրեսիվ» նորարարական նախաձեռնություններ ունեցող), ինչպես նաև հեռանկարային և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերումն է` նպաստելով նոր աշխատատեղերի ստեղծման և գործող աշխատատեղերի պահպանման միջոցով երկրում գործազրկության մակարդակի կրճատմանը: Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» 2000թ. դեկտեմբերի 5-ի ՀՕ-121 ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջով:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում ՓՄՁ-ի զարգացումը կոչված է ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը` տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն:<br>ՓՄՁ-ի զարգացման միտումների հետ մեկտեղ ՓՄՁ-ի ուսումնասիրությունների և վարչական մոնիթորինգի արդյունքում բացահայտվել են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված մի շարք հիմնախնդիրներ, որոնց դեռ շարունակում են բախվել ՓՄՁ-ի սուբյեկտները:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հայաստանում իրականացվող տնտեսական քաղաքականության արդյունքում վերջին մի քանի տարիների ընթացքում դրական փոփոխություններ են կատարվել ՓՄՁ-ի ոլորտի կառուցվածքում, որոնք որակապես նոր հարթություն են տեղափոխել ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեությանն առնչվող հիմնախնդիրները` դրանց դրսևորման եղանակների և ոլորտի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից:<br>Կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում` Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է շարունակական քայլեր ձեռնարկի ՓՄՁ-ի պետական աջակցության և դրա զարգացման ուղղությամբ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՓՄՁ-ի պետական աջակցության 2012 թվականի ծրագրի շրջանակներում կնախատեսվեն միջոցառումներ, որոնք կնպատակաուղղվեն ՀՀ մարզերում նոր ՓՄՁ-ի սուբյեկտների և դրանց հաշվին նոր աշխատատեղերի ստեղծմանը, գործող ՓՄՁ-ի սուբյեկտների մրցունակության բարձրացմանը, ցածր տնտեսական ակտիվությամբ առանձնացող տարածաշրջաններում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը, երկրի ՀՆԱ-ում, ինչպես նաև այլ մակրոտնտեսական ցուցանիշներում ՓՄՁ-ի սուբյեկտների տեսակարար կշռի հետագա ավելացմանը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՓՄՁ-ի պետական աջակցության 2012 թվականի ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է երկրի ՀՆԱ-ում ՓՄՁ-ի սուբյեկտների տեսակարար կշռի շարունակական ավելացում, ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մատուցման հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնում և նրանց մրցունակության բարձրացում, նրանց կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) տեսականու ընդլայնում և դրանց բազմազանեցում, նոր ապրանքատեսակների արտադրության և ծառայությունների մատուցման քանակական ու որակական աճ և դրանց արտահանման ծավալների ավելացում, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ցուցաբերում, ՓՄՁ-ի սուբյեկտների թվի ավելացում և նրանց հաշվին նոր աշխատատեղերի ստեղծում, այդ թվում` ՀՀ մարզերում, գործարար ակտիվության բարձրացում ՀՀ մարզերում և այդ նպատակով ցուցաբերվող պետական աջակցության շուրջ 90%-ի ուղղորդում` այդտեղ գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին: |
| 103. | **«Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության զարգացման 2012 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի** |

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

Հայաստանի Հանրապետությունում 2011թ. զբոսաշրջության զարգացման ծրագրի մշակման հիմնական նպատակն ակտիվ և արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացման միջոցով Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ձևավորումը և այն միջազգային շուկայում ներկայացնելն ու ամրապնդելն է, ինչպես նաև Հայաստանի միջազգային ինտեգրմանը նպաստելն է:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն Հայաստանում զբոսաշրջության ոլորտը հայտարարված է որպես տնտեսության գերակա ճյուղ: Շնորհիվ վարվող պետական քաղաքականության՝ պետություն-մասնավոր հատված համագործակցության ոլորտում վերջին տարիներին արձանագրվել է թե որակական և թե քանակական աճ: Թվային աճին զուգընթաց՝ հանրապետությունում կատարվում են աշխատանքներ՝ ոլորտի զարգացումը կայուն հիմքերի վրա դնելու ուղղությամբ:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Համաշխարհային զբոսաշրջության զարգացման միտումների և նախորդ տարիների ընթացքում Հայաստանում զբոսաշրջության զարգացման պետական ծրագրերի իրականացման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2011 թվականի զբոսաշրջության զարգացման ծրագրի նպատակի իրականացումը պայմանավորված է հետևյալ հիմնական խնդիրների լուծմամբ՝

1) զբոսաշրջության բնագավառում արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացում, միջազգային զբոսաշրջային շուկայում հայրենական զբոսաշրջային արդյունքը պատշաճ ներկայացնելը.

2) համաշխարհային զբոսաշրջային շուկա Հայաստանի ինտեգրում, ակտիվ և արդյունավետ միջազգային համագործակցություն:

**2. Կարգավորման առարկան**

Ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ է ապահովել շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի, միջազգային կազմակերպությունների, բնակչության, ինչպես նաև զբոսաշրջիկների համագործակցությունը՝ ուղղված՝

- միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին՝ Հայաստանի առավել ներկայանալի մասնակցության ապահովմանը.
- առավել որակյալ, թարմ ու բովանդակալի գովազդատեղեկատվական նյութերի, դրանցում ներառված տեղեկատվության հավաստիության, գովազդատեղեկատվական նյութերի տարածման աշխարհագրության ընդլայման ապահովմանը.
- օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների և լրագրողների՝ Հայաստան ճանաչողական այցերի արդյունավետության բարձրացմանը՝ այցերի առավել գրավիչ ու բովանդակալից ծրագրեր մշակելու միջոցով.
- նոր մրցունակ զբոսաշրջային երթուղիների ձևավորմանը՝ դրանցում ապահովելով նաև տեղական բնակչության ակտիվ մասնակցությունը.
- զբոսաշրջության բնագավառի պետական կառավարման, ծրագրերի մշակման ու իրականացման, դրանց մոնիթորինգի արդյունավետությունը և արդյունքների իրական գնահատումն ապահովելու նպատակով տվյալների բազայի ձևավորմանը.
- բնակչության՝ զբոսաշրջության բնագավառի պետական կարգավորման գործընթացների վերաբերյալ իրազեկմանը, ինչպես նաև իրականացվող ծրագրերի ներգրավմանը:

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝<br>1) Հայաստանի միջազգային ինտեգրմանը, Հայաստան ներգնա զբոսաշրջության այցելությունների աճի տեմպի (շուրջ 10 տոկոս) պահպանմանը նպաստելը.<br>2) համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ամրապնդումն ապահովելը: |
| 104. | **«Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանում գործող տեխնիկական կանոնակարգման և սերտիֆիկացման համակարգերի՝ միջազգային և եվրոպական նմանատիպ համակարգերին ներդաշնակեցման անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ որակի ենթակառուցվածքի (ստանդարտացում, չափագիտություն, հավատարմագրում, տեխնիկական կանոնակարգում) համակարգը բարեփոխման անհրաժեշտություն ունի: Համակարգի կարևոր տարր է հանդիսանում տեխնիկական կանոնակարգման համակարգը, այդ թվում՝ համապատասխանության գնահատումը: «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումն էական նշանակություն ունի նաև ԽՀԱԱՀ-ի կնքման նախապատրաստական աշխատանքների համար:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նոր իրավական հիմք տեխնիկական կանոնակարգման համար՝<br>1) որակի ենթակառուցվածքի հիմնական գործող սուբյեկտների միջև գործառույթների և իրավասությունների վերաբաշխում, այդ թվում՝ ինստիտուցիոնալ կառուցվածքի շտկում և նոր ծառայությունների զարգացում.<br>2) օրենսդրության և գործելակերպերի համապատասխանեցում միջազգային ու եվրոպական պահանջներին.<br>3) կարողությունների հզորացում և մարդկային ռեսուրսների զարգացում՝ միջազգային և եվրոպական փորձը կիրառելու համար.<br>4) ներդրումներ՝ փորձարկման նյութական բազան բարելավելու նպատակով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ գործող տեխնիկական կանոնակարգման համակարգը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքներն են՝<br>- ԵՄ-ի պայմաններին համապատասխան տեխնիկական կանոնակարգերի առկայություն, ինչը կնպաստի արտադրանքի արտահանման խթանմանը.<br>- սպառողների շահերի պաշտպանության արդյունավետության բարձրացումը. |

| | |
|---|---|
| | - համապատասխանության գնահահատման ոլորտի կողմից մատուցված ծառայությունների որակի բարձրացումը. <br> - համապատասխանության գնահահատման համակարգի միջազգային ճանաչումը. <br> - տեխնիկական կանոնակարգերի մշակման գործընթացի տարանջատումը «պարենային» և «ոչ պարենային» արտադրանքների սկզբունքով: |
| 105. | **«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի** <br> **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** <br> Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է ներդնել և պահպանել ԱՀԿ-ի, Եվրամիության մոտեցումներն ու կարգավորման մեխանիզմները միջազգային առևտրում: Ապրանքների ազատ տեղաշարժի սկզբունքը պահանջում է օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի հետևողական զարգացում, որը կապահովի առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացում: <br> **1.1. իրավական հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Իրավական հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրներն են՝ <br> - համաձայն ԻՍՕ/ԻԷԿ 17011-2004 միջազգային ստանդարտի պահանջների՝ Հայաստանի Հանրապետությունում չեն պատրաստվում գնահատման փորձագետներ. <br> - չի կազմակերպվում փորձարկման լաբորատորիաների կողմից կատարվող աշխատանքների որակի գնահատում՝ միջլաբորատոր համեմատական փորձարկումների միջոցով. <br> - հայտատուն որպես սերտիֆիկացման մարմին հավատարմագրվելու համար պարտավոր է հավատարմագրված լինել որպես փորձարկման լաբորատորիա, այն դեպքում, երբ եվրոպական ԵՆ 45011 ստանդարտը դա չի պահանջում. <br> - օրենսդրությունից դուրս է մնացել տեսչական մարմինների, կլինիկական լաբորատորիաների, իմացության թեստավորում մատուցող կազմակերպությունների հավատարմագրումը. <br> 5) չափումների միասնականության ապահովման և տեխնիկական անվտանգության ոլորտներում կատարվում է կրկնօրինակում: Ստուգաճշտման լաբորատորիաների դեպքում փաստաթղթերի փորձաքննությունը կատարում է հավատարմագրման գործակալությունը, որոշումն ընդունում է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, տեխնիկական անվտանգության ոլորտում՝ փաստաթղթային փորձաքննությունը կատարում է հավատարմագրման գործակալությունը, որոշումն ընդունում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կազմում ստեղծված հավատարմագրման խորհուրդը <br> **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br> - խուսափել հավատարմագրման ծառայությունների ավելորդ տարանջատումից և կրկնօրինակումից. <br> - պահպանել միջազգային ստանդարտներով սահմանված հավատարմագրման գործընթացի կազմակերպման միասնական պահանջները. <br> - անդամակցել տարածաշրջանային, եվրոպական և միջազգային հավատարմագրման կազմակերպություններին. <br> - կնքել հավատարմագրման արդյունքների փոխճանաչման երկկողմանի և բազմակողմանի համաձայնագրեր: <br> **2. Կարգավորման առարկան** |

| | |
|---|---|
| | Սույն օրենքի կարգավորման առարկա հավատարմագրման բնագավառի պետաիրավական ձևի և օրենսդրական դաշտի փոփոխությունն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքներն են՝<br>– Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրման մասին նոր օրենքում համապատասխանության գնահատման, չափումների միասնականության ապահովման, տեխնիկական անվտանգության ոլորտներում միջազգային պահանջներին համաձայն հավատարմագրման կարգի, հավատարմագրման սկզբունքների ներառումը.<br>– Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրման մասին նոր օրենքի ներդաշնակեցումը եվրոպական ու միջազգային հավատարմագրման համագործակցությունների կողմից սահմանված չափանիշներին |
| 106. | **«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է ստանդարտացման գործընթացը միջազգային գործելաոճին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:<br>Օրենքի նախագիծը նպատակ ունի համապատասխանեցնելու գործող ՀՀ օրենքն Առևտրի համաշխարհային կազմակերպության առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման համաձայնագրին և Եվրամիության նոր մոտեցման դիրեկտիվներին:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Համաձայն ներկայումս գործող ՀՀ օրենքի՝ ստանդարտների կիրառումը համարվում է կամավոր գործընթաց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ստանդարտների ցանկը սահմանված է տեխնիկական կանոնակարգերով:<br>Նշված դրույթը հակասության մեջ է ինչպես Առևտրի համաշխարհային կազմակերպության առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման համաձայնագրին, այնպես էլ Եվրամիության նոր մոտեցումներին, համաձայն որի տեխնիկական կանոնակարգերով սահմանվում են անվտանգության պահանջներ, որոնք պետք է հստակ տարանջատվեն կամավոր կիրառվող ստանդարտներից:<br>Ստանդարտացման գործունեության կառավարման երկաստիճան մոդելը (ստանդարտացման ազգային մարմին և ստանդարտների ազգային ինստիտուտ) հնարավոր չի լինում արդյունավետ կերպով ստանդարտացման աշխատանքներին ներգրավել համապատասխան շահագրգիռ կողմերին, քանի որ ամբողջ գրագրությունը կատարվում է ազգային մարմնի կողմից, մինչդեռ այդպիսի գրագրության պահանջը ներկայացվում է ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից: Միաժամանակ, Ստանդարտացման միջազգային կազմակերպությունը (ԻՍՕ), Միջազգային էլեկտրատեխնիկական կոմիտեն (ՄԷԿ), Եվրոպական ստանդարտացման կոմիտեն և այլ միջազգային ստանդարտացման կազմակերպությունները համաձայն գործող միջազգային կանոնակարգերի որպես ստանդարտացման ազգային մարմին մշտապես ճանաչել և համագործակցել են Ստանդարտների ազգային ինստիտուտի հետ, մինչդեռ, օրինակ, ԱՊՀ երկրների ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհուրդն ուղղակիորեն համագործակցել է ստանդարտացման ազգային մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ, որի հետևանքով Ստանդարտների ազգային ինստիտուտի համագործակցությունը տարածաշրջանային մակարդակում թույլ և անարդյունավետ բնույթ է կրել:<br>Ներկայիս գործող օրենքի համաձայն ստանդարտացման գործունեության ֆինանսավորման աղբյուրներն են ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցները և ազգային ստանդարտների, դասակարգիչների իրացումից ստացված միջոցները: Մինչդեռ, ՀՀ պետական բյուջեի և վաճառքից ստացվող մուտքերի սուղ միջոցները չեն կարող բավարարել ստանդարտացման մարմնի կայուն գործունեության ապահովումը: Ֆինանսավորման աղբյուրները պետք է զգալիորեն |

ընդլայնվեն, օրինակ, ուսուցման ծառայությունների մատուցումից, անդամավճարներից, համապատասխանության գնահատման ոլորտում որոշակի առևտրային բնույթի ծառայություններ իրականացնելուց ստացվող միջոցների հաշվին:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օրենքի նախագծում նախատեսում է կատարել տարանջատում տեխնիկական կանոնակարգերի և դրանց պահանջների կատարումն ապահովող ստանդարտների ցանկի մասով:

Նոր օրենքի նախագծով ստանդարտացման ազգային մարմնի պարտավորությունները պետք է դրվեն ստանդարտների ազգային ինստիտուտի վրա: Այս առումով անհրաժեշտ է հստակ սահմանել Ստանդարտների ազգային ինստիտուտի կառուցվածքը և կառավարման մոդելը, դրան տալով հանրային կառավարման սուբյեկտի կարգավիճակ: Այսպիսի մոդելի դեպքում նախ, կապահովվի ստանդարտացման մարմնի գործունեության անկախությունը, երկրորդ, կապահովվի այդ մարմնի կառավարմանը շահագրգիռ բոլոր կողմերի ներգրավվածությունը:

Նոր օրենքի նախագիծը նախատեսում է, որ ստանդարտների ընդունումը (հաստատումը) իրականացնելու է նորաստեղծ ստանդարտացման մարմինը, իսկ դրանց մշակումն իրականացնելու են կազմակերպությունները, ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները, ստանդարտների ազգային ինստիտուտը, իրավաբանական և ֆիզիկական անձինք, հասարակական կազմակերպությունները:

Հստակ սահմանելով ստանդարտների կիրառման կամավորության սկզբունքը՝ ստանդարտացման կանոնների, ուղեցույցների, ազգային ստանդարտների, տեխնիկական պայմանների և դրանց փոփոխությունների գրանցման գործառույթը պետք է վերապահվի ստանդարտների ազգային ինստիտուտին:

Նոր օրենքի նախագծով պետք է հստակ կանոնակարգվեն նաև ստանդարտացման միջազգային կազմակերպություններում ստանդարտացման մարմնի անդամակցության մոտեցումները, ստանդարտացման միջազգային տեխնիկական հանձնաժողովներում մասնակցության հնարավորությունները և այդ անդամակցությունների ու աշխատանքների ֆինանսավորման աղբյուրները:

**2. Կարգավորման առարկան**

Օրենքի նախագծի կարգավորման առարկան Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման գործունեության իրավական հիմքերը, ստանդարտացման մարմնի կազմակերպչական կառուցվածքը և դրա մասնակիցների իրավասությունը սահմանելն է, ինչպես նաև ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի մշակման և կիրառման սկզբունքները կանոնակարգելն է:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Նոր օրենքի նախագծով նախատեսված փոփոխությունները հանդիսանում են ժամանակակից, շուկայական կողմնորոշմամբ տնտեսական համակարգերի կարևորագույն գործոն, որի հիման վրա պետք է կառուցվի ազգային ստանդարտացման (ինչպես իրավաբանական, այնպես էլ ինստիտուցիոնալ) ամբողջ համակարգը:

107.

**«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանում գործող չափումների միասնականության ապահովման համակարգի՝ միջազգային և եվրոպական նմանատիպ համակարգերին ներդաշնակեցման անհրաժեշտությամբ:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս ՀՀ որակի ենթակառուցվածքի (ստանդարտացում, չափագիտություն, հավատարմագրում, տեխնիկական կանոնակարգում) համակարգը բարեփոխման անհրաժեշտություն ունի: Համակարգի կարևոր տարր է հանդիսանում չափումների միասնականության ապահովման չափագիտության համակարգը (այսուհետ՝ չափագիտություն): Բարեփոխման փուլերից են գործող օրենսդրության համապատասխանեցումը և ներդաշնակեցումը ԵՄ ընդհանուր օրենսդրությանը: Բացի դրանից՝ չափագիտության համակարգի կողմից մատուցված ծառայությունները լիովին չեն նպաստում սպառողների իրավունքների պաշտպանությանը: Առաջարկվող օրենսդրական փոփոխությունը դրական ազդեցություն կունենա սպառողների պաշտպանության ոլորտի վրա այն առումով, որ Հայաստանում կգործեն չափագիտության հուսալի ծառայություններ, որոնք կապահովեն սպառողական ապրանքների անվտանգության վերահսկողությունը: Չափագիտության համակարգի կողմից տրվող սերտիֆիկատները չեն ճանաչվում արտասահմանյան երկրներում: ԵՄ-ի պահանջներին ներդաշնակ պայմանների առկայությունը կապահովի համակարգի միջազգային ճանաչմանը, ուստի համակարգի կողմից տրամադրվող սերտիֆիկատները կճանաչվեն ԵՄ-ի երկրներում:

Ներկայումս Հայաստանում զարգացած չեն նաև ստուգաճշտման աշխատանքները (ինստիտուտը), ինչը ևս խոսում է գործող օրենքի անկատարության մասին: Զարգացած չէ նաև գիտական և արդյունաբերական չափագիտությունը, ինչը խոչընդոտ է հանդիսանում ընդհանուր չափագիտության զարգացմանը:

Չափագիտության համակարգը ներկայումս ոչ լիովին է համապատասխանում ԵՄ-ի երկրների նմանատիպ համակարգերին, ուստի համակարգի համար անհրաժեշտ է նոր իրավական հիմք, որը կշտկի այդ օրենսդրական բացթողումները, այդ թվում՝ նաև ինստիտուցիոնալ կառուցվածքի փոփոխությունը: Այն նաև կնախատեսի չափագիտության ենթակառուցվածքի զարգացում:

«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումն էական նշանակություն ունի նաև ԽՀԱԱՀ-ի կնքման նախապատրաստական աշխատանքների համար:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Չափագիտության ոլորտում հարկավոր է տարբերակել հետևյալ սուբյեկտներին՝ չափագիտության ազգային ինստիտուտ, որը, որպես կանոն, պետական կազմակերպություն է: Այս ինստիտուտը կարող է այլ ինստիտուտների փոխանցել չափագիտական որոշ առաջադրանքներ: Այս դեպքում համակարգը կոչվում է չափագիտության բաշխված համակարգ, ստուգաճշտման լաբորատորիաներ, որոնք հիմնականում մասնավոր են, օրենսդրական չափագիտության համապատասխանության գնահատման մարմիններ, որոնց մեծ մասը դեռևս պետական կազմակերպություններ են, չափագիտական վերահսկողության պետական մարմիններ:

Քանի որ ներկայիս Չափագիտության ազգային ինստիտուտը, չնայած իր անվանմանը, ունի օրենսդրական չափագիտության ոլորտում համապատասխանության գնահատման գործառույթներ և կարողություններ, ապա առկա տարբերակները հետևյալն են՝

1) ունենալ երկու մարմիններ՝ վերանվանելով գործող ինստիտուտը, որը կզբաղվի օրենսդրական (իրավական) չափագիտությամբ, և ստեղծել նոր Չափագիտության ազգային ինստիտուտ.

2) բարեփոխել գործող ինստիտուտն այնպես, որ այն միաժամանակ կատարի թե Չափագիտության ազգային ինստիտուտի, և թե օրենսդրական չափագիտության մասով համապատասխանության գնահատման մարմնի դեր:

Նոր Չափագիտության ազգային ինստիտուտի հիմնադրման դեպքում միակ տրամաբանական կազմակերպաիրավական ձևը պետական ոչ առևտրային կազմակերպությունն (ՊՈԱԿ) է: Գործող ինստիտուտի բարեփոխման դեպքում այն նույնպես պետք է դառնա պետական ոչ առևտրային կազմակերպություն: Երկու տարբերակների դեպքում էլ հնարավոր է «Ա.Ի. Ալիխանյանների անվան ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ-ի կողմից չափագիտության ազգային ինստիտուտի դերի ստանձնումը:

**2. Կարգավորման առարկան**

ՀՀ-ում գործող չափագիտության համակարգը:

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքներն են `<br>- արդյունաբերական չափագիտության մեջ առավել արագ առաջընթացի հնարավորությունը.<br>- գիտական չափագիտության առանձին կարողությունների զարգացման հնարավորությունը.<br>- պետության և սպառողների շահերի պաշտպանության արդյունավետության բարձրացումը.<br>- չափագիտության ոլորտի կողմից մատուցված ծառայությունների որակի բարձրացումը.<br>- համակարգի միջազգային ճանաչումը: |
| 108. | **«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ գործող օրենքում բացակայում են՝ գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների հավատարմագրման համակարգի մեխանիզմը և արբանյակային հեռարձակման վերաբերյալ դրույթները, ինչպես նաև ԵՄ-ի դիրեկտիվների որոշ դրույթներ: Օրենքում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները պայմանավորված են նաև հեղինակների գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարման կատարելագործման և համապատասխան կազմակերպությունների գործունեության վերահսկման մեխանիզմների սահմանման անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Միջազգային փորձը ցույց է տալիս, որ շատ դեպքերում այդպիսի կազմակերպությունների գործունեությունն իրականացվում է համապատասխան պետական լիազոր մարմնի կողմից թույլտվություն ստանալուց հետո՝ որոշակի պայմաններ բավարարելու դեպքում:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Հստակ պետք է սահմանվեն հավատարմագիր ստանալու համար անհրաժեշտ պայմանները, հավատարմագիրն ուժը կորցրած ճանաչելու հիմքերը, ինչպես նաև կազմակերպության կողմից իր կանոնադրության կամ իր անդամ-իրավատերերի կողմից տրված լիազորությունների հնարավոր խախտումների դեպքում սահմանված որոշակի ժամկետը՝ այդ խախտումները վերացնելու նպատակով:<br>Կսահմանվեն նաև այդպիսի կազմակերպությունների գործունեության նկատմամբ վերահսկողության գործուն մեխանիզմները, մասնավորապես, կազմակերպության անդամակցող իրավատերերին իրավունք կվերապահվի ստուգել տարեկան հաշվետվությունները, ծանոթանալ իրենց հասանելիք հոնորարների հաշվարկման-բաշխման փաստաթղթերին: Կազմակերպության գործունեության վերահսկողության իրավունք պետք է վերապահվի նաև պետական լիազոր մարմնին՝ տեղեկություններ պահանջելու և աուդիտ պատվիրելու, ինչպես նաև կազմակերպության ժողովներին և խորհրդի նիստերին մասնակից-ներկայացուցիչ ունենալու եղանակով: Արբանյակային հեռարձակման վերաբերյալ դրույթների, ինչպես նաև ԵՄ-ի դիրեկտիվների որոշ դրույթների ներառումն օրենքում պայմանավորված է ԵՄ-ի պահանջներով:<br>**2. Կարգավորման առարկան** |

| | |
|---|---|
| | Օրինագծի կարգավորումը ներառում է գույքային իրավունքները, կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների հավատարմագրման համակարգի մեխանիզմը և արբանյակային հեռարձակման վերաբերյալ դրույթները, ինչպես նաև ԵՄ-ի դիրեկտիվների որոշ դրույթներ։<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքներն են՝<br>– գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների հավատարմագրման համակարգի ներդրումը.<br>– արբանյակային հեռարձակման վերաբերյալ դրույթների հստակեցումը.<br>3) օրենքի մոտարկում եվրախորհրդի դիրեկտիվներին։ |
| **ՀՀ արդարադատության նախարարություն** | |
| 109. | **«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ**<br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում (այսուհետ՝ օրենսգիրք) խոշտանգմանը վերաբերում է 119-րդ հոդվածը։ Այդ հոդվածով խոշտանգմանը տրված է ակնհայտ թերի բնորոշում, մասնավորապես, հիմք է ընդունվել կոնվենցիայով ամրագրված սոսկ այն դրույթը, որ խոշտանգումն անձին դիտավորյալ կերպով ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք պատճառելն է։ Հոդվածում բացարձակապես բացակայում է որևէ դրույթ՝ արարքի շարժառիթների, նպատակների և հանցակազմի հատուկ սուբյեկտի վերաբերյալ։<br>Խոշտանգման առանձին հանցակազմեր նախատեսված են օրենսգրքի մի շարք այլ հոդվածներում, ինչը տրամաբանական կլիներ ու հիմնավորված կլիներ, եթե նվազագույնը պահպանվեին անձի իրավունքների գերակայության, արդարության և պատասխանատվության անհատականացման վերաբերյալ քրեական օրենսդրության սկզբունքները։ Այսպես, խոշտանգման առանձին հանցակազմ է նախատեսված օրենսգրքի 341-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 390-րդ հոդվածի 1-ին մասով և 392-րդ հոդվածով։ Խոշտանգման վերաբերյալ միասնական և սպառիչ բնորոշման բացակայության դեպքում կարելի է պնդել, որ այդ արարքի հատկանիշներն ամրագրված են նաև օրենսգրքի 309-րդ, 375-րդ հոդվածներով։<br>Առավել խոցելի է նախատեսված սանկցիան։ Այսպես, ըստ 119-րդ հոդվածի 1-ին մասի խոշտանգման համար նախատեսված է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկում, իսկ 341-րդ հոդվածի 3-րդ մասով՝ վեցից տասներկու տարի ժամկետով և այլն։ Այն, որ այդ սանկցիան համարժեք չէ արարքի հանրային վտանգավորությանը և միջազգային փորձին, հիմնավորվում է մի քանի փաստարկներով՝<br>ա) մեկ մասնավոր օրինակ. խոշտանգման արդյունքում ծանր հետևանք պատճառելը՝ գործող օրենսդրությամբ կարող է ընդգրկել նաև սպանելը, ինչի արդյունքում ստացվում է, որ այդ եղանակով սպանությունը չի համարվում որակյալ,<br>բ) որպես կանոն, խոշտանգման համար կոնվենցիային մասնակից պետությունները սահմանում են առավել խիստ պատժաչափեր։ Այսպես, Ռումինիայի քրեական օրենսգրքով նախատեսված է այդ արարքի հասարակ տեսակի համար՝ 2-7 տարի ժամկետով ազատազրկում, Վրաստանի քրեական օրենսգրքով՝ 7-10 տարի ժամկետով ազատազրկում, Սլովակիայի քրեական օրենսգրքով՝ 5-10 տարի ժամկետով ազատազրկում, Սերբիայի և Մոնտենեգրոյի Հանրապետության քրեական օրենսգրքերով՝ 1-8 տարի ժամկետով ազատազրկում և այլն։<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կոնվենցիայի դրույթները և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների՝ խոշտանգման արարքի հատկանիշների և պատժելիության վերաբերյալ։ Կոնվենցիայի 1-ին հոդվածի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների վերլուծությունը միանշանակ ցույց է տալիս, որ խոշտանգումը ներկայացվում է որպես հանցավոր այնպիսի արարք, որը համապատասխանում է հետևյալ |

| | |
|---|---|
| | հատկանիշներին՝<br>ա) խոշտանգմամբ պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք,<br>բ) արարքը կատարվում է դիտավորությամբ,<br>գ) արարքի շարժառիթներն են՝ անմիջապես տուժողից կամ երրորդ անձից տեղեկություններ և խոստովանություն ստանալը, կամ տուժողին այն գործողության համար պատժելը, որի կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ տուժողին կամ երրորդ անձին վախեցնելը կամ հարկադրելը, կամ խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառը,<br>դ) արարքի սուբյեկտ է պետական պաշտոնյան կամ որպես այդպիսին հանդես եկող այլ անձ, կամ պետական պաշտոնյայի դրդմամբ, կամ թույլտվությամբ կամ լռելյայն համաձայնությամբ հանդես եկող այլ անձ:<br>Նախագծով առաջադրվող լուծումները և դրանց հիմնավորումները: Նախ, առաջարկվել է օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել 5.1-ին կետով, ինչի արդյունքում այսուհետ խոշտանգմամբ զուգորդված սպանությունը ևս կգնահատվի որպես որակյալ սպանություն: Ընդ որում, սպանությունը որակյալ դարձնող հատկանիշներից որևէ մեկը չի կարող մեկնաբանվել որպես խոշտանգում: Այսպես, առանձին դաժանությամբ սպանություն կատարելը բացառապես վերաբերում է եղանակին, սակայն անտեսվում են այն շարժառիթները, որոնք բնորոշ են խոշտանգմանը: Բացի դրամից՝ խոշտանգումը կարող է կատարվել նաև առանց առանձին դաժանության:<br>Վերանայվել է օրենսգրքի 118-րդ հոդվածը, որպեսզի խոշտանգման եղանակով արարքներ կատարելը համապատասխան պատասխանատվություն առաջացնի նաև մասնավոր անձանց համար, բայց արդեն սահմանազատվի խոշտանգումից, քանի որ վերջինիս հատկանիշներն ավելի ընդգրկուն են:<br>Խոշտանգման վերաբերյալ 119-րդ հոդվածն ամբողջովին ներկայացվել է նոր խմբագրությամբ: Ընդ որում, դա արվել է այն նկատառումով, որ, թեպետ հանցակազմի սուբյեկտը հատուկ է՝ հանրային ծառայող կամ վերջինիս հանցակից, սակայն արարքի հիմնական օբյեկտն անձի կյանքն ու առողջությունն է, պատիվն ու արժանապատվությունը, որոնք գերակայում են քրեական օրենսդրությամբ պաշտպանվող մյուս շահերին:<br>Միաժամանակ, առաջարկվում է վերանայել օրենսգրքի 341-րդ հոդվածը, որով ամրագրված է խոշտանգման առանձին տեսակ, որի համար սանկցիան առավել խիստ սահմանելը պայմանավորված է արդարադատության, որպես առանձնահատուկ պաշտպանվող օբյեկտով:<br>Օրենսգրքի 119-րդ հոդվածով խոշտանգմանը տրված է այնպիսի բնորոշում, որը միաժամանակ համապատասխանում է կոնվենցիայի 1-ին հոդվածի դրույթներին և համահունչ է օրենսգրքի իրավակիրառական լուծումներին և ընտրված հասկացություններին: Այսինքն, նախապատվություն է տրվում ոչ թե կոնվենցիայում ամրագրված, այլ՝ դրանց ճշգրիտ համարժեքը կազմող իրավական հասկացություններին, ինչն ապահովում է առավել կանխատեսելի և որոշակի իրավակիրառ պրակտիկա և համապատասխանում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի այն պահանջներին, ըստ որոնց միևնույն իմաստն ունեցող հասկացությունները պետք է ամրագրվեն միևնույն տերմիններով:<br>Այսպես, օրինակ, հանցակցության ինստիտուտը, կատարողից բացի, ներառում է ինչպես կազմակերպչին, այնպես էլ՝ դրդչին ու օժանդակողին: Հետևաբար, կարիք չկա հատուկ շեշտել «պաշտոնյայի թույլտվությամբ» արտահայտությունը, որը գործնականում անհարկի բարդություններ է ստեղծելու՝ այն ընկալելու և մեկնաբանելու առումով և անհարկի նեղացնելու է հանցակազմի շրջանակները, ինչն արդեն կհակասի նույն կոնվենցիայի ոգուն:<br>Սանկցիաներն ընտրված են այնպես, որպեսզի ապահովվի ներքին համամասնություն, համահունչ լինի կոնվենցիայի պահանջներին և միջազգային փորձին:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Սույն օրինագիծը նպատակ ունի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում ամրագրված խոշտանգման հանցակազմը համապատասխանեցնելու միջազգային իրավունքի չափանիշներին, մասնավորապես, ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի դրույթներին: |
| 110. | **«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ** |

| | |
|---|---|
| | **1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հարկադիր կատարողին տրամադրվում է ամենամյա արձակուրդ: Ամենամյա արձակուրդի տևողությունը կազմում է 28 օրացուցային օր, որում չեն ներառվում տոնական և հիշատակի օրերը: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը սահմանված է 20 աշխատանքային օր:<br>Օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն ծառայության առաջին տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է ծառայության տասնմեկ ամիսը լրանալուց հետո: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի համանման դրույթը սահմանում է վեցամսյա ժամկետ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Օրենքի վերը նշված դրույթները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի դրույթներին:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման արդյունքում նշված օրենքի դրույթները և դրանց կիրառման պրակտիկան կհամապատասխանեն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքին և ՀՀ-ում վերջինիս կիրառման ընդհանուր պրակտիկային: |
| 111. | **«Հավաքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**<br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս հավաքների անցկացման բնագավառի իրավակիրառ պրակտիկայում ծագում են լուրջ խնդիրներ: Առաջին հերթին խնդիրները կապված են հավաքներ անցկացնելու մարդու իրավունքի իրականացման առկա անհարկի խոչընդոտների, հավաքներն արգելելու կամ հավաքը դադարեցնելու դեպքերի կիրառման հստակ չափանիշների բացակայության, այս բնագավառում իրավասու մարմինների լիազորությունների հստակ սահմանման բացակայության, բանակցությունների ինստիտուտի բացակայության հետ: Անհրաժեշտություն է առաջացել հավաքներ անցկացնելու ինստիտուտը համապատասխանեցնել մարդու իրավունքների և ազատությունների մասին եվրոպական և միջազգային չափանիշներին, կիրառել նշված բնագավառում ժողովրդավարական չափանիշներին ավելի մոտ դրույթներ՝ դրանով իսկ նվազագույնի հասցնելով նշված ոլորտում ցանկացած կամայականության դրսևորում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Այս կապակցությամբ անհրաժեշտ է ընդունել ժողովրդավարական և եվրոպական և միջազգային չափանիշներին համապատասխանող, բարեփոխված «Հավաքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:<br>Վերոհիշյալ օրենքի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Նախագահի հանձնարարականով և Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի «Հայաստանի Հանրապետությունում խաղաղ հավաքների իրավունքի մասին» արտահերթ հրապարակային զեկույցով:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է ստեղծել օրենսդրական այնպիսի բազա, որը նվազագույնի կհասցնի հավաքների անցկացման հետ կապված ցանկացած կամայականության դրսևորում, կամրապնդի Հայաստանի Հանրապետությունում հավաքների ազատության մարդու |

| | |
|---|---|
| | իրավունքի երաշխավորվածությունը, հստակ մեխանիզմներ կսահմանի, որոնցով հավաքներ անցկացնելու ժամանակ Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը վերապահված լիազորությունները կսահմանափակվեն, կհստակեցվեն, թե որ դեպքերում կարող են ոստիկանները միջամտել հավաքների անցկացմանը, հավաքի դադարեցումը կկիրառվի ծայրահեղ դեպքում, ընդհանրապես կհանվի ներկայումս գործող հավաքների արտոնման դրույթը և կփոխարինվի իրազեկման դրույթով (այն էլ կառանձնացվեն իրազեկման ենթակա և ոչ ենթակա հավաքները) և այլն: |
| 112. | **«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**<br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից առաջ, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից դեռևս 1991 թվականին` հիմք ընդունելով «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ԽՍՀՄ օրենքը, որից հետո հիշյալ օրենքում երկու անգամ` 1997 թվականին և 2001 թվականին կատարվել են փոփոխություններ և լրացումներ:<br><br>Այդ առումով «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքը պարունակում է մի շարք թերություններ, հակասություններ և չի համապատասխանում ներկա իրավիճակին, երբ Հայաստանը միացել է միջազգային համաձայնագրերին, դարձել Եվրախորհրդի անդամ և ստանձնել որոշակի պարտավորություններ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»` հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Եվրախորհրդի, կոնվենցիաների և միջազգային պայմանագրերի պահանջները և վերացնել գործող օրենքում առկա ներքին հակասությունները, տարաբնույթ ընթերցումներն ու անհստակությունները և օրենքի կիրառման ընթացքում բացահայտված գործնական խնդիրները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի ընդունման դեպքում ակնկալվում է ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Եվրախորհրդի պահանջներին, կոնվենցիաներին և միջազգային պայմանգրերին համապատասխանող օրենք: |
| 113. | **«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս հարկադիր կատարման պրակտիկայում հայցի ապահովման վերաբերյալ կատարողական վարույթների իրականացման ընթացքում առաջանում են մի շարք բարդություններ և ոչ միանշանակ լուծում ենթադրող իրադրություններ: Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր |

| | |
|---|---|
| | կատարման մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ օրենք), ի տարբերություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի, կարգավորված չէ հայցի ապահովման վերացման խնդիրը հայցը մերժելու դեպքում: Խնդիրներ են ծագում նաև օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի այն դրույթի արդյունքում, համաձայն որի, եթե պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու մասին կատարողական թերթ ներկայացնելիս պարզվել է, որ մինչև կատարողական թերթը կատարման ներկայացնելու օրը նույն պարտապանի գույքի նկատմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց, ապա բռնագանձումը կարող է տարածվել պարտապանի միայն այն գույքի վրա, որի նկատմամբ հայցի ապահովում չի կիրառվել: Հայցի ապահովման միջոց կիրառված գույքի նկատմամբ բռնագանձում կարող է տարածվել, եթե դատարանը հայցը թողել է առանց քննության կամ մերժել է: Նման դեպքում մի շարք դատական ակտեր մնում են անկատար, քանի որ շատ դեպքերում հայցի ապահովում կիրառելուց և հայցի բավարարումից հետո բռնագանձման վերաբերյալ կատարողական թերթ չի ներկայացվում, իսկ կիրառված հայցի ապահովումը խոչընդոտում է այլ դատական ակտերի կատարմանը:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br><br>Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված խնդիրների հիմնական պատճառը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում հայցի ապահովման որոշումների կատարման խիստ թերի կանոնակարգվածությունն է, ինչի հետևանքով ծագում են օրենքի անալոգիայի կիրառման և իրավական դրույթների ոչ միատեսակ մեկնաբանման դեպքեր: Այնինչ, նշված իրավահարաբերությունների բնույթը պահանջում է հստակ օրենսդրական կարգավորում և օրենքում հայցի ապահովման վերաբերյալ կատարողական թերթերի ներկայացման, կատարման և հայցի ապահովման վերացման վերաբերյալ առանձին կանոնների սահմանում, ինչին էլ միտված է լինելու ծրագրվող օրենսդրական նախագիծը:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Ծրագրվող նախագիծը միտված է լինելու հայցի ապահովման վերաբերյալ կատարողական թերթերի կատարման օրենսդրական հստակ կարգավորմանը և հայցի ապահովման կիրառման գործընթացի վրա կունենա դրական և արդյունավետ ազդեցություն: |
| 114. | **«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետության կառավարությունն առանձնակիորեն կարևորում է թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպումը՝ նպատակ ունենալով հանրապետության բնակչությանը հնարավորինս զերծ պահել թմրամիջոցների բացասական ազդեցությունից, դրա վնասակար հետևանքներից, ինչպես նաև ապահովել բնակչության առողջության ու սոցիալ-տնտեսական կյանքի անձեռնմխելիությունը և հուսալի պաշտպանությունը:<br>**1.1. առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը կանխարգելելու նպատակով նախատեսում է<br><br>մի շարք հանցակազմեր, բացի դրանից Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի N 1 հավելվածը նախատեսում է թմրամիջոցների և հոգեմետ նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը: Սակայն նշված Հավելվածում բացակայում են մի շարք թմրամիջոցների և հոգեմետ նյութերի անվանումներ, որոնք թմրամիջոց կամ հոգեմետ նյութ են համարվում միջազգային մի շարք փաստաթղթերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. օգոստոսի 21-ի 1129-Ն որոշմամբ (օր. դեզոմորֆին և այլն): Նշված անվանումների բացակայությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում հանգեցնում է նրան, որ դրանց ապօրինի շրջանառությունը չի դիտվում հանցագործություն: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>Այս կապակցությամբ անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ցանկը համապատասխանեցնել միջազգային փաստաթղթերով նախատեսված թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ցանկին: Դրանով է պայմանավորված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտությունը:<br>Վերոնշյալ օրենքի ընդունումը բխում է նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի 2009թ. սեպտեմբերի 25-ի ՆԿ-162-Ն կարգադրությամբ հաստատված 2009-2012թթ. ընթացքում ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրից և ՀՀ կառավարության 2010թ. հուլիսի 15-ի N 892-Ն որոշմամբ հաստատված 2010-2012 թթ. ընթացքում ՀՀ-ում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների ժամանակացույցից:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը:**<br>Նշված նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում նախատեսված ցանկը կհամապատասխանի Հայաստանի Հանրապետության միջազգային փաստաթղթերով նախատեսված թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ցանկին: |
| 115. | **«Իրավական ակտերի նախագծերի մշակման» մեթոդական ցուցումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հայաստանի Հանրապետությունում ներկայումս տեղի ունեցող հասարակական հարաբերությունների էական զարգացումները և փոփոխությունները հանգեցրել են օրենսդրական գործունեության ակտիվացման, ինչի արդյունքում Հայաստանի Հանրապետությունում տարբեր մարմինների կողմից ընդունվում են բազմահազար իրավական ակտեր և, չնայած, որ դեռևս 2003 թվականին ընդունվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով սահմանվել են օրենսդրական տեխնիկայի կանոնները, ստեղծված իրավիճակում, այնուամենայնիվ, անտեսվում են Հայաստանի Հանրապետությունում ընդունվող իրավական ակտերին ներկայացվող իրավատեխնիկական պահանջները, ինչի արդյունքում իրավական ակտերի միջև առաջանում են հակասություններ, անճշտություններ, կրկնություններ, որոշ իրավական ակտերի դրույթներ տարակարծիք ընկալման և թյուրըմբռնման տեղիք են տալիս:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նկատի ունենալով, որ իրավական ակտի որակը պարտադիր պայման է հանդիսանում հասարակական հարաբերությունների ճիշտ կարգավորման և իրավունքի պարտադիր նորմերի ընկալման և կիրառման համար՝ առաջարկում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվեն իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումները, որով հստակ կսահմանվեն իրավական ակտերի մշակմանը ներկայացվող իրավատեխնիկական պահանջները, մասնավորապես՝<br>1) նախագծերի մշակման ժամանակ ի հայտ եկող հիմնական խնդիրները և այդ խնդիրների լուծման ուղիները.<br>2) իրավական ակտի նախագիծը մշակելու համար անհրաժեշտ փաստաթղթի ուսումնասիրության կարգը.<br>3) նախագծի կառուցվածքին, այդ թվում՝ վերնագրին, նախաբանին, հոդվածին, կետին, ենթակետին և համարակալմանը ներկայացվող պահանջները.<br>4) իրավական ակտերում հղումների կիրառման կարգը.<br>5) իրավական ակտում օգտագործվող հասկացությունների սահմանման կարգը.<br>6) իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգը.<br>7) իրավական ակտն ուժը կորցրած ճանաչելու կարգը և այլն: |

| | |
|---|---|
| | **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Մեթոդական ցուցումների ընդունման արդյունքում ակնկալվում է ունենալ կանոնակարգված օրենսդրություն, որում կբացառվեն հակասությունները, անճշտությունները, իրավական ակտի դրույթների տարակարծիք մեկնաբանությունները և այլն: |
| 116. | **«Նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Ներկայումս ստեղծվել է մի իրավիճակ, երբ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման գրեթե բոլոր մարմինները միմյանց հետ հաղորդակցվում են էլեկտրոնային տարբեր համակարգերի միջոցով, իսկ նոտարներն ընդգրկված չեն էլեկտրոնային որևէ համացանցում և նոտարական գործողություններից բխող իրավահարաբերությունների մեջ մտնելը, թեկուզև հենց պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, դարձել է երկարատև գործընթաց, ինչը խոչընդոտներ է ստեղծում թե նոտարների և թե նոտարներին դիմող անձանց համար՝ բարդություններ առաջացնելով փաստաթղթային շրջանառության համար և երբեմն անհարկի ձգձգելով նոտարական գործողությունների հետ կապված ընթացակարգերը:<br>**1.2. առկա խնդիրները**<br>Նոտարիատի բնագավառում փաստաթղթային շրջանառության ներկա բարդությունները վերացնելու և նոտարական գործողությունների հետ կապված անհրաժեշտ ընթացակարգերը պարզեցնելու հստակ մեխանիզմների ներդնումը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նոտարիատի բնագավառում կիրառվող էլեկտրոնային կառավարման համակարգի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն և նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հայեցակարգի մշակում՝ դրանով իսկ հետագայում կանոնակարգելով նոտարների համար նոտարական գրասենյակներում պետական բոլոր մարմիններից էլեկտրոնային եղանակով անհրաժեշտ տեղեկությունների ստացման հնարավորության ստեղծումը, նոտարների միջև էլեկտրոնային համացանցի ստեղծումը և բոլոր նոտարներին այդ համացանցում ներգրավման ապահովումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված նախագծի ընդունման դեպքում կկանոնակարգվի և հետագայում հնարավորություն կստեղծվի նոտարական գործողությունների հետ կապված ընթացակարգերը և փաստաթղթային շրջանառությունը պարզեցնելու և նոտարի կողմից նոտարական գործողություններ կատարելու և քաղաքացիներին սպասարկելու որակը բարձրացնելու համար: |
| **ՀՀ պաշտպանության նախարարություն** | |
| 117. | **«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին" ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է զորակոչային և պահեստազորային համակարգի կատարելագործման նկատառումներով՝ զինված ուժերում իրականացվող պաշտպանական բարեփոխումներին համապատասխան կարգավորելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** |

| | |
|---|---|
| | Գործող զորակոչային համակարգը ներառում է զինծառայության ենթակա քաղաքացիների առողջական վիճակի կապակցությամբ տարկետումների տրամադրման ընթացակարգ, ինչը ներկա դրությամբ արդեն իսկ չի բավարարում զինվորական ծառայությանն առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչելու համար անհրաժեշտ պայմանները: Բացի դրանից՝ նույնատիպ խնդիր առկա է նաև զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրվողների մասով: Պահեստազորային համակարգի կատարելագործման ուղղությամբ օրենքը որոշակի չկարգավորված հարաբերություններ է պարունակում զինվորական հաշվառումից հանելու, ինչպես նաև վարժական հավաքների կազմակերպման և անցկացման մասով, ինչը խոչընդոտ է դրանց պատշաճ իրականացման գործընթացում:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առկա խնդիրների կապակցությամբ առաջարկվում է վերանայել առողջական վիճակի պատճառով տրվող տարկետումների ժամկետները, ինչպես նաև նախատեսել, որ նույն հիմքով վաղաժամկետ արձակված զինծառայողները որոշակի ժամանակ անց ենթակա են վերափորձաքննության, որի արդյունքներով կարող են նաև ուղարկվել շարունակելու հետագա զինծառայությունը: Զինվորական հաշվառումից հանելու գործընթացի հետ կապված նախատեսվում է օրենքի 5-րդ հոդվածում լրացնել նաև զինհաշվառումից հանելու այլ հիմքեր, օրենքում դրույթներ նախատեսել վարժական հավաքների հայտարարման կարգի, անցկացման, ներգրավվող քաղաքացիների իրավունքների և պարտականությունների մասով:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Օրենքի նախագծով կարգավորվում են առողջական վիճակի պատճառով տրվող տարկետումների, նույն հիմքով վաղաժամկետ արձակումների, զինվորական հաշվառումից հանելու հիմքերն ավելացնելու, վարժական հավաքների պատշաճ կազմակերպման ու անցկացման հետ կապված հարաբերությունները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենքի ընդունմամբ հնարավորինս պայմաններ կստեղծվեն զինված ուժերը ֆիզիկապես առողջ զինակոչիկներով համալրելու համար, լիարժեք կսահմանվեն զինվորական հաշվառումից հանելու դեպքերը, վարժական հավաքների պատշաճ կազմակերպումն ու անցկացումը կնպաստի զինված ուժերի զորահավաքային կարողությունների ու մարտունակության բարձրացմանը: |
| 118. | **«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է զինծառայողների, ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի քաղաքացիական ծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության պաշտպանության բարելավման անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով պետական կենսաթոշակային ապահովության ոլորտի, ինչպես նաև պաշտպանական ոլորտի բարեփոխումները:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Օրենքում զինծառայողի (քաղաքացիական ծառայողի) ընտանիքի անդամ համարվող անձանց հստակ սահմանման բացակայությունն օրենքով նախատեսված բժշկական, բնակարանային ապահովության կիրառման առումով առաջ է բերում տարաբնույթ մեկնաբանություններ, ինչը չի նպաստում նշված արտոնությունների կիրառման արդյունավետության բարձրացմանը: Բացի դրանից՝ ՀՀ ՊՆ-ի համակարգի քաղաքացիական ծառայողներին որպես զինծառայողներին հավասարեցված անձինք ճանաչելու սահմանման մեջ երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող դրույթներում տեղի է ունեցել ոչ ճշգրիտ ձևակերպում, ինչ ենթակա է համապատասխանեցման <Քաղաքացիական հատուկ ծառայության մասին> ՀՀ օրենքի 54-րդ հոդվածների պահանջներին: ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվող զինծառայողների, ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի քաղաքացիական ծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովման ներկա |

| | |
|---|---|
| | ձևաչափը բավականին ծախսատար է և ոչ լիարժեք, ինչը որոշակի դժվարություններ է առաջացնում նշված արտոնության կիրառման համար: <br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br>Առկա խնդիրների կապակցությամբ առաջարկվում է հստակ սահմանել զինծառայողի (քաղաքացիական ծառայողի) ընտանիքի անդամ համարվող անձանց շրջանակը, օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում կատարել լրացում, համաձայն որի ՀՀ ՊՆ-ի համակարգի քաղաքացիական ծառայողները երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ունեն միայն «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածում սահմանված կարգով ու ժամկետում, վերանայել զինծառայողների, ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի քաղաքացիական ծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովման ներկա ձևաչափը` ՀՀ պետական բյուջեի միջոցները տնտեսելու և գործընթացը վարկավորման շրջանակներում լուծելու տեսքով: <br>**2. Կարգավորման առարկան** <br>Օրենքի նախագծով կարգավորվում են զինծառայողի (քաղաքացիական ծառայողի) ընտանիքի անդամ համարվող անձանց շրջանակը, ՀՀ ՊՆ-ի համակարգի քաղաքացիական ծառայողների` երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի պայմանները, զինծառայողների, ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի քաղաքացիական ծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովության կարգը: <br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br>Օրենքի ընդունմամբ հստակ կսահմանվի զինծառայողի (քաղաքացիական ծառայողի) ընտանիքի անդամ համարվող անձանց շրջանակը, կվերացվի ՀՀ ՊՆ-ի համակարգի քաղաքացիական ծառայողների երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունքի իրացման առկա օրենսդրական բացը, կնվազեցվեն այն ծախսերը, որոնք պետությունը կատարում է զինծառայողների, ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի քաղաքացիական ծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովության ուղղությամբ, ինչպես նաև կբարձրանա այդ գործընթացի արդյունավետությունը: |
| 119. | **«Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի** <br><br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)** <br>«Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է զինվորական ծառայության անցման հետ կապված հարաբերությունների հստակեցման անհրաժեշտությամբ` հաշվի առնելով պաշտպանական ոլորտի բարեփոխումները: <br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br>Օրենքում զինծառայողներին պաշտոնի նշանակման և ազատման, զինվորական ծառայությունից արձակման հետ կապված հարաբերություններում օգտագործվում է «ազատության սահմանափակմամբ այլ պատիժ» հասկացությունը, ինչը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված չէ: Օրենքում ոչ հստակ են սահմանվում զինծառայողներին պաշտոնի նշանակման, պաշտոնից ազատման դեպքերն ու կարգը, զինվորական կոչումներ կրելու ժամկետները կարիք ունեն վերանայման, բավականին բացեր կան զինծառայողների որակավորման անցկացման վերաբերյալ դրույթներում: Պաշտպանական բարեփոխումների շրջանակներում իրականացվող շարքային և սերժանտական կազմերի պայմանագրային զինծառայության կազմակերպման հարցերը լիարժեք ներառված չեն գործող օրենքում: <br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br>Առկա խնդիրների կապակցությամբ առաջարկվում է օրենքի մի շարք հոդվածներից հանել «ազատության սահմանափակմամբ այլ պատիժ» հասկացությունը, հստակ սահմանել զինծառայողներին պաշտոնի նշանակման, պաշտոնից ազատման դեպքերն ու կարգը, ավելացման միտումով վերանայել զինվորական կոչումներ կրելու ժամկետները, լրամշակել զինծառայողների որակավորման վերաբերյալ հարաբերությունները, որոշակի |

| | |
|---|---|
| | առանձնահատկություններ սահմանել շարքային և սերժանտական կազմերի պայմանագրային զինծառայության կազմակերպման և անցկացման գործընթացի օրենսդրական կարգավորման ուղղությամբ:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Օրենքի նախագծով կարգավորվում են մի շարք օրենսդրական բացեր, հստակ սահմանվում են զինծառայողներին պաշտոնի նշանակման, պաշտոնից ազատման դեպքերն ու կարգը, վերանայվում են զինվորական կոչումներ կրելու ժամկետներն ու որակավորման կարգը, հստակեցվում է շարքային և սերժանտական կազմերի պայմանագրային զինծառայության կազմակերպման և անցկացման գործընթացի օրենսդրական կարգավորումը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Օրենքի ընդունմամբ կվերացվեն օրենքում առկա օրենսդրական բացերը, զինծառայողների պաշտոնի նշանակման և պաշտոնից ազատման, նրանց որակավորման անցկացման կարգը կդառնա առավել հստակ և թափանցիկ, ՀՀ այլ պետական հատուկ ծառայություն իրականացնող մարմիններում գործող ժամկետները, ինչպես նաև միջազգային փորձը հաշվի առնելով կվերանայվեն զինվորական կոչումներ կրելու ժամկետները, շարքային և սերժանտական կազմերի պայմանագրային զինծառայության կազմակերպման և անցկացման գործընթացի օրենսդրական կարգավորումը կնպաստի զինված ուժերում նշված կազմերի պայմանագրային ծառայության ընդլայնմանը, ինչը ՀՀ պաշտպանական բարեփոխումների հստակ նպատակն է: |
| 120. | **«Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության, ինչպես նաև այլ բարձրագույն և գիտակրթական հաստատություններ ուսման գործուղման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության, ինչպես նաև այլ բարձրագույն և գիտակրթական հաստատություններ ուսման գործուղման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից և նպատակ ունի հստակեցնելու ռազմական կրթության ոլորտի արդիականացման, ուսուցման ուղարկվող կադրերի նպատակային ընտրության և ուսման գործուղման հետ կապված հարաբերությունները՝ հաշվի առնելով պաշտպանական ոլորտի բարեփոխումները:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ընդունելության գործընթացը հիմնականում կարգավորվում է ՀՀ պաշտպանության նախարարի հրամաններով՝ ՀՀ կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող պետական պատվերի շրջանակներում: ՀՀ կառավարության որոշման տեսքով ՀՀ և օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության կարգի բացակայությունը հակասում է թե «Զինապարտության մասին», և թե «Կրթության մասին» ՀՀ օրենքների պահանջներին:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ՀՀ կառավարության որոշմամբ հաստատել ՀՀ և օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության, ինչպես նաև այլ բարձրագույն և գիտակրթական հաստատություններ ուսման գործուղման կարգը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշման նախագծով սահմանվում է ՀՀ և օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության, ինչպես նաև այլ բարձրագույն և գիտակրթական հաստատություններ ուսման գործուղման կարգը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման նախագծի ընդունմամբ կապահովվի «Զինապարտության մասին» և «Կրթության մասին» ՀՀ օրենքների պահանջների կատարումը, կհստակեցվի ՀՀ և օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատություններ ընդունելության, ինչպես նաև այլ բարձրագույն և գիտակրթական |

| | |
|---|---|
| | հաստատություններ ուսման գործուղման կարգը, ինչը կնպաստի գործընթացի իրականացման թափանցիկության ապահովմանը՝ որպես ՀՀ պաշտպանական բարեփոխումների հստակ նպատակ: |
| **ՀՀ արտաքին գործերի նախարարություն** | |
| 121. | **Եվրոպայի խորհրդի մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կոնվենցիայով նախատեսված Հայաստանի Հանրապետության կողմից կոնվենցիայի կիրառման վերաբերյալ**<br>Հայաստանի Հանրապետությունը, որպես Եվրախորհրդի մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կոնվենցիան վավերացրած երկիր, ստանձնում է պարտավորություն ներկայացնել զեկույց կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ:<br>Կոնվենցիայի անդամ-պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը վերահսկելու նպատակով Եվրոպայի խորհրդում ստեղծվեց մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ԵԽ-ի փորձագիտական խումբ (GRETA), որը մշակեց ազգային զեկույցների ներկայացման ձևաչափը և ժամանակացույցը, համաձայն որի Հայաստանի ազգային զեկույցի մշակումն ու ընդունումը նախատեսված է 2011 թվականին:<br>ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցների պատրաստման և հաստատման կարգը սահմանելու մասին» N 1483-Ն որոշմամբ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան ազգային զեկույցներ պատրաստելն իրավասու գերատեսչության կողմից՝ շահագրգիռ գերատեսչությունների ներգրավմամբ և ներկայացնելը ՀՀ կառավարության հաստատմանը: |
| 122. | **«ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի դեմ» կամընտիր արձանագրությամբ նախատեսված ազգային զեկույցն ՀՀ կառավարության որոշման արձանագրային նախագիծ**<br>Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային կից «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի դեմ» կամընտիր արձանագրության 12-րդ հոդվածով նախատեսված է արձանագրության դրույթների կատարման վերաբերյալ ազգային զեկույցի ներկայացում:<br>Զեկույցը ներկայացվելու է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 43-րդ հոդվածին համապատասխան ստեղծված Երեխայի իրավունքների մասին կոմիտեին:<br>ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցների պատրաստման և հաստատման կարգը սահմանելու մասին» N 1483-Ն որոշմամբ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան ազգային զեկույցներ պատրաստելն իրավասու գերատեսչության կողմից՝ շահագրգիռ գերատեսչությունների ներգրավմամբ և ներկայացնելը ՀՀ կառավարության հաստատմանը: |
| 123. | **«ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից զինված հակամարտություններին երեխաների մասնակցության վերաբերյալ արձանագրությամբ նախատեսված ազգային զեկույցն ՀՀ կառավարության որոշման արձանագրային նախագիծ**<br>Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից զինված հակամարտություններին երեխաների մասնակցության կամընտիր արձանագրության 8-րդ հոդվածով նախատեսված է արձանագրության դրույթների իրականացման վերաբերյալ ազգային զեկույցի ներկայացում:<br>Զեկույցը ներկայացվելու է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 43-րդ հոդվածին համապատասխան ստեղծված Երեխայի իրավունքների մասին կոմիտեին:<br>ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան |

| | |
|---|---|
| | Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցների պատրաստման և հաստատման կարգը սահմանելու մասին» N 1483-Ն որոշմամբ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան ազգային զեկույցներ պատրաստելն իրավասու գերատեսչության կողմից` շահագրգիռ գերատեսչությունների ներգրավմամբ և ներկայացնելը ՀՀ կառավարության հաստատմանը: |
| **ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե** | |
| 124. | **<<Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի` ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2011 թվականի կադաստրային գները (արժեքները) և կադաստրային զուտ եկամտի չափերը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Որոշման նախագծի ընդունումը բխում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերության և «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի պահանջներից, ըստ որի հողերի կադաստրային գներն ըստ նպատակային նշանակության յուրաքանչյուր տարի հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Նկատի ունենալով, որ գործող օրենսդրության համաձայն նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված հողերի կադաստրային գները չեն կարող կիրառելի լինել 2011 թվականի համար, ուստի որոշման նախագծի ընդունումն անհրաժեշտ է:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Սույն որոշման նախագծի ընդունմամբ կկարգավորվեն 2011 թվականի Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի ըստ նպատակային նշանակության (կատեգորիաների) հողերի 2011 թվականի կադաստրային գները (արժեքները) և կադաստրային զուտ եկամտի չափերը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>2011 թվականի հողերի կադաստրային գների (արժեքների) և կադաստրային զուտ եկամտի չափերի հաստատումն է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Իրավական ակտի կիրառման արդյունքում կսահմանվեն 2011 թվականի հողերի կադաստրային գների և կադաստրային զուտ եկամտի չափերը, որը կնպաստի հողի շուկայի զարգացմանը, հողի հարկի բազայի և համայնքային բյուջեների ձևավորմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կկիրառվի օտարման, վարձակալության, կառուցապատման իրավունքով տրամադրելու կամ այլ դեպքերում: |
| **ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն** | |
| 125. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 8-ի N 26-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 8-ի N 26-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի նպատակը լուծարումից հետո պետությանն անցած գույքի վաճառքի նպատակով կազմակերպված աճուրդների ընթացքում մեկնարկային գնի իջեցման նվազագույն սահմանը սահմանելն է, ինչպես նաև կազմակերպված աճուրդների ընթացքում չվաճառված գույքի հետագա տնօրինման գործընթացը կանոնակարգելն է: |

| | |
|---|---|
| | **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Լուծարումից հետո պետությանն անցած գույքը ներկայումս տնօրինվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 8-ի թիվ 26-Ն որոշմամբ հաստատված կարգով: Նշված կարգով սահմանված չէ լուծարումից հետո պետությանն անցած գույքի վաճառքի նպատակով կազմակերպված աճուրդների ընթացքում մեկնարկային գնի իջեցման նվազագույն սահմանը, ինչպես նաև սահմանված չէ կազմակերպված աճուրդների ընթացքում չվաճառված շարժական գույքի հետագա տնօրինումը:<br>**1.2. առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 8-ի N 26-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով առաջարկվում է սահմանել լուծարումից հետո պետությանն անցած գույքի վաճառքի նպատակով կազմակերպված աճուրդների ընթացքում մեկնարկային գնի իջեցման նվազագույն սահման, ինչպես նաև նշված գույքի վաճառքի նպատակով կազմակերպված աճուրդների ընթացքում չվաճառված շարժական գույքը թույլատրել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դուրս գրել:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Լուծարումից հետո պետությանն անցած գույքի կառավարման ոլորտում առկա խնդիրների կարգավորում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 8-ի N 26-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ կսահմանվի լուծարումից հետո պետությանն անցած գույքի վաճառքի նպատակով կազմակերպված աճուրդների ընթացքում մեկնարկային գնի իջեցման նվազագույն սահմանը, ինչպես նաև կկանոնակարգվի կազմակերպված աճուրդների ընթացքում չվաճառված գույքի հետագա տնօրինման գործընթացը: |
| 126. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի նպատակը պետական գույքի վարձակալության տրամադրման դեպքում վարձավճարների հաշվարկման մեխանիզմների հստակեցումն է:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Պետական գույքի վարձակալության տրամադրման դեպքում վարձավճարների հաշվարկման մեխանիզմները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշմամբ հաստատված կարգով, համաձայն որի վարձավճարի հաշվարկը կատարվում է ելնելով տվյալ տարածքի կադաստրային արժեքից, ընդ որում, եթե տվյալ տարածքի կադաստրային արժեքը բացակայում է, հաշվարկն իրականացվում է ելնելով կադաստարային արժեքի միջինացված արժեքից:<br>**1.2. առաջարկվող լուծումները**<br>«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի N 125 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով առաջարկվում է վերանայել պետական գույքի վարձակալության տրամադրման դեպքում վարձավճարների հաշվարկման մեխանիզմները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Պետական գույքի վարձակալության տրամադրման ոլորտում առկա խնդիրների կարգավորում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի փետրվարի 22-ի թիվ 125 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ պետական գույքի վարձակալության տրամադրման գործընթացում առկա խնդիրների կանոնակարգում: |
| **ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն** | |
| 127. | **«Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների ցանկերը, ինչպես նաև հրազենը, ռազմամթերքը, հատուկ միջոցները և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների տեսակները սպառազինության ցանկում ընդգրկելու, դրանք սպառազինությունից հանելու, հատուկ միջոցները ոչնչացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագիծը նախապատրաստվել է 2008 թվականի մարտի 1-2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների և դրանց պատճառների ուսումնասիրության՝ ՀՀ ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունում ընդգրկված առաջարկությունների կատարման ընթացքի մոնիթորինգի շրջանակում 2010 թվականի մարտի 25-ի ՀՀ ԱԺ պետական–իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստի արձանագրային հանձնարարականի համաձայն:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ օրենսդրությամբ սահմանված չեն ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների ցանկերը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է շրջանառության մեջ դնել «Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների ցանկերը, ինչպես նաև հրազենը, ռազմամթերքը, հատուկ միջոցները և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների տեսակները սպառազինության ցանկում ընդգրկելու, դրանք սպառազինությունից հանելու, հատուկ միջոցները ոչնչացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով կսահմանվեն հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների հրապարակային ցանկերը և դրանց հետ կապված հարաբերությունների կարգավորումները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշման նախագծով հաստատվում են Հայաստանի Հանրապետության ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների ցանկերը, կարգավորվում են հրազենը, ռազմամթերքը, հատուկ միջոցները և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների տեսակները սպառազինության ցանկում ընդգրկելու, դրանք սպառազինության ցանկից հանելու, ինչպես նաև հատուկ միջոցները ոչնչացնելու հետ կապված հարաբերությունները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունման արդյունքում ՀՀ օրենսդրությամբ կսահմանվեն ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի, ռազմամթերքի, հատուկ միջոցների և ոստիկանության ծառայողի անհատական պաշտպանության միջոցների ցանկերը և դրանց հետ կապված հարաբերությունների կարգավորումները: |
| 128. | **«ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի N 1791-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի** |

| | |
|---|---|
| | **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի N 1791-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի N 354-Ն որոշմամբ հաստատված՝ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011թթ. բարեփոխումների ծրագրի 9.3-րդ կետից և պայմանավորված է ՀՀ ոստիկանությունում միասնական կրթահամալիրի (ուսումնական հաստատության) կազմակերպման անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ոստիկանության համակարգում գործում են երկու ուսումնական հաստատություններ՝ Ակադեմիան և Ուսումնական կենտրոնը: ՀՀ ոստիկանության ակադեմիայի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2006 թվականի նոյեմբերի 9-ի N 1791-Ն որոշմամբ: Ուսումնական կենտրոնի գործունեությունն առավել արդյունավետ իրականացնելուն խոչընդոտում է Ակադեմիայից առանձնացված գործելու հանգամանքը: Անհրաժեշտություն է առաջացել ոստիկանության կրթական-ուսումնական համակարգում կատարել որոշակի փոփոխություններ և ստեղծել նոր, միասնական կրթահամալիր:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է նախապատրաստել «ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի N 1791-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>«ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1791-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով կսահմանվեն ՀՀ ոստիկանության համակարգում գործող միասնական կրթահամալիրի գործունեության իրավական կարգավորումները:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ ոստիկանության համակարգում ուսումնական գործընթացը կիրականացվի միասնական և առավել արդյունավետ եղանակներով՝ ոստիկանական կրթությանը ներկայացվող միջազգային չափորոշիչներին համապատասխան: |
| 129. | **« Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի N 354-Ն որոշմամբ հաստատված՝ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011թթ. բարեփոխումների ծրագրի 37.4-րդ կետից, ինչպես նաև պայմանավորված է թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը կանոնակարգող իրավական դաշտի կատարելագործման, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին համապատասխանեցնելու, ինչպես նաև պրեկուրսորների չափաբաժինները սահմանելու և պրեկուրսորների մաքսանենգության վերաբերյալ դրույթներ նախատեսելու անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում ներկայումս բացակայում են պրեկուրսորների չափաբաժինների և պրեկուրսորների մաքսանենգության վերաբերյալ դրույթներ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում:<br>**2. Կարգավորման առարկան** |

| | |
|---|---|
| | «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանվելու են պրեկուրսորների չափաբաժինների և պրեկուրսորների մաքսանենգության վերաբերյալ դրույթներ: **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը կհամապատասխանեցվի Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներին, կկատարելագործվի թմրամոլության ու թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարը կանոնակարգող իրավական դաշտը: |
| 130. | **«Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» և ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի** **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 1-ի N 354-Ն որոշմամբ հաստատված՝ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011թթ. բարեփոխումների ծրագրի 66.4-րդ կետից, ինչպես նաև պայմանավորված է ոստիկանության անձնակազմի իրավական պաշտպանության բարելավում ոստիկանության ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն իրականացնող մշտական գործող հանձնաժողովի ստեղծման անհրաժեշտությամբ: **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ոստիկանության ծառայողների նկատմամբ իրականացվող ծառայողական քննությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ ծառայողական քննություն իրականացնող մշտական գործող հանձնաժողովի ստեղծումը կնպաստի ոստիկանության անձնակազմի իրավական պաշտպանության առավել ամրապնդմանը: **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** Առաջարկվում է համապատասխան փոփոխություն կատարել «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքում: **2. Կարգավորման առարկան** «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է ստեղծել ոստիկանության ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն իրականացնող մշտական գործող հանձնաժողով: **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը կնպաստի ոստիկանության անձնակազմի իրավական պաշտպանության առավել ամրապնդմանը: |
| **ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգությանկարգավորման պետական կոմիտե** | |
| 131. | **«Միջուկային նյութերի հաշվառման և վերահսկման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի** **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** Նշված որոշման անհրաժեշտությունը բխում է «Միջուկային զենքի չտարածման պայմանագրի հետ կապված երաշխիքների կիրառման մասին» ՀՀ-ի և ԱԷՄԳ- |

| | |
|---|---|
| | ի միջև կնքված համաձայնագրի, «Միջուկային զենքի չտարածման պայմանագրի հետ կապված երաշխիքների կիրառման մասին» ՀՀ-ի և ԱԷՄԳ-ի միջև երաշխիքների կիրառման մասին համաձայնագրին կից լրացուցիչ արձանագրության ու անվտանգության նոր ստանդարտների պահանջներից, ինչպես նաև «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի պահանջից, համաձայն որի ՀՀ-ում միջուկային նյութերը ենթակա են պետական հաշվառման և վերահսկման:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ-ում միջուկային նյութերի հաշվառումն ու վերահսկումն իրականացվում էր ԱԷՄԳ նախկին ստանդարտներով: Առաջարկվող նախագիծը մշակված է միջուկային զենքի չտարածման պայմանագրի հետ կապված երաշխիքների կիրառման մասին ՀՀ-ի և ԱԷՄԳ-ի միջև երաշխիքների կիրառման մասին համաձայնագրին կից լրացուցիչ արձանագրության և ԱԷՄԳ-ի նոր ստանդարտների պահանջների հիման վրա: Նախագիծն անցել է փորձագիտական քննություն ԱԷՄԳ-ում և ԱՄՆ-ում և գտնվում է լրամշակման փուլում:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված որոշման ընդունմամբ միջուկային նյութեր արտադրող, օգտագործող կամ պահող կազմակերպությունները կունենան միջուկային նյութերի հաշվառման ընթացակարգ, հստակ սահմանված գործառույթներ, որոնց իրականացմամբ կապահովվի միջուկային նյութերի հաշվառումն ու վերահսկողությունը, միջուկային նյութերի ստացման պահից մինչև դրանց ազատելն ԱԷՄԳ-ի երաշխիքների կիրառումից:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշմամբ կսահմանվեն պետական հաշվառման և վերահսկման ենթակա միջուկային նյութերը, միջուկային նյութերի հաշվառման համար անհրաժեշտ տեխնիկական ընթացակարգերը, միջուկային տեղակայանքի, ատոմային էներգիայի օգտագործման այլ օբյեկտներում և պետական մակարդակով միջուկային նյութերի հաշվառմանը ներկայացվող պահանջները, միջուկային նյութերի հաշվառումից հանելու, հաշվառումը դադարեցնելու հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն ներկայացվող հաշվետվություններն ու տեղեկությունները, և հաշվառման ու վերահսկման հետ կապված հարաբերությունները;<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նշված որոշման ընդունմամբ ՀՀ–ում կստեղծվեն միջուկային նյութերի հաշվառման և վերահսկման համար անհրաժեշտ մեխանիզմներ, որոնք կնպաստեն միջուկային նյութերի կորստի, հափշտակության և անօրինական շրջանառության բացահայտմանն ու կանխմանը և կապահովեն «Միջուկային զենքի չտարածման պայմանագրի հետ կապված երաշխիքների կիրառման մասին» ՀՀ-ի և ԱԷՄԳ-ի միջև կնքված համաձայնագրի պարտականությունների կատարումը: |
| 132. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 24-ի N 400-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Նշված որոշման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ-ում նոր միջուկային տեղակայանքի կառուցմամբ, որը կարգավորող նոր պահանջներ է նախատեսում միջուկային տեղակայանքների շահագործման համար:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի N 400-Ն որոշումը մշակվել և ուժի մեջ է մտել հաշվի առնելով միայն գործող ատոմակայանի շահագործման հետ կապված հարաբերությունների կարգավորման դրույթները:<br>Նոր ատոմակայանի կառուցումը հրամայական է դարձնում նշված որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելը: Միջուկային նոր |

| | |
|---|---|
| | տեղակայանքի շահագործման հետ կապված շահագործող կազմակերպության կողմից շահագործման լիցենզիա ստանալու համար ներկայացվող փաստաթղթերի ամբողջ փաթեթի նկատմամբ սահմանվելու են նոր պահանջներ ու պայմաններ, ապահովվելու է ատոմակայանի անվտանգ շահագործումը։<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Փոփոխություններ են կատարվելու լիցենզիայի գործողության ժամկետի հետ կապված, մասնավորապես, ՀՀ կառավարության նշված որոշմամբ սահմանված է, որ միջուկային տեղակայանքի շահագործման լիցենզիան տրվում է 10 տարի ժամկետով, որը կիրառելի չէ նոր կառուցվող միջուկային տեղակայանքի համար։ Այստեղ տարբերակված մոտեցում պիտի կիրառվի։ Նմանատիպ փոփոխություններով ու լրացումներով միջուկային տեղակայանքների շահագործման լիցենզավորման կարգը հնարավորություն կտա կարգավորել գործող ատոմակայանի և նոր կառուցվող ատոմակայանների շահագործման լիցենզավորման հետ կապված հարաբերությունները։<br>**2. Կարգավորման առարկան**<br>Առաջարկվող փոփոխություններն ու լրացումները միջուկային տեղակայանքների շահագործման լիցենզավորման գործընթացում անվտանգության նոր մոտեցումներ կնախատեսեն։<br>**3. Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման կիրառման դեպքում կապահովվի նոր միջուկային տեղակայանքի շահագործման համապատասխանեցումն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության պահանջներին։ |
| 133. | **«Միջուկային տեղակայանքում շահագործման ժամանակ տեղի ունեցած միջադեպերի քննության և հաշվառման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1.Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նշված որոշման ընդունմամբ կսահմանվեն միջուկային տեղակայանքում շահագործման ժամանակ տեղի ունեցած միջադեպերի (վթարների)՝ ըստ ազդեցության (մարդկանց վրա ազդեցություն, շրջական միջավայրի վրա ազդեցություն և այլ) դասակարգումը, հաշվառման, տեղեկատվություն ներկայացնելու և քննություն անցկացնելու հետ կապված հարաբերությունները։<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Միջուկային տեղակայանքում շահագործման ժամանակ տեղի ունեցած միջադեպերի քննությունն ու հաշվառումն իրականացվում էր ԱԷՄԳ-ի նախկին ստանդարտներով: Առաջարկվող նախագիծը մշակված է ԱԷՄԳ-ի նոր ստանդարտների պահանջների հիման վրա։<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Որոշման մշակման հիմքում կդրվի Ատոմային էներգիայի միջազգային գործակալության միջուկային և ճառագայթային միջադեպերի միջազգային սանդղակը. կամրագրվեն միջադեպերի ընդլայնված ծավալը կարգավորող հարաբերությունները, այդ թվում՝ միջուկային տեղակայանքներում ռադիոակտիվ նյութերի ու ռադիոակտիվ աղբյուրների փոխադրման, օգտագործման ու պահեստավորման ժամանակ տեղի ունեցած միջադեպերի, վառելիքային ցիկլի հետ կապված միջադեպերի դասակարգումը, քննությունն ու հաշվառումը, ինչպես նաև ԱԷՄԳ-ի անդամ պետությունների միջև տեղեկատվության փոխանակումը։<br>**2. Կարգավորման առարկան**<br>Որոշման ընդունմամբ կամրագրվեն միջուկային տեղակայանքում շահագործման ժամանակ տեղի ունեցած միջադեպերի դեպքում մարդկանց և շրջակա միջավայրի վրա ռադիոակտիվ արտանետումների կանխարգելման համար անհրաժեշտ պատնեշներին ու հսկողությանը ներկայացվող պահանջները, միջադեպերի դասակարգումն ըստ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության միջուկային և ռադիոլոգիական վթարների ժամանակակից սանդղակի, և դրան համապատասխան կիրառվող կանխարգելիչ միջոցառումների իրականացումը, միջադեպերի քննության գնահատման կարգը, և այլ հարաբերություններ։<br>**3. Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվող արդյունքը** |

| | |
|---|---|
| | Որոշման կիրառման դեպքում կապահովվի միջուկային տեղակայանքում շահագործման ժամանակ տեղի ունեցած միջուկային և ճառագայթային վթարների հաշվառման, վերահսկման, քննության կազմակերպման և  անցկացման, միջադեպերի կանխմանն ուղղված միջոցառումների իրականացումը`  համաձայն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անվտանգության պահանջների: |
| **ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն** | |
| 134. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և միջադեպերի քննության անցկացման, դասակարգման և հաշվառման մասին» N 1777-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը:**<br>ՀՀ կառավարության N 1777-Ն որոշմամբ հաստատված` Հայաստանի Հանրապետության ավիացիոն պատահարների և միջադեպերի քննության անցկացման, դասակարգման և հաշվառման մասին կարգով  (այսուհետ` կարգ)  կանոնակարգվում են հետևյալ կարևոր խնդիրները`<br>1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օդանավերի (անկախ միջադեպի կամ պատահարի կատարման վայրից) և Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա պետությունների քաղաքացիական օդանավերի հետ տեղի ունեցած ավիացիոն պատահարների ու միջադեպերի քննությունների վարման և հաշվառման կարգը, ինչպես նաև դրանց կանխարգելման ուղղությամբ երաշխավորությունների ու միջոցառումների մշակումները.<br>2) այն դեպքերը, երբ Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է օդանավ շահագործողի պետություն կամ օդանավ շահագործողի ծածկագրերի համատեղ օգտագործման, կամ մեկից ավելի պետությունների օդանավ շահագործողների համատեղ գործունեություն իրականացնելու պայմանագրի կողմ հանդիսացող ընկերության պետություն, կամ երբ հետաքննությունն անցկացնող պետության հայտի հիման վրա Հայաստանի Հանրապետությունը, համաձայն 1944 թվականի դեկտեմբերի 7-ին Չիկագոյում ստորագրված Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին կոնվենցիայի (այսուհետ` կոնվենցիա) N 13 հավելվածի, տրամադրում է տեղեկություններ, սարքավորումներ կամ փորձագետների, կամ տրամադրում է ավիացիոն իրադարձության վայրում հետաքննություն անցկացնելու համար անհրաժեշտ օպերատիվ բազա, կամ մասնակցում է որոնողական-փրկարարական կամ բեկորների դուրսբերման գործողություններին:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Կարգն ապահովում է վերոհիշյալ 1-ին կետում նշված գործառույթների կատարումը համաձայն միջազգային նորմերի: Կարգում փոփոխությունների անհրաժեշտությունն առաջացել է կոնվենցիայի N 13 հավելվածում Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) կողմից նոր փոփոխությունների ընդունմամբ, որոնք ուղղված են միջադեպերի և պատահարների քննության վերաբերյալ ընթացակարգերի արդիականացմանը և պարզեցմանը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Կոնվենցիայի պահանջներին կարգի համապատասխանեցման նպատակով առաջարկվում է կարգում ներառել կոնվենցիայի N 13 հավելվածի փոփոխությունները:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կարգավորման առարկա է հանդիսանում ավիացիոն պատահարների և միջադեպերի քննության անցկացման, դասակարգման և հաշվառման կարգը:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Կարգում կոնվենցիայի N 13 հավելվածի փոփոխությունների ներառումը կապահովի կարգի արդիականացումը և համապատասխանությունը միջազգային նորմերին: |
| 135. | **<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի մասին»  N 1307-Ն  որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության** |

<table>
<tr><td></td><td>

**որոշման նախագծի**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի մասին» N 1307-Ն որոշման մեջ լրացումների և փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը պայմանավորված է Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին կոնվենցիայի (ԻԿԱՕ) «Անվտանգություն» N 17 հավելվածում ԻԿԱՕ-ի և եվրահանձնաժողովի կողմից ընդունված ավիացիոն անվտանգության նոր չափորոշիչներին համապատասխանեցմամբ:

**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և խնդիրները**

Նկատի ունենալով քաղաքացիական ավիացիայի ոլորտի ընդհանուր դինամիկ զարգացումը, որի արդյունքում առաջանում են նոր մարտահրավերներ, ավիացիոն անվտանգության ոլորտում անհրաժեշտություն է առաջանում արագ արձագանքել այդ մարտահրավերներին, ինչին կարելի է հասնել համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով:

**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին կոնվենցիայի (ԻԿԱՕ) Անվտանգություն» N 17 հավելվածին համապատասխանեցնելու նպատակով առաջարկվում է կարգում ներառել (ԻԿԱՕ) N 17 հավելվածում տեղ գտած փոփոխությունները և Եվրամիության կողմից ընդունված ավիացիոն անվտանգության չափորոշիչները (doc. 30 «Անվտանգության կանոնակարգերե):

**2.Կարգավորման առարկան**

Տվյալ փոփոխությունների կարգավորման առարկան կհանդիսանա քաղաքացիական ավիացիայում ավիացիոն անվտանգության ազգային ծրագրով սահմանված` ուղևորների, նրանց ձեռքի իրերի, ուղեբեռների, բեռի և փոստի ավիացիոն անվտանգության հսկողության միջոցառումները:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Արդյունքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի ոլորտի ավիացիոն անվտանգությանը վերաբերվող հատվածի հիմնական փաստաթղթերից մեկը կներդաշնակեցվի ԻԿԱՕ-ի և այլ միջազգային կազմակերպությունների արդի պահանջներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում ավելի կբարձրացվի իրականացվելիք ավիացիոն անվտանգության հսկողության միջոցառումների մակարդակը:

</td></tr>
<tr><td colspan="2">

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**

</td></tr>
<tr><td>136.</td><td>

**ՀՀ քրեական օրենսգրքի տնտեսական բնույթի հանցագործություններին վերաբերող մի շարք հոդվածներում քրեական պատժամիջոցներին զուգահեռ` այլընտրանքային (ֆինանսական) պատասխանատվության միջոցների կիրառման ուսումնասիրություն և համապատասխան օրինագծի մշակում և ներկայացում**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**

ՀՀ քրեական օրենսգրքի` տնտեսական բնույթի հանցագործություններին վերաբերող մի շարք հոդվածներում (օրինակ` 188-րդ, 189-րդ, 193-րդ, 194-րդ, 203-րդ, 205-րդ, 206-րդ 207-211-րդ և այլ հոդվածներ) նախատեսվում է քրեական պատժամիջոցների կիրառում հանցագործություն կատարած անձանց նկատմամբ: Տվյալ գործընթացի թույլ կողմերից է` հանցագործությունների արդյունքում պետությանը պատճառված վնասների ամբողջական հատուցումը:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, տնտեսական հանցագործությունների դեմ պայքարը և այդ հանցագործությունների հետևանքով պետությանը պատճառած վնասների վերականգնման գործընթացն առավել արդյունավետ է այն երկրներում, որտեղ գործում է այդ հանցագործությունների համար քրեական կամ ֆինանսական պատասխանատվության այլընտրանքի մեխանիզմ:

**2. Միջոցառման կարգավորման առարկան**

</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | Միջոցառման կարգավորման առարկան մի շարք տնտեսական հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից բացի այլընտրանքային՝ ֆինանսական պատասխանատվության միջոցների սահմանումն է: <br><br> **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br> Ուսումնասիրության արդյունքներով մշակման ենթակա օրենսդրական լրացումները և փոփոխությունները պետք է նպատակաուղղված լինեն տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը և ՀՀ պետական բյուջեի մուտքերի աճի ապահովմանը՝ ի հաշիվ հանցագործությունների հետևանքով պետությանը պատճառված վնասի հատուցումների: |
| 137. | **«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի** <br><br> **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** <br> «Հարկերի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքներում փոփոխությունների կատարումը պայմանավորված է հարկ վճարողների գերավճարների և փաստացի վճարումների հաշվին հարկային և սոցիալական վճարների պարտավորությունների դիմաց (և հակառակը) հաշվանցման մեխանիզմների նույնականացմամբ, ինչը պարզեցնելու է էլեկտրոնային եղանակով հաշվանցումների կատարումը: <br> **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները** <br> Գործող օրենսդրության շրջանակներում գրավճարների և փաստացի վճարումների հաշվին հարկային և սոցիալական վճարների պարտավորությունների դիմաց (և հակառակը) հաշվանցման տարբեր մեխանիզմների առկայությունը զգալիորեն բարդացնում է էլեկտրոնային եղանակով հաշվանցումների կատարումը: <br><br> **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները** <br><br> Նշված խնդրի լուծման նպատակով նախատեսվում է կատարել փոփոխություններ «Հարկերի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքներում և դրանց կից N 1 հավելվածում: <br><br> **2. Կարգավորման առարկան** <br><br> Միջոցառման կարգավորման առարկան գերավճարների և փաստացի վճարումների հաշվին հարկային և սոցիալական վճարների պարտավորությունների դիմաց (և հակառակը) հաշվանցումների կատարումն է: <br><br> **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը** <br><br> Օրենսդրական փոփոխությունների հետևանքով հնարավոր է լինելու պարզեցնել գերավճարների և փաստացի վճարումների հաշվին հարկային և սոցիալական վճարների պարտավորությունների դիմաց (և հակառակը) հաշվանցումների կատարումն էլեկտրոնային եղանակով: |
| 138. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 20-ի N 502-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի** <br><br> **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)** <br> ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է որոշմամբ հաստատված ցանկի և օտարերկրյա անձանց կողմից ակնհայտ առևտրային քանակության ապրանքների ներմուծման ռեժիմների վերանայման անհրաժեշտությամբ: |

| | |
|---|---|
| | **1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս կան խնդիրներ՝ կապված հատկապես Վրաստանի Հանրապետության սահմանամերձ շրջաններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող գյուղատնտեսական ապրանքների բնահիրային չափերի հետ։ Բացի դրանից՝ ցանկում ընդգրկված են ապրանքներ, որոնց ներմուծման նկատմամբ այլ իրավական ակտերով սահմանված են արգելքներ կամ սահմանափակումներ։<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**<br>Առաջարկվում է մեծացնել ցանկում ընգրկված մի շարք գյուղատնտեսական ապրանքների ներմուծման համար սահմանված բնահիրային չափերը, ինչպես նաև ցանկից հանել բոլոր այն ապրանքները, որոնց ներմուծումն արգելված է կամ սահմանված են ոչ սակագնային կարգավորման միջոցներ։ Առաջարկվում է վերանայել նաև որոշմամբ նախատեսված ռեժիմները՝ օտարերկրյա անձանց կողմից ՀՀ ներմուծվող ակնհայտ առևտրային քանակության ապրանքների ներմուծման համար նախատեսելով նաև այլ մաքսային ռեժիմներ։<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կարգավորման առարկան որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված որոշ ապրանքների բնահիրային չափերի մեծացման, ցանկի կրճատման, ինչպես նաև օտարերկրյա անձանց կողմից ներմուծվող ակնհայտ առևտրային քանակության ապրանքների ներմուծման նոր ռեժիմների նախատեսման հետ կապված հարաբերություններն են։<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման դեպքում ակնկալվում է օտարերկրյա անձանց կողմից ներմուծվող ակնհայտ առևտրային քանակության ապրանքների բնահիրային սահմաններում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» և «Վերաներմուծում» մաքսային ռեժիմներից բացի նախատեսել նաև այլ մաքսային ռեժիմներով ապրանքների ներմուծման հնարավորություն, պարզեցնել սահմանամերձ շրջաններից գյուղատնտեսական ապրանքների ներմուծման հետ կապված ընթացակարգը և կրճատել որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված այն ապրանքները, որոնց համար այլ իրավական ակտերով սահմանված են արգելքներ կամ սահմանափակումներ։ |
| 139. | **«Հայաստանի Հանրապետության տարածքում առաքվող, տեղափոխվող կամ վաճառվող ձեռնարկատիրական գործունեության առարկաների և դրանց գների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային եղանակով վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Նախագիծը մշակվել է ի կատարումն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի N 4 հավելվածի, որով նախատեսվում է ՀՀ կառավարության որոշմամբ հաստատել ՀՀ տարածքում առաքվող, տեղափոխվող կամ վաճառվող ձեռնարկատիրական գործունեության առարկաների և դրանց գների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային եղանակով վարման կարգը։<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ձեռնարկատիրական գործունեության առարկաների և դրանց գների գրանցման (հաշվառման) հարցերը կարգավորվում են ՀՀ կառավարության 1997 թվականի հուլիսի 31-ի N314 և N315 որոշումներով, իսկ պատասխանատվության միջոցները նախատեսված են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով։ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով օրենքը լրացվում է N4 հավելվածով, որով սահմանվում է ՀՀ տարածքում առաքվող, տեղափոխվող կամ վաճառվող ձեռնարկատիրական գործունեության առարկաների և դրանց գների գրանցման (հաշվառման) կարգը։ Նախագծով նախատեսվում է, որ 2012 թվականի հունվարի 1-ից սկսած հարկ վճարողները կարող են իրենց հաշվառման հարկային մարմին ներկայացնել վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով հայտ՝ առաքման կամ վաճառքի վայրում, առաքման կամ վաճառքի կետում ՀՀ տարածքում առաքվող, տեղափոխվող կամ վաճառվող ձեռնարկատիրական գործունեության առարկաների ու դրանց գների գրանցումը (հաշվառումը) ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով վարելու համար։ |

| | |
|---|---|
| | Ստեղծված իրավիճակում առկա խնդիրներն են՝<br>• ՀՀ տարածքում առաքվող, տեղափոխվող կամ վաճառվող ձեռնարկատիրական գործունեության առարկաների ու դրանց գների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային եղանակով վարման կարգի և ընթացակարգերի սահմանումը.<br>• էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների ներդրման դեպքում ձեռնարկատիրական գործունեության առարկաների հաշվառման (գրանցման) հարցերի կարգավորումը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ներկայացվող նախագծով առաջարկվում է՝<br>1) սահմանել ձեռնարկատիրական գործունեության առարկաների և դրանց գների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային եղանակով վարման կարգը՝ հարկ վճարողին հնարավորություն ընձեռելով կամովին ընտրել ձեռնարկատիրական գործունեության առարկաների և դրանց գների գրանցման (հաշվառման) եղանակը.<br>2) սահմանել էլեկտրոնային եղանակով գրանցման (հաշվառման) անցնելու ընթացակարգերը.<br>3) սահմանել ձեռնարկատիրական գործունեության առարկաների և դրանց գների գրանցման (հաշվառման) էլեկտրոնային եղանակով վարման կարգն ու առանձնահատկությունները:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br><br>Նախագծի կարգավորման առարկան ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման (հաշվառման) առումով հարկային հաշվառման հստակեցումն ու պարզեցումն է:<br><br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ակնկալվում է, որ նախագծի ընդունման արդյունքում կկանոնակարգվեն ձեռնարկատիրական գործունեության առարկաների ու դրանց գների գրանցման (հաշվառման) և դրա նկատմամբ հարկային հսկողության արդյունավետության բարձրացման հարցերը: Նախագիծը կկանոնակարգի Հայաստանի Հանրապետությունում փաստաթղթաշրջանառության հետ կապված հարցերը, հարկային հաշվառմանը վերաբերող գրանցումների առկա խնդիրները՝ դրանք հստակեցնելու և պարզ ընթացակարգեր սահմանելու միջոցով: Հարկ վճարողներին հնարավորություն կընձեռվի առավել արդյունավետ կազմակերպելու հարկային գրանցումներին առնչվող աշխատանքները՝ դրանով էապես կրճատելով նաև հարկային հաշվառման և գրանցումների համար տրամադրվող ժամանակը: |
| 140. | **«ՀՀ ԿԱ ՊԵԿ (հարկային) վարչարարության ռազմավարության 2012-2014թթ. եռամյա ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ ԿԱ ՊԵԿ (հարկային) վարչարարության ռազմավարության նոր եռամյա ծրագրի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է հարկային վարչարարության բնագավառում 2012-2014թթ. իրականացվելիք բարեփոխումների հիմնական ուղղությունների որոշմամբ, տեսանելի ապագայում հարկային մարմնի առաքելության սահմանմամբ, ինչպես նաև հարկային մարմնում ընդհանուր նպատակների շուրջ համախմբվածության և համագործակցության մշակույթի ամրապնդմամբ:<br>**1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում գործում է ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 7-ի «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների (հարկային և մաքսային) վարչարարության ռազմավարության 2008-2011 թթ. ծրագիրը հաստատելու մասին» N 941-Ն որոշումը: Ծրագրում սահմանված նպատակների իրագործման համար սահմանվել է վերջնաժամկետ՝ 2011 թ: Ծրագրի ավարտից հետո (2011 թ.) հարկային մարմինը կանգնելու է նոր եռամյա ծրագրի մշակման խնդրի առջև: |

| | |
|---|---|
| | **1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նշված խնդրի լուծման համար ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից մշակված ռազմավարական ծրագրի կառավարման ընթացակարգին համապատասխան առաջարկվում է մշակել հարկային վարչարարության ռազմավարության նոր 2012-2014թթ. եռամյա ծրագիրը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Նախագծի կարգավորման առարկան ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի (հարկային) վարչարարության ռազմավարության 2012-2014թթ. ծրագրի մշակումն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Նախագծի ընդունմամբ կգործի հարկային վարչարարության ռազմավարության նոր ծրագիրը, որի արդյունքում կսահմանվեն հարկային վարչարարության բարեփոխումների հիմնական ուղղությունները՝ եռամյա կտրվածքով և վերջիններիս իրագործմանն ուղղվող հիմնական քայլերը: |
| 141. | **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 24-ի N 236 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է մաքսային հայտարարագրի էլեկտրոնային եղանակով ներկայացնելու արդյունքում, ինչպես նաև մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի մոնիթորինգի կազմակերպման նպատակով մաքսային հսկողության մեթոդիկայի հստակեցման անհրաժեշտությամբ:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս գործող որոշմամբ հստակեցված չեն մաքսային հայտարարագրի էլեկտրոնային եղանակով ներկայացման հետ կապված, ինչպես նաև մաքսային ձևակերպումների առանձին փուլերի էլեկտրոնային հաշվառումը կատարող պաշտոնատար անձի կողմից իրականացվող գործողությունները:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է հստակեցնել էլեկտրոնային հայտարարագրման համակարգի կիրառման հետ կապված մաքսային հսկողության իրականացման մեթոդիկան:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կարգավորման առարկան մաքսային ձևակերպումների առանձին փուլերի էլեկտրոնային հաշվառումը կատարող պաշտոնատար անձի կողմից իրականացվող գործողությունների հստակեցումն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Որոշման ընդունման դեպքում ակնկալվում է էլեկտրոնային հայտարարագրման համակարգի կիրառման, ինչպես նաև մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի մոնիթորինգի կազմակերպման ժամանակ պաշտոնատար անձի կողմից իրականացվող գործողությունների իրավական հիմքի ապահովում: |
| **ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե** | |
| 142. | **«2012-2016 թվականներին ՋՕԸ-ներին ընթացիկ դրամաշնորհների տեսքով պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացի կանոնակարգման մասին» ՀՀ կառավարութան որոշման նախագծի ընդունման** |

| | |
|---|---|
| | **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>«2012-2016 թթ. ՋՕԸ-ներին ընթացիկ դրամաշնորհիների տեսքով պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացի կանոնակարգման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը նպատակ ունի նպաստել ոռոգման ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացմանն ու շարունակականության ապահովմանը, ինչպես նաև աջակցել ջրօգտագործողների ընկերություններին՝ ֆինանսական վիճակի բարելավման ու ինստիտուցիոնալ կարողությունների հետագա հզորացման հարցերում:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Հաշվի առնելով ՋՕԸ-ների ֆինանսական վիճակի զգայունության նշանակալի աստիճանը և նպատակ ունենալով նպաստել ՋՕԸ-ների ֆինանսական դիրքի կայունությանը՝ դրամաշնորհիների տեսքով պետական ընթացիկ ֆինանսական աջակցության ծավալների կրճատմանը զուգընթաց ՀՀ կառավարությունը մտադիր է 2012 թվականից ներդնել կրեդիտորական պարտավորությունների կրճատման նպատակով ՋՕԸ-ներին բյուջետային փոխառությունների տրամադրման պրակտիկան:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Նախագծի ընդունումը հնարավորություն կտա պետական ընթացիկ ֆինանսական աջակցություն տրամադրելու միջոցով բարձրացնել ոռոգման ջրի մատչելիությունը՝ կրճատելով ոռոգելի հողատարածքների նվազման հավանական ռիսկերն ու նպաստել փաստացի ոռոգվող հողատարածքների ավելացմանը:<br>**2.** Կարգավորման առարկան<br>Կարգավորման առարկան ոռոգման ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացման ու շարունակականության ապահովումն է:<br>**3.Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՋՕԸ-ների ֆինանսական վիճակի բարելավում՝ ամրապնդելով ընթացիկ ծախսածածկման հնարավորինս բարձր մակարդակի ապահովման նախադրյալներ: Նախագծի ընդունումը նաև հնարավորություն կտա բարելավել ոռոգման համակարգին առնչվող առանցքային խնդիրները՝ հստակեցնելով հարկային վարչարարությունն ու ընթացակարգերը, ինչպես նաև լուծել հարկային հարաբերություններին առնչվող առանցքային խնդիրները: |
| 143. | **«Սևանա լճից ոռոգման նպատակով ջրառի իրականացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման**<br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>«Սևանա լճից ոռոգման նպատակով ջրառի իրականացման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքով:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 3-ի N 667-Ա որոշմամբ ոռոգման նպատակով Սևանա լճից ջրառի առավելագույն չափաքանակ է սահմանվել 144.5 մլն խոր. մետր: ՀՀ կառավարության 2010 թ. սեպտեմբերի 9-ի N 1158-Ա որոշմամբ ընդունվել է «ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 3-ի N 667-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով նախատեսվել է Սևանա լճից ոռոգման նպատակով բաց թողնել 168.9 մլն խոր. մետր ջրաքանակ:<br>2010 թ. նոյեմբերի 15-ի դրությամբ Սևանա լճից բաց է թողնվել 156.44 մլն խոր. մետր ջուր: Սևան-Հրազդան էներգետիկ-իրիգացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող հողերը ոռոգելու համար անհրաժեշտ է Սևանա լճից բաց թողնել համապատասխան ջրաքանակ:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Ջրային օբյեկտներից հնարավոր ջրառի տարբերության չափով պահանջարկի բավարարում:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Սևան-Հրազդան իրիգացիոն-էներգետիկ համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող հողատարածքների վրա մշակվող |

| | |
|---|---|
| | գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման ջրի ապահովման գործընթացի իրականացում:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>Ջրօգտագործողներին անհրաժեշտ քանակի ոռոգման ջրով ապահովում: |
| 144. | **«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ՌԻՄ մասնավոր կառավարման գործընթացի շարունակության ապահովման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**<br>Կառավարության որոշման նախագծի ընդունումն անհրաժեշտ է, որպեսզի իրականացվի «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող ջրային համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման հետագա ընթացքը:<br>**1.1. կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>«Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կառավարումը 2004 թվականի օգոստոս ամսվանից իրականացնում է ֆրանսիական ՍԱՈՒՐ Ս.Ա ընկերությունը: Կառավարման պայմանագրի ավարտից հետո անհրաժեշտ է որոշել կառավարման գործընթացի հետագա ընթացքը, որը հնարավորություն կտա որոշել պետական և մասնավոր հատվածների համագործակցության արդյունավետ տարբերակը:<br>**1.2. առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>ՀՀ կառավարության որոշման ընդունումը նպատակաուղղված է ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում իրականացվող բարեփոխումների շարունակմանը, ջրային համակարգերի կառավարման գործում մասնավոր հատվածի մասնակցության հետագա խորացմանը և սպառողներին մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակի ու արդյունավետության բարձրացմանը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Կարգավորման առարկան «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից օգտագործվող ջրային համակարգերի արդյունավետ կառավարումն է:<br>**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է շարունակել ջրային տնտեսության ոլորտի կառավարման բարեփոխումները, բարելավել «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպառողներին մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակը, ինչպես նաև բարձրացնել ջրային համակարգերի օգտագործման արդյունավետությունը: |
| | **ՀՀ կենտրոնական բանկ** |
| 145. | **«Հայաստանի Հանրապետությունում հիփոթեքային հավաստագրերի ներդրման և գրանցման գործընթացի էլեկտրոնայնացման միջոցով հիփոթեքային վարկերի փոխանցման գործընթացի բարեփոխման մասին հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հիփոթեքային վարկերի փոխանցման ժամանակ իրավունքների գրանցման գործընթացի բարեփոխումը պայմանավորված է ներկա պայմաններում երկրորդային հիփոթեքային շուկայի ստեղծման, մասնավորապես, հիփոթեքային վարկերի արժեթղթավորման անհրաժեշտությամբ: Հիփոթեքային արժեթղթավորման ժամանակ ենթադրվում է մեծ թվով վարկերի պորտֆելի անընդհատ փոխանցում, ինչը հնարավոր է միայն գործընթացի դյուրին լինելու դեպքում:<br>Ներկայումս հիփոթեքային վարկերի փոխանցման և գրանցման գործընթացն իրականացվում է բացառապես թղթային տարբերակով: Մասնավորապես, համաձայն ՀՀ օրենսդրության՝ պահանջի իրավունքի զիջման արդյունքում՝ որպես դրա հետևանք, նոր պարտատիրոջն (վարկատուին) են փոխանցվում |

| | |
|---|---|
| | հիփոթեքային վարկի ապահովման միջոց հանդիսացող իրավունքները, այսինքն՝ անշարժ գույքի նկատմամբ գրավի իրավունքը՝ առանց հավելյալ գրավի իրավունքի փոխանցման պայմանագիր կնքելու: Այդ իրավունքը, ինչպես անշարժ գույքի հետ կապված ցանկացած իրավունք, պետք է գրանցվի ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից: ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տվյալ իրավունքը գրանցելու համար նոր պարտատերը (վարկատուն) պետք է թղթային տարբերակով ներկայացնի պահանջի իրավունքի զիջման պայմանագիրը, գրավի վկայականի համար պետական տուրքի վճարման անդորրագիրը և այլ թղթային փաստաթղթեր, որի արդյունքում 3 աշխատանքային օրվա ժամկետում նոր պարտատերը կստանա գրավի նոր վկայական:<br>Արժեթղթավորման ժամանակ ենթադրվում է մեծ թվով վարկերի պորտֆելի փոխանցում, որը ներկայումս գործող համակարգի դեպքում ժամանակատար և ծախսատար գործընթաց է, որն էլ  անհնարին է դարձնում այդ վարկերի արագ և արդյունավետ փոխանցումը:<br>Հետևաբար անհրաժեշտ է հնարավորինս ստանդարտացնել հիփոթեքային վարկերի գծով պահանջի զիջման գործընթացում օգտագործվող փաստաթղթերը և ընթացակարգերը, որը հիմքեր կստեղծի գործընթացի էլեկտրոնայնացման համար:<br>Բացի նշվածից՝ հիփոթեքային վարկերի փոխանցման ժամանակ պահանջի իրավունքի զիջման վերաբերյալ ընդհանուր դրույթները կիրառելիս առաջանում են մի շարք պրակտիկ խոչընդոտներ՝ հիմնականում կապված փոխանցվող իրավունքների ծավալի, նոր պարտատիրոջ նկատմամբ պարտապանի պահանջների և իրավունքների փոխանցման վավերության հետ, որոնք պետք է հաշվի առնվեն բարեփոխման ժամանակ:<br><br>**1. Կարգավորման առարկան**<br><br>Սույն իրավական ակտով ներկայացվելու են հիփոթեքային հավաստագրերի ներդրման և գրանցման գործընթացի էլեկտրոնայնացման համակարգի ներդրման անհրաժեշտությունը, ՀՀ-ում հիփոթեքային վարկերի փոխանցման ժամանակ պահանջի իրավունքի զիջման հետ կապված խոչընդոտները, ոլորտի վերաբերյալ միջազգային լավագույն փորձը և ՀՀ-ում առաջարկվող մոդելի նկարագրությունը և ակնկալվող արդյունքները:<br><br>**2. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**<br><br>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է ՀՀ-ում ներդնել հիփոթեքային հավաստագրերի միջոցով հիփոթեքային վարկերի փոխանցման էլեկտրոնային համակարգ, որը հնարավորություն կտա՝<br>1) ստանդարտացնել նշված գործընթացը.<br>2) նվազեցնել գրանցման հետ կապված ծախսատարությունը և ժամանակատարությունը.<br>3) խուսափել բոլոր այն հիմնական պրակտիկ թերություններից, որոնք առկա են պահանջի իրավունքի զիջման կիրառվող ընդհանուր դրույթների ժամանակ:<br>Նշված համակարգի ներդրումը խթան է հանդիսանալու ՀՀ հիփոթեքային երկրորդային շուկայի ձևավորման և կայացման համար: |
| 146. | **«Հայաստանի Հանրապետությունում բժշկական ապահովագրության զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի**<br><br>**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)**<br><br>Բժշկական ապահովագրության իրականացման անհրաժեշտությունը ՀՀ-ում պայմանավորված է այն խնդիրներով, որոնք առկա են ՀՀ ապահովագրական և առողջապահական համակարգերում, մասնավորապես, բժշկական ապահովագրության մշակույթի բացակայություն, |

առողջապահության ոլորտի անարդյունավետ ֆինանսավորման համակարգի առկայություն, մասնավոր հատվածի կողմից «գրպանիցե ծախսերի իրականացում, առողջապահության ոչ արդյունավետ համակարգ:

Այս հայեցակարգի հիմնական նպատակը ՀՀ ապահովագրական և առողջապահական համակարգերում առկա խնդիրների վերացումն է, մասնավորապես`

1. Բժշկական ապահովագրության թերզարգացած համակարգի առկայություն.

Ներկայումս ՀՀ-ում կամավոր բժշկական ապահովագրության միջոցով ֆինանսավորվում է ընդհանուր առողջապահական ծախսերի 0.24%-ը, որը ենթադրում է բժշկական ապահովագրության նկատմամբ բավարար պահանջարկի բացակայություն: Միևնույն ժամանակ, ՀՀ-ում կայացած չէ ապահովագրության իրականացման մշակույթը, որի պայմաններում հնարավոր չէ ապահովել կայուն բժշկական ապահովագրության համակարգի էվոլյուցիոն զարգացում:

2. Առողջապահության ոլորտում որակի կառավարման համակարգի բացակայություն.

Բժշկական ապահովագրության զարգացումը էապես կնպաստի առողջապահության ոլորտում որակի բարձրացմանը, քանի որ միաժամանակ և ապահովագրված անձինք, և ապահովագրական ընկերությունները կսկսեն վերահսկել ապահովագրական փաթեթի շրջանակում մատուցվող առողջապահական ծառայությունների որակը:

3. Պետական առողջապահական հստակ քաղաքականության իրականացման հնարավորության սահմանափակում.

Այս խոչընդոտը պայմանավորված է ֆինանսական հոսքերի անկանխատեսելիությամբ, ռիսկերի օպտիմալ բաշխման անհնարինությամբ, ինչպես նաև ապահովագրական ընկերությունների կողմից հնարավոր չարաշահումներով:

4. Համապատասխան առողջապահական ինստիտուտների և ապահովագրական ընկերությունների միջև թերի համագործակցություն.

Բժշկական ապահովագրության համակարգի զարգացումը Հայաստանում կնպաստի առողջապահական և ապահովագրական ընկերությունների միջև համագործակցության արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև նշված ոլորտների մասնակիցների գործունեության բարելավմանը:

Ինչպես վկայում է բժշկական ապահովագրության զարգացման միջազգային փորձի ուսումնասիրությունը, կամավոր հիմունքներով բժշկական ապահովագրության զարգացումը գրեթե անհնար է: Ուստի բժշկական ապահովագրության զարգացման հայեցակարգի մշակումը, ինչպես նաև այդ ուղղությամբ գործնական միջոցառումների իրականացումը դառնում է հրատապ և շատ կարևոր:

**2. Կարգավորման առարկան**

Սույն իրավական ակտով ներկայացվելու են բժշկական ապահովագրության համակարգի ներդրման անհրաժեշտությունը, ոլորտի վերաբերյալ միջազգային լավագույն փորձը, ՀՀ առողջապահական համակարգի նկարագրությունը, ՀՀ-ում առաջարկվող մոդելի նկարագրությունը, առաջարկվող մոդելի ներդրման հնարավոր մոտեցումները և յուրաքանչյուր մոտեցման դեպքում ակնկալվող արդյունքները:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Հայաստանի Հանրապետությունում բժշկական ապահովագրության զարգացման հայեցակարգի իրականացումը կնպաստի՝

1) բժշկական ապահովագրության մշակույթի զարգացմանը.
2) առողջապահության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը.
3) պետության առանցքային սոցիալական խնդրի լուծմանը, այն է` բնակչության առողջության պահպանմանը.
4) առողջապահական ծառայությունների որակի բարձրացմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունվարի 13-ի N 111 - Ն որոշման

# Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ Ն Ե Ր
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

| NN<br>ը/կ | Հիմնավորումներ |
|---|---|
| 1 | **2** |
| ՀՀ տարածքային կառավարման նախարարություն | |
| 1. | **Համայնքային բյուջեների եկամտային մասի ավելացում և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կատարվող ծախսերի մոնիթորինգի իրականացում**<br><br>• **Սահմանել պարտադիր լիազորությունների իրականացման կարգերը, նորմատիվներն ու չափորոշիչները (քաղաքաշինության բնագավառ)**<br>ՀՀ Սահմանադրության 107-րդ հոդվածի համաձայն` «Համայնքի ղեկավարի լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են օրենքով»: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն` «Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են օրենքով:»: Քայլի իրականացմամբ բավարարվում են ՀՀ Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջները:<br><br>• **Սահմանել համայնքներին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման կարգերն ու ֆինանսավորման** |

| | |
|---|---|
| | **մեխանիզմները (սոցիալական ծառայության բնագավառ)**<br>ՀՀ Սահմանադրության 107-րդ հոդվածի համաձայն` «Համայնքի ղեկավարի լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են օրենքով: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ «Պետության պատվիրակված լիազորություններն իրականացվում են օրենքով կամ ՀՀ կառավարության սահմանած կարգով: Քայլի իրականացմամբ բավարարվում են ՀՀ Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջները:<br><br>• **Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղական հարկերի մասով հարկային վարչարարության բարձրացում (2010 թ. ապրիլի 27-ի «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-51 ՀՀ օրենքի կիրարկում)**<br>Տեղական հարկերի համակարգի ներդրումը նախատեսված է ՀՀ կառավարության կողմից ընդունված՝ Հայաստանի Հանրապետությունում տեղական հարկերի հայեցակարգում: Ըստ հայեցակարգի 2-րդ մասի 1-ին կետի «դ» ենթակետի` տեղական հարկերի նկատմամբ հարկային վարչարարությունն ամբողջությամբ իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:<br>Հարկային վարչարարությունը ներառում է հարկային բազաների վարումը (հաշվառում, փոփոխություններ և այլն), հարկերի գումարների հաշվարկումը, գանձումը, գրանցումը և վերահսկումը:<br>«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման և տեղական հարկերի մասով հարկային վարչարարության բարձրացման արդյունքում կընդլայնվեն համայնքների ֆինանսական կարողությունները, ինչը կբերի համայնքների կողմից մատուցվող ծառայությունների ծավալի և որակի բարձրացմանը:<br>• **Իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ծախսերի օբյեկտիվ կարիքների ուսումնասիրության և այլ չափանիշների վրա հիմնված, տեղական բյուջեների եկամտային մասի շարունակական աճն ապահովող միջոցառումներ (համայնքների բյուջեների ծախսերի եռամյա և եկամուտների ամենամյա մոնիթորինգ, վարչարարության բարձրացում, Տեղական տուրքերի և վճարների հայեցակարգի մշակում)**<br>Տեղական բյուջեների եկամտային մասի շարունակական աճն ապահովող միջոցառումների իրականացումը պայմանավորված է համայնքների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի և քանակի բարձրացման անհրաժեշտությամբ: Ի թիվս այլ միջոցառումների` 2011 թվականի ընթացքում նախատեսվում է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Տեղական տուրքերի և վճարների հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: |
| 2. | **Հայաստանում տեղական ինքնակառավարման օրենսդրական բազայի և տեղական մակարդակում հանրային կառավարման արդյունավետության բարելավում**<br><br>• **Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավում: Համատիրությունների ու բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում իրավասությունների հստակեցման, մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման և շահագործման ոլորտի բարեփոխումների 5-ամյա ծրագրի ընդունում, դրանից բխող միջոցառումների իրականացում**<br>Կարևորելով բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքի պահպանման ու արդիականացման դերը, ՀՀ վարչապետի 17.08.2010 թ. N 649-Ն որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը վեցամսյա ժամկետում պետք է մշակի բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման և շահագործման ոլորտի բարեփոխումների 5-ամյա ծրագիր՝ մշակման աշխատանքներին ներգրավելով |

միջազգային փորձագետ: Նոր մոդելի ներդրումն ու կիրառումն ապահովելու համար անհրաժեշտ է, որ այն ուղեկցվի երկարաժամկետ հատվածում բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման և շահագործման շարունակականությունն ու կայունությունն ապահովող միջոցառումներով: Ի թիվս այլ միջոցառումների՝ 2011 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել ծրագրից բխող միջոցառումները:

- **Վարչատարածքային բարեփոխումների իրականացմանն ուղղված ուսումնասիրությունների շարունակություն և Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի վերջնական լրամշակման արդյունքում՝ մոդելային ծրագրերի մշակում**
- Համայնքների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, ֆինանսական միջոցներն առավել օպտիմալ և նպատակային օգտագործելու և դրա արդյունքում սեփական և պետության պատվիրակված լիազորությունների արդյունավետ իրականացման նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարության նախաձեռնությամբ և մասնակցությամբ մշակվեց համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը, որը ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ 2008 թվականի դեկտեմբերի 18-ի նիստի ընթացքում: ՀՀ վարչապետի 2009 թվականի մայիսի 26-ի N 427-Ա որոշմամբ ստեղծվեց համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգի, ինչպես նաև միջոցառումների ծրագրերի հրապարակային և մասնակցային քննարկումների, միջազգային փորձագիտական գնահատականների հաշվի առնման արդյունքում վերջնական լրամշակման գործընթացը կազմակերպող միջգերատեսչական հանձնաժողով, որն իր հերթին բաժանվել է երեք աշխատանքային խմբի՝ համայնքների խոշորացման հարցերի, միջհամայնքային միավորումների ձևավորման հարցերի, հանրային մասնակցության ու իրազեկման հարցերի: Համայնքների խոշորացման հարցերի աշխատանքային խմբի կողմից միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն են ներկայացվել մի շարք համայնքների խոշորացման պիլոտային ծրագրեր: Դրանք քննարկվել են նաև համապատասխան համայնքներում, ինչի արդյունքում էլ ավելի ակնհայտ է դարձել վարչատարածքային բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը: Գերմանական Տեխնիկական համագործակցության ընկերության (GTZ) մասնագետների հետ համատեղ մշակվել է ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների խոշորացման ծրագրի նախագիծը: Նմանատիպ նախագիծ մշակելու նպատակով այժմ համատեղ ուսումնասիրություններ են կատարվում ՀՀ Սյունիքի մարզում:

2011 թվականին նախատեսվում է հայեցակարգի վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը, ինչպես նաև իրականացնել կոնկրետ միջոցառումներ՝ մեկնարկելով հայեցակարգային դրույթների կիրառման գործընթացը:

- **Տեղական ինքնակառավարման ոլորտում վերապատրաստման ազգային ռազմավարության վերանայում: Տեղական ինքնակառավարման ոլորտում վերապատրաստման կարողությունների զարգացում: Համայնքային ծառայողների կադրերի ռեզերվի կայացմանն ուղղված միջոցառումների իրականացում**

Գործող օրենքով համայնքային ծառայության կադրերի ռեզերվ ընդգրկվելու համար ներկայացված հիմքերը չեն ապահովում կադրերի ռեզերվի լիարժեք կայացումը, ինչից ելնելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է կադրերի ռեզերվում ընդգրկվելու նոր հիմք՝ ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնում թեստավորում և հարցազրույց անցնելը: Թեստավորումը պետք է անցկացվի մրցույթների թեստավորման փուլի անցկացման համար սահմանված կարգով, իսկ հարցազրույցը կանցկացվի թեստավորման հարցաշարերի շրջանակներում: Թեստավորման և հարցազրույցի անցկացման մեխանիզմները մանրամասն կնկարագրվեն ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից 2008 թվականի դեկտեմբերի 4-ի «Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգը հաստատելու մասին» N 02 հրամանում համապատասխան լրացումներ կատարելու միջոցով: Այնուհետև կձեռնարկվեն միջոցներ կադրերի ռեզերվ նոր ընթացակարգով գրանցվելու վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնության ապահովման ուղղությամբ:

Մարզերի համայնքային ծառայողների հերթական վերապատրաստման արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում են

| | |
|---|---|
| | նոր թեմատիկ ծրագրերի մշակման աշխատանքներ, որոնք հնարավորություն կընձեռեն կատարելագործելու համայնքային ծառայողների կոնկրետ մասնագիտական գիտելիքները: |
| 3. | **Հաստատված տարածքային զարգացման հայեցակարգից բխող և հակակոռուպցիոն միջոցառումների իրականացում**<br><br>• **Մարզերի սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ համայնքային նշանակության տեղեկատվության հավաքագրում**<br><br>Կայուն զարգացման ռազմավարության դրույթներին համապատասխան Հայաստանում տնտեսական և սոցիալական զարգացման լուրջ խոչընդոտ հանդիսացող տարածքային անհամաչափությունների վերացման և Երևան քաղաքի բեռնաթափման ու բնականոն զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով մշակված Տարածքային զարգացման հայեցակարգից բխող գործառույթների իրականացման նպատակով մարզերի սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ համայնքային նշանակության տեղեկատվության հավաքագրում:<br>• **Մարզային զարգացման ծրագրերի մոնիթորինգի ներդրում և իրականացում**<br>Մարզային զարգացման ծրագրերով նախատեսված աշխատանքների իրականացումը գնահատելու նպատակով նախատեսվում է բարձրացնել մարզային զարգացման ծրագրերի մոնիթորինգի իրականացման համակարգի արդյունավետությունը:<br>• **Տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվող վարչական հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով վարչական հսկողության իրականացման մեթոդական ուղեցույցի մշակում**<br>Որպես իրավական հսկողության բարձրագույն մարմին համայնքում իրավական հսկողության իրականացման, տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքին պատկանող հաստատությունների գործողությունների և անգործության իրավաչափության ստուգման նպատակով այցելությունների իրականացում, արդյունքների վերլուծություն և վերահսկողություն: Պարբերաբար խորհրդատվական ծառայությունների մատուցում, ինչպես նաև ուսուցման դասընթացների կազմակերպում:<br>• **«ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացմանե ՀՀ տարածքային կառավարման նախարարության մասով միջոցառումների ծրագրի կատարման ապահովում**<br>ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության մասով միջոցառումների ծրագրի կատարման ապահովումը պայմանավորված է հիշյալ ծրագրով 2011 թ.-ին նախատեսված միջոցառումների իրականացման անհրաժեշտությամբ:<br>• **Երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների լիարժեքության ապահովում**<br>Երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների լիարժեքության ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել որոշակի գործառույթներ, մասնավորապես, համայնքի ղեկավարի աշխատակազմում որևէ համայնքային ծառայողի պաշտոնի անձնագրում սահմանել դրույթներ՝ բնագավառում պատասխանատվության վերաբերյալ: |
| 4. | **Հայաստանի Հանրապետությունից սկիզբ առնող անկանոն միգրացիայի երևույթի ուսումնասիրություն և դրա կանխարգելման նպատակով առաջարկություններ ներկայացնելը** |

| | |
|---|---|
| | Անկանոն միգրացիայի երևույթն այսօր վերաճել է մարտահրավերի և այդ երևույթի դեմ արդյունավետ պայքարը ենթադրում է համապարփակ (կոմպլեքս) մոտեցում, այսինքն, երևույթի առաջացման և զարգացման յուրաքանչյուր փուլին համապատասխան՝ առանձնահատուկ քայլերի իրականացում:<br>Այդ նպատակով անհրաժեշտ է կատարել միջազգային տարբեր կառույցների պատվերով միգրացիոն հարցերի առնչությամբ Ազգային վիճակագրական ծառայության և այլ կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների ուսումնասիրություն, վեր հանել անկանոն միգրացիան ծնող պատճառներն ու բացերը և ելնելով ուսումնասիրության արդյունքներից՝ անկանոն միգրացիայի կանխարգելման նպատակով ներկայացնել համապատասխան առաջարկություններ: |
| **ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն** | |
| 5. | **Էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների ստեղծում և վերազինում**<br>- **Որոտանի ՀԷԿ-երի համակարգի վերազինման աշխատանքների իրականացման նպատակով գործընթացի կազմակերպում և վերահսկում**<br>Որոտանի ՀԷԿ-երի համակարգի տեխնիկական վերազինման աշխատանքների իրականացման համար ֆինանսավորման խնդրի լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության և գերմանական KFW բանկի հետ 20.10.2010 թ. ստորագրվել է համաձայնագիր, ըստ որի բանկն ստանձնել է պարտավորություն ՀՀ կառավարությանը հատկացնել գումարային 51000000 եվրո արժողությամբ զարգացման վարկ: Որոտանի ՀԷԿ-երի համակարգի վերազինման աշխատանքների կատարման նպատակով անհրաժեշտ է մշտապես կազմակերպել և վերահսկել ծրագրի իրականացման գործընթացը:<br><br>- **Մեղրի ՀԷԿ-ի շինարարության ընթացք**<br>2010 թվականի հոկտեմբեր ամսին ՀՀ կառավարությունը պայմանագիր է ստորագրել իրանական ներդրող ընկերության հետ՝ Մեղրի ՀԷԿ-ի կառուցման ծրագիրը «կառուցում-տնօրինում-շահագործում-փոխանցում» հիմունքներով իրականացնելու վերաբերյալ: Մեղրի ՀԷԿ-ի շինարարության ընթացքը պետք է լինի ՀՀ կառավարության մշտական ուշադրության կենտրոնում: Բացի դրանից՝ անհրաժեշտ է համակարգել ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների աշխատանքը ծրագրի իրականացման և աշխատանքների վերահսկման հարցում: |
| 6. | **Տարածաշրջանային ինտեգրացում և էլեկտրաէներգետիկական համակարգի տեխնիկական վերազինում**<br><br>- **Իրան-Հայաստան և Վրաստան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծերի կառուցման համար անհրաժեշտ համաձայնագրերի ու պայմանագրերի կնքում**<br>Նոր էլեկտրահաղորդման գծերի կառուցման նպատակն է Վրաստանի և Իրանի էներգահամակարգերի հետ կայուն աշխատանքների ապահովումը, ինչպես նաև բոլոր երեք երկրների էներգահամակարգերի համատեղ աշխատանքը զուգահեռ ռեժիմում, ինչը նկատելիորեն կբարելավի ծառայության որակը և զգալիորեն կխթանի էներգետիկայի բնագավառում տարածաշրջանային համագործակցության զարգացումը, ինչպես նաև կստեղծվի նախապայման ՌԴ-ի էլեկտրաէներգետիկական համակարգի հետ զուգահեռ աշխատանք կազմակերպելու համար:<br>- **Հրազդան-Շինուհայր 220 կՎ լարման գործող օդային գծի վերակառուցման համար Համաշխարհային բանկի հետ վարկային համաձայնագրի կնքում, գործընթացի կազմակերպում և աշխատանքների ընթացքի վերահսկում**<br>Գործող 220 կՎ լարման օդային գծի վերակառուցումը կնպաստի Հայաստանի հարավային և կենտրոնական մասերի միջև էլեկտրահաղորդման հուսալիության բարձրացմանը, կորուստների նվազեցմանը, սպառողների անխափան էներգամատակարարման ապահովմանը: |

| | |
|---|---|
| 7. | **Ատոմային էներգետիկայի զարգացում**<br><br>- **Հայկական ԱԷԿ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման հարցում ներդրողների հետ բանակցությունների վարում**<br>Համաձայն էներգետիկայի զարգացման ռազմավարության՝ բազիսային էներգիայի արտադրության գերակայությունը Հայաստանում տրվում է նոր միջուկային էներգաբլոկին: 2009 թ. մայիսին ստորագրվել է պայմանագիր «Ուորլի Պարսոնսե ընկերության հետ, որը մշակել է Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման բանկի համար ընդունելի տեխնիկատնտեսական հիմնավորում փաստաթուղթը և Ռազմավարական ներդրողների ընտրության մրցութային փաթեթը: Կհայտարարվի Ռազմավարական ներդրողների ընտրության մրցութ և կսկսվեն պաշտոնական բանակցություններ տարբեր Ռազմավարական ներդրողների հետ: |
| 8. | **Իրան-Հայաստան նավթամթերքատար խողովակաշարի և նավթամթերքի տերմինալի կառուցում**<br><br>- **Իրան-Հայաստան նավթամթերքատար խողովակաշարի և նավթամթերքի տերմինալի կառուցման առաջին փուլի ընթացք**<br>Նավթամթերքատարը կապահովի հանրապետության նավթամթերքների կարիքները մրցակցություն առաջացնելով այլ ուղիներով ներկրվող նավթամթերքների հետ և կբարձրացնի նավթամթերքների մատակարարման անվտանգությունը: |
| **ՀՀ բնապահպանության նախարարություն** | |
| 9. | **Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ կապված՝ ջրածածկման ենթակա տարածքներում վնասակար ազդեցության կանխարգելման միջոցառումների իրականացում**<br>Ըստ կանխատեսումների՝ 2011 թվականին Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման դեպքում ջրի տակ կմնա 600 հա անտառածածկ տարածք, որի մաքրման աշխատանքների կատարման նպատակով ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը նախատեսվել է 125400,0 հազ. դրամ գումարի չափով:<br>Սևանա լճի մակարդակի բարձրացման հետ կապված՝ ջրածածկման ենթակա տարածքներում վնասակար ազդեցության կանխարգելման միջոցառումների իրականացումը 2011 թ. համար հանդիսանում է գերակա խնդիր, որի լուծմանն ուղղված քայլերը պետք է լինեն լճի ջրի մակարդակի բարձրացման դինամիկայի ուսումնասիրումը, ջրածածկվող տարածքների կանխատեսումը և ջրի տակ մնացող անտառածածկ տարածքների ծառաթփային բույսերի հեռացումը: Նշված միջոցառումը բխում է «Սևանա լճի մասին» և «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքներից և նախատեսվել է նաև Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2011 թվականի տարեկան ծրագրում: |
| 10. | **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանում պահպանվող տարածքների ստեղծում**<br>Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 2005 թվականի ապրիլի 7-ին կնքված «Բնապահպանական ծրագիր Հարավային Կովկաս–Հայաստան» համաձայնագրի համաձայն Բնության համաշխարհային հիմնադրամի (ԲՀՀ) գերմանական և հայաստանյան գրասենյակները ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ իրականացնում են |

| | |
|---|---|
| | «Հայաստանի Ջավախքի (Աշոցքի) շրջանում պահպանվող տարածքների ստեղծումն ծրագիրը, որը ֆինանսավորվում է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի /KfW/ միջոցով:<br>Ծրագիրը մեկնարկել է 2007 թ. նոյեմբերին և նախատեսվում է ավարտել 2011 թ. դեկտեմբերի 31-ին:<br><br>2011 թվականին ծրագրի կատարմանն ուղղված քայլերն են՝<br>1) ապահովել «Արփի լիճն ազգային պարկի կառավարման պլանով և գործարար ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը.<br>2) իրականացնել աջակցության գոտու տնտեսական զարգացման ծրագրով նախատեսված միջոցառումները, այդ թվում՝<br>• «Արփի լիճն ազգային պարկի պահպանման գոտու համայնքների ջրամատակարարման ցանցի վերանորոգման աշխատանքները,<br>• «Արփի լիճն ազգային պարկի պահպանման գոտու համայնքների անասնապահության և մեղվապահության բարելավման աշխատանքները.<br>3) ավարտել «Արփի լիճն ազգային պարկի վարչական շենքի, այցելուների կենտրոնի և հյուրատան շինարարական աշխատանքները.<br>4) ավարտել «Արփի լիճն ազգային պարկի գլխավոր մասնաշենքի՝ գրասենյակի և այցելուների կենտրոնի և հյուրատան կահավորումը և տեխնիկական զինումը:<br>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է գլխավոր մասնաշենքի՝ գրասենյակի, այցելուների կենտրոնի և հյուրատան ապահովումն անհրաժեշտ գրասենյակային, ննջարանային և խոհանոցային կահույքով: Բացի դրանից՝ նախատեսվում է նրանց տեխնիկական զինումը համակարգչային, հեռուստատեսային և աուդիո տեխնիկայով, խոհանոցային և կենցաղային տեխնիկայով, ինչպես նաև այլ տնտեսական և գրենական ապրանքներով ապահովումը: |
| 11. | **Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի համալրում**<br><br>Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների վերարտադրությունը բնական պայմաններում վտանգված է դրանց ձվադրավայրերը կորցնելու, ջրի օգտագործման սխալ քաղաքականության, ջրի որակի վատթարացման կամ ուղղակի ֆիզիկական ոչնչացման պատճառով:<br>Հատկապես տագնապալի է Սևանա լճի էնդեմիկ իշխանի վիճակը, որը լիովին զրկվել է բնական ձվադրավայրերից և կես դարից ի վեր ամբողջությամբ կախում ունի արհեստական վերարտադրությունից: Իշխանի 4 ենթատեսակներից երկուսը՝ ձմեռային իշխանը և բոջակը, արդեն իսկ անհետացել են, ամառային իշխանը բնական պայմաններում հանդիպում է եզակի առանձնյակների ձևով, փոքր ինչ ավելի մեծ է գեղարքունի տեսակի քանակը:<br>Սևանա լճի ձկան պաշարների համալրումն արհեստական բուծման միջոցով խիստ անհրաժեշտ է գեղարքունու և ամառային իշխանի բնական պայմաններում գոյատևելը երաշխավորելու համար:<br>«Սևանա լճում էնդեմիկ ձկնատեսակների պոպուլյացիայի համալրումն գերակա խնդրի իրականացումը բխում է «Սևանա լճի մասինն և «Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասինն ՀՀ օրենքներից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2010 թ. հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի 2009 թվականի աշխատանքային ծրագրին համապատասխան մշակված և Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի գրություններով ներկայացված միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասինն N 876-Ն որոշման հավելվածի 3-րդ կետից, որի համաձայն ՀՀ պետական բյուջեից Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների պաշարների համալրման ծրագրի իրականացման ֆինանսավորումը նախատեսվել է տարեկան 60 մլն դրամ |

| | |
|---|---|
| | գումարի չափով: Ծրագրով նախատեսվում է գեղարքունու, ամառային իշխանի կենսունակ մանրաձկների աճեցում և բացթողում Սևանա լիճ: «Սևանի արդյունագործական և էնդեմիկ ձկնատեսակների վերականգնման ծրագիրը և 2011 թ. գնման ենթակա իշխանի մանրաձկների անվանացանկը և ժամանակացույցը հաստատելու մասին» որոշման նախագիծը գտնվում է ՀՀ կառավարության քննարկման փուլում: |
| **ՀՀ ֆինանսների նախարարություն** | |
| 12. | **Պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ իրականացվող բարեփոխումների շարունակում**<br><br>Բյուջետային գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով վերջինիս որակապես նոր ուղղվածություն տալու համար ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վերջին տարիներին նախաձեռնվել է ծրագրային բյուջետավորման տարրերի արմատավորման գծով միջոցառումների իրականացում: Տարիներ շարունակ հանրապետությունում ձևավորված պետական ծախսերի կառավարման համակարգի գնահատման հիմքում դրված էին ծրագրի իրականացման համար պահանջվող, հատկացված և օգտագործված ռեսուրսների ցուցանիշները: Նման ցուցանիշները և դրանց համադրումն ի վիճակի չեն եղել ինչպես վերլուծողներին, այնպես էլ որոշումներ ընդունողներին տալու լիարժեք տեղեկատվություն ծրագրի նպատակների, դրանց հասնելու համար առաջարկվող ուղիների, սպասվելիք արդյունքների և ընդհանրապես ծրագրի արդյունավետության մասին: Ուստի և, պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման և դրա հիման վրա ռազմավարական որոշումների որակը բարելավելու տեսանկյունից անչափ կարևորվում է պետական գործառույթների իրականացման համար տրամադրվող բյուջետային ռեսուրսների ծախսման ցուցանիշների դիտարկումից անցում կատարելը ծրագրի շրջանակներում իրականացվող գործունեության և ստացվող արդյունքների դիտարկմանը:<br><br>2005 թվականից ՀՀ ֆինանսների նախարարությունը նախապատրաստական աշխատանքներ է իրականացնում բյուջետավորման՝ մուտքերի (ծառայությունների մատուցման համար օգտագործվող ռեսուրսների) վրա հիմնված եղանակից արդյունքների վրա հիմնված եղանակին աստիճանական անցման նպատակով անհրաժեշտ պայմանների ստեղծման համար: Արդյունքում, նշված անցումային գործընթացում ընդգրկված պետական կառավարման մարմինների թիվը 2007 թվականի վերջին կազմել է 14, իսկ ՀՀ 2010 թվականի բյուջետային գործընթացում այդ աշխատանքներում արդեն փորձնական կարգով ընդգրկվել են բոլոր պետական կառավարման մարմինները՝ ներառյալ ուժային կառույցները: ՀՀ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալում ծրագրային բյուջետավորման ներդրման գործընթացում ընդգրկված մարմինների գծով նախատեսված ծախսերի հանրագումարի տեսակարար կշիռը գերազանցել է 50 տոկոսը, իսկ ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով այն գերազանցում է 75 տոկոսը: Այդ մարմինների ծախսային ծրագրերի նոր կառուցվածքները հրատարակվել են ինչպես պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում, այդպես էլ ներառվել են համապատասխան տարիների բյուջետային փաստաթղթերում: Մասնավորապես, ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծի բաղկացուցիչ մաս հանդիսացող ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի կազմում ներառվել են նաև նշված պետական մարմինների՝ գերատեսչական մակարդակով իրականացվող ծրագրերի կատարողական չափորոշիչները (արդյունքները), որոնք նաև հաստատվել են ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» N 1522-Ն որոշմամբ: Ծրագրային բյուջետավորման ներդրման գործընթացի շրջանակներում կազմակերպվել են և շարունակվում են կազմակերպվել այդ գործընթացում ներգրավված պետական մարմինների համապատասխան մասնագետների վերապատրաստման դասընթացներ, տրամադրվում է խորհրդատվություն, ընդ որում, ինչպես նախարարության ուսուցման կենտրոնում, այդպես էլ մասնագետների աշխատավայրերում: Բոլոր պետական կառավարման մարմինների |

| | |
|---|---|
| | համապատասխան մասնագետների մասնակցությամբ 2010 թվականի փետրվարին կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ՝ նվիրված բյուջետային ծախսային ծրագրերի արդյունքային (ոչ ֆինանսական) ցուցանիշների մոնիթորինգի համակարգի ներդրման և դրա մասին հաշվետվությունների կազմանն առնչվող հարցերին: 14 պետական կառավարման մարմինների 2009 թվականի տարեկան հաշվետվություններով ներկայացված արդյունքային ցուցանիշների գծով իրականացվել է փորձնական մոնիթորինգ, որով բացահայտված խնդիրներն իրենց կարգավորումը կգտնեն 2012 թվականի բյուջետային գործընթացում:<br>Բնագավառում առաջիկայում ամբողջ կառավարության մակարդակով իրականացվելիք բարեփոխումներին ծրագրային բնույթ տալու համար ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացմամբ ՀՀ կառավարությունն ընդունել է 2008 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության պետական ծախսերի ծրագրավորման գործընթացի բարեփոխումների զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 48/18 արձանագրային որոշումը: Վերջինիս համատեքստում էլ շարունակվում են նախապատրաստական աշխատանքներ տարվել ծրագրային բյուջետավորման փորձնական ներդրման հետագա խորացման համար: Մասնավորապես, 2011 թվականին նախատեսվում է՝<br>ա) ՀՀ պետական բյուջեով ծախսային ծրագրեր իրականացնող բոլոր գերատեսչությունների գծով նոր ծրագրային կառուցվածքի և այդ ծրագրերի նոր դասիչների համակարգի մշակում և տրամադրում իրենց: Արդյունքում, բոլոր գերատեսչությունների կողմից ծրագրային բյուջետավորման ձևաչափով 2012 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը կներկայացվեն ծրագրային նոր կառուցվածքի և նոր դասիչների համակարգին համապատասխան,<br>բ) բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) կազմման մեթոդական ցուցումների մշակում և տրամադրում: Մեթոդական ցուցումներին համապատասխան փորձարարական 3 գերատեսչություններ ՀՀ 2012-2014 թվականների ՄԺԾԾ-ի հայտի հետ մեկտեղ կներկայացնեն յուրաքանչյուրը 1-ական բյուջետային ծրագրի նկարագիր (անձնագիր): |

| | |
|---|---|
| 13. | **Պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացում**<br>Ներկայումս Հայաստանում պետական պարտքի գրանցումը մասնատված է: Բացակայում են գործառնական ընթացակարգերի նկարագրությունն ու կայուն գործելակերպը: Արտաքին, ներքին պետական պարտքը և ենթավարկերը գրանցվում են երեք առանձին համակարգերով:<br>Արտաքին պարտքի գրանցման համակարգը հիմնված է «Access» ծրագրի վրա: Զուգահեռ համակարգ է պահվում «Excel» ծրագրով: Թեև «Acess»-ի համակարգն ունի ըստ վարկերի ամբողջ տեղեկատվությունը, հաշվետվություններ ներկայացնելու համար օգտագործվում են «Excel» ծրագրի աղյուսակները: Վերլուծական և զգայունության թեստեր գոյություն չունեն:<br>Ներքին պարտքի գրանցման համար կիրառվում է «Excel» ծրագիրը, որն օգտագործվում է ներքին պարտքի հաշվառման և հաշվետվությունների ստացման համար: Մանրածախ գործառնությունների գրանցումները պահպանվում են առանձին ենթահամակարգում:<br>Ենթավարկերի տրամադրումը գրանցվում է ըստ վարկառուների առանձին աղյուսակներում:<br>«Access» և «Excel» ծրագրերը բավարար են վերլուծական տվյալների պահպանման համար, սակայն դրանք ունեն լուրջ թերություններ` կապված տվյալների անվտանգության և գործառնական ընթացակարգերի հետ: Համակարգերը փաստաթղթավորված չեն և փոխկապակցված չեն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի վճարման համակարգի հետ:<br>Ընդհանուր առմամբ գործառնական ռիսկերը մեծ են, իսկ բիզնես հոսքերը համապատասխանեցված չեն: Գործող համակարգը համատեղելի չէ առաջնային, միջանկյալ և հետին գրասենյակների կառուցվածքային այն մոդելի հետ, որին նախատեսում է անցում կատարել ՀՀ ֆինանսների նախարարությունում:<br>Ծրագրի կարգավորման առարկան պետական պարտքի կառավարումն է` ՀՀ օրենսդրությամբ սահմանված թափանցիկության, գործողությունների հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքներին համապատասխան:<br>Պետական պարտքի գրանցման և հաշվառման համակարգի ներդրումը հնարավորություն կտա ունենալու պարտքի գործառնությունների վերաբերյալ համապարփակ, թարմ և ճշգրիտ բազա, ապահովել տվյալների անվտանգությունը, իրականացնել վերլուծական աշխատանքներ հաշվետվությունների պատրաստման համար: |

| | |
|---|---|
| 14. | **«Շալցված և փաթեթավորված որոշ ապրանքների շրջանառության ծավալների հաշվառման համակարգի օրենսդրական (իրավական) դաշտի ապահովումէ գերակա խնդիր հանդիսանալու վերաբերյալ**<br><br>Գերակա խնդրի նպատակը շշալցված և փաթեթավորված որոշ ապրանքների շրջանառության ծավալների հաշվառման համակարգի օրենսդրական (իրավական) դաշտի ապահովումն է:<br>Ներկայումս հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով հաշվառման համակարգ կիրառվում է միայն ենթակցիզային խմբի ապրանքների համար, մինչդեռ, ինչպես վկայում է միջազգային առաջավոր փորձը, հաշվառման համակարգեր կիրառվում են նաև լայն սպառման որոշ այլ ապրանքների համար: Խնդիրը կայանում է նրանում, որ ներկայումս չկան օրենսդրորեն ամրագրված այնպիսի վարչարարական լծակներ, որոնց կիրառությունը թույլ կտա վերահսկել այդ ապրանքների շրջանառությունը: Շշալցված և փաթեթավորված որոշ ապրանքների հաշվառման համակարգի ներդրումը լրացուցիչ պետական եկամուտներ հավաքագրելու, երկրի տնտեսական անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև սպառողների շահերն ապրանքների կեղծումից պաշտպանելու լրացուցիչ հնարավորություններ կստեղծի:<br>Գերակա խնդրի կարգավորման առարկան շշալցված և փաթեթավորված որոշ ապրանքների շրջանառության ծավալների հաշվառման համակարգի օրենսդրական (իրավական) դաշտն է:<br>Գերակա խնդրի լուծմանն ուղղված իրավական ակտերի ընդունման դեպքում ակնկալվում է ստեղծել շշալցված և փաթեթավորված որոշ ապրանքների շրջանառության ծավալների հաշվառման համակարգի օրենսդրական (իրավական) դաշտ: |
| 15. | **«Գործարարությամբ զբաղվելըե վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի բարելավում**<br><br>Տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմանը երկրում գործարարության զարգացումն է: Գործարարությանն առնչվող ընթացակարգերն իրենց պարզությամբ և թափանցիկությամբ դեռևս հեռու են բավարար լինելուց: Գործարարության զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման պետական քաղաքականությունն ուղղված է առավելագույնս բարենպաստ միջավայրի ստեղծմանը, տնտեսության առավել ազատականացմանը, ազատ մրցակցության խթանմանը, վարչարարական ընթացակարգերի առավելագույնս պարզեցմանը, սպառողների շահերի արդյունավետ պաշտպանությանը:<br>Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է «Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի գերազանցության կենտրոնե համազգային ծրագրի հայեցակարգի և Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի, ինչպես նաև տեսչական բարեփոխումների շարունակական իրականացումը:<br><br>Աշխատանքներ կտարվեն «Գործարարությամբ զբաղվելըե դասակարգման համար հիմք հանդիսացող բաղադրիչների բարելավման ուղղությամբ, մասնավորապես, հարկային և մաքսային գործընթացների պարզեցում և թափանցիկության բարձրացում և այլն:<br>Գործարարությամբ զբաղվելու համար Հայաստանը տարածաշրջանային գերազանցության կենտրոն դարձնելու խնդիրը ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրի և ՀՀ կառավարության հռչակած համազգային նախագծերից մեկն է, որի հետևողական իրականացումը ՀՀ հեռանկարային զարգացման երաշիքներից է: Արդյունքում, ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունը դարձնել տարածաշրջանում գործարար և ներդրումային լավագույն միջավայր ունեցող երկիր, մասնավորապես, բարելավել Հայաստանի դիրքը Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելըե դասակարգման մեջ: |

| | |
|---|---|
| | **ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն** |
| 16. | **Երևան քաղաքի առավել խոցելի մանկապարտեզներում և դպրոցներում սեյսմիկ և հրդեհային ռիսկերի գնահատում**<br>Ռիսկի գնահատումը մարդկանց ունեցվածքին, ծառայություններին, կենսամիջոցներին և շրջակա միջավայրին սպառնացող հնարավոր վտանգների վերլուծության և խոցելիության առկա պայմանների գնահատման միջոցով ռիսկի բնույթի և չափերի որոշման մեթոդաբանությունն է։ Յուրաքանչյուր ռիսկի գնահատում պահանջում է մեծ ծավալի բազմապարամետրանոց տվյալների բազայի ստեղծում և հաշվարկման մեթոդիկան կախված է հարուցող վտանգի ձևից ու մակարդակից։ Բացի դրանից՝ ռիսկի գնահատումն ունի նաև տվյալ տեղանքին բնորոշ առանձնահատկություններ (գրունտների տեսակը, լանդշաֆտը, այլ ռիսկ պարունակող օբյեկտների առկայությունը և այլն)։ Այդ պատճառով ռիսկի գնահատման խնդիրները լուծելու համար օգտագործում են GIS տեխնոլոգիաներ, ինչը թույլ է տալիս՝<br>. տարբեր վտանգներին համապատասխան ստեղծել ռիսկերի տարբեր սցենարների քարտեզներ,<br>. ամեն մի հնարավոր սցենարի դեպքում ստեղծել ցանկացած ստեղծված ռիսկերի դեպքերում պոտենցիալ կորուստների քարտեզներ,<br>. սեյսմիկ վտանգի տարբեր մակարդակի դեպքում ստեղծել վտանգների քարտեզներ։<br>Ուժեղ երկրաշարժով պայմանավորված ռիսկերը կարող են առաջանալ ինչպես երկրաշարժից, այնպես էլ դրանով հարուցված ցանկացած երկրորդային վտանգներից։ Տարբեր երկրներում հաշվի են առնվում միայն տվյալ երկրին բնորոշ ռիսկերը և դրանց հետ կապված պայմանները։ Հայաստանում, որի ամբողջ տարածքը գտնվում է սեյսմաակտիվ գոտում, առկա են բոլոր վտանգները (բացի ցունամիից), և անհրաժեշտ է հաշվի առնել դրանցից բխող բոլոր ռիսկերը։<br>Երևան քաղաքը գտնվում է բարձր սեյսմիկ վտանգի գոտում։ Հաշվի առնելով հատուկ և կարևոր օբյեկտների առկայությունը և բնակչության բարձր խտությունը՝ երկրաշարժի սպառնալիքը լուրջ մարտահրավեր է ազգային անվտանգությանը։ Երևանում գոյություն ունեցող շենքերի գերակշռող մասի սեյսմակայունությունն ավելի ցածր է, քան առկա սեյսմիկ վտանգի մակարդակը։ Առանձնահատուկ ուշադրության են արժանի Երևան քաղաքի առավել խոցելի մանկապարտեզներն ու դպրոցները։ Առաջին հերթին անհրաժեշտ է կատարել խոցելիության գնահատման աշխատանքներ՝ որպես սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների առաջին փուլ։ Սեյսմիկ ռիսկի գնահատման արդյունքում կներկայացվեն Երևան քաղաքի դպրոցների և մանկապարտեզների շենքերի սեյսմիկ խոցելիության նվազեցման առաջարկություններ՝ դպրոցների ու մանկապարտեզների շենքերի խոցելիությունը սեյսմիկ վտանգին համապատասխանեցնելու ուղղությամբ։<br>Հրդեհային ռիսկի գնահատումը կիրականացվի վերանայված ռիսկայնության չափանիշների վրա հիմնված՝ հրդեհային ռիսկի գնահատման մեթոդաբանության կիրառմամբ։<br>Սեյսմիկ և հրդեհային ռիսկերի գնահատումը թույլ կտա իրականացնել մարդկային, նյութական և այլ հնարավոր կորուստների կանխատեսում։ Նշված ռիսկերի գնահատումը թույլ կտա ձեռնարկել մի շարք միջոցառումներ, որոնք հնարավոր արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում կապահովեն երեխաների անվտանգությունը։ |
| 17. | **Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում վտանգների և ռիսկերի բացահայտման և գնահատման միասնական մոնիթորինգային համակարգի ձևավորում**<br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի N 437-Ն որոշմամբ ընդունվել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանն ուղղված՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գործունեության ծրագիրը։ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գործունեության հիմնական ռազմավարական խնդիրներից է մոնիթորինգային համակարգի ձևավորումը։<br>Ներկայումս արտակարգ իրավիճակների մոնիթորինգ իրականացվում է մասնագիտացված ծառայությունների կամ հատուկ լիազորված |

| | |
|---|---|
| | կազմակերպությունների կողմից շրջակա միջավայրի վրա իրականացվող դիտարկումների և ուսումնասիրությունների միջոցով՝ արտակարգ իրավիճակների առաջացման և զարգացման՝ ժամանակին հայտնաբերման և կանխատեսման նպատակով, և հիմնված է անցյալում ու ներկայում դրանց առաջացման աղբյուրների հնարավոր պատճառների վերլուծության վրա։<br>Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետությունում բացակայում է վտանգների և ռիսկերի բացահայտման ու գնահատման միասնական համակարգ, իսկ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կազմում գործող մոնիթորինգի կենտրոնի միջոցով հնարավոր չէ լուծել բնակչության, տարածքների ու տնտեսության բազմաբնույթ օբյեկտներին սպառնացող վտանգների ու ռիսկերի բացահայտման և նվազեցման խնդիրները, անհրաժեշտություն է առաջանում ստեղծել Հայաստանի Հանրապետությունում միասնական մոնիթորինգային համակարգ։<br>Միասնական համակարգը թույլ կտա իրականացնել արտակարգ իրավիճակների մասին տեղեկատվության հավաքագրում, ամբողջական մշակում, վերլուծում ինչպես նաև կապահովի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգի տարբեր ենթակառուցվածքների ու օղակների միջև տեղեկատվության փոխանակումը։<br>Արտակարգ իրավիճակների մոնիթորինգի և կանխատեսման համակարգի ձևավորումը թույլ կտա համատեղել արտակարգ իրավիճակների տարբեր մակարդակի մոնիթորինգ և կանխատեսում իրականացնող կազմակերպությունների գիտատեխնիկական և տեղեկատվական հնարավորությունները, համակարգել այդ ուղղությամբ տարվող աշխատանքները։ |
| 18. | **Հայաստանի Հանրապետության համայնքներում, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման նպատակով կամավորական փրկարարական միավորումների հիմնում**<br><br>Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի N 437-Ն որոշմամբ ընդունվել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանն ուղղված՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գործունեության ծրագիրը։ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության գործունեության հիմնական ռազմավարական ուղղություններից է հանդիսանում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության շուրջը հասարակական, կամավորական փրկարարական շարժման ձևավորումը։<br>Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այլ երկրներում կամավորական փրկարարական շարժմանը մեծ ուշադրություն է հատկացվում։ Մի շարք երկրներում կամավորական շարժման մեջ ներգրավված է բնակչության զգալի մասը։ Կամավորական միավորումներ ձևավորված են բոլոր համայնքներում։ Այդ ջոկատները մշտապես ուսուցանվում են մասնագետների կողմից, պարբերաբար անցկացվում են ուսումնավարժանքներ։<br>Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը կարևորում է հանրապետությունում կամավորական և հասարակական փրկարարական շարժման հիմնման և հետագա զարգացման խնդիրը։<br>Հայաստանում, ֆիզիկաաշխարհագրական դիրքով, հայկական լեռնաշխարհի յուրօրինակությամբ, տեղանքի բացարձակ բարձրությունների զգալի տարբերություններով պայմանավորված՝ դժվար անցանելի են դառնում, հատկապես ձմռան ժամանակաշրջանում, լեռնային գյուղական համայնքներ տանող ճանապարհները։ Սահմանամերձ և բարձր լեռնային համայնքներում արտակարգ իրավիճակներ առաջանալու պարագայում խիստ անհրաժեշտ է դառնում համայնքում կամավորական փրկարարական ուժերի առկայությունը։<br>Հայաստանում գոյություն ունեն սակավաթիվ, իրարից անկախ հասարակական և կամավորական միավորումներ։ Ներկա փուլում անհրաժեշտ է իրականացնել այդ միավորումների հաշվառումը, հասկանալ դրանց տեղն ու դերը գործող համակարգում։ Հետագայում նախատեսվում է ստեղծել համայնքային փրկարարական ուժեր, իրականացնել դրանց ուսուցանումը և որակավորումը, հնարավորինս ապահովել |

| | |
|---|---|
| | այդ միավորումներն անհրաժեշտ հատուկ տեխնիկայով, սարքավորումներով և հանդերձանքով: Հետագայում հնարավոր կլինի հիմնել նաև հրշեջ-փրկարարական շարժում:<br>Գլխավոր նպատակն է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում ունենալ կամավորական փրկարարական և հրշեջ-փրկարարական ջոկատներ՝ օժտված անհրաժեշտ հմտություններով, տեխնիկապես հագեցած և, որ ամենակարևորն է, պատրաստ փոխհամաձայնեցված գործողությունների: |
| 19. | **Տեխնիկական անվտանգության բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարձրացում, տնտեսավարող սուբյեկտների հետ շփումների կրճատում և մեկ պատուհանի սկզբունքի կիրառում**<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում գործող արդյունաբերական ձեռնարկություններում տեխնիկական վերազինման գործընթացը դեռ չի ավարտվել, ավելին՝ այն շարունակական գործընթաց է: Շահագործվող ձեռնարկություններում սարքավորումները հին են, բարոյապես և ֆիզիկապես մաշված: Այս հանգամանքը բարձրացնում է տեխնածին վթարների ռիսկի աստիճանը:<br>«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնե ՊՈԱԿ-ը մատուցում է ծառայություններ տեխանվտանգության ոլորտում, մասնավորապես, տեխնիկական անվտանգության ոլորտի տեխնիկական կանոնակարգերի մշակում, արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրի վարում, տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացում, ոլորտի ինժեներատեխնիկական մասնագետների ուսուցում և որակավորում: Իր գործունեության չորս տարիների ընթացքում Կենտրոնը հետևողականորեն ստեղծել է պայմաններ իր կողմից մատուցվող ծառայությունների իրականացման համար և  ունի համապատասխան ժամանակակից տեխնիկական միջոցներ և սարքավորումներ, սակայն միջազգային լավագույն փորձը ներդնելու համար անհրաժեշտություն է առաջացել Կենտրոնը համալրել հավելյալ տեխնիկական միջոցներով, նորագույն սարքերով: Հաշվի առնելով նոր տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրումն ու շահագործումը՝ անընդհատ զարգացող և փոփոխվող միջավայրում ժամանակակից մարտահրավերներին ժամանակին և համապատասխան արձագանքման հրամայականն անհրաժեշտ է դառնում Կենտրոնի ծառայությունների որակական մակարդակի շարունակական բարձրացման ապահովումը:<br>Գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերն են՝<br>-  տեխնիկական անվտանգության փորձաքննության որակական մակարդակի բարձրացումը,<br>- արտադրական վտանգավոր օբյեկտներ շահագործող անձանց հետ իրականացվող գործառույթների առավել մատչելի և դյուրին իրականացումը,<br>- Կենտրոնի հետ շփման նվազեցումը, մեկ պատուհանի սկզբունքի կիրառումը,<br>- Կենտրոնի աշխատանքային տարածքների վերանորոգումը,<br>- համալրումը տեխնիկական միջոցներով, շարժական լաբորատորիայով,<br>- ճանաչողական այցերի կազմակերպումը,<br>- Կենտրոնի մասնագետների որակավորումը և ուսուցումն արտերկրում<br>Տեխնիկական անվտանգության բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը և տնտեսավարող սուբյեկտների հետ շփումների կրճատումը թույլ կտա՝<br>- կրճատել պետական ծառայողի և քաղաքացու շփումը,<br>- նվազագույնի հասցնել այցերի արդյունքում առաջացող հնարավոր կոռուպցիոն ռիսկերը,<br>- բարելավել գործարար  և ներդրումային միջավայրը,<br>- առավելագույնս ապահովել տեխնիկական անվտանգության փորձաքննության ընթացքում տեխնիկական զննման, դիագնոստիկայի, փորձարկման համար ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառումը՝ շարժական լաբորատորիաների միջոցով, տնտեսավարող սուբյեկտներին հարմար վայրում և ժամկետներում, |

| | |
|---|---|
| | - ներդնել միջազգային փորձը՝ Հայաստանի տեխնիկական անվտանգության ապահովման համակարգը միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու և հետագա ինտեգրման համար: |
| **ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն** | |
| 20. | **Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ֆինանսավորման հայեցակարգը մշակելը և ներկայացնելը**<br>Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի համակարգի գործառնության և զարգացման համար ֆինանսավորման իրավական երաշխիքների ապահովումը.<br>Ֆիզիկական կուլտուրան և Սպորտը հաՍարակության կողմից Օգտագործվում են մարդու հոգևոր և ֆիզիկական բազմակողմանի զարգացման, առողջության ամրապնդման, հիվանդությունների կանխարգելման, առողջ ապրելակերպի ձևավորման, բնակչության հանգՍտի ակտիվ կազմակերպման գործընթացում:<br>Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ֆինանսավորման ռազմավարություն չլինելու, ինչպես նաև մարզական կազմակերպությունների ֆինանսավորումը չկանոնակարգված և անհամաչափ իրականացնելու պատճառով հանրապետությունում զարգացել են ոչ վարակիչ հիվանդությունները, տեղի է ունեցել ֆիզիկական կուլտուրայի մակարդակի անկում, բացակայում է բարձրագույն սպորտում մրցակցությունը, նկատվում է ֆիզիկական զարգացման և պատրաՍտականության, կյանքի տևողության ցուցանիշների անկում: ՈւՍումնական հաՍտատություններում, ըՍտ բնակության վայրի, իրականացվող ֆիզկուլտուրային-առողջարարական ավանդական համակարգը ներկայումՍ արդյունավետ չի գործում, կրճատվել են ֆիզիկական կուլտուրայի և Սպորտի զարգացման համար նախատեՍվող ֆինանՍական միջոցների ծավալները, կրճատվել է ոլորտի մաՍնագետների թիվը: Նշվածը վկայում է, որ կան ֆիզիկական կուլտուրայի և Սպորտի համալիր խնդիրներ, որոնք լուծման կարիք են զգում:<br>Բնակչության ֆիզիկական դաՍտիարակությանը, ֆիզիկական կուլտուրայի մակարդակի բարձրացմանը և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը խոչընդոտող խնդիրների լուծումը կարող է տալ դրական արդյունքներ՝ համակարգված պետական աջակցության՝ ֆինանսավորման իրավական երաշխիքների ստեղծման և ապահովման միջոցով:<br>Միջազգային փորձը և օրենսդրությունը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու և տեղայնացնելու համար հանրապետության բոլոր ուսումնական հաստատություններում, բացի Երևան քաղաքից, մոնիթորինգի անցկացում, արդյունքների վերլուծում, ֆիզիկական պատրաստականության ներդրում:<br>«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասինե և «Մանկապատանեկան Սպորտի մաՍինե ՀայաՍտանի Հանրապետության Օրենքների հիմնադրույթների համաձայն հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և Սպորտի հետագա զարգացման և նրա արդյունավետ գործունեության և պայմանների Ստեղծման համար ֆինանսավորման համաչափ բաշխման հայեցակարգի մշակում:<br>«Տեղական ինքնակառավարման մարմինների մասինե ՀայաՍտանի Հանրապետության Օրենքի համապատասխանեցում «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասինե և «Մանկապատանեկան Սպորտի մաՍինե ՀայաՍտանի Հանրապետության Օրենքներին:<br>Բնակչության ֆիզիկական դաՍտիարակությանը, ֆիզիկական կուլտուրայի մակարդակի բարձրացմանը, սպորտի զարգացմանը և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը խոչընդոտող խնդիրների լուծումը պետական աջակցության՝ ֆինանսավորման իրավական երաշխիքների ստեղծման միջոցով: |
| 21. | **ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն ընտանիքե մրցույթի կազմակերպում և անցկացում**<br><br>Գերակա խնդրի նպատակը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի և մակարդակի բարձրացումը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացումը, բնակչության առողջության ամրապնդումը, առողջ ապրելակերպի ձևավորումը, բնակչության ֆիզիկական |

| | |
|---|---|
| | դաստիարակությունը, ֆիզիկական կուլտուրայի շարժման քարոզչությունը:<br>ՀՀ Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում Հանրապետության Նախագահի մրցանակներ հիմնելու մասին» ՆԿ-113-Ն կարգադրության համաձայն 2004 թվականին մրցույթին մասնակցել է 54 ընտանիք, 2005 թ.-ին՝ 82-ը, 2006 թ.-ին՝ 84 թ.-ը, 2007 թ.-ին 107 ընտանիք, 2008 թ.-ին 126, 2009 թ.-ին՝ 171 ը, 2010 թ.-ին՝ 347 ընտանիք: 2011 թվականին նախատեսվում է մրցույթն անցկացնել 3 տարիքային խմբով:<br>Պատշաճ մակարդակով չի կատարվում ֆիզիկական կուլտուրայի քարոզչությունը:<br>Մրցումները տարիքային երեք խմբերով Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքների, Երևանի վարչական տարածքների միջև, ինչպես նաև գյուղական համայնքներում և մարզերում մեկ փուլով, իսկ Երևան քաղաքում երկու փուլով անցկացնելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ֆինանսական միջոցներ, այդ թվում՝ նաև մարզերում համապատասխան բակերի և մարզադահլիճների վերանորոգման համար:<br>**«Լավագույն ընտանիք» մրցույթի կազմակերպման և անցկացման միջոցով** բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայի մակարդակի բարձրացման, ֆիզիկական կուլտուրայի շարժման քարոզչության իրականացում:<br>Ֆիզիկական կուլտուրայի մակարդակի բարձրացում, մարդկանց մրցունակության նկատմամբ հետաքրքրությունների առաջացում, հաղթող ընտանիքներին մրցանակների բաշխում: |
| 22. | **Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականության զարգացման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության երիտասարդության շրջանում համապարփակ ուսումնասիրությունների իրականացում**<br><br>Գերակա խնդրի նպատակը հանրապետության երիտասարդության շրջանում բազմակողմանի և համապարփակ ուսումնասիրությունների իրականացում, որոնց արդյունքների և ազգային վիճակագրական տվյալների համադրումը հիմք կարող է հանդիսանալ երիտասարդական պետական քաղաքականության երկարաժամկետ ռազմավարության մշակման համար:<br>2006 թվականի վերջին, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի նիստի N 6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2006-2007 թվականների ռազմավարության դրույթների՝ մշակվեց Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցը (այսուհետ՝ զեկույց)՝ Եվրախորհրդի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի փորձագիտական և տեխնիկական օժանդակությամբ: 2007 թվականին փաստաթուղթը տպագրվեց և ներկայացվեց լայն հասարակությանը: Զեկույցը մինչ այդ Հայաստանի երիտասարդության ընդհանուր վիճակի առավել խորը ուսումնասիրության ամենածավալուն փորձն էր, որը վիճակագրական տվյալների և սոցիոլոգիական հարցումների համադրմամբ ներկայացնում էր Հայաստանի Հանրապետության երիտասարդության առկա վիճակը, հրատապ խնդիրները և հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 25-ի N 39 նիստի N 21 արձանագրային որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008-2012 թվականների ռազմավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 26-ի N 13 նիստի N 16 արձանագրային որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008-2012 թվականների ռազմավարության կատարումն ապահովող 2009-2012 թվականների գործողությունների ծրագրի և միջոցառումների ցանկի մշակման համար:<br>Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2008-2012 թվականների ռազմավարության դրույթներում և |

| | |
|---|---|
| | դրա կատարումն ապահովող գործողությունների ծրագրում (Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 26-ի N 13 նիստի N 16 արձանագրային որոշման N 1 հավելվածի 4.5 կետ) առանձնակի կարևորություն է տրվում Հայաստանի երիտասարդության շրջանում պարբերական հետազոտությունների իրականացմանը և դրանց արդյունքների ու վիճակագրական տվյալների համադրման հիման վրա պետական երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:<br>2012 թվականին շահագրգիռ պետական կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից նախատեսվում է նոր` Երիտասարդական պետական քաղաքականության 2013-2018 թվականների ռազմավարության և ռազմավարության կատարումն ապահովող գործողությունների և միջոցառումների ծրագրի մշակում:<br>Նշված փաստաթղթի մշակման համար անհրաժեշտ է ունենալ Հայաստանի երիտասարդության վերաբերյալ նոր` համապարփակ ու բազմակողմանի ուսումնասիրություններ և վիճակագրական անհրաժեշտ ցուցանիշներ: Ցավոք, մինչ այժմ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող փաստաթղթերում չեն առանձնացվում Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 14-ի N 798 որոշմամբ հաստատված՝ Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգով սահմանված երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտները: Նշված խնդրին անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010 թվականի հունիսի 19-ի նիստում, որի «Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհրդի 2010 թվականի գործունեության ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ միջոցառումների մասին» N 3 որոշման 1-ին կետով համապատասխան առաջարկ է ներկայացվել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը:<br>Առկա խնդիրների առաջարկվող լուծումներն են՝<br>- 2011 թվականին Հայաստանի երիտասարդության նոր ազգային զեկույցի մշակում,<br>- Երիտասարդական ուսումնասիրությունների համար անհրաժեշտ վիճակագրական ցուցանիշների վարում, համակարգում, ամփոփում:<br>Կարգավորման առարկան է հանդիսանում՝<br>- հանրապետության երիտասարդության շրջանում բազմակողմանի և համապարփակ ուսումնասիրությունների իրականացում, և արդյունքում, Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցի պատրաստում ու հրապարակում,<br>- համապատասխան երիտասարդական վիճակագրության բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող հետազոտությունների և տվյալների հրապարակումների ժամանակ երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտների հստակորեն առանձնացում:<br>Ակնկալվող արդյունքն է՝ Հայաստանի Հանրապետությունում երիտասարդական պետական քաղաքականության արդյունավետության ապահովման և զարգացման համար անհրաժեշտ երիտասարդության վերաբերյալ համապարփակ տեղեկատվության և հետազոտությունների առկայություն: |
| **ՀՀ սփյուռքի նախարարություն** | |
| 23. | **Նպաստել հայապահպանությանը, հայկական համայնքների ինքնակազմակերպմանը, միջհամայնքային և Հայաստան-սփյուռք կապերի զարգացմանը**<br><br>Հայ ժողովրդի 2/3-ը բնակվում է հայրենիքից դուրս և համաշխարհայնացման ու ազատականացման գործընթացներն ազդում են ուծացման |

| | |
|---|---|
| | արագացման վրա, քանի որ արժեհամակարգերի տարբերությունները և օտար արժեքների գերակայությունը, ինչպես քարոզչության, այնպես էլ պարտադրանքի միջոցով, ինքնըստինքյան բերում են ազգային արժեքների՝ աստիճանաբար երկրորդ պլան մղվելուն, իսկ այնուհետև՝ նաև մոռացությանն ու կորստին:<br>Այս առումով առաջին պլան են մղվում հայապահպանության հիմնախնդիրները Հայաստանի պետության և սփյուռքյան կառույցների կողմից: Խնդրի լուծման կարևորագույն ուղղություններն են կրթական և մշակութային ծրագրերի իրականացումը, տեղեկատվության փոխանակումը, մեկօրյա դպրոցների ցանցի ընդլայնումը, հայկական տուրիզմի խթանումը և աշխարհասփյուռ հայ երիտասարդության կապերի ամրապնդումը պատմական հայրենիքի հետ: |
| 24. | **Սփյուռքում հայկական մասնագիտական ներուժի համախմբում և նրա ներգրավում Հայաստանի զարգացման գործընթացում**<br><br>Աշխարհում տեղի ունեցող արագ փոփոխություններին, հատկապես գիտության, նորարարության և տարբեր մասնագիտական ոլորտների զարգացումներին տեղյակ լինելու, նոր գաղափարները գործնականում կիրառելու, նույն բնագավառի հայ մասնագետներին սփյուռքի և Հայաստանի, սփյուռքը սփյուռքի հետ կապելու և ծագած խնդիրների լուծմանը ներգրավելու համար անհրաժեշտ է հայտնաբերել և համախմբել հայկական մասնագիտական ներուժը՝ ի նպաստ Հայաստանի տնտեսական, սոցիալական և քաղաքական հզորացմանը և Հայաստան-սփյուռք գործակցության զարգացմանը:<br>100-ից ավելի երկրներում գոյություն ունեն հայկական համայնքներ, որոնցից ոչ բոլորն են կազմակերպված՝ չունեն դպրոցներ, մշակութային կենտրոններ, եկեղեցիներ, մարզական, հասարակական կազմակերպություններ: Հայկական ինքնության շուրջ սփյուռքի համայնքների միավորման ու համախմբման, ինչպես նաև Հայաստան-սփյուռք գործուն կապերի ամրապնդման համար խիստ կարևորվում են համայնքային ինքնակառավարման կառույցների ստեղծումը, գործող և ձևավորվող կառույցների շուրջ համայնքների համախմբումը: |
| 25. | **Ազգահավաքի և հայրենադարձության խթանում**<br><br>Խոշոր սփյուռք ունենալու դեպքում հայրենադարձության խթանումն իրոք գերակա հարց է: Հայրենադարձությունը նաև հայապահպանությունը խթանող միջոց է: Հայրենադարձությունը կնպաստի Հայաստանի ժողովրդագրական և տարածքային-ռազմավարական խնդիրների լուծմանը: Հայրենադարձությունը գործընթաց է, որը պահանջում է երկարատև նախապատրաստական աշխատանքներ՝ նպատակային քարոզչությունից սկսած մինչև օրենսդրական համապատասխան փոփոխությունների իրականացում:<br>Հայրենադարձությունը նաև պահանջ է առաջադրում Հայաստան երկիրը բոլոր առումներով գրավիչ դարձնելու:<br>Ներկայումս քիչ թիվ չեն կազմում սփյուռքահայերը, որոնք ցանկություն ունեն հաստատվել ՀՀ-ում, սակայն ակնկալում են պետության աջակցությունը: |
| | **ՀՀ առողջապահության նախարարություն** |
| 26. | **2011 թվականին համավճարի համակարգի ներդրում անհետաձգելի և զինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման բնագավառներում**<br>ՀՀ առողջապահության համակարգի ֆինանսավորման բարեփոխումները նպատակ ունեն առավել օպտիմալ դարձնելու բժշկական հիմնական ծառայությունների փաթեթը, բարձրացնելու առողջապահության ոլորտում ֆինանսավորման գործող մոտեցումների և մեխանիզմների արդյունավետությունը և հասցեականությունը, մշակելու և աստիճանական ներդնելու պետության կողմից ֆինանսավորվող ծառայությունների իրական ինքնարժեքի վրա հիմնված գներ: Նշված գները կիրառելու նպատակով 2011 թ. անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման ծրագրերում նախատեսվում է պետության կողմից իրականացվող ֆինանսավորման հետ մեկտեղ ներդնել նաև համավճարային մեխանիզմներ, ինչը նախատեսում է ծառայության փոխհատուցման հարցում բնակչության մասնակցությունը: |

| | |
|---|---|
| | Գործող գների անհամապատասխանությունն առողջապահական շուկայում գործող ծառայությունների գների հետ պատճառ է հանդիսանում ստվերային շրջանառության առաջացման համար, ինչը միտված է լինում ծածկելու գների առկա տարբերությունը: Մասնավորապես, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ տարբերությունն առողջապահության տարբեր ոլորտներում տատանվում է միջինում 70-100% -ի շրջանակներում:<br>Բժշկական ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմների ներդրման ընդլայնում հանրապետության այլ բժշկական հաստատություններում ևս, այդ թվում՝ տարբեր, այլ մեխանիզմների կիրառմամբ: Մասնավորապես, համավճարի չափը սահմանվելու է բժշկական ծառայությունների իրական ինքնարժեքի և պետության կողմից սահմանված գնի տարբերությամբ: Համավճարի չափը դիֆերենցված է լինելու ըստ մարզերի և Երևանի՝ նպատակ ունենալով ՀՀ մարզերում բնակչության մասնակցությունը համավճարի ձևով համամասնորեն սահմանել ավելի ցածր, քան Երևան քաղաքում: 2011 թ. նախատեսվում է ծրագիրն իրականացնել ամբողջ հանրապետության տարածքով՝ անհետաձգելի և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման ծրագրերով:<br>Գերակա խնդրի կարգավորման առարկա է հանդիսանում բժշկական ծառայությունների ինքնարժեքի և իրական գների մշակումը, որի արդյունքում ներդրվելու են համավճարային մեխանիզմները:<br>Համավճարային համակարգի ներդրման ընդլայնումը հանրապետության ամբողջ տարածքով հավասար պայմաններ կստեղծվի բժշկական օգնություն իրականացնողների համար և համավճարի չափի դիֆերենցված սահմանումը հաշվի է առնում ազգաբնակչության վճարունակության մակարդակը: Համավճարի ներդրման արդյունքում գոյացած ֆինանսական միջոցները նպաստելու են բուժօգնության ծառայությունների որակի, բժշկական հաստատությունում ֆինանսական հոսքերի կառավարման բարելավմանը, բնակչության համար ֆինանսական ծախսերի կանխատեսելիության ավելացմանը: Նշված միջոցներն ուղղվելու են նաև բուժանձնակազմի աշխատավարձերի բարձրացմանը, որի նպատակով նաև սահմանվելու է բուժանձնակազմի վարձատրման հստակ կարգ: |
| 27. | **Առողջության առաջնային պահպանման օղակում ըստ կատարողականի (խրախուսական)՝ ֆինանսավորման կարգի հաստատում և ներդրում**<br><br>Ըստ կատարողականի (խրախուսական)՝ ֆինանսավորման և վարձատրության համակարգի ներդրումը նպատակ ունի վերացնելու համահարթեցումը բժշկական հաստատությունների և բժիշկների միջև, բժշկական հաստատություններին հատկացնելու խրախուսական ֆինանսավորում, իսկ բժիշկներին համապատասխան խրախուսական վարձատրություն ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված գործունեության ցուցանիշների գնահատականից ելնելով:<br>Ներկայումս ԱԱՊ ծառայություններ մատուցողների ֆինանսավորումն իրականացվում է ըստ մարդաշնչի ֆինանսավորման սկզբունքով: Այսինքն, ԱԱՊ մատուցող բժշկական հաստատությունների պայմանագրային գումարները հաշվարկվում, և ֆինանսավորումն իրականացվում է իրենց կցագրված բնակչության թվից ելնելով: ԱԱՊ ծառայություններ իրականացնող բժիշկներն էլ վարձատրվում են համապատասխանաբար իրենց կցագրված բնակչության թվից ելնելով: Այսինքն, ուղղակիորեն հաշվի չի առնվում բժշկական հաստատությունների և բժիշկների կողմից մատուցվող ծառայությունների քանակական և որակական ցուցանիշները:<br>ԱԱՊ ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների և բժիշկների կողմից իրականացվող ծառայությունների քանակական և որակական ցուցանիշների կատարողականների գնահատման, դրանց հիման վրա բժշկական հաստատությունների և բժիշկներին լրացուցիչ խրախուսական ֆինանսավորման և վարձատրման համակարգի ներդրման նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել ըստ կատարողականի (խրախուսական)՝ ֆինանսավորման և վարձատրության, ինչպես նաև բժշկական հաստատությունների կողմից ներկայացված և ըստ կատարողականի (խրախուսական)՝ ֆինանսավորման և վարձատրության հիմք հանդիսացող հաշվետվությունների մոնիթորինգի իրականացման |

| | |
|---|---|
| | կարգերը: <br> Գերակա խնդրի կարգավորման առարկան ԱԱՊ ծառայություններ իրականացնող բժշկական հաստատությունների և բժիշկների գործող ֆինանսավորման և վարձատրության նոր մոտեցումների սահմանումն է: <br> Ըստ կատարողականի (խրախուսական)՝ ֆինանսավորման և վարձատրության կարգի մշակման և հաստատման միջոցով հնարավոր կլինի ֆինանսապես խրախուսել այն բժշկական հաստատությունների և բժիշկներին, որոնց գործունեության արդյունքները գնահատվել են հաստատված չափաբաժիններով, ինչը զգալիորեն կբարձրացնի բժշկական հաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների որակը, հնարավորություն կտա գնահատելու ԱԱՊ ծառայություններ մատուցող բժիշկների աշխատանքը՝ ելնելով որոշակի առողջապահական ցուցանիշներից: |
| 28. | **Երեխայի առողջության պետական հավաստագրի համակարգի ներդրման ծրագրի մշակում և իրականացում** <br><br> Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է մանկական հիվանդանոցային ծառայությունների մատչելիության և որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու հրատապ անհրաժեշտությամբ: <br> Առողջապահության բնագավառում մտահոգության առարկա է դառնում մանկական հիվանդանոցային օգնության մատչելիության ու որակի անկման միտումը, ինչպես նաև երեխաների հիվանդանոցային մահաբերության ցուցանիշի աճը, հատկապես, մարզային մակարդակում: <br> Ներկայումս մանկական հիվանդանոցային բուժօգնության ոլորտում առկա են հետևյալ խնդիրները՝ <br> 1) երեխաների հիվանդանոցային, հատկապես, մինչշուրջօրյա մահաբերության բարձր մակարդակ, ինչը հիմնականում պայմանավորած է մանկական հիվանդանոցային, մասնավորապես, վերակենդանացման և անհետաձգելի բուժօգնության ծառայությունների ցածր մատչելիությամբ և որակով. <br> 2) երեխաներին մատուցվող հիվանդանոցային ծառայությունների փոխհատուցման արժեքը ցածր է այդ բուժօգնության դիմաց ծախսվող իրական արժեքից. <br> 3) բուժաշխատողների ցածր աշխատավարձերն անուղղակիորեն նպաստում են մանկական հիվանդանոցային հաստատություններում առկա վճարումների ստվերային շրջանառությանը. <br> 4) մանկական հիվանդանոցային ծառայությունում առկա որակյալ աշխատանքի ոչ բավարար մոտիվացիան բերում է մարդկային ռեսուրսների արտահոսքին: <br> Ծննդօգնության պետական հավաստագրի ներդրման ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով՝ Մոր և մանկան առողջության պահպանման 2011 թ. պետական նպատակային ծրագրի շրջանակներում 2011 թ. հունվարի 1-ից առաջարկվում է է իրականացնել 0-7 տարեկան երեխաների հավաստագրի համակարգի ներդրում: <br> Գերակա խնդրի կարգավորման առարկա է հանդիսանում երեխաների հիվանդանոցանոցային բուժման մատչելիության և որակի բարելավումը: <br> Երեխայի առողջության պետական հավաստագրի ներդրմամբ ակնկալվում է ապահովել երեխաների հիվանդանոցային ծառայությունների իրական մատչելիությունը և որակը, նվազեցնել համակարգում տեղ գտած ոչ պաշտոնական վճարումների գործելակերպը, բարելավել բժիշկ-պացիենտ հարաբերությունները՝ բարձրացնելով բուժաշխատողների աշխատավարձերը և նպաստելով բուժաշխատողների որակյալ աշխատանքի մոտիվացիայի ձևավորմանը, իրականացնել պետության կողմից անվճար բուժօգնության համար երեխաներին տրված երաշխիքները և սոցիալական արդարության սկզբունքները, նվազեցնել երեխաների հիվանդանոցային մահաբերությունը և կրճատել հանրապետությունում մանկական մահացության ցուցանիշը: |

29. **Շտապ բժշկական օգնության և սպասարկման հայեցակարգի ներդրում, շտապօգնության ծառայությունների որակի և մատչելիության բարելավում**

Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 15.07.2010 թ. N 894-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության շտապ բժշկական օգնության ծառայության արդիականացման ռազմավարության ներդրման և շտապ օգնության ծառայությունների որակի, տեխնոլոգիական հագեցվածությունն արդիականացնելու անհրաժեշտությամբ:
Հայաստանի Հանրապետության շտապ բժշկական օգնության ծառայության արդիականացման ռազմավարությունը նպատակ ունի բարելավելու հանրապետության արտահիվանդանոցային շտապ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների որակն և մատչելիությունը՝ դրանով ապահովելով կյանքին սպառնացող վիճակներում շտապ բժշկական օգնության ծառայության արդյունավետ կազմակերպումը Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Ներկայումս՝
1) շտապ օգնության ծառայության ավտոպարկը հին է, անբավարար հագեցվածությամբ և միայն վերջին երկու տարում է, որ հանրապետության մարզերի որոշ բժշկական հաստատություններին տրամադրվել են շտապօգնության նոր մեքենաներ.
2) շտապ օգնության կանչերն ընդունվում են «1-03» հեռախոսահամարով: Հեռախոսակապը Երևանում իրականացվում է կենտրոնացված ենթակարգավարական ծառայության միջոցով, որն ստացված կանչերը փոխանցում է ենթակայաններին: Ունեն ռադիոկապ, որը բավական հնամաշ է (60-ական թթ.-ի), կատարվում է կանչերի աուդիոձայնագրություն: Հայաստանի Հանրապետության մարզերում շտապ օգնության կանչերը, ինչպես նաև մարզերից արտագնա անհետաձգելի բուժօգնության ծառայության կանչերը հիմնականում ստացվում են հեռախոսակապի միջոցով, ռադիոկապ չկա, աուդիոգրանցում չի իրականացվում, այլ միայն կատարվում են գրառումներ՝ ծառայության հատուկ մատյաններում: Վատ է հեռախոսակապը մարզերի գյուղական բնակավայրերի հետ, որոնցից շատերի բուժկետերն ընդհանրապես հեռախոսակապ չունեն.
3) Երևանի «Շտապ բժշկական օգնություն» կենտրոնը կարիք ունի որակյալ վերակենդանացման մասնագետների, իսկ Հայաստանի Հանրապետության մարզերում շտապ օգնության ծառայությունն ունի մասնագետների պահանջարկ՝ ծառայությունն իրականացնող բժիշկները մեծ մասամբ համատեղողներ են՝ այն հիվանդանոցներից, որոնց կազմում գործում է շտապ օգնությունը.
4) ծառայության ֆինանսավորումը և մասնագետների վարձատրությունը կարիք ունի վերանայման և հետագա բարելավման, քանի որ այն հիմք է հանդիսանալու հանրապետության մարզային շտապ օգնության ծառայությունների համալրման համար:
Առաջարկվող լուծումներն են՝
1) շտապ օգնության ծառայության ավտոպարկի նորացումը. ժամանակակից սարքավորումներով և պարագաներով հագեցումն իրականացվելու է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ապրանքային դրամաշնորհի շրջանակներում.
2) շտապ բժշկական օգնության և սպասարկման կանչերի ընդունման միասնական համակարգի ներդրում. ստեղծվելու է միասնական դիսպետչերական կենտրոն: Կանչերի ընդունումն իրականացվելու է GPRS արբանյակային կապի միջոցով, որը հնարավորություն կընձեռի արագ արձագանքման, ինչպես նաև առավելագույնը վերահսկելի դարձնել կանչերի իրականացման ընթացքում մեքենաների տեղաշարժը, գտնվելու կոնկրետ վայրը, կանչի տևողությունը, կատարված ծախսերը (վառելանյութ, դեղեր և այլն).
3) կադրային վերազինում. ծառայության վերակենդանացման բրիգադների համալրման նպատակով իրականացվելու է առաջատար կլինիկաների բժիշկ-ռեանիմատոլոգների և կլինիկական օրդինատորների ներգրավում շտապ օգնության համապատասխան բրիգադներում: Համաձայն նախապես կազմված ժամանակացույցի և կրթական ծրագրերի՝ իրականացվելու է մասնագետների վերապատրաստում (բժիշկներ, բուժքույրեր, վարորդ - սանիտարներ).
4) ծառայության ֆինանսավորման և մասնագետների վարձատրության սկզբունքների վերանայում, զգալիորեն բարձրանալու է մասնագետների

| | |
|---|---|
| | վարձատրության չափը, ինչը հնարավորություն կընձեռի մասնագետներին։<br>Գերակա խնդրի կարգավորման առարկա է հանդիսանում շտապ և անհետաձգելի բժշկական օգնության ծառայությունների արդիականացումը,տեխնիկական և կադրային վերազինումը։<br>Գերակա խնդրի իրականացման արդյունքում ակնկալվում է շտապ և անհետաձգելի բժշկական օգնության ծառայությունների որակի և մատչելիության էական բարելավում։ |
| **ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն** | |
| 30. | **Վանաձոր–Ֆիոլետովո նոր երկաթգծի նախագծման աշխատանքների կազմակերպում**<br><br>2011 թվականի գերակա խնդիր հանդիսացող՝ Վանաձոր-Ֆիոլետովո նոր երկաթգծի շինարարության ֆինանսավորման, նախագծային-նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստման և շինարարական աշխատանքների իրականացմանն ուղղված իրավական ակտերի ընդունումը, պայմանավորված է Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական և տնտեսական մեծ նշանակություն ունեցող Վանաձոր-Ֆիոլետովո նոր երկաթգծի շինարարության ծրագրի իրականացման հետ կապված հարցերի կարգավորման և հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից։ Նոր երկաթգիծը կոչված է միացնելու Աղստաֆա-Իջևան-Հրազդան-Երևան երկաթուղային ուղղությունը Թբիլիսի-Գյումրի-Մասիս երկաթուղային ուղղության հետ և դրանով ապահովելու ինչպես միջմարզային, այնպես էլ միջհանրապետական փոխադրումների հեռավորությունների և արժեքի զգալի կրճատում։<br>Կարգավորման կարիք ունեն նոր երկաթգծի շինարարության Հայաստանի Հանրապետության կողմից ֆինանսավորման մասնակցության, ընտրված ծրագծի վրա հնարավոր հիմնախնդիրների լուծման և այլ հարցեր։<br>Նոր երկաթգծի շինարարության ֆինանսավորման խնդիրն առաջարկվում է լուծել շահավետ պայմաններով վարկային միջոցների հաշվին, իսկ ընտրված ծրագրի հետ կապված հիմնախնդիրները պետք է լուծվեն գործող օրենսդրության շրջանակներում։<br>Գերակա խնդրի կարգավորման առարկա է հանդիսանում Վանաձոր-Ֆիոլետովո նոր երկաթգծի շինարարության ֆինանսավորման, նախագծային-նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստման և շինարարական աշխատանքների իրականացման հարցերը։<br>Ակնկալվող արդյունքն է ռազմավարական և տնտեսական նշանակություն ունեցող՝ Վանաձոր-Ֆիոլետովո նոր երկաթգծի շինարարության ֆինանսավորման, նախագծային-նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստման և շինարարական աշխատանքների անխափան իրականացումը։ |
| 31. | **Հյուսիս-հարավ նոր երկաթգծի տեխնիկատնտեսական հիմնավորման աշխատանքների կազմակերպում**<br>2011 թվականի գերակա խնդիր հանդիսացող՝ Հյուսիս-հարավ նոր երկաթգծի տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման աշխատանքների իրականացման մրցույթի կազմակերպման, պայմանագրի ստորագրման և նախապատրաստական այլ աշխատանքների կազմակերպմանն ուղղված իրավական ակտերի ընդունումը պայմանավորված են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար ռազմավարական և տնտեսական առաջնային նշանակություն ունեցող՝ Հյուսիս-հարավ նոր երկաթգծի շինարարության ծրագրի իրականացման հետ կապված խնդիրների լուծման և կարգավորման անհրաժեշտությունից։ Նոր երկաթգիծը կոչված է կապելու Պարսից Ծոցի նավահանգիստները Սևծովյան նավահանգիստների հետ՝ ապահովելով միջպետական մուլտիմոդալ բեռնափոխադրումներ, և հետագայում ունենալով մեծ նշանակություն՝ Հայաստանը երկաթուղային տարանցիկ երկիր դարձնելու գործում։<br>Առաջնային կարգավորման կարիք ունի նոր երկաթգծի տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման աշխատանքների իրականացման |

| | |
|---|---|
| | մրցույթի կազմակերպման և պայմանագրի ստորագրման հարցը: Նոր երկաթգծի տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման հարցն առաջարկվում է լուծել շահավետ պայմաններով՝ վարկային միջոցների հաշվին և աշխատանքների իրականացման համար մրցույթի կազմակերպման միջոցով: Գերակա խնդրի կարգավորման առարկա է հանդիսանում Հյուսիս-հարավ նոր երկաթգծի տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման աշխատանքների իրականացման մրցույթի կազմակերպման, պայմանագրի ստորագրման և նախապատրաստական այլ աշխատանքների կազմակերպման հարցերը: Ակնկալվող արդյունքն է Ազգային անվտանգության համար ռազմավարական և տնտեսական առաջնային նշանակություն ունեցող՝ Հյուսիս-հարավ նոր երկաթգծի տեխնիկատնտեսական հիմնավորման մշակման աշխատանքների իրականացման մրցույթի կազմակերպման, պայմանագրի ստորագրման և նախապատրաստական այլ աշխատանքների կազմակերպման իրագործումը: |
| 32. | **Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 1, Տրանշ 2 և Տրանշ 3 շինարարական աշխատանքների նախապատրաստում և կազմակերպում** 2011 թվականին հաստատվելու է ՊՖՀ-2 (պարբերական ֆինանսավորման հայտ), որի հիման վրա ստորագրվելու է Տրանշ 2 վարկային պայմանագիրը: Ծրագրի իրականացումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական և տնտեսական մեծ նշանակություն ունեցող՝ Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի վերակառուցման և անվտանգության բարձրացման, ինչպես նաև ծրագրի հարցերի կարգավորման և հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է, որ Հայաստանը կունենա կրկնապատկված արտահանում և մոտավորապես 1.8 անգամ ավելի ներմուծում մինչև 2017 թ-ը, նվազելու է միջանցքով ճանապարհորդելու ժամանակը 4-ից մինչև 2 օր, կրկնապատկվելու է օրական միջին երթևեկության ցուցանիշը 3000-ից մինչև 6000, 2017 թ.-ին, միջանցքի երկայնքով ստեղծվելու է ենթակառուցվածք, այսինքն՝ նոր աշխատատեղեր, եկամուտներ, նվազելու են ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը և ճանապարհի ու տրանսպորտային միջոցների պահպանման ծախսերը: Առաջին տրանշի (փուլի) շինարարական աշխատանքների վերահսկողության և երկրորդ ու երրորդ փուլերի ծրագրի նախապատրաստական աշխատանքներն իրականացնող խորհրդատուն ներկայումս ճշգրտում է ճանապարհի ուղեծիրը և նախագիծը՝ պատրաստելով երկրորդ տրանշի մանրամասն նախագիծ: Կարևորագույն խնդիրներից է երկրորդ տրանշի վարկային համաձայնագրի ստորագրման խնդիրը: Առաջիկայում «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպությունն» ՊՈԱԿ-ը խնդիր ունի 2011 թվականին կազմակերպել և ապահովել բազմափուլ ծրագրի Տրանշ 2-ի և Տրանշ 3-ի նախագծման և շինարարական աշխատանքները: Առկա խնդիրները կարգավորելու նպատակով նախատեսվում է 2011 թվականին կատարել 1-ին, 2-րդ և 3-րդ տրանշերի շինարարների ընտրությունը: Գերակա խնդրի կարգավորման առարկա է հանդիսանում Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շինարարության իրականացում, նախագծային-նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստման և շինարարական աշխատանքների անխափան իրականացման հարցերը: Ակնկալվող արդյունքն է ռազմավարական և տնտեսական նշանակություն ունեցող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի 2011 թվականին ծրագրավորված խնդիրների լուծումների արդյունքում կունենանք Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի առաջին երեք տրանշերի շինարարական աշխատանքների կատարման ընթացքը: |
| 33. | **Փոստի կառավարման նոր մոդելի ներդրման վերաբերյալ** Փոստի կառավարման նոր մոդելի ներդրումը պայմանավորված է ՀՀ վարչապետի 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 706-Ա որոշմամբ |

| | |
|---|---|
| | «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի հավատարմագրային կառավարման ընթացքն ուսումնասիրելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից ներկայացված ուսումնասիրության արդյունքներով, ինչպես նաև ներկայումս գործող կառավարման մոդելում առկա բացթողումների վերացման անհրաժեշտությամբ:<br>Կառավարման նոր մոդելի ներդրումը հնարավորություն կընձեռի ապահովելու ներդրումային ծրագրերի և նրանց կատարման ժամկետների առավել արդյունավետ կիրառումը, կապահովի «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների ընդլայնումը, արդիականացումը և բարելավումը, ինչպես նաև հնարավորություն կընձեռի բարեփոխելու փոստային կապի բնագավառի զարգացման քաղաքականությունը:<br>Կառավարման նոր մոդելի ներդրումը հնարավորություն կտա երկարաժամկետ և ավելի մեծ ծավալի ֆինանսական ներդրումների միջոցով «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից փոստային կապի ծառայությունների մատուցումն իրականացնել միջազգային նորմերին համապատասխան: |
| **ՀՀ քաղաքաշինության նախարարություն** | |
| 34. | **Բնակարանային ապահովում՝ աղետի գոտու բնակավայրերում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման միջոցով**<br><br>Բնակարանային ապահովում՝ աղետի գոտու բնակավայրերում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման միջոցով ծրագիրը որպես 2011 թվականի գերակա խնդիր դիտարկելու առաջարկությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N 878-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2008-2012 թթ.. գործունեության միջոցառումների ծրագրի դրույթների ապահովման անհրաժեշտությամբ:<br>ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով աղետի գոտու բնակավայրերում իրականացվող բնակարանային շինարարության ուղղությամբ նախատեսվող 25973.081 մլն դրամ միջոցների հաշվին ակնկալվում է լուծել 3131 ընտանիքների բնակարանային խնդիրները: |
| 35. | **Քաղաքաշինության գործունեության հատուկ կարգավորման բնագավառի օրենսդրության կատարելագործում և ՀՀ բնակավայրերում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորում**<br><br>Քաղաքաշինության գործունեության հատուկ կարգավորման բնագավառի օրենսդրության կատարելագործման և ՀՀ բնակավայրերում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գործընթացների իրականացումը պայմանավորված է ՀՀ բնակավայրերում (այդ թվում՝ Երևան քաղաքում) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների քաղաքաշինական հիմնախնդիրների, դրանց կարգավորմանն ուղղված ենթաօրենսդրական ակտերի ներդրման միջոցով կանոնակարգելու, ՀՀ բնակավայրերում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքների առանձնացման, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման առանձին տարածքներում կառուցապատման չափորոշիչների, տարածքների զարգացմանը նպատակաուղղված առանձին ներդրումային ծրագրերի մշակման անհրաժեշտությամբ: |
| 36. | **Հայաստանի Հանրապետությունում տարածական պլանավորման համակարգի բարեփոխում, քաղաքաշինության ոլորտում համայնքների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում** |

| | |
|---|---|
| | Տարածական պլանավորման (քաղաքաշինական ծրագրային) փաստաթղթերի մշակման և հաստատման իրավական հիմքերի արդիականացման, կարգավորման ենթակա խնդիրների բացահայտման, նոր ընթացակարգերի մշակման, ՀՀ համայնքների պատվիրատվությամբ ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքների համակարգման և տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններին աջակցության գործառույթների իրականացումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 3-ի նիստի N 36 արձանագրային որոշմամբ հաստատված՝ ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացի բարեփոխման հայեցակարգային դրույթների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ՀՀ քաղաքաշինության նախարարությանը վերապահված լիազորությունների իրագործման անհրաժեշտությամբ: |
| 37. | **ՀՀ տարածքում ինքնակամ շինարարության հիմնախնդիրների լուծման միջոցառումների իրագործում**<br><br>ՀՀ տարածքում ինքնակամ շինարարության դեմ պայքարի հիմնախնդիրների լուծման միջոցառումների իրագործումը պայմանավորված է 2010 թվականի փետրվարի 11-ի ՀՀ կառավարության նիստի N 5 արձանագրության 18-րդ կետի 2-րդ ենթակետով, համաձայն որի անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել ՀՀ տարածքում ինքնական շինարարության դեմ պայքարի հիմնախնդիրների լուծման հայեցակարգային դրույթների (միջոցառումների) իրագործման ժամանակացույցը:<br>Վերջիններիս իրագործմամբ ակնկալվում է բարձրացնել ինքնակամ շինարարության դեմ պայքարի արդյունավետությունը, ոլորտի նկատմամբ պետական վերահսկողություն և հսկողություն իրականացնող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների ու պարտականությունների հստակեցման, ինքնակամ շինարարություն իրականացնողների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների խստացման, ինքնակամ շինարարության օրինականացման գործընթացի սահմանափակման, ինքնակամ շինարարության օրինականացման և տնօրինման կարգերում ինքնակամ շինարարությանը նպաստող պայմանների վերացման միջոցով: |
| 38. | **Քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կանոնակարգում**<br><br>Քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կանոնակարգմանն ուղղված միջոցառումների իրագործումը պայմանավորված է 2010 թվականի դեկտեմբերի 2-ի մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի նիստի N 24.11/55051-10 արձանագրության 8-րդ կետի 2-րդ ենթակետի հանձնարարականով, համաձայն որի նախատեսվում է մշակել օպտիմալացված ընթացակարգեր համայնքի ղեկավարների կողմից տրվող թույլտվությունների տրամադրման մատչելիության ապահովման և սահմանված ժամկետների կրճատման նպատակով:<br>Մասնավորապես, ըստ առաջնահերթության, նախատեսվում է ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 15-ի «Հայաստանի Հանրապետության համայնքներում (բնակավայրերում) անհատական բնակելի տների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգի ներդրման ու կիրառման կարգը հաստատելու մասին N 440-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել համապատասխան փոփոխություններ` կառուցապատողի կողմից տարածքի հետ տեղակապված ու համաձայնեցված բնակելի տան նախագծի, շինարարության թույլտվության, ինչպես նաև ավարտված շինարարության շահագործման ակտի փաստագրման ձեռքբերումը՝ սահմանված ժամկետների կրճատմամբ, էլեկտրոնային թույլտվությունների մեխանիզմների ներդրման միջոցով ապահովելու համար: |

<table>
<tr><td>39.</td><td>«Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի բարելավում</td></tr>
<tr><td></td><td>Տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմանը երկրում գործարարության զարգացումն է: Գործարարությանն առնչվող ընթացակարգերն իրենց պարզությամբ և թափանցիկությամբ դեռևս հեռու են բավարար լինելուց: Գործարարության զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման պետական քաղաքականությունն ուղղված է առավելագույնս բարենպաստ միջավայրի ստեղծմանը, տնտեսության առավել ազատականացմանը, ազատ մրցակցության խթանմանը, վարչարարական ընթացակարգերի առավելագույնս պարզեցմանը, սպառողների շահերի արդյունավետ պաշտպանությանը:<br>Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է «Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի գերազանցության կենտրոն» համազգային ծրագրի հայեցակարգի և Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի, ինչպես նաև տեսչական բարեփոխումների շարունակական իրականացումը:<br>Աշխատանքներ կտարվեն «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման համար հիմք հանդիսացող բաղադրիչների բարելավման ուղղությամբ, մասնավորապես, քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կատարելագործում, շինարարական թույլտվությունների ստացման ժամկետների կրճատում և այլն:<br>Գործարարությամբ զբաղվելու համար Հայաստանը տարածաշրջանային գերազանցության կենտրոն դարձնելու խնդիրը ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրի և ՀՀ կառավարության հռչակած համազգային նախագծերից մեկն է, որի հետևողական իրականացումը ՀՀ հեռանկարային զարգացման երաշիքներից է: Արդյունքում, ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունը դարձնել տարածաշրջանում գործարար և ներդրումային լավագույն միջավայր ունեցող երկիր, մասնավորապես, բարելավել Հայաստանի դիրքը Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման մեջ:</td></tr>
<tr><td colspan="2">ՀՀ կրթության և գիտության նախարարություն</td></tr>
<tr><td>40.</td><td>Նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացում<br>Հանրակրթության որակի ապահովման տեսանկյունից կարևորվում է երեխաների վաղ ընդգրկումը կրթական ծրագրերում, մինչդեռ հանրապետության շատ համայնքներում դեռևս չկան նախադպրոցական կրթական ծառայություններ: Նախադպրոցական ծառայությունների մատչելիությունը խիստ անհավասար է Հայաստանի տարբեր տարածքներում:<br>Նախադպրոցական կրթության համակարգի ուսումնասիրությունն ու արդի վիճակի նկարագիրը թույլ է տալիս առանձնացնել համակարգում առկա հետևյալ հիմնական խնդիրները. երեխաների ընդգրկվածության ցածր մակարդակը, նախադպրոցական հաստատությունների անբավարար ցանցը, մատուցվող ծառայությունների ոչ բավարար որակը և դրանց անմատչելիությունը սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար:<br>Համակարգի մատչելիության բարձրացման և երեխաների ընդգրկվածության մեծացման համար, համաձայն ՀՀ նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թթ. ռազմավարական ծրագրի, նախատեսվում է քիչ ծախսատար նախադպրոցական կրթական ծառայությունների ներդրման միջոցով բարձրացնել նախադպրոցական կրթության մատչելիությունը` հատկապես բնակչության առավել անապահով խավերի համար:<br>Համաձայն «ՀՀ նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման հետագա ընթացքի մասին» ՀՀ կառավարության 16.06.2009 թ. N 29 որոշման՝ նախատեսվում է նախադպրոցական հաստատություններ չունեցող շուրջ 70 համայնքներում կազմակերպել ոչ ծախսատար նախադպրոցական ծառայություններ` ուղղված դպրոցին նախապատրաստմանն ու կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովմանը:<br>Ակնկալվում է 2011 թվականին նախադպրոցական կրթության մեջ շուրջ 2000 երեխաների ընդգրկում:</td></tr>
</table>

| | |
|---|---|
| 41. | **Հանրակրթության ոլորտի բարեփոխումներ**<br><br>Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ 2010-2012 թթ. գերակա ուղղություններն են 12-ամյա կրթության դասագրքերի, ուսումնաօժանդակ գրականության ստեղծման և ներդրման աշխատանքները, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների ղեկավարների հավաստագրումը և ուսուցիչների ատեստավորումը: Հանրակրթության որակի բարելավման տեսանկյունից կարևորվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման խնդիրները:<br>Ոլորտի զարգացման կարևոր խնդիրներից է 12-ամյա կրթության առարկայական չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքների, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման արդյունավետության բարձրացումը, դպրոցների կառավարման համակարգում կադրային քաղաքականության իրականացումը:<br>Հանրակրթության ոլորտում շարունակվելու է 12-ամյա կրթության ուսումնական պլանի, ինչպես նաև առարկայական նոր ծրագրերի և չափորոշիչների ներդրումը: 2011 թվականին շարունակվելու է եռամյա ավագ դպրոցի ծրագրի ներդրումը, որի հաջողությամբ է մեծապես պայմանավորված հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլը: Դրան համապատասխան շարունակվելու է ավագ դպրոցի դասագրքերի տպագրության գործընթացը, միաժամանակ՝ կարևորելով տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումն ու ուսումնական հաստատությունների տեխնիկական համալրումը, առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ամբողջականացումը: 2011 թվականին կիրականացվեն նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների հավաստագրման և ուսուցիչների ատեստավորման գործընթացները:<br>Կարգավորման առարկան է հանրակրթական բարեփոխումների համատեքստում ուսուցման բովանդակության համապատասխանեցում «Հանրակրթության պետական չափորոշչի» պահանջներին:<br>Ակնկալվում է  հանրակրթության բովանդակությունը սահմանող առարկայական ծրագրերի, դասագրքերի, ուսումնաօժանդակ գրականության որակի բարձրացում:<br>13 նոր ավագ դպրոցների կազմավորում, առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ամբողջացում:<br>Եվս 414 դպրոցի ընդգրկում Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում:<br>50 հանրակրթական ուսումնական հաստատությունների համակարգչային ուսումնական կենտրոնների վերազինում և նորարարական տեխնոլոգիաների ներդրման նպատակով տարբեր հանրակրթական ուսումնական հաստատություններում 5 նեթբուքային դասարանների հիմնում:<br>Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների 20%-ի ատեստավորում և տարակարգ ստացած ուսուցիչների աշխատավարձի հավելավճարների տրամադրում:<br>Հանրակրթական ուսումնական հաստատությունների շուրջ 500 տնօրենների հավաստագրում:<br>Վայոց ձորի մարզի ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված դպրոցահասակ մոտավորապես 2600 երեխաների դպրոցական հագուստի և կոշիկի տրամադրում: |

| | |
|---|---|
| 42. | **Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացում**<br><br>Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում էական նշանակություն ունի նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական որակյալ կրթությունն ու ուսուցումը, որի ապահովումն ու մատչելիությունը հանրապետության տնտեսական աճի, աղքատության ու անհավասարության մեղման կարևորագույն գործոններից է:<br>Հայաստանում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության համակարգի հետագա զարգացումներն ապահովելու և ոլորտը կարգավորելու նպատակով մշակվել և հաստատվել են մի շարք նորմատիվ փաստաթղթեր: Սակայն բարեփոխումները հիմնականում իրականացվել են օրենսդրական դաշտի, անձնակազմի վերապատրաստումների, ուսումնամեթոդական նյութերի արդիականացման ուղղությամբ, իսկ նյութատեխնիկական բազայի հարստացման և վերազինման ուղղությամբ իրականացված բարեփոխումները դեռևս շատ հեռու են արդիական լինելուց, ինչը հանդիսանում է ուսումնական գործընթացի կազմակերպման, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման կարևորագույն գործոններից մեկը:<br>Առաջարկվող լուծումներն են՝<br>- կրթության բովանդակության և չափորոշիչների բարելավում,<br>- կրթական ծրագրերի համապատասխանեցում տնտեսական զարգացման պահանջներին,<br>- ուսուցման կարճաժամկետ ծրագրերի մշակում և ներդրում,<br>- դասավանդող կադրերի կարողությունների հզորացում,<br>- համակարգի մասնագետների տեղեկացվածության օտարերկրյա պետությունների փորձի և լավագույն ձեռքբերումների վերաբերյալ բարձրացում,<br>- միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնանյութական բազայի բարելավում,<br>- համակարգի օպտիմալացում, ինստիտուցիոնալ բարեփոխումներ:<br>Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում գործունեության հիմնական նպատակներն են եղել որակյալ մասնագետների պատրաստումն ու նրանց մրցունակության բարձրացումն աշխատաշուկայում, կրթական ծրագրերի համապատասխանեցումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասարության ապահովումը:<br><br>2011 թ. ընթացքում նախատեսվում է՝<br><br>- նախնական և միջին մասնագիտական կրթության 19 միասնական չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակում ու ներդրում,<br>- 12 նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում,<br>- 12 նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում լաբորատորիաների, համակարգչային լսարանների նորացում և վերազինում: |

43.

**Բարձրագույն կրթության բարեփոխումները՝ ըստ Բոլոնիայի գործընթացի հիմնական ուղղությունների**

2005 թ. Հայաստանը պաշտոնապես միացել է Բոլոնիայի գործընթացին՝ ստանձնելով պատասխանատվություն՝ իրականացնելու Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքների իրականացումն ըստ գործողությունների առանձին ուղղությունների և մասը դառնալ կազմավորվող Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ):

Գործող համակարգը չի ապահովում բյուջետային միջոցների օգտագործման բարձր արդյունավետություն, այն հիմնականում պայմանավորված է պետության կողմից բուհերին ըստ մասնագիտությունների տրվող չափաքանակների սահմանման և բաշխման գործընթացով, ինչպես նաև պետական կրթաթոշակների և ուսանողական նպաստների ձևավորման և հատկացման սկզբունքների անկատարությամբ:

ՀՀ բարձրագույն կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների առանցքային ուղղություններից մեկը ֆինանսավորման համակարգն է, որի նպատակն է ձևավորել և ներդնել բարձրագույն կրթության արդյունավետ և կայուն ֆինանսավորման համակարգ՝ դրանով իսկ մեծացնելով բարձրագույն կրթության մատչելիությունն ու որակը:

Մինչև 2013 թ. Որակավորումների ազգային համակարգը պետք է դառնա Հայաստանում կրթության և ուսուցման համընդհանուր համակարգի բաղկացուցիչ մաս, իսկ շնորհված որակավորումների որակը պետք է ապահովված լինի պետական չափորոշիչներով, որոնք անցել են եվրոպական վերլուծության քննությունը, և պետք է նպաստի աշխատուժի շարժունակությանը՝ տեղական և միջազգային մակարդակում:

Կարգավորման առարկան է՝

- կայուն ֆինանսավորման ռազմավարության մշակում,
- բարձրագույն կրթության ֆինանսավորման մեխանիզմների մշակում,
- ուսանողական վարկերի համակարգի սկզբունքների մշակում,
- որակավորումների ազգային համակարգի հայեցակարգի մշակում:

Ակնկալվում է՝

- բարձրագույն կրթության ֆինանսավորման մեխանիզմների բարելավում, ինչը կնպաստի բուհերին և ուսանողներին տրամադրվող պետական ֆինանսական աջակցության արդյունավետության ու օբյեկտիվության բարձրացմանը, կայուն ֆինանսավորման ռազմավարության հաստատում,
- ուսանողական վարկերի համակարգի հայեցակարգի սկզբունքների մշակումը, ինչը համակարգի ներդրումից հետո հնարավորություն կտա ուսանողներին մատչելի պայմաններով ստանալու ֆինանսավորում ուսման վարձերը վճարելու և ապրուստի կարիքները հոգալու համար,
- առնվազն 2 մասնագիտական ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ փորձաքննության իրականացում և այդ ուսումնական հաստատություններում առնվազն 2 մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման փորձարկում,
- բուհերի կամ դրանց մասնագիտությունների թվի նվազում՝ առնվազն 7-10-ով. բուհերի միավորման համար նպաստավոր պայմանների ապահովում և բուհերում մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորման պայմանների ու

| | |
|---|---|
| | պահանջների ապահովման նպատակով 30 հաստատություններում ուսումնասիրությունների իրականացում:<br>Հայաստանի որակավորումների ազգային համակարգը նշանակալի ներդրում է ունենալու մարդկային ռեսուրսների զարգացման ոլորտում և դրանով իսկ նպաստելու է տեղական և միջազգային ճանաչում ունեցող որակավորումների մակարդակների շրջանակում մատչելիությանը, փոխադրմանն ու առաջխաղացմանը: Առանձնահատուկ կկարևորվի բարձրագույն կրթության համակարգի գրավչության բարձրացմանը միտված տեղեկատվական նյութերի ստեղծումն ու տարածումն արտերկրում: |
| **ՀՀ գյուղատնտեսության նախարարություն** | |
| 44. | **Հանրապետության 5 համայնքում բնական կերահանդակների (արոտավայրերի, խոտհարքների) կառավարման փորձնական ծրագրի իրականացում**<br><br>Հանրապետության բնական կերահանդակների արդյունավետ կառավարման փորձնական ծրագրի նպատակն է բնական կերահանդակների լիարժեք ներգրավումն արտադրական շրջանառության մեջ, արոտավայրերի բարելավման համալիր միջոցառումների իրականացումը և դրանց օգտագործման արդյունավետության բարձրացումը:<br>Գյուղատնտեսության զարգացման ներկա փուլում անբավարար է օգտագործվում բնական կերահանդակները: Վերջիններս զբաղեցնում են հանրապետության գյուղատնտեսական հողատեսքերի 58,7 տոկոսը, սակայն այդ ռեսուրսներն օգտագործվում են ոչ արդյունավետ: Համատարած բնույթ է կրում այդ ռեսուրսի անհավասար օգտագործումը: Մասնավորապես, գյուղամերձ արոտավայրերն օգտագործվում են չափազանց գերբեռնված, իսկ հեռագնա արոտները՝ թերբեռնված: Երկու դեպքում էլ դրանք հանգեցնում են արոտավայրերի դեգրադացման: Չեն իրականացվել բնական կերահանդակների բարելավման, ջրարբիացման, արոտների ճանապարհների վերականգնման աշխատանքներ: Ստեղծված վիճակը բացասաբար է ազդում անասնապահության ճյուղի արդյունավետության վրա: Հետևաբար բնագավառի կարգավորման հիմնական խնդիրներն են՝<br>• արոտավայրերի կառավարման համալիր ծրագրի մշակում և արոտավայրերի օգտագործման սխեմաների հաստատում,<br>• վարձակալական հիմունքներով արոտավայրերի առաջնահերթ տրամադրում անասնապահական կոոպերատիվներին, ֆերմերային խմբերին և ասոցիացիաներին,<br>• արոտավայրերի օգտագործման հնարավորությունների բարելավման նպատակով ջրարբիացման համակարգերի վերականգնում, հողաշինարարական-նախագծային աշխատանքների իրականացում և ճանապարհների վերանորոգում:<br>Առկա խնդիրների լուծմանը կնպաստի հետևյալ քայլերի իրականացումը՝<br>• հանրապետության 5 համայնքի համար 2011 թ. կմշակվեն և կիրականացվեն արոտների կառավարման ծրագրեր: Միաժամանակ, 2012 թ. իրականացնելու նպատակով կմշակվի ևս 21 համայնքի բնական կերահանդակների կառավարման ծրագիր և կտրվի դրանց մեկնարկը, այսինքն, ընտրված համայնքներում կիրականացվեն նախապատրաստական աշխատանքներ,<br>• կստեղծվեն արոտօգտագործողների ասոցիացիաներ (ֆերմերային տնտեսությունների միավորումներ), որոնց գործունեությունը կնպատակաուղղվի գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը,<br>• կմեկնարկվեն առաջնահերթ ներդրումային ծրագրեր ջրարբիացման, արոտների ճանապարհների վերականգնման, արոտների բարելավման, դաշտային կերարտադրության զարգացման և այլ ուղղություններով:<br>Ակնկալվում է ՀՀ Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզերի մեկական համայնքներում (համապատասխանաբար՝ Ավան, Լորուտ, Բերդաշեն, Գորայք և Ներքին Ծաղկավան) շուրջ 25000 հա արոտավայրերի և 3200 հա խոտհարքների կառավարման ծրագրերի |

| | |
|---|---|
| | մշակում, ջրարբիացում, ճանապարհային ցանցի վերանորոգում և արոտավայրերի մակերեսային բարելավում: Այս միջոցառումների արդյունքում արոտավայրերի և խոտհարքների բերքատվությունը կբարձրանա 25-30 տոկոսով, իսկ նպատակային օգտագործման ցուցանիշը կկազմի 85-90 տոկոս: Շնորհիվ նշված որակական փոփոխությունների՝ անասունների մթերատվությունը կբարձրանա 12-15 տոկոսով, և միավոր արտադրանքի հաշվով անասնակերի ծախսը կկրճատվի շուրջ 20 տոկոսով: |
| 45. | **Հանրապետության առնվազն 40 համայնքում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացում**<br><br>Գերակա խնդրի նպատակը փոքր գյուղացիական տնտեսությունների կամավոր միավորման, շահույթ ստանալու նպատակով համագործակցության զարգացման միջոցով առկա արտադրական ներուժի արդյունավետ օգտագործման, արտադրողականության և եկամտաբերության բարձրացումն է:<br>Հողի սեփականաշնորհման և տնտեսավարման բազմաձևության անցման շուրջ երկու տասնամյակների ընթացքում ի սկզբանե հիմնված կոլեկտիվ գյուղացիական տնտեսությունները քայքայվել են, և գյուղատնտեսության ոլորտում տիրապետող են դարձել շուրջ 340 հազար գյուղացիական տնտեսությունները: Վերջիններիս զարգացման ներուժը, առաջադիմական տեխնոլոգիաների և նոր տեխնիկայի օգտագործման հնարավորությունները խիստ սահմանափակ են, որի հետևանքով արտադրական շրջանառությունից դուրս է մնում հողային ռեսուրսների շուրջ մեկ երրորդը, ցածր են գյուղատնտեսական արտադրության արդյունքային ցուցանիշները և վերարտադրական կարողությունները:<br>Այս իրավիճակի հաղթահարման խնդիրներն են՝<br>ա. կոոպերացիայի տարբեր ձևերի զարգացման միջոցով արտադրական, սպասարկման, շուկայահանման և այլ ոլորտներում գյուղացիական տնտեսությունների ռեսուրսների միավորում և մրցակցային առավելությունների ձեռքբերում,<br>բ. պետության և դոնոր համայնքի միջոցով ցուցաբերվող աջակցության ուղղորդում կոոպերացվող գյուղացիական տնտեսությունների խթանմանը և գործող կոոպերատիվների կարողությունների հզորացմանը,<br>գ. կոոպերացվող միավորների գործունեության գնահատում, առաջավոր փորձի տարածում և աջակցության ծրագրերի շարունակականության ապահովում:<br>Առաջարկվում է՝<br>1) կոոպերացիայի սկզբունքների և առավելությունների քարոզչություն, առաջավոր փորձի տարածում, կոոպերատիվների կազմակերպման ճանապարհային քարտեզի և մեթոդական ուղեցույցի հրապարակում.<br>2) ճապոնական դրամաշնորհի հաշվին, Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրի (ԳԲԱԾ), Գյուղական ձեռնարկությունների և փոքր առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի համայնքային աջակցության բաղադրիչով ձեռքբերված գյուղատնտեսական տեխնիկայի հատկացում կոոպերատիվ սկզբունքներով գործող գյուղատնտեսական սուբյեկտներին: Վերջիններիս ներգրավում մրցակցային ներդրումների և նպատակային այլ ծրագրերում (սերմնաբուծության զարգացում, տոհմային կազմի բարելավում և այլն).<br>3) կառավարման լիազոր մարմնի և համապատասխան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից գյուղատնտեսական կոոպերացիայի աջակցության աշխատանքային խմբի ձևավորում, որը կապահովի՝<br>ա. կոոպերացիայի զարգացմանն ուղղորդող ռեսուրսների նպատակային և հրապարակային տրամադրում,<br>բ. գործող և ձևավորվող կոոպերատիվների, ինչպես նաև համագործակցության պայմանագրով միավորված ֆերմերային խմբերի գործունեության գնահատում և վերջիններիս արդյունքներով ծրագրի շարունակականության առաջարկություններ ներկայացնելը:<br>Ակնկալվում է հանրապետության առնվազն 40 համայնքում նոր կոոպերատիվների կամ համագործակցության պայմանագրով միավորված |

| | |
|---|---|
| | խմբերի ստեղծմանն աջակցություն:<br>Նշված միավորների բազմակողմանի տեխնիկական աջակցություն և առաջավոր փորձի տարածում:<br>Կոոպերացիայի զարգացման շնորհիվ միավորվող սուբյեկտների արտադրական ներուժի լիարժեք օգտագործում և արտադրողականության 20-25 տոկոսով բարձրացում: Կոոպերացված միավորների միջոցով արտադրատեխնիկական սպասարկման, մարքեթինգային և այլ ծառայությունների մատուցում: |
| 46. | **Ագրարային ոլորտի տեղեկատվական և խորհրդատվական համակարգի բարեփոխումների միջոցով ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացում**<br><br>Գերակա խնդրի նպատակն է գյուղատնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտներին տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մատուցման համակարգի բարելավում:<br>Ներկայումս ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվական և խորհրդատվական գործառույթները հիմնականում իրականացվում են ԳԱՀԿ-ի և ԳԱՄԿ-երի միջոցով, որը սահմանափակում է մրցակցային հնարավորությունները և չի նպաստում ծառայությունների որակի բարձրացմանը: Հետևաբար անհրաժեշտ է անցում կատարել ծառայությունների գնման ընթացակարգերով առավել արդյունավետ գործունեություն իրականացվող սուբյեկտների ընտրությանը և համապատասխան կառուցվածքային փոփոխությունների միջոցով բարձրացնել համակարգի արդյունավետությունը:<br>Առաջարկվում է՝<br>1) հստակեցնել ԳԱՀԿ-ի և ԳԱՄԿ-երի գործառույթները.<br>2) ըստ մարզերի և տարածաշրջանների՝ տարեկան կտրվածքով սահմանել խորհրդատվական կարիքները և գնահատել դրանց բավարարման ֆինանսական հնարավորությունները.<br>3) ըստ խորհրդատվական ծառայության ուղղությունների՝ սահմանել տեխնիկական առաջադրանք, մրցութային կարգով ընտրել ծառայություն մատուցող սուբյեկտներին, կնքել պայմանագրեր և ապահովել կատարման նկատմամբ մոնիթորինգ.<br>4) ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) աջակցությամբ ավարտին հասցնել Հայաստանում խորհրդատվության և տեղեկատվության վիրտուալ ցանցի հիմնման ուղղությամբ տարվող աշխատանքները:<br>Ակնկալվում է՝<br>1) ներկայումս մշտապես գործող գյուղական 132 խորհրդատուի կրճատման արդյունքում գոյացած գումարը կնպատակաուղղվի մրցութային կարգով ընտրված խորհրդատուների կողմից նպատակային խորհրդատվական ծառայությունների մատուցմանը.<br>2) Հայաստանում խորհրդատվության և տեղեկատվության վիրտուալ ցանցի հիմնումը հնարավորություն կընձեռի արտադրող սուբյեկտներին համացանցի միջոցով օգտվելու միջազգային և հայաստանյան գյուղատնտեսական հետազոտական կազմակերպություններիԴ Հայաստանի պետական ագրարային համալսարանիԴ ԳԱՀԿ-ի և ԳԱՄԿ-երի վեբ-կայքերում տեղադրված բազմաբնույթ տեղեկատվությունից, և հետադարձ կապով ներկայացնելու իրենց խորհրդատվական կարիքները: Բացի դրանից՝ ցանցը նշված կազմակերպություններին կընձեռի արտաբյուջետային միջոցների ներգրավման բիզնես հնարավորություններ.<br>3) ԳԱՀԿ-ի գործառույթները հիմնականում կուղղորդվեն այսպես կոչված «խորհրդատուի խորհրդատվությանե մատուցմանըԴ ԳԱՄԿ-երի միջոցով առաջադիմական տեխնոլոգիաների ներդրմանը և ծառայությունների գնման համակարգի կազմակերպմանըԴ որը հնարավորություն կընձեռի նրանց աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 25-30 տոկոսով: |

| | |
|---|---|
| | |
| | **ՀՀ մշակույթի նախարարություն** |
| 47. | **Մշակութային ժառանգության պահպանության հիմքերի ապահովում**<br><br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Մշակութային ժառանգության վերականգնման ուսումնական տարածաշրջանային կենտրոնի ստեղծմամբ պատմամշակութային հուշարձանների և մշակութային արժեքները վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ կադրերի պատրաստման և վերապատրաստման պայմանների ստեղծում:<br>ՀՀ-ում ներկա պահին մոտավորապես 24000 հուշարձաններից մեծ մասն ունի հրատապ վերականգնման կարիք: Թանգարանային ֆոնդերում պահվող մոտավորապես 1738678 թանգարանային միավոր առարկաների մեծ մասը նույնպես ունի վերականգնման կարիք: Համապատասխան մասնագետների պակասը հնարավորություն չի ընձեռում իրականացնել մշակութային արժեքների ժամանակին վերականգնումը: Լաբարատորիաների և ժամանակակից վերականգնման տեխնոլոգիաների պակասը նույնպես հանդիսանում է խոչընդոտ: Առկա մասնագետների շրջանում անհրաժեշտություն է առաջացել նաև իրականացնել վերապատրաստամաn դասընթացներ, ինչպես նաև պատրաստել երիտասարդ մասնագետներ:<br>Անհրաժեշտություն է առաջացել նաև միջազգային փորձի ուսումնասիրումը և համատեղ սեմինարների կազմակերպումն արտերկրի մասնագետների հետ:<br>Առաջարկվող լուծումներն են կենտրոնի ստեղծումը և նյութատեխնիկական բազայի համալրումը, լաբորատորիայի հիմնումը, վերապատրաստման և վերարակավորման դասընթացների կազմակերպումը, այդ թվում՝ հնագիտական, ճարտարապետական և գեղանկարչական վերականգնողների, ինչպես նաև շինարարական աշխատանքների համար նախատեսվող վարպետների պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ:<br>Կենտրոնի ստեղծումից հետո նախատեսվում է այն դարձնել տարածաշրջանային կենտրոն, որտեղ կիրականացվեն միջազգային փորձի ուսումնասիրություն, համատեղ դասընթացներ և սեմիանարներ, ինչպես նաև պատրաստման և վերապատրաստման դասընթացներին կներգրավվեն նաև արտեկրի մասնագետները:<br>Կարգավորման առարկան է հուշարձանների վերականգնման բնագավառում աշխատող մասնագետների, վարպետների պատրաստման և վերապատրաստման հիմքերի ստեղծումը:<br>Կենտրոնի ստեղծմամբ կապահովվի մշակութային արժեքների որակյալ վերականգնումը և պահպանումը: |
| 48. | **Մշակութային ժառանգության հանրահռչակման ապահովում**<br><br>Գերակա խնդրի նպատակն է թանգարանների ցուցադրությունների ընդլայնումը ժամանակակից տեխնիկական սարքերի միջոցով:<br>Թանգարանները ցուցադրական տարածքների սղության պատճառով հանրությանը ներկայացնում են իրենց հավաքածուների մոտավորապես 2.57%: Հիմնական խնդիր է դարձել հանրությանը ցուցադրել նաև պահոցներում գտնվող թանգարանային առարկաները, ինչի համար անհրաժեշտ է ժամանակակից էլեկտրոնային տեխնիկական սարքերի ներդրում, որոնց միջոցով կընդլայնվեն ցուցադրության շրջանակները և լրացուցիչ տեղեկատվություն կտրամադրվի այցելուներին թանգարանի ֆոնդերում պահվող և չցուցադրվող մշակութային ժառանգության վերաբերյալ: |

| | |
|---|---|
| | ՀՀ մշակույթի նախարարության թանգարանների թանգարանային առարկաների էլեկտրոնային ցուցադրության կազմակերպում` ծրագրային ապահովում, ծրագրային պահանջներին համապատասխան նյութերի թվանշանացում (2 թանգարաններում մոտավորապես 6000 ցուցանմուշ):<br>Կարգավորման առարկան է թանգարանային առարկաների հանրահռչակման ընդլայնումը:<br>Գերակա խնդրի լուծման դեպքում ակնկալվում է թանգարանային ֆոնդի հանրահռչակում` մշտական ցուցադրություններում չցտնվող առարկաների հասանելիության ապահովում: |
| 49. | **Մշակութային ծառայություններում սպասարկման գործառույթի բարելավում**<br><br>Գերակա խնդրի նպատակն է թատերահամերգային և թանգարանային կազմակերպությունների տոմսային տնտեսությունում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տոմսերի էլեկտրոնային վաճառքի միասնական համակարգի ներդրումը:<br>Տոմսերի էլեկտրոնային վաճառքի միասնական համակարգը նախատեսվում է ներդնել 41 թանգարաններում, 16 համերգային և 16 թատերական պետական կազմակերպություններում և նրանց մասնաճյուղերում: Ներկայումս տոմսերի ձեռքբերումն իրականացվում է ավանդական եղանակով, ինչն արդյունավետ չէ ժամանակի և հաշվառման առումով: Հիմնական խնդիրն է տոմսերի վաճառքն առավել մատչելի դարձնել և ժամանակի խնայողության, և առավել հասանելիության առումով:<br>Տոմսերի էլեկտրոնային համակարգի ներդրումը ենթադրում է նաև էլկտրոնային տեղեկատվական համակարգերի պարբերաբար տեխնիկական համալրում և թարմացում, ինչպես նաև միասնական էլեկտրոնային ցանցի ստեղծում:<br>Առաջարկվող լուծումներն են թատերահամերգային և թանգարանային կազմակերպությունների մուտքի տոմսերի էլեկտրոնային վաճառքի միասնական համակարգի ներդրման և սպասարկող օպերատորի ընտրության համար անհրաժեշտ իրավական փաստաթղթերի և տեխնիկական առաջադրանքի կազմումը և հաստատումը, սպասարկող օպերատորի ընտրության նպատակով մրցույթի անցկացումը, տեխնիկական առաջադրանքով նախատեսված աշխատանքների իրականացումը:<br>Կարգավորման առարկան է թատերահամերգային և թանգարանային կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններում սպասարկման գործառույթների արդիականացումը:<br>Տոմսերի վաճառքի միասնական համակարգի ներդրմամբ կբարելավվի տոմսերի վաճառքի գործընթացը, հնարավորություն կտրվի առավել արդյունավետ և վերահսկելի դարձնելու տոմսերի հաշվառումը և ֆինանսական մուտքերն ու ելքերը: |
| **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն** | |
| 50. | **Կենսաթոշակային բարեփոխումների իրականացում**<br><br>ՀՀ կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N 1487-Ն որոշմամբ հաստատվել են կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրը և կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը, որոնց իրականացումը կրում է շարունակական բնույթ:<br>Անցած ժամանակահատվածում, համաձայն նշված ծրագրի և միջոցառումների ժամանակացույցի`<br>1) մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքների նախագծերի փաթեթը.<br>2) մշակվել են եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի բիզնես-գործընթացները, եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի համակարգչային ծրագրի տեխնիկական մասնագրերն ու տեխնիկական |

| | |
|---|---|
| | առաջադրանքը.<br>3) գնահատվել են կենսաթոշակային բարեփոխումների գործընթացին ներգրավված պետական կառավարման մարմինների նյութատեխնիկական կարիքներն ու լրացուցիչ հաստիքները.<br>4) մշակվել և ՀՀ կառավարության 2009 թ. սեպտեմբերի 23-ի N 39 արձանագրային որոշմամբ հաստատվել են կենսաթոշակային բարեփոխումների լուսաբանման, հանրային իրազեկման և քաղաքացիական հասարակության մասնակցության գործընթացի ծրագիրը և կենսաթոշակային բարեփոխումների լուսաբանման, հանրային իրազեկման և քաղաքացիական հասարակության մասնակցության գործընթացի միջոցառումների ցանկը և այլն:<br>2010 թ. հունիսի 24-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն 1-ին ընթերցմամբ ընդունել է կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող օրենքների նախագծերի փաթեթը, որը նախատեսում է կենսաթոշակային բարեփոխումների իրականացման փուլային սցենար` ըստ հետևյալի`<br>1) «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքը և «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի` կամավոր կենսաթոշակային ապահովագրությանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում 2011 թվականին.<br>2) «Եկամտային հարկի մասին» և «Կուտակային վճարի և եկամտային հարկի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքներն ուժի մեջ են մտնում 2013 թվականի հունվարի 1-ին.<br>3) «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի` պարտադիր կուտակային վճարի կատարմանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում 2014 թվականի հունվարի 1-ին:<br>Հաշվի առնելով առկա իրավիճակը՝ նախատեսվում է 2011 թվականին ամբողջացնել կամավոր կենսաթոշակային ապահովագրության իրականացումն ապահովող կառուցակարգերը (համապատասխան ենթաօրենսդրական և գերատեսչական իրավական ակտերի մշակում, կամավոր կենսաթոշակային ապահովագրություն իրականացնող կազմակերպությունների (կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների) լիցենզավորում և այլն), որի արդյունքում 2011 թվականից կգործարկվի կամավոր կենսաթոշակային ապահովագրության համակարգը:<br>Միաժամանակ, նախատեսվում է սկսել կենսաթոշակային հաշիվների վարման տեղեկատվական համակարգի, ինչպես նաև եկամտահարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի մշակման աշխատանքները` հիմք ընդունելով ՀՀ կառավարության հաստատած` կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը, ինչպես նաև մշակել և ընդունել բաշխողական բաղադրիչի գործունեությունն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերը:<br>Լայնամասշտաբ բնույթ կկրի նաև կենսաթոշակային բարեփոխումների հանրային իրազեկման աշխատանքների իրականացումը` համաձայն ՀՀ կառավարության հաստատած ծրագրի: |
| 51. | <u>**Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրում**</u><br>ՀՀ կառավարության 2008 թ. ապրիլի 28-ի N 380-Ա որոշմամբ հաստատված, ՀՀ Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած՝ ՀՀ կառավարության ծրագրի 4.4.2. «Սոցիալական պաշտպանությունը» բաժնում ՀՀ կառավարության քաղաքականության հիմնական |

ուղղություններից մեկը սոցիալական ծառայությունների համալիր (լրակազմով) տրամադրումն է՝ գործընթացին մասնակից դարձնելով մասնավոր հատվածին:

ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 3-ի նիստի N 21 արձանագրությամբ հավանության է արժանացել Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի կազմակերպման հայեցակարգը:
Արձանագրային որոշմամբ հանձնարարվել է կազմակերպել հայեցակարգի հանրային քննարկումներ, Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակել ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի միասնական կառուցվածքագործառութային մոդելը, իրականացնել մոդելի կիրարկման փորձնական ծրագիր և ծրագրի արդյունքների հաշվառմամբ ՀՀ կառավարություն ներկայացնել մոդելի ներդրման միջոցառումների ծրագիր-ժամանակացույց:
Անցած ժամանակահատվածում նախարարությունը, համագործակցելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի երևանյան գրասենյակի հետ, կազմակերպել է կլոր սեղաններ, որին մասնակցել են այն պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք ընգրկվելու են ինտեգերված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում:
ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ՀՀ կառավարության «Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման միասնական համակարգի կառուցվածքագործառութային մոդելի հայեցակարգային մոտեցումներին հավանություն տալու մասին» արձանագրային որոշման նախագիծը՝ նպատակ ունենալով ճշտելու ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման միասնական համակարգի կառուցվածքագործառութային մոդելի հանգուցային հարցերը, ընտրել սկզբունքային մոտեցումները, ինչպես նաև սահմանել մշակված մոդելի փորձնական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական բավարար պայմանները:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման համար նախատեսվում է 2011 թվականի ընթացքում ՀՀ կառավարություն ներկայացնել ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրման միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը, որում ներառվելու են իրականացվելիք միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝

1) իրավիճակային վերլուծություններ, ուսումնասիրություններ, հետազոտություններ և գործող, ինչպես նաև ներդրվող համակարգի բիզնես-գործընթացների նկարագրություններ.
2) սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների շենքային պայմանների գույքագրում և դրանց (այդ թվում՝ միասնական ընդունարանների) վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը ՀՀ կառավարություն.
3) ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի միասնական կառուցվածքագործառութային մոդելի մշակում և առաջարկություններ ներկայացնելը ՀՀ կառավարություն, առնվազն 2 մարզում փորձնական ծրագրի իրականացում, այդ թվում՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման (սոցիալական գործի վարման) փորձնական ծրագրի իրականացում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի երևանյան գրասենյակի աջակցությամբ.
4) Սոցիալական աշխատանքի ինստիտուտի կարողությունների հզորացում և մասնագիտական ուսուցման ստանդարտների սահմանում,
5) ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրումն ապահովող համապատասխան իրավական հենքի ձևավորում, մասնավորապես, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը ներկայացնելը ՀՀ կառավարության աշխատակազմ: Այս նախագծով կիրացվեն տարվա ընթացքում իրականացված միջոցառումների արդյունքների գնահատմամբ ձևավորված առաջարկությունները:

| | |
|---|---|
| 52. | <u>Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական բազաների արդիականացում</u><br><br>Պետական կառավարման ոլորտում քաղաքացիների և կազմակերպությունների փոխհարաբերությունների որակի և արդյունավետության բարելավման համար կարևորագույն գործոն է նորագույն տեխնոլոգիաների կիրառումը, մասնավորապես, ժամանակակից տեխնոլոգիաների հիման վրա մշակված տեղեկատվական բազաների շահագործումը:<br>Պետության կողմից քաղաքացիներին և կազմակերպություններին էլեկտրոնային ծառայությունների մատուցման գործընթացում կարևոր բաղկացուցիչ է ինտերնետային կապի ապահովումը:<br>Սոցիալական պաշտպանության ոլորտում ներդրվել և կիրառվում են տասնյակից ավելի տեղեկատվական համակարգեր: 2010 թվականին Համաշխարհային բանկի Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել է սոցիալական պաշտպանության ոլորտում գործող տեղեկատվական համակարգերի և համապատասխան գործընթացների գնահատում, որի արդյունքում արդիականացվել են հետևյալ տեղեկատվական համակարգերը՝<br>1) սոցիալական ապահովության քարտերի.<br>2) աշխատանք փնտրողների հաշվառման «Գործե.<br>3) կենսաթոշակառուների հաշվառման «Արաքսե.<br>4) ընտանիքի անապահովության գնահատման «Նպաստե.<br>5) մինչև 2 տարեկան երեխաների խնամքի նպաստների հաշվառման «Նպաստ-2ե.<br>6) աշխատանքի պետական տեսչության.<br>7) բարեգործական ծրագրերի հաշվառման:<br>Մշակվել է տեղեկատվության ավտոմատ փոխանակման տեղեկատվական համակարգը, որը հնարավորություն է տալիս ոլորտի կազմակերպությունների տվյալներն ստանալ անմիջապես առաջնային աղբյուրից:<br>Ըստ էության, մշակվել են նոր համակարգեր, որոնք հիմնված են նորագույն տեխնոլոգիաների և լուծումների վրա: 2011 թ. նախատեսվում է իրականացնել արդեն մշակված տեղեկատվական համակարգերի ներդրում:<br>Նախարարությունում գործում է ՏՀՏ-ի ներդրման և զարգացման աշխատանքային խումբ՝ բոլոր ստորաբաժանումների մասնակցությամբ:<br>Առկա իրավիճակում ոլորտի հետագա զարգացման առաջնահերթություններն են՝<br>▪ Արդիականացված տեղեկատվական համակարգերի ներդրում, մասնավորապես՝<br>o փորձնական գործարկում՝ ընտրված տարածքային մարմիններում,<br>o փորձարկման արդյունքների հիման վրա ծրագրային ապահովման լրամշակում,<br>o հիմնական գործարկում սոցիալական պաշտպանության ոլորտի կենտրոնական և համապատասխան տարածքային մարմիններում,<br>o տարածքային մարմինների աշխատողների վերապատրաստում:<br>▪ Նոր տեղեկատվական համակարգերի մշակում և ներդրում, այդ թվում՝<br>o ֆինանսական կառավարման համակարգ,<br>o հաշմանդամներին և սոցիալապես անապահով անձանց պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների, ինչպես նաև սայլակների և լսողական սարքերի տրամադրման: |

| | |
|---|---|
| | ▪ Տեղեկատվության ավտոմատ փոխանակության համակարգի ներդրում։<br>2010 թ. մշակվել է տեղեկատվության ավտոմատ փոխանակման համակարգը, որի ներդրման և հիմնական գործարկման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2011 թ.։<br>▪ Սոցիալական պաշտպանության ոլորտի կազմակերպությունների ինտերնետ/ինտրանետ կապի ապահովում։<br>▪ Էլեկտրոնային առաջնահերթ ծառայությունների մշակում։<br>▪ Ծառայությունների մատուցման միասնական համալիր կենտրոնների ստեղծման համար անհրաժեշտ տեխնիկական, ծրագրային և ցանցային ապահովում։<br>Իրականացվող միջոցառումների արդյունքում՝<br>▪ ոլորտի շահառուների հաշվառման գործող գործընթացների զարգացում և արդիականացում,<br>▪ տեղեկատվության ամբողջականության և հավաստիության ապահովում,<br>▪ տեղեկատվության ուղղակի հասանելիություն կամ կիրառում՝ ոլորտի կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների կողմից,<br>▪ կառավարման թափանցիկության ապահովում,<br>▪ վերահսկելիության մակարդակի բարձրացում,<br>▪ աշխատակազմի որակի, աշխատանքի արդյունավետության բարձրացում,<br>▪ իրականացվող ծրագրերի հասցեականության բարձրացում։ |
| 53. | <u>**Մանկատների բեռնաթափում**</u><br><br>Մանկատների բեռնաթափման անհրաժեշտությունը պայմանավորված է երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովմամբ։<br>Հանրապետությունում մանկատներ և երեխաների խնամքի ու պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ երեխաների ընդունելությունը և խնամքը իրականացվում է ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» N 381-Ն որոշմամբ և ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 8-ի N 1646-Ն որոշմամբ հաստատված կարգերով։<br>Մանկատներում խնամվող երեխաների մեծ մասը չունի առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ և գտնվում է մանկատներում սոցիալական տարբեր պատճառներով։<br>Առկա խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է ՀՀ օրենսդրության մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ, մասնավորապես, ՀՀ ընտանեկան օրենսգրքում, ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» N 381-Ն որոշումների մեջ։<br>Ուսումնասիրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի մանկատներում խնամվող երեխաների կարգավիճակներն ու նրանց ընտանիքները (առկայության դեպքում)։<br>Իրականացնել մանկատան վերակազմակերպման գործընթացը։<br>Մանկատների բեռնաթափում (վերադարձնել կենսաբանական ընտանիք, հանձնել՝ որդեգրման, խնամատար ընտանիք, խնամակալության, |

| | |
|---|---|
| | տեղավորել երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ, ցերեկային կենտրոններ և այլ այլընտրանքային ծառայություններ)։<br>Կարգավորման առարկան է երեխաների խնամքն ու դաստիարակությունը հնարավորինս ընտանիքում ապահովելը և մանկատանն այընտրանք համարվող ծառայությունների ստեղծումը և զարգացումը։<br>Մանկատների բեռնաթափման արդյունքում ակնկալվում է կրճատել մանկատներում խնամվող երեխաների, ինչպես նաև մանկատների թիվը, հստակեցնել պետական մանկատներում խնամվող երեխաների կարգավիճակները։ |
| **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն** | |
| 54. | **Սոցիալ-տնտեսական երկարաժամկետ զարգացման քաղաքականության ուղղորդում**<br><br>ՀՀ կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականության շրջանակն ամրագրվում է Կայուն զարգացման ծրագրով։ Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը որոշակի ճշգրտումներ մտցրեց զարգացման քաղաքականության մեջ։ Համաշխարհային տնտեսության զարգացման միտումներն ու ներկա մարտահրավերները պահանջում են ճկուն և արդեկվատ արձագանքներ՝ տնտեսական առաջընթացի և հետճգնաժամային զարգացման համար։ Առավել քան հրատապ է գործարար միջավայրի բարեփումների իրագործումը՝ որպես տնտեսական աճի և զարգացման առանցքային գործոն։<br>Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է վերանայել Կայուն զարգածման ծրագիրը՝ ամրագրելով տնտեսական զարգացման իրատեսական նպատակադրումներ և թիրախներ, երկարաժամկետ ռազմավարության ներքո ոլորտային մարտավարություններ՝ առանձնահատուկ լիցք հաղորդելով գործարար միջավայրի բարեփումներին։<br>Սույն խնդրի կարգավորման առարկան առնչվում է ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրին։<br>Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման նոր շրջանակի ամրագրումով ակնկալվում է ապահովել իրականացվող քաղաքականության կենսունակությունը, ինչպես նաև բարեփոխումների շարունակականության ապահովմամբ Հայաստանը դարձնել տարածաշրջանում լավագույն գործարար և ներդրումային միջավայր ունեցող երկիր։ |
| 55. | **«Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի բարելավում**<br><br>Տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմանը երկրում գործարարության զարգացումն է։ Գործարարությանն առնչվող ընթացակարգերն իրենց պարզությամբ և թափանցիկությամբ դեռևս հեռու են բավարար լինելուց։ Գործարարության զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման պետական քաղաքականությունն ուղղված է առավելագույնս բարենպաստ միջավայրի ստեղծմանը, տնտեսության առավել ազատականացմանը, ազատ մրցակցության խթանմանը, վարչարարական ընթացակարգերի առավելագույնս պարզեցմանը, սպառողների շահերի արդյունավետ պաշտպանությանը։<br>Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է «Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի գերազանցության կենտրոնե համազգային ծրագրի հայեցակարգի և Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի, ինչպես նաև տեսչական բարեփոխումների շարունակական իրականացումը։<br>Աշխատանքներ կտարվեն «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման համար հիմք հանդիսացող բոլոր 10-ը բաղադրիչների բարելավման ուղղությամբ, մասնավորապես, ընկերության հիմնադրման համար «մեկ կանգառի պատուհանե սկզբունքի ներդրում, հարկային և մաքսային |

| | |
|---|---|
| | գործընթացների պարզեցում և թափանցիկության բարձրացում, փոքր ներդրողների պաշտպանություն, քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կատարելագործում և այլն:<br>Գործարարությամբ զբաղվելու համար Հայաստանը տարածաշրջանային գերազանցության կենտրոն դարձնելու խնդիրը ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրի և ՀՀ կառավարության հռչակած համազգային նախազծերից մեկն է, որի հետևողական իրականացումը ՀՀ հեռանկարային զարգացման երաշիքներից է: Արդյունքում՝ ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունը դարձնել տարածաշրջանում գործարար և ներդրումային լավագույն միջավայր ունեցող երկիր, մասնավորապես, բարելավել Հայաստանի դիրքը Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման մեջ: |
| 56. | **Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ձևավորում և մեկնարկ**<br><br>Զարգացման նույն պայմաններում գտնված և հաջողության հասած երկրների փորձը ցույց է տալիս, որ արտահանման կամ տնտեսության արտահանելի հատվածի աճը պետք է հանդիսանա երկրի գլոբալ մրցունակության բարձրացման գործառնական նպատակը և որոշակի ժամանակահատվածում այդ երկրի արդյունաբերական քաղաքականությունը պետք է հիմնականում, եթե ոչ ամբողջությամբ, ուղղվի այդ գործառնական նպատակի իրագործմանը: Հայաստանի արտահանման կառուցվածքը շատ սահմանափակ է, և դրանց մեծ մասը կախված է միջազգային շուկաներում գնային և այլ տատանումներից: Սահմանափակ է նաև կայուն առաջարկ ապահովող արդյունաբերական ներուժը, և բացակայում են արդյունաբերական արտադրանքի բազմազանեցումն ապահովող ունակությունները՝ արտասահմանյան սպառողների պահանջին համապատասխան: Ծառայությունների համար անհրաժեշտ ենթակառուցվածքները նույնպես թերի են զարգացած:<br>Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության տրամաբանությունը հիմնականում կենտրոնանում է պետության կողմից արտահանելի հատվածում ներդրումները և այդ հատվածում ստեղծված արդյունքի արտահանումը խթանելուն ուղղված գործիքների և մեխանիզմների վրա: Վերլուծությունները ցույց են տալիս, որ միայն ներմուծման փոխարինումն ունի սահմանափակ հնարավորություն, իսկ ապագա արտահանմանն ուղղված ներմուծման փոխարինումը նույնպես հանդիսանում է սույն խնդրի կարգավորման առարկան: Նոր արտահանելի ապրանքների բացահայտումը և խթանումը երկարաժամկետում հաջողության հասնելու երաշխիքն է:<br>Ներկայացված խնդրի կարգավորման առարկան ներառում է՝<br>• արտահանման կողմնորոշում կամ արտահանման ընդլայնման հնարավորություններ ունեցող ոլորտները,<br>• բարձրարժեք, մրցունակ ծառայություններ մատուցող ոլորտները:<br>Այսպիսով նպատակադրումներն են՝<br>• միջնաժամկետում տարեկան մեկ միլիարդ դոլարի նոր արտահանման խթանում,<br>• մասնավոր-պետական ներդրումներ ենթակառուցվածքներում և ձեռնարկությունների կողմից մրցունակ արտադրանք թողարկելու և միջազգային առևտրի ռիսկերի նվազեցման համար: |
| 57. | **Որակի ազգային ենթակառուցվածքի բարեփոխումների մեկնարկ**<br><br>Որակի ենթակառուցվածքը Հայաստանում (տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման, փորձարկման, տեխնիկական հսկողության, սերտիֆիկացման և շուկայի վերահսկողության) պետք է բարեփոխել այնպես, որպեսզի այն բավարարի ազգային կարիքները և ապահովի ամբողջ աշխարհում ընդունելի ծառայություններ ու սերտիֆիկատներ: Վերոգրյալ ոլորտների իրավական դաշտը լիարժեք չի համապատասխանում միջազգային և եվրոպական պահանջներին: Պակաս կարևոր չէ նաև այն, որ միջազգային և եվրոպական |

| | |
|---|---|
| | պրակտիկայում պարենային և ոչ պարենային արտադրանքների նկատմամբ կիրառվող կարգավորող մոտեցումները տարբեր են, և նույն տարբերակումը պետք է գործի նաև հայաստանյան տեխնիկական կանոնակարգերի դեպքում: Հայաստանը պետք է բարեփոխի ազգային որակի ենթակառուցվածքը՝ իր տնտեսության կարիքները բավարարելու, արտահանումը խթանելու և ԵՄ-ի հետ խոր ու համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի պահանջները (ԽՀԱԱՀ) կատարելու նպատակով:<br>Բարեփոխման նպատակն է ապահովել ազգային որակի ենթակառուցվածքի զարգացման հեռանկարային ուղղվածություն և գոյություն ունեցող համակարգը բարեփոխել այնպես, որ այն համապատասխանի միջազգային և եվրոպական պահանջներին: Այս իմաստով խնդրի առաջարկվող լուծումները հետևյալներն են՝<br>1. օրենսդրական դաշտի փոփոխություն՝ ներդաշնակեցնելով եվրամիության համանուն օրենսդրական դաշտին.<br>2. համապատասխան մարմինների կարողությունների հզորացում՝ հետամուտ լինելով դրանց միջազգային ճանաչման:<br>Գերակա խնդրի կարգավորման առարկան ՀՀ գործող որակի ենթակառուցվածքի համակարգն է: Բարեփոխումները կառնչվեն տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, չափագիտության, հավատարմագրման, փորձարկման, տեխնիկական հսկողության, սերտիֆիկացման և շուկայի վերահսկողության ոլորտներում իրավական, ինստիտուցիոնալ և կարողությունների հզորացմանը:<br>Դրված խնդրի իրականացման արդյունքում ակնկալվում են՝<br>• ներդրումներ՝ փորձարկման և չափագիտության նյութական բազան բարելավելու նպատակով,<br>• ստանդարտացման, չափագիտության և հավատարմագրման մարմինների առավել խոր ինտեգրում համապատասխան միջազգային կազմակերպություններին,<br>• տնտեսավարող սուբյեկտների վարչական ծանր բեռի կրճատում,<br>• սպառողների շահերի պաշտպանության մակարդակի բարձրացում: |
| **ՀՀ արդարադատության նախարարություն** | |
| 58. | **ՀՀ օրենսդրության վերլուծություն և կատարելագործում, ՀՀ-ում գործող օրենսդրության մեջ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային, ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող իրավական ակտերի վերացում**<br><br>1990 թվականից մինչև 1995 թվականը Հայաստանի Հանրապետությունում ընդունված իրավական ակտերի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության ապահովման համար անհրաժեշտ քայլերն են՝<br>1990 թվականից մինչև 1995 թվականը Հայաստանի Հանրապետությունում ընդունված իրավական ակտերի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանության ուսումնասիրություն, դրանց համեմատական վերլուծություն և Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական համակարգը մաքրելու և կատարելագործելու վերաբերյալ տվյալ իրավական ակտերն ընդունող մարմիններին առաջարկություններ ներկայացնելը:<br>Ակնկալվող արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերլուծություն և կատարելագործում, Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական դաշտում առկա «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող իրավական |

| | |
|---|---|
| | ակտերի վերացում: |
| 59. | **Մարդու իրավունքներին առնչվող միջազգային փաստաթղթերին լիարժեք համահունչ քրեական դատավարության օրենսդրության համալիր բարելավում**<br><br>Մարդու իրավունքներին առնչվող միջազգային փաստաթղթերին լիարժեք համահունչ քրեական դատավարության օրենսդրության համալիր բարելավման համար անհրաժեշտ քայլերն են`<br>Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակում և դրանով պայմանավորված անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ առանձին հիմնարար օրենսդրական ակտերում, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:<br>Ակնկալվող արդյունքները: Քրեական դատավարության մասնակիցները և, հատկապես, կասկածյալներն ու մեղադրյալները ձեռք կբերեն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի հիմնադրույթներին լիարժեք համապատասխանող իրավական երաշխիքներ:<br>Կարգավանան ինչպես մինչդատական, այնպես էլ` դատական քննության գործընթացները, դրանք կձերբազատվեն անհարկի ու ձևական ընթացակարգերից:<br>Կներդրվեն նորմեր, որոնք կապահովեն փաստաբանների առավել անկաշկանդ ու արդյունավետ գործունեությունը:<br>Դատական գործընթացներում հնարավորինս նվազագույնի կհասցվեն կոռուպցիոն երևույթները: |
| 60. | **Արդարադատության ոլորտում մատչելիության սկզբունքի գործնական հիմքերի բարելավման նկատառումով «Datalex» ծրագրի հնարավորությունների զարգացում` հատկապես համակարգչային եղանակով հայցեր հարուցելու, բողոքներ բերելու ինստիտուտ ներդնելու տեսքով**<br><br>Արդարադատության ոլորտում մատչելիության սկզբունքի գործնական հիմքերի բարելավման նկատառումով «Datalex» ծրագրի հնարավորությունների զարգացում` հատկապես համակարգչային եղանակով հայցեր հարուցելու, բողոքներ բերելու ինստիտուտ ներդնելու համար անհրաժեշտ քայլերն են`<br>Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման մշակում, «Datalex» ծրագրում էլեկտրոնային ստորագրության ներդնում, փաստաբանների և քաղաքացիների ու իրավաբանական անձանց համար ուղեցույցների մշակում:<br>Ակնկալվող արդյունքները: Արդարադատության մատչելիության սկզբունքի լիարժեք կիրառման խոչընդոտները, որոնք պայմանավորված են փաստաթղթային շրջանառության ներկա բարդությունների հետ, կբացառվեն. յուրաքանչյուր իրավասու անձ հնարավորություն կունենա սոսկ համակարգչային եղանակով ներկայացնելու հայցադիմումներ, բողոքներ և այլն: Գործող կարգի պայմաններում հաճախ կողմերը դժգոհում են, որ դատական ծառայողները հրաժարվում են ընդունել հայցեր կամ պարտադրում են անորոշ ժամանակով սպասել, ինչը համատեղելի չէ սպասարկման քաղաքակիրթ պահանջներին և խախտում է արդարադատության մատչելիության սկզբունքը: Ներդրվող համակարգը բացառում է այդ բացասական երևույթների որևէ դրսևորում: |

| | |
|---|---|
| 61. | **«Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի բարելավում**<br><br>Տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմանը երկրում գործարարության զարգացումն է: Գործարարությանն առնչվող ընթացակարգերն իրենց պարզությամբ և թափանցիկությամբ դեռևս հեռու են բավարար լինելուց: Գործարարության զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման պետական քաղաքականությունն ուղղված է առավելագույնս բարենպաստ միջավայրի ստեղծմանը, տնտեսության առավել ազատականացմանը, ազատ մրցակցության խթանմանը, վարչարարական ընթացակարգերի առավելագույնս պարզեցմանը, սպառողների շահերի արդյունավետ պաշտպանությանը:<br>Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է «Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի գերազանցության կենտրոն» համազգային ծրագրի հայեցակարգի և Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի, ինչպես նաև տեսչական բարեփոխումների շարունակական իրականացումը:<br>Աշխատանքներ կտարվեն «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման համար հիմք հանդիսացող բաղադրիչների բարելավման ուղղությամբ, մասնավորապես, ընկերության հիմնադրման համար «մեկ կանգառի պատուհան» սկզբունքի ներդրում, գործունեություն չիրականացնող ընկերությունների լուծարման համար պարզ և արագ ընթացակարգերի սահմանում, լուծարման ժամկետների կրճատում և այլն:<br>Գործարարությամբ զբաղվելու համար Հայաստանը տարածաշրջանային գերազանցության կենտրոն դարձնելու խնդիրը ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրի և ՀՀ կառավարության հռչակած համազգային նախագծերից մեկն է, որի հետևողական իրականացումը ՀՀ հեռանկարային զարգացման երաշիքներից է: Արդյունքում՝ ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունը դարձնել տարածաշրջանում գործարար և ներդրումային լավագույն միջավայր ունեցող երկիր, մասնավորապես, բարելավել Հայաստանի դիրքը Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը» դասակարգման մեջ: |
| **ՀՀ պաշտպանության նախարարություն** | |
| 62. | **Ռազմական կրթության ոլորտի բարեփոխում**<br><br>Գերակա խնդրի կատարումը պայմանավորված է պաշտպանության ոլորտի բարեփոխումների շրջանակներում ռազմական կրթության որակապես նոր համակարգի ներդրման անհրաժեշտությամբ, որի նպատակն է ունենալ արդի միջազգային չափորոշիչներին համապատասխան ռազմական կրթության համակարգ, վերանայել ՀՀ ռազմաուսումնական հաստատությունների կարգավիճակը և ռազմական կրթության ուսուցման գերակայությունները: Գերակա խնդրի կատարման ուղղությամբ նախատեսվում է ռազմական կրթության հայեցակարգի և դրա իրականացման միջոցառումների ծրագրի մշակումն ու հաստատումը, գերակա խնդրի կատարման համար անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների կատարումը: |

| | |
|---|---|
| 63. | **Սպայական կադրերի կառավարման համակարգի կատարելագործում**<br><br>Գերակա խնդրի կատարումը բխում է զինված ուժերի մարտունակությունն ամրապնդելու, սպայական կազմի գիտելիքների բավարար մակարդակ ապահովելու, ատեստավորման հստակ չափորոշիչներ սահմանելու միջոցով սպայական կազմի պաշտոնների համապատասխանության, պաշտոնային առաջխաղացման հնարավորությունների ընդլայնման անհրաժեշտությունից: Գերակա խնդրի կատարման ուղղությամբ նախատեսվում է ներդնել զինված ուժերի սպայական կազմի ատեստավորման համակարգ, իրականացնել համապատասխան հարցաշարերի մշակման և տվյալների բազայի կատարելագործման աշխատանքներ: |
| 64. | **Արհեստավարժ սերժանտական կազմի առանձնացում և ընդլայնում**<br><br>Գերակա խնդրի կատարումը պայմանավորված է նաև զինված ուժերում պայմանագրային սերժանտական կազմի քանակի ընդլայնման անհրաժեշտությամբ, ինչը նպատակ ունի կադրային սպայական կազմի հետ միաժամանակ ունենալ նաև արհեստավարժ այլ զինվորական կազմ: Գերակա խնդրի կատարման ուղղությամբ նախատեսվում է մշակել գործընթացի իրականացման միջոցառումների ծրագիր, վերանայել ուսումնական ծրագրերն ու նյութական ապահովման նորմատիվները (դրամական բավարարում, իրային և պարենային ապահովություն, սոցիալական երաշխիքներ), ինչպես նաև կատարել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ: |
| **ՀՀ արտաքին գործերի նախարարություն** | |
| 65. | **ՀՀ Նախագահի սահմանած արտաքին քաղաքական ուղենիշների և Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթների իրականացմանն ուղղված աշխատանքներ**<br><br>Մեր տարածաշրջանում դեռևս առկա են չկարգավորված հակամարտություններ, տարաձայնություններ, պահպանվում է բաժանարար գծերի խորացման միտումը, ձևավորված չեն կայունության, անվտանգության, հաղորդակցության ուղիների ու տնտեսական համագործակցության քիչ թե շատ համընդհանուր և միասնական համակարգեր: Հայաստանի և, ընդհանրապես, տարածաշրջանի անվտանգությունն ու կայուն զարգացումը գլխավորապես պայմանավորված են հարևան երկրների հետ և նրանց միջև հարաբերություններով, ինչպես նաև մեր տարածաշրջանի վրա անմիջական և ոչ անմիջական միջազգային ազդեցություններով և զարգացումներով:<br>ՀՀ Նախագահի սահմանած արտաքին քաղաքական ուղենիշների և Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության արտաքին քաղաքական խնդիրների լուծմանն ուղղված քայլերի նպատակներից են երկրի արտաքին անվտանգության ապահովումը, տարածաշրջանում կայունության հաստատումը, լարվածության օջախների հնարավոր բռնկումների կանխարգելումը, ԼՂՀ-ի խնդրի խաղաղ և արդարացի կարգավորումը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը:<br>Տարածաշրջանում համագործակցության միջավայրի և անվտանգության համակարգի ձևավորման, հարևան պետությունների միջև կառուցողական հարաբերությունների և փոխվստահության հաստատման, տարածաշրջանում ազդեցություն ունեցող ուժերի հետ փոխշահավետ հարաբերությունների կառուցման արդյունքում կապահովվեն Հայաստանի հետագա զարգացման համար անհրաժեշտ արտաքին բարենպաստ պայմաններ ու երաշխիքներ: |

| | |
|---|---|
| 66. | **Եվրոպական ուղղության խորացում**<br><br>ՀՀ Նախագահի սահմանած արտաքին քաղաքական ուղենիշներով և Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարությամբ հաստատված՝ եվրոպական կառույցների, առաջին հերթին ԵՄ-ի և նրա անդամ երկրների հետ հարաբերությունների զարգացման ու ամրապնդման արտաքին քաղաքական առաջնային ուղղություններով 2011 թ. աշխատանքները տարվելու են՝ համաձայն՝<br>1) ՀՀ Նախագահի 2010 թ. հուլիսի 15-ի ՆԿ-115-Ա կարգադրության՝ ՀՀ-ի և ԵՄ-ի միջև Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների համար պատասխանատու թիմ և ոլորտային աշխատանքային խմբեր ստեղծելու մասին.<br>2) Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի իրագործմանն ուղղված՝ ՀՀ Նախագահի 2009 թ. մայիսի 6-ի «Եվրոպական հարևանության քաղաքականության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-68-Ա կարգադրության դրույթների:<br>Նշված ուղղություններով արդյունավետ գործունեությունը նպաստավոր պայմաններ կապահովի ՀՀ կառավարության հիմնական գերակայության՝ կայուն զարգացման ապահովման կարևոր խնդիրների կատարման համար: |
| 67. | **Աջակցություն արտաքին տնտեսական ոլորտին**<br><br>Նշված գործողությունների անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության վարած քաղաքականության, որոշումների և ծրագրերի իրականացման խնդիրներից: ՀՀ տնտեսության հզորացման և արտաքին շուկաներում մրցունակության բարձրացման և հետևաբար ազգային անվտանգության և միջազգային հեղինակության պահպանման համար անհրաժեշտ են համալիր քայլեր՝ տնտեսության կառուցվածքի այժմեականացման, ներուժի բազմապատկման և կայուն զարգացման համար:<br>Այս ուղղությամբ կարևոր է շարունակել հաստատել ՀՀ արտաքին գործերի նախարարության մասնակցության նոր ձևեր և պատասխանատվության նոր մեխանիզմներ: Քաղաքական օրակարգի հետ միասին ՀՀ արտաքին գործերի նախարարության կառույցի բոլոր ստորաբաժանումների գործունեությունը պետք է ուղղված լինի ՀՀ տնտեսության համապարփակ զարգացման խնդիրների լուծմանը:<br>ՀՀ դիվանագիտական համակարգի և նրա ցանցի էլ ավելի ակտիվ ընդգրկումը ՀՀ տնտեսական զարգացման գործում կապահովի մեր տնտեսական շահերը, կնպաստի ֆինանսական և մարդկային ռեսուրսների, փորձի, ժամանակակից տեխնոլոգիաների և հմտությունների ձեռքբերմանը: |
| 68. | **Մարդու իրավունքների ոլորտ. ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորությունների և մոնիթորինգային մարմինների կողմից տրված հանձնարարականների իրականացման ապահովում, այդ թվում՝ ՄԱԿ-ի ՄԻԽ համընդհանուր վերանայման գործընթացի շրջանակներում**<br><br>Մարդու իրավունքների ոլորտում ՀՀ-ի ստանձնած միջազգային պարտավորությունների և մոնիթորինգային մարմինների կողմից տրված հանձնարարականների իրականացման խնդիրների գերակայությունը թելադրված է միջազգային գործընթացների հետ համահունչ քայլելու, միջազգային ակտիվ ներգրավվման միջոցով երկրի ազգային շահերը պաշտպանելու ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության դրույթով:<br>Այս գերակա խնդրի լուծմանն ուղղված՝ 2011 թ. համար նախանշված քայլերի լիարժեք իրականացումը կապահովի Հայաստանի միջազգային բարձր հեղինակությունը, կկանխարգելի միջազգային կառույցների կողմից ՀՀ-ի վերաբերյալ անցանկալի որոշումների կայացումը, կնպաստի երկրի շահերին առնչվող խնդիրների շուրջ միջազգային կազմակերպությունների կողմից առավել շահեկան դիրքորոշումների ձևավորմանը: |

| | |
|---|---|
| | |
| **ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե** | |
| 69. | **ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Նորվեգիայի Թագավորության կադաստրի և քարտեզագրության գերատեսչության (Ստատենս Կարտվերկ) միջև կնքված պայմանագրի իրականացման շրջանակներում ներդնել «Անշարժ գույքի արդյունավետ գրանցում և քարտեզագրման ծառայություններ Հայաստանի համարե ծրագիրը, որի հիմնական նպա-տակն է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգերի էլեկտրոնային եղանակով իրականացման գործողությունների ծրագիրը և ապահովել տեղեկատվության, այդ թվում՝ գրաֆիկական տեղեկատվության (կադաստրային քարտեզների), հասանելիությունը կոմիտեի վեբ-կայքի միջոցով:**<br><br>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի և Նորվեգիայի Թագավորության կադաստրի և քարտեզագրության գերատեսչության (Ստատենս Կարտվերկ) միջև կնքված պայմանագրի իրականացման շրջանակներում ներդնել «Անշարժ գույքի արդյունավետ գրանցում և քարտեզագրման ծառայություններ Հայաստանի համարե ծրագիրը, որի հիմնական նպատակն է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ընթացակարգերի էլեկտրոնային եղանակով իրականացման գործողությունների ծրագիրը և ապահովել տեղեկատվության հասանելիությունը կոմիտեի վեբ-կայքի միջոցով:<br>Նորվեգիայի արտաքին գործերի նախարարությունը Նորվեգիայի կառավարության անունից 2009 թվականի նոյեմբերի 5-ին հատկացրել է մինչև 10 000 000 նորվեգական կրոն (01.06.2010 դրությամբ - 1.560.000 ԱՄՆ-ի դոլար, 1.270.000 եվրո) ծրագրի իրականացման համար: |
| 70. | **ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգում բարեփոխումների իրականացում, այդ թվում՝ Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների միասնական էլեկտրոնային ռեեստրի ստեղծում**<br><br>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգի ներկա վիճակի և անշարժ գույքի կադաստրի վարման առաջատար միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում անշարժ գույքի կադաստրի համակարգի հետագա զարգացումը, գործառույթների իրականացման որակի բարձրացումը և համակարգի գործունեության թափանցիկության ապահովումը, համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումն ու քաղաքացիների և իրավաբանական անձանց սպասարկման որակի բարձրացումը հնարավոր չէ՝ առանց համակարգում արմատական բարեփոխումների իրականացման: Բարեփոխումների հիմնական նպատակը և արդյունքը պետք է հանդիսանա համակարգի զարգացմանը խոչընդոտող գործոնների վերացումը և արդիական, զարգացող տեղեկատվական հասարակության նորանոր պահանջները բավարարելու ունակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման բարձր մակարդակով համակարգի ձևավորման համար համապատասխան իրավական և ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորումը:<br>Ուսումնասիրելով Հայաստանում անշարժ գույքի կադաստրի համակարգի ներկա վիճակը և հիմք ընդունելով բարեփոխումների իրականացումից ակնկալվող արդյունքները՝ նախատեսվում է իրականացնել համակարգի բարեփոխմանն ուղղված միջոցառումներ հետևյալ հիմնական ուղղություններով՝<br>1) ինստիտուցիոնալ բարեփոխումներ.<br>2. համակարգի ավտոմատացմանն ուղղված բարեփոխումներ.<br>3. իրավական բարեփոխումներ.<br>Բարեփոխումների նշված ուղղությունները միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են և դրանց համալիր գործողության հաջողության |

| | |
|---|---|
| | դեպքում միայն կարելի է հասնել ակնկալվող գերակա նպատակներին: <br> Բարեփոխումների իրականացման արդյունքում նախատեսվում է` <br> 1) կադաստրային տվյալների միասնական էլեկտրոնային բազայի ստեղծում. <br> 2) քաղաքային բնակավայրերում ինքնակամ զբաղեցված հողամասերի առկայությամբ գույքի օրինական մասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սահմանափակման վերացում. <br> 3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կորպորատիվ ցանցի տրամաբանական միացում այն բոլոր ցանցերին, որոնք օգտվում են, և որոնց տվյալներն անհրաժեշտ են անշարժ գույքի ռեեստրի վարման համար. <br> 4) իրավունքի պետական գրանցման վկայականների ձևաթղթերի փոփոխություն. <br> 5) անշարժ գույքի չափագրման (տեղազննության աշխատանքների իրականացման կանոնակարգում) տեղեկատվության տրամադրման համար տեղազննության իրականացման պահանջի վերացում, գույքի չափագրման պահանջ միայն առաջնային գրանցման կամ դիմումի հիման վրա` փոփոխությունների առկայության դեպքում). <br> 6) անշարժ գույքի չափագրման աշխատանքների մասնակի մասնավորեցում. <br> 7) երևան քաղաքում սպասարկման գրասենյակների ստեղծում. <br> 8) երևան քաղաքում տարածքային ստորաբաժանումների քանակի օպտիմալացում. <br> 9) անշարժ գույքի կադաստրի տվյալների վերաբերյալ տեղեկատվություն (այդ թվում` նաև միասնական տեղեկատվություն) ստանալու համար դիմումների առցանց` Կոմիտեի պաշտոնական վեբ-կայքի միջոցով ներկայացնելու, այդ թվում` նաև էլեկտրոնային վճարման համակարգի ներդրում. <br> 10) որոշ կատեգորիաների դիմողների համար իրավունքի պետական գրանցման դիմումների և իրավահաստատող փաստաթղթերի առցանց ներկայացնելու համակարգի ներդրում. <br> Կադաստրային գործերի էլեկտրոնային արխիվի նյութերի` ինտերնետ համացանցի միջոցով առցանց դիտարկման և փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների ներբեռնման համակարգի ներդրում: |
| 71. | **Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի համայնքների սահմանների ամրացման աշխատանքների իրականացումը** <br><br> 2011 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միջոցների հաշվին հնարավոր է իրականացնել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի 44 համայնքների սահմանների ամրացման աշխատանքները, որը կազմում է 53,4 մլն դրամ: <br> Իրականացման աշխատանքները հետևյալն են` <br> 1) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի 44 համայնքի տեխնիկական նախագծի կազմում և համաձայնեցում անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ. <br> 2) կադաստրային, տեղագրական և համայնքների վարչական սահմանների նկարագրման քարտեզների համադրում և դրա արդյունքում առաջացած անճշտությունների ուղղում. <br> 3) համայնքների վարչական սահմանների փոխադրումը բնության մեջ (դաշտային դիտարկումներ, շրջադարձային և հանգուցային կետերի նշահարում, արտաքին ձևավորում, ուրվագծերի կազմում, սահմանանիշերի հանձնում տեղական ինքնակառավարման մարմիններին). <br> 4) սահմանանիշերի դաշտային դիտարկումների արդյունքների հավասարակշռում, կոորդինատների հաշվարկում, կատալոգի կազմում. |

| | |
|---|---|
| | 5) տեխնիկական հաշվետվության կազմում:<br>«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով արդեն հաստատվել են հանրապետության բոլոր համայնքների վարչական սահմանների նկարագրերը, սակայն անհրաժեշտ է նաև իրավական ձևակերպում ստացած վարչական սահմանների հանգուցային կետերն ամրացնել բնության մեջ:<br>«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի պահանջների համաձայն` համայնքների և մարզերի սահմանների ամրացումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:<br>Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին 2008-2010 թթ. ընթացքում արդեն իսկ ամրացվել են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Հայաստանի Հանրապետության Արարատի և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզերի համայնքների վարչական սահմանները, ինչը զգալիորեն նվազեցրել է սահմանային վեճերի քանակը, իսկ դրանց առկայության դեպքում շատ արագ համապատասխան լուծումներ են տրվում:<br>Համայնքների վարչական սահմանների ամրացումը թույլ է տալիս համայնքներին ունենալ պատշաճ ձևակերպված և տեղանքում ամրացված վարչական սահմաններ` իրենց կոորդինատներով, որը հնարավորություն կտա ցանկացած պահի ճշտելու ոչնչացված սահմանային տեղը: |
| **ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն** | |
| 72. | **Պետական անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքների և պետական ոչ առևտրային ու այլ կազմակերպություններին պետական անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքների գրանցման ապահովում**<br><br>Պետական գույքի հաշվառման բազայում 01.07.2010 թ. դրությամբ հաշվառվել է 9221227.16 քառ. մետր ընդհանուր մակերեսով, 4358 անվանում անշարժ գույք` որից 744-ը դեռ չունեն սեփականության իրավունքի պետական գրանցում:<br>ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման մեջ 2009 թվականին կատարված փոփոխության արդյունքում հանրակրթական դպրոցների համար սահմանված բացառությունը հանվել է, և ներկայումս իրականացվում է Երևան քաղաքում և մարզերում գտնվող հանրակրթական դպրոցներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված անշարժ գույքի հանձնումը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը: Նշվածը ենթադրում է հանձնման-ընդունման աշխատանքներից հետո կազմակերպությունների հետ ամրացված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրերի կնքում և պայմանագրից բխող գույքային իրավունքների գրանցում: |
| 73. | **Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական շենք, շինությունների տակ գտնվող, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ հողամասերի նկատմամբ գույքային իրավունքների հստակեցում**<br><br>ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով Հայաստանի Հանրապետության 912 համայնքներին իրենց վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը, այդ թվում՝ պետական շենք, շինությունների տակ գտնվող, ինչպես նաև դրանց սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ հողամասերը, անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել են տվյալ համայնքներին: Նշված իրավիճակը շտկելու նպատակով վարչության կողմից ներկայացված համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող շենքերի, շինությունների ցանկերի հիման վրա (3684 անվանում անշարժ գույք) ՀՀ ԿԱ անշարժ գույքի |

| | |
|---|---|
| | կադաստրի պետական կոմիտեի կողմից ներկայումս իրականացվում են աշխատանքներ՝ դրանց կողմից զբաղեցրած հողամասերի պատկանելիությունը ճշգրտելու ուղղությամբ: Նշված աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է այն հողամասերի մասով, որոնց նկատմամբ համայնքային սեփականության իրավունքը գրանցված չէ, փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում, իսկ այն հողամասերի մասով, որոնց նկատմամբ արդեն իսկ գրանցված է համայնքի սեփականության իրավունքը, առաջարկել համայնքներին դրանք հետ նվիրաբերել պետությանը: |
| 74. | **Պետական գույքի հաշվառման բազայի ընդլայնում**<br>Ներկայումս պետական գույքի միասնական հաշվառման բազայում չի հաշվառվում պետական կառավարչական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառված ջրատարներն ու ջրամբարները, համապետական, միջպետական և մարզային նշանակության ճանապարհները և կամուրջները, ինչպես նաև ոչ նյութական ակտիվները: ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու արդյունքում նախատեսվում է պետական գույքի միասնական հաշվառման բազան ընդլայնել, սահմանել պետական մարմինների կողմից ներկայացվող տեղեկանքների նոր ձևեր, համաձայն որոնց կլրացվեն նաև համապատասխան տեղեկատվություններ տվյալ մարմնի հաշվեկշռում հաշվառված ճանապարհների և կամուրջների, ջրատարների և ջրամբարների, ինչպես նաև ոչ նյութական ակտիվների վերաբերյալ: |
| 75. | **Վարչության ենթակայության պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կառավարման արդյունավետության բարձրացում**<br><br>Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի նիստում քննարկվել է «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Կանոնագրքի ընդունման կապակցությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը հանձնարարվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ համատեղ երկամսյա ժամկետում ՀՀ կառավարություն ներկայացնել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կանոնագրքի ներդրման ժամանակացույց: Նշվածը ենթադրում է իրականացնել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում կանոնագրքի ներդրմանն ուղղված լայնածավալ աշխատանք, որն էլ իր հերթին կնպաստի կազմակերպությունների կառավարման արդյունավետության բարձրացմանը: |

| | |
|---|---|
| **ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն** | |
| 76. | **«Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի գործարկումե գերակա խնդրի**<br><br>«Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի գործարկումե գերակա խնդրի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 2001 թ. 1373 բանաձևի ընդունմամբ, համաձայն որի ահաբեկչության դեմ միջազգային պայքարի շրջանակներում պետությունները պետք է ձեռնարկեն արդյունավետ միջոցներ անձը հաստատող փաստաթղթերի և արտասահմանյան անձնագրերի պատրաստման ներպետական մեխանիզմների նկատմամբ հսկողությունն ու վերահսկողությունն ուժեղացնելու, անձը հաստատող փաստաթղթերի կեղծման հնարավորությունը նվազագույնի հասցնելու ուղղությամբ:<br>Ներկայումս ՀՀ-ում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի բացակայության պատճառով երբեմն խոչընդոտվում է ՀՀ քաղաքացիների ազատ տեղաշարժվելու իրավունքի իրացման գործընթացը:<br>Նշված խնդիրները լուծելու համար 2011 թվականին անհրաժեշտ է գործարկել Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգը:<br>«Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի համակարգի գործարկումե գերակա խնդրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել համակարգի շահագործումն իրականացնող ծառայողների ուսուցում:<br>Նշված գերակա խնդրի իրականացման արդյունքում՝<br>1) կնվազի անձը հաստատող փաստաթղթերի կեղծման հավանականությունը.<br>2) հնարավորություն կտրվի պարզեցնելու և ավտոմատացնելու անձի նույնականացման գործընթացը.<br>3) կմեծանա «անցանկալիե անձանց հայտնաբերման հավանականությունը.<br>4) ՀՀ քաղաքացիները հնարավորություն կունենան Եվրամիության անդամ պետություններ մուտքի վիզաներ ստանալ պարզեցված ընթացակարգով: |
| 77. | **«ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի ներդրումե գերակա խնդրի**<br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի ներդրումն անհրաժեշտ է իրավախախտումների, հանցագործությունների կանխարգելման, բացահայտման ուղղությամբ տարվող աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու և կատարելագործելու համար:<br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Երևան քաղաքում փորձ է արվում ներդնել թաղային (համայնքային) ոստիկանության մոդելը:<br>**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում ներդնել թաղային (համայնքային) ոստիկանության մոդելը, ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային բաժինների կառուցվածքում ստեղծել ոստիկանության հենակետեր: |

| | |
|---|---|
| | **2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի ներդնումը ենթադրում է միջազգային ոստիկանական կառույցների առաջավոր փորձի ուսումնասիրում և կիրառում:<br><br>**3. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունում թաղային (համայնքային) ոստիկանության մոդելի ներդնումը կնպաստի իրավախախտումների և հանցագործությունների կանխարգելմանն ու բացահայտմանն ուղղված գործողությունների արդյունավետության բարձրացմանը: |
| 78. | **«Երևան քաղաքի հասարակական կարգի պահպանության ծառայության կատարելագործումե**<br>**գերակա խնդրի**<br>**1. Գերակա խնդրի անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Երևան քաղաքի հասարակական կարգի պահպանության ծառայության կատարելագործումը պայմանավորված է հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, հասարակական վայրերում հանցագործությունների, վարչական իրավախախտումների հայտնաբերման, կանխման, խափանման և բացահայտման նպատակով կիրառվող առավել կատարելագործված մարտավարական հնարքներ և տեխնիկական միջոցներ ներդնելու անհրաժեշտությամբ:<br><br>**1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**<br>Ներկայումս Երևան քաղաքի հասարակական կարգի պահպանության ծառայությունը հագեցած չէ ժամանակակից տեխնիկական միջոցներով, հանդերձանքով, ծառայությունը հիմնականում իրականացվում է շարժական վերակարգերի միջոցով, բացի դրանից՝ Երևան քաղաքի հասարակական վայրերում տեղադրված չեն տեսադիտման սարքավորումներ, ինչը զգալիորեն նվազեցնում է հանցագործությունների և վարչական իրավախախտումների կանխարգելման արդյունավետությունը:<br>**1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**<br>Առաջարկվում է կատարելագործել Երևան քաղաքի հասարակական կարգի պահպանության ծառայությունը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>Երևան քաղաքի հասարակական կարգի պահպանության ծառայության կատարելագործումը ենթադրում է Երևան քաղաքի հասարակական վայրերում տեսադիտման սարքավորումներ տեղադրում, ոստիկանության Երևան քաղաքի վարչության կազմում ոստիկանության ուժերի և միջոցների օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծում, առանց տրանսպորտային միջոցների իրականացվող ծառայության կրճատում, պարեկապահակետային ծառայությանն անհրաժեշտ հանդերձավորումով, հատուկ միջոցներով և զենքով ապահովում:<br>**3. Գերակա խնդրի իրականացման դեպքում ակնկալվող արդյունքը**<br>«Երևան քաղաքի հասարակական կարգի պահպանության ծառայության կատարելագործումե գերական խնդրի իրականացումը կհանգեցնի հանցագործությունների և վարչական իրավախախտումների կանխարգելման, հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների արդյունավետության բարձրացմանը: |

| | |
|---|---|
| 79. | **«Երևան քաղաքում և հանրապետության մյուս խոշոր քաղաքներում, ինչպես նաև մայրուղիներում արագության վերահսկման ավտոմատ համակարգի ներդնումե գերակա խնդրի**<br><br>Երևան քաղաքում և հանրապետության մյուս խոշոր քաղաքներում, ինչպես նաև մայրուղիներում արագության վերահսկման ավտոմատ համակարգի ներդնումը պայմանավորված է ճանապարհային երթևեկության կանոնների խախտումներ առավել օպերատիվ հայտնաբերելու, նախականխելու և օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությամբ:<br>Ներկայումս առավել ծանրաբեռնված երթևեկություն ունեցող վայրերում, մասնավորապես, Երևան քաղաքում և հանրապետության մյուս խոշոր քաղաքներում, ինչպես նաև մայրուղիներում տեղադրված չեն արագության վերահսկման ավտոմատ համակարգեր, ինչը զգալիորեն նվազեցնում է ճանապարհային երթևեկության կանոնների խախտումները հայտնաբերելու արդյունավետությունը:<br>Երևան քաղաքում և հանրապետության մյուս խոշոր քաղաքներում, ինչպես նաև մայրուղիներում առաջարկվում է ներդնել արագության վերահսկման ավտոմատ համակարգ:<br>Երևան քաղաքում և հանրապետության մյուս խոշոր քաղաքներում, ինչպես նաև մայրուղիներում արագության վերահսկման ավտոմատ համակարգի ներդնումը ենթադրում է համապատասխան տեխնիկական միջոցների ձեռքբերում և տեղադրում:<br>Երևան քաղաքում և հանրապետության մյուս խոշոր քաղաքներում, ինչպես նաև մայրուղիներում, արագության վերահսկման ավտոմատ համակարգ ներդնելու արդյունքում ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների հայտնաբերումը, նախականխումը և օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների ձեռնարկումը կլինեն առավել օպերատիվ և արդյունավետ: |
| 80. | **«Վարորդական վկայական ստանալու գործնական և տեսական քննության պայմանների բարելավումե գերակա խնդրի**<br><br>«Վարորդական վկայական ստանալու գործնական և տեսական քննության պայմանների բարելավումե գերակա խնդրի իրականացման անհրաժեշտությունը պայմանավորված է նշված գործընթացը ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:<br>Ներկայումս ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը երևան քաղաքաում չունի քննական ավտոդրոմ, ինչը բազմաթիվ խոչընդոտներ է առաջացնում վարորդական վկայական ստանալու գործնական և տեսական քննությունների կազմակերպման գործընթացներում:<br>Նշված գերակա խնդրի շրջանակներում նախատեսվում է Երևան քաղաքում կառուցել ժամանակակից պահանջներին բավարարող քննական ավտոդրոմ, ինչպես նաև  վարորդական վկայականներ տալու աշխատանքները կազմակերպել մեկ ստորաբաժանման միջոցով:<br>«Վարորդական վկայական ստանալու գործնական և տեսական քննության պայմանների բարելավումե գերակա խնդրի շրջանակներում նախատեսվում է Երևան քաղաքում կառուցել ժամանակակից պահանջները բավարարող քննական ավտոդրոմ, ինչպես նաև  վարորդական վկայականներ տալու աշխատանքները կազմակերպել մեկ ստորաբաժանման միջոցով:<br>Նշված գերակա խնդրի իրականացման արդյունքում վարորդական վկայականներ տալու համար անցկացվող քննությունների անցկացման գործընթացը կհամապատասխանեցվի ժամանակակից պահանջներին: |

| ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե | |
|---|---|
| 81. | **ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի ռազմավարական ծրագրի իրականացման**<br><br>Կոմիտեի ռազմավարական ծրագրի իրականացման անհրաժեշտությունը բխում է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի կարգավորումը, այդ թվում՝ Հայկական ԱԷԿ-ի գործող 2-րդ էներգաբլոկի շահագործման անվտանգության վերահսկողությունը, անվտանգության բարձրացման միջոցառումների լիցենզավորումը, շահագործման նախագծային ժամկետի երկարաձգումը (նախագծային ժամկետն ավարտվում է 2016 թ. հունվարի 5-ին, իսկ նոր բլոկի շահագործման հանձնումը նախատեսվում է 2018 թ.), նոր միջուկային էներգաբլոկի անվտանգության կարգավորումը, ուրանի հանքի ուսումնասիրությունների և հետագա հնարավոր հանքարդյունահանման վերահսկողությունը, շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգը և ռադիոակտիվ թափոնների ու աշխատած միջուկային վառելիքի անվտանգ կառավարումն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) և Եվրոպական միության (ԵՄ) անվտանգության ստանդարտների ու չափանիշների պահանջներին համապատասխան իրականացնելու պահանջից:<br>Ծրագիրը մշակվել է ի կատարումն ՀՀ Նախագահին կից ատոմային էներգետիկայի անվտանգության խորհրդի առաջարկության և ՀՀ նախագահի հանձնարարականի: Այն անցել է փորձաքննություն ԵՄ ֆրանս-գերմանական «Ռիսկաուդիտ ընկերությունում:<br>Ծրագիրն իրականացվելու է հետևյալ ուղղություններով՝<br>• հաշվի առնելով միջազգային փորձը՝ կապված նոր միջուկային էներգաբլոկի կառուցման հետ, կոմիտեն մինչև 2016 թ. պետք համալրվի ևս 25 նոր մասնագետներով, տարեկան 3-5 հոգի՝ կախված նոր բլոկի կառուցման տեմպերից.<br>• կատարելագործել կոմիտեի մասնագիտական կազմի որակավորման գործընթացը, պատրաստել և վերապատրաստել կոմիտեի մասնագետներին՝ համաձայն ԱԷՄԳ-ի և ԵՄ-ի ուղեցույցների պահանջների: Ըստ անհրաժեշտության կատարել կոմիտեի կառուցվածքային փոփոխություններ.<br>• կատարելագործել ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի օրենսդրությունը («Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը և այլ համապատասխան օրենքներ, ինչպես նաև անվտանգության նորմեր, կանոններ, պահանջներ, կարգեր, ուղեցույցներ և այլն), համաձայն ԱԷՄԳ-ի, ԵՄ-ի ստանդարտների և չափանիշների պահանջների և զարգացած երկրների փորձի ու մոտեցումների.<br>• ուժեղացնել անվտանգության վերլուծության, գնահատման կարողությունները և կատարելագործել տեսչական ստուգումների պրակտիկան.<br>• կատարելագործել կոմիտեի կառավարման որակը՝ համաձայն միջազգային ստանդարտների պահանջների.<br>• կատարելագործել կոմիտեի Տեխնիկական աջակցության կազմակերպության՝ «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի գործունեությունը:<br>Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետությունում ատոմային էներգիայի բնագավառի անվտանգության կարգավորումն իրականացնել ԱԷՄԳ-ի և ԵՄ-ի անվտանգության ժամանակակից ստանդարտների և չափանիշների պահանջներին համապատասխան: |

| ՀՀ կառավարության առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն | |
|---|---|
| 82. | **Ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարձրացման, ընթացակարգերի պարզեցման և նորագույն տեխնոլոգիաների կիրառման նպատակով «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրի շահագործումը**<br><br>1. Ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարձրացման, ընթացակարգերի պարզեցման և նորագույն տեխնոլոգիաների կիրառման նպատակով «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրի շահագործումը նպատակ ունի բարելավելու օդանավակայանի ամբողջ ենթակառուցվածքը, մեծացնելու օդանավակայանի թողունակությունը՝ ըստ ուղևորահոսքի աճի, և բարելավելու անվտանգության ու ծառայությունների մատուցման չափանիշները: Որպես առաջնահերթ խնդիր է անվտանգության առկա չափանիշները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելը: Նոր ուղևորային համալիրի շահագործումը միտված է նաև օդանավակայանային ընթացակարգերի պարզեցմանն ու նոր տեխնոլոգիաների:<br>Քաղաքացիական ավիացիայի համար գերակա խնդիր է նորագույն տեխնոլոգիաներով արդիականացված, ուղևորափոխադրումների սպասարկման որակի պատշաճ ապահովման և ընթացակարգերի պարզեցման նպատակով «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրի շահագործումը:<br>1.1. Ներկայիս համալիրը շահագործման է հանձնվել որպես ներքին օդանավակայան և ներկայիս ուղևորահոսքի պարագայում ուղևորների սպասարկման պատշաճ մակարդակի ապահովման, ինչպես նաև միգրացիոն, մաքսային և այլ ընթացակարգային գործառույթներ իրականացնելու ժամանակ շենքային պայմանները չեն բավարարում և սահմանափակում են օդանավակայանի թողունակությունը:<br>1.2. Ուղևորների սպասարկման և ավիացիոն անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով նոր ուղևորային համալիրում կներդրվեն և կկիրառվեն ուղևորների հաշվառմանն ու զննմանը, ինչպես նաև ընթացակարգերի պարզեցմանը միտված միջազգային չափանիշներին համապատասխանող ժամանակակից տեխնոլոգիաներ և սարքավորումներ, կբարելավվի ուղևորների սպասարկման շենքային պայմանները, կմեծացնի օդանավակայանի թողունակությունը:<br>2. Կարգավորման առարկա է հանդիսանում ուղևորների սպասարկման և ավիացիոն անվտանգության մակարդակի բարձրացումը և համապատասխանեցումը միջազգային չափանիշներին:<br>3. Նորագույն տեխնոլոգիաներով արդիականացված, ուղևորափոխադրումների սպասարկման որակի պատշաճ ապահովման և ընթացա-կարգերի պարզեցման, ինչպես նաև ուղևորահոսքերի համապատասխան թողունակության ապահովման նպատակով կշահագործվի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրը: |
| 83. | **Օդային հաղորդակցությունների մասին միջկառավարական համաձայնագրերի ցանկի ընդլայնում**<br><br>Նպատակն է իրավական հիմքի ապահովումը Հայաստան-Քուվեյթ և Հայաստան-Սերբիա կանոնավոր օդային հաղորդակցությունների ձևավորման և շահագործման համար: Անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ 2009 թվականի նոյեմբերի 3-4-ը Քուվեյթի Պետություն կատարած պաշտոնական այցի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունից (Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 3-ի N 02/12.3/8903-09 հանձնարարական) և Սերբիայի Հանրապետության Նախագահի՝ 2009 թվականի հուլիսի 27-28-ը Հայաստանի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունից |

| | |
|---|---|
| | (Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի հոկտեմբերի 15-ի N 02/12.9/6842-09 հանձնարարական):<br>Ներկայումս նշված պետությունների հետ օդային հաղորդակցությունների մասին միջկառավարական համաձայնագրերի բացակայության պատճառով հնարավոր չէ կանոնավոր հիմունքով թռիչքների շահագործումը կողմերի ավիաընկերությունների կողմից:<br>2010 թվականի հունիսի 29-ին Մոնտեգո Բեյ քաղաքում փոխհամաձայնեցվել և նախաստորագրվել է Քուվեյթի Պետության հետ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագիրը, որը ներկայումս «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներպետական ընթացակարգերի ավարտման փուլում է:<br>Սերբիայի հետ համապատասխան համաձայնագրի նախագիծը, 2009 թվականի նոյեմբերի 26-ին N 1364-Ա որոշմամբ արժանանալով Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանը, անցել է սահմանված կարգով ներպետական ընթացակարգերը և փոխանցվել սերբական կողմին: 2010 թվականի նոյեմբերի 17-ին սերբական կողմն առաջարկում է նախագծի շուրջ անցկացնել երկկողմանի բանակցություններ կողմերի ավիացիոն իշխանությունների միջև:<br>Հաջորդ քայլերը նպատակաուղղված կլինեն համաձայնագրերի ստորագրման ապահովմանը:<br>Կարգավորման առարկան է օդային հաղորդակցությունների մասին երկկողմանի միջկառավարական համաձայնագրերի կնքումը:<br>Նշված համաձայնագրերի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքներն են լինելու`<br>- կողմերի նշանակված ավիափոխադրողների համար իրավական հիմքի ապահովում կանոնավոր հիմունքով Հայաստանի և Քուվեյթի, Հայաստանի և Սերբիայի միջև թռիչքների իրականացման համար,<br>- երկու պետությունների միջև առևտրատնտեսական և մշակութային կապերի ընդլայնում,<br>- օգտագործելով Հայաստանի Հանրապետության յուրահատուկ աշխարհագրական դիրքը` ուղևորների համար չվերթների հարմար համակցումների ստեղծում, զբոսաշրջության խթանում, Հայաստանի Հանրապետության միջազգային օդանավակայանների առավել արդյունավետ շահագործում` ի հաշիվ նաև տարանցիկ ուղևորահոսքի աճի: |
| 84. | **Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի ներդրմանն առնչվող միջոցառումների իրականացում**<br><br>Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 8-ի նիստի N 1 արձանագրության որոշմամբ հավանություն ստացած` Փոքր ավիացիայի զարգացման հայեցակարգը, ինչպես նաև ելնելով աշխարհագրական դիրքից, տրանսպորտային համակարգի զարգացման և այլ անհրաժեշտ աշխատանքների (բժշկական, արագ արձագանքման, որոնողափրկարարական, գյուղատնտեսական, սիրողական, մարզական) կազմակերպման, ինչպես նաև տնտեսության զարգացման պահանջների բավարարման համար անհրաժեշտություն է առաջացել ձեռնարկել միջոցառումներ` ուղղված Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի ներդրմանը:<br>Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են միայն միջազգային թռիչքներ: Գլխավոր վարչության խնդիրն է ապահովել ներքին օդային տրանսպորտի զարգացման գործընթաց:<br>Ներքին օդային տրանսպորտի զարգացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հիմնական միջոցառումները`<br>- ՀՀ քաղաքացիական ավիացիայի ոլորտում ձեռնարկատիրությամբ զբաղվող անձանց հետ վարել բանակցություններ և նրանց ուշադրությունը հրավիրել ներդրումներ կատարելու և ակտիվորեն մասնակցելու փոքր ավիացիայի զարգացմանը Հայաստանի Հանրապետությունում,<br>- զանգվածային լրատվության միջոցներով նյութերի լուսաբանումը և տարածումը փոքր ավիացիայի զարգացման համար ձեռնարկվող միջոցառումների և առկա խնդիրների մասին: |

| | |
|---|---|
| | Հայաստանի Հանրապետությունում ներքին օդային տրանսպորտի զարգացում:<br>Հայաստանի Հանրապետությունում փոքր ավիացիայի ներդրումն ունի ռազմավարական նշանակություն և հնարավորություն կտա արդյունավետ և ժամանակի մեծ խնայողությամբ կազմակերպել անհրաժեշտ բազմաբնույթ օդային փոխադրումներ (ուղևորային, բեռնային, զբոսաշրջային, գործնական, անձնական), գյուղատնտեսական, վթարափրկարարական, օդային պարեկի և դիտարկումների, հետազոտական, քարտեզագրման և այլ աշխատանքներ: |
| **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե** | |
| 85. | **«Հարկային հսկողության մեխանիզմների արդիականացումն գերակա խնդրի վերաբերյալ**<br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հարկային վարչարարության բարելավման թիրախային ուղղություն է համարվում հարկային հսկողությունը: Հարկային հսկողության արդյունավետության բարձրացման ուղղությամբ ՀՀ կառավարության մոտեցումն այն է, որ անցում կատարվի ավելի պակաս թվով ստուգումների անցկացման քաղաքականության՝ միաժամանակ ապահովելով հարկերը հասանելի չափով հավաքագրելու խնդրի իրագործումը:<br>Գործնականում հարկային մարմնի կողմից հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների հետ վերադարձի և հաշվանցման գործընթացի ընթացակարգի բարդություններով պայմանավորված՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի համար առաջնային է նաև ռիսկերի կառավարման հիման վրա ԱԱՀ-ի գերավճարների հայտերի ուսումնասիրության համակարգի ներդրումը:<br>Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2010 թ. հաստատվել է երրորդ անձանց կողմից հարկային մարմին ներկայացվող տեղեկությունների օրենսդրական հիմքը, ներկայումս խիստ կարևոր են երրորդ անձանցից տեղեկությունների ստացման և հարկային մարմնի տեղեկատվական բազայում ինտեգրման գործընթացների կատարելագործման և կիրառման ընթացակարգերի մշակման հարցերը:<br>1.1. <u>Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները</u><br>Ներկայումս հարկային մարմնի կողմից իրականացվող հսկողական աշխատանքները, որոնք ըստ էության ուղղված են հարկային օրենսդրության խախտման դեպքերի բացահայտմանը, բավարար կերպով հիմնված չեն հարկային օրենսդրության խախտման, հարկ վճարողների կողմից հարկերի վճարումից խուսափման, ռիսկերի բացահայտման ընդհանրացման և կանխարգելման մեխանիզմների վրա: Հատկապես դա վերաբերում է հարկային մարմնի կողմից ստուգումների իրականացման և ստուգման ընթացքում սուբյեկտների ընտրության մոտեցումներին: Նշված հարցերի լուծմանն ուղղված ռիսկերի վրա հիմնված ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրման համար ապահովված են անհրաժեշտ հիմքերը, սակայն համակարգը դեռևս ամբողջապես չի գործում:<br>Հավաքագրվող հարկային եկամուտներում շարունակում են զգալի կշիռ ունենալ հարկային գերավճարները (հատկապես ԱԱՀ-ի գծով): Գերավճարների վերադարձի գործող համակարգն իր բարդությամբ ամբողջությամբ և ժամանակին չի բավարարում իր առջև դրված խնդիրների ապահովումը:<br>Ներկայումս երրորդ անձանցից տեղեկությունների ստացման գործընթացն ամբողջական չէ, չի գործում նաև այդ տեղեկությունների կիրառման հստակ ընթացակարգ:<br>1.2. <u>Առկա խնդիրների առաջարկվող լուծումները</u><br>Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվում է՝ |

| | |
|---|---|
| | • ներդնել ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգ,<br>• ներդնել ռիսկերի կառավարման հիման վրա ԱԱՀ-ի գերավճարների հայտերի ուսումնասիրության համակարգ,<br>• կատարելագործել երրորդ անձանցից տեղեկությունների ստացման և հարկային մարմնի տեղեկատվական բազայում ինտեգրման գործընթացները, մշակել վերջինիս կիրառման ընթացակարգերում,<br>• ներդնել ՀՀ-ում պիտակավորման ենթակա ապրանքների պիտակավորման համակարգ:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br>Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում:<br>Ռիսկերի կառավարման հիման վրա ԱԱՀ-ի գերավճարների հայտերի ուսումնասիրության համակարգի ներդրում:<br>Երրորդ անձանցից տեղեկությունների ստացման և կիրառման ընթացակարգ:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Հարկային վարչարարության բարեփոխումների շրջանակում նախատեսվում է արդիականացնել հարկային հսկողության մեխանիզմները, որի արդյունքում՝<br>• կներդրվի ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգ, որի արդյունքում տնտեսավարող սուբյեկտների համար կապահովվի հարկային հսկողության թափանցիկությունը և կբարձրացնի հարկերը կամավոր վճարելու վարքագիծը,<br>• կգործարկվի ռիսկերի կառավարման հիման վրա ԱԱՀ-ի գերավճարների հայտերի ուսումնասիրության համակարգը, ինչը կբացառի սուբյեկտիվ մոտեցումը հայտերի ուսումնասիրության ժամանակ,<br>• առավել արդյունավետ կօգտագործվեն երրորդ անձանցից ստացվող տեղեկությունները, կիրականացվեն տեղեկությունների ինտեգրումը հարկային մարմնի տեղեկատվական բազային,<br>• կմշակվեն ստուգումների իրականացման ուղեցույցներ՝ էներգետիկայի, կապի և հանքարդյունաբերության ոլորտների համար, որոշ ապրանքներ կհամարվեն դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ: |
| 86. | **«Հարկ վճարողների սպասարկման ծառայությունների որակի բարձրացումե գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Հարկ վճարողների սպասարկման ծառայությունների ընդլայնման շրջանակներում հատկապես կարևորվում է էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնելու համակարգի բարելավմամբ հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ավելացմանն ուղղված աշխատանքների իրականացումը՝ նպաստելով հարկային մարմնի և հարկ վճարողի միջև անմիջական շփման հնարավորինս կրճատմանն ու ժամանակին համահունչ որակյալ ծառայությունների մատուցմանը:<br>Խնդրի կարգավորման մաս կազմող հաջորդ կարևոր բաղադրիչը հարկ վճարողների հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի և նոր սպասարկման կենտրոնի գործարկումն է՝ դրանցում մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմամբ և որակի բարձրացմամբ, սպասարկման միասնական ստանդարտների ներդրմամբ, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվության հրապարակմամբ:<br><br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները |

| | |
|---|---|
| | Ներկայումս հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների ընդլայնման և դրանց որակի բարելավման գործընթացի ամբողջովին ավարտված չլինելով պայմանավորված՝ հարկ վճարողների սպասարկման մակարդակը դեռևս ցածր է: Հարկ վճարողների սպասարկման մակարդակի բարձրացման, հարկ վճարողների ինքնագնահատման համակարգի ներդրման նպատակով աշխատանքներ են իրականացվել հարկ վճարողների սպասարկման կենտրոնների գործարկման ուղղությամբ: Առաջիկա տարում նախատեսվում է ստեղծել նոր սպասարկման կենտրոն՝ ապահովելով հարկ վճարողներին որակյալ ծառայությունների մատուցման առավել լայն շրջանակ: Միաժամանակ՝ հարկային օրենսդրության շրջանակներում հարկ վճարողներին հետաքրքրող հարցերի կարգավորման առնչությամբ որակյալ ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական միջոցների առկայության պայմաններում ընթացիկ տարում նախատեսվում է միջոցառումներ ձեռնարկել հարկ վճարողների հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի գործարկման ուղղությամբ:<br><br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Նշված խնդիրների կարգավորման նպատակով անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման ուղղությամբ, ինչը հնարավորություն կընձեռի՝<br>- բարելավել հաշվետվությունները հարկային մարմին էլեկտրոնային եղանակով ներկայացնելու ամբողջ շղթան՝ շտկելով հաշվետվություններն էլեկտրոնային ներկայացնելու առկա խնդիրները,<br>- ընդլայնել հարկ վճարողներին մատուցվող էլեկտրոնային ծառայությունների շրջանակը, մասնավորապես, ներդնելով հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգ՝ միաժամանակ ապահովելով տեղեկատվության փոխանակման և իրազեկման աշխատանքների շարունակական իրագործումը,<br>- ավտոմատացնել 3-րդ անձանցից ստացվող տեղեկությունները, ինչպես նաև հարկային մարմիններում իրականացվող բոլոր հիմնական գործընթացները:<br>Հարկ վճարողների որակյալ և արագ սպասարկումն ապահովելու նպատակով հանրապետության խոշոր ռեգիոնալ կենտրոններում առաջարկվում է ստեղծել առնվազն 1 սպասարկման կենտրոն՝ դրանցում մատուցվող ծառայությունների շրջանակի շարունակական բարելավմամբ:<br><br>**2. Կարգավորման առարկան**<br><br>Նշված խնդրի կարգավորման շրջանակներում նախատեսվում է՝<br><br>• ավելացնել հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունները՝ էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնելու համակարգի շրջանակի ընդլայնմամբ,<br>• գործարկել հարկ վճարողների նոր սպասարկման կենտրոն՝ վերջինիս կողմից մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմամբ, սպասարկման միասնական ստանդարտների ներդրմամբ, հարկ վճարողներին օժանդակող տեղեկատվության հրապարակմամբ,<br>• աշխատանքներ իրականացնել հարկ վճարողների հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի գործարկման ուղղությամբ,<br>• կատարելագործել հաշվետվական համակարգը, այդ թվում՝ հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի ձևավորման, համակարգի ամբողջական կիրառման միջոցով:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Նախատեսվում է կատարելագործել էլեկտրոնային կառավարման, ինչպես նաև հաշվետվական համակարգերը՝ նպաստելով հարկային |

| | |
|---|---|
| | մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ավելացմանը, հարկ վճարողների կողմից հաշվետվություններ ներկայացնելու առումով հարկային կարգապահության բարձրացմանը: Նշված կատարելագործված համակարգերի գործարկման արդյունքում ակնկալվում է ՊԵԿ-ի գործընթացների ավտոմատացում և ինտեգրում էլեկտրոնային կառավարման այլ համակարգերին:<br>Նոր սպասարկման կենտրոնի և հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի գործարկման արդյունքում հնարավորություն է ընձեռվում բարձրացնել հարկ վճարողների սպասարկման մակարդակը` խթանելով հարկ վճարողների ինքնագնահատման համակարգի զարգացմանը` հնարավորինս նվազեցնելով նաև հարկ վճարողների վարչարարական ծախսերը: |
| 87. | **«ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կառավարման արդյունավետության բարձրացումն գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի հարկային մարմնի կառավարման արդյունավետ համակարգի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է հարկային վարչարարության հիմնախնդիրների արդյունավետ իրականացմամբ` հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետության բարձրացման, էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջական ներդրման ու կատարելագործման միջոցով:<br>1.1. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Հարկային մարմնում լիարժեք չի գործում էլեկտրոնային կառավարման համակարգը, որը հնարավորություն կտար ստեղծել և կառավարել հարկ վճարողների վերաբերյալ տվյալների ժամանակակից բազա` արդյունավետ կիրառելով նաև 3-րդ անձանցից ստացված տվյալները, ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի միասնական տեղեկատվական բազայից օգտվողներին տրամադրվում է սահմանափակ հնարավորություններ վերլուծական աշխատանքներ իրականացնելու համար, ամբողջությամբ նկարագրված չեն ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի բիզնես-պրոցեսները, ինչը հնարավորություն չի տալիս հստակ սահմանելու հարկային մարմնի կողմից իրականացման ենթակա գործընթացների ամբողջ շղթան:<br>Առկա չէ աշխատանքային ռեսուրսների վերաբաշխման գործուն մեթոդաբանություն, միաժամանակ համակարգման կարիք ունեն հարկային ծառայողների վերապատրաստման կարիքների ուսումնասիրության, առաջնայնությունների գնահատման հարցերը:<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ում լիարժեք չի գործում կատարողականի հիման վրա աշխատանքների գնահատման համակարգը` հիմնված առաջխաղացման և խրախուսման, մոտիվացման մեխանիզմների հստակեցման, աշխատանքային ծանրաբեռնվածության մակարդակի գնահատման մեխանիզմների վրա:<br>Միաժամանակ, շարունակվում են արդիական մնալ չկատարված հարկային պարտավորությունների աճի և նոր ապառքների կուտակման ռիսկերի կանխարգելման հարցերը:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները<br>Շարադրված խնդիրների լուծման համար նախատեսվում է ներդնել էլեկտրոնային կառավարման համակարգ, ինչի արդյունքում հնարավորություն կընձեռվի ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի աշխատողներին լիարժեք օգտվել այդ համակարգից` արդյունավետ օգտագործելով աշխատաժամանակը, էլեկտրոնային համակարգ կմուտքագրվեն և արդյունավետորեն կկիրառվեն նաև երրորդ անձանցից ստացվող տեղեկությունները, կավտոմատացվեն նաև հարկային մարմիններում իրականացվող բոլոր հիմնական գործընթացները` սկսած էլեկտրոնային հաշվարկների (հաշվետվությունների) և այլ տեղեկությունների ստացումից, անձնական հաշվի քարտերի վարումից մինչև անհրաժեշտ բոլոր |

| | |
|---|---|
| | վերլուծությունների իրականացումը: Միաժամանակ, նախատեսվում է հարկային օրենսդրությամբ սահմանված գործիքների կիրառման արդյունքում սահմանափակել չկատարված հարկային պարտավորությունների աճը, մասնավորապես, բացառել նախկինում կուտակված ապառքների բացարձակ թվի աճը, ինչպես նաև արգելադրման, բռնագանձման և այլ ինստիտուտների ակտիվացման միջոցով հնարավորինս կանխարգելել ընթացիկ նոր ապառքների բացարձակ մեծության աճը:<br>**2. Կարգավորման առարկան**<br>ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի հարկային մարմնի կառավարման արդյունավետության բարձրացում, տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործում՝ նոր ենթահամակարգերով համալրելով «Հարկատու 3Ե էլեկտրոնային համակարգը:<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Նախատեսվում է ներդնել էլեկտրոնային կառավարման համակարգ, որի արդյունքում կիրականացվեն հարկային համակարգի էլեկտրոնային միասնական տեղեկատվական բազայի վերակառուցում, արդիականացում, ՊԵԿ-ի գործընթացների ավտոմատացում և ինտեգրում էլեկտրոնային կառավարման այլ համակարգերին: «Հարկատու 3Ե էլեկտրոնային համակարգը նոր ենթահամակարգերով համալրելու դեպքում առավել մեծ հնարավորություններ կտրամադրվեն ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի տեղեկատվական բազայից օգտվողներին վերլուծական աշխատանքներ իրականացնելու համար, կընդլայնվեն էլեկտրոնային կառավարման հնարավորությունները, կներդրվի կամերալ ուսումնասիրու-թյունների էլեկտրոնային համակարգը՝ արդյունքում նպաստելով վերլուծական և վարչարարական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, աշխատաժամանակի արդյունավետ ծախսմանը:<br>Միաժամանակ նախատեսվում է կատարելագործել մարդկային ռեսուրսների կառավարման համակարգը, լիարժեք կգործարկվի ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնի ներդրման ծրագիրը, կապահովվի հարկային և մաքսային ծառայողների վերլուծական կարողությունների ուժեղացումը (մասնավորապես, հարկային գերավճարների և չկատարված հարկային պարտավորությունների հաշվառման և վերլուծության մեխանիզմների կատարելագործման տեսանկյունից), ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ-ի բիզնես-գործընթացների կատարելագործումն ու հարկ վճարողների իրազեկվածությունը: |
| 88. | **«Մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատումե գերակա խնդրի վերաբերյալ**<br><br>**1. Անհրաժեշտությունը (նպատակը)**<br>Մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատումը հնարավորություն կտա մաքսային հայտարարագրերը ներկայացնելու էլեկտրոնային եղանակով՝ կիրառելով էլեկտրոնային ստորագրությունը: Բացի դրանից՝ հնարավորություն կստեղծվի մաքսային հայտարարագրով նախատեսված մաքսային վճարները կատարել էլեկտրոնային վճարման համակարգի միջոցով:<br>1.1. Կարգավորվող հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները<br>Ներկայումս գործող ընթացակարգի համաձայն բոլոր մաքսային հայտարարագրերը ներկայացվում են թղթային տարբերակով, ինչպես նաև մաքսավճարների վճարման համար տնտեսավարող սուբյեկտներն ստիպված են լինում այցելել բանկ, այնուհետև վճարման հանձնարարականով ներկայանալ մաքսային մարմին, որը զգալիորեն երկարացնում է ապրանքների մաքսային ձևակերպումների ժամանակահատվածը, այն դեպքում, երբ հնարավորություն կա ամբողջ պրոցեսն իրականացնել տնտեսավարողի գրասենյակից:<br>1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները |

| | |
|---|---|
| | Նախատեսվում է ներդնել էլեկտրոնային ստորագրության և մաքսային հայտարարագրի էլեկտրոնային վճարման, ինչպես նաև մաքսային ձևակերպումների փուլերի էլեկտրոնային եղանակով հաշվառման իրականացման ենթահամակարգ մաքսային հայտարարագրի լրացման «ԹԻ ՎԻ ԷՄԷ ավտոմատացված համակարգում։ Միաժամանակ աշխատանքներ կտարվեն մաքսային մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և հսկողության համակարգի ներդրման ուղղությամբ` նախատեսելով արդիականացնել սահմանային անցման կետերը` համապատասխանեցնելով եվրոպական չափանիշներին։<br>**2. Կարգավորման առարկան**<br>Մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատումը վերաբերում է ֆիզիկական անձանց և տնտեսավարող սուբյեկտների կողմից տեղափոխվող ապրանքների մաքսային ձևակերպումների գործընթացին։<br>**3. Ակնկալվող արդյունքը**<br>Մաքսային ձևակերպումների ժամանակահատվածի կրճատումով նախատեսվում է պարզեցնել մաքսային հայտարարագրման գործընթացը և նվազեցնել մաքսային տեսուչ ԱՏԳ-ի մասնակից շփումը։ |
| 89. | **«Գործարարությամբ զբաղվելըե վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի բարելավում**<br><br>Տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմանը երկրում գործարարության զարգացումն է։ Գործարարությանն առնչվող ընթացակարգերն իրենց պարզությամբ և թափանցիկությամբ դեռևս հեռու են բավարար լինելուց։ Գործարարության զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման պետական քաղաքականությունն ուղղված է առավելագույնս բարենպաստ միջավայրի ստեղծմանը, տնտեսության առավել ազատականացմանը, ազատ մրցակցության խթանմանը, վարչարարական ընթացակարգերի առավելագույնս պարզեցմանը, սպառողների շահերի արդյունավետ պաշտպանությանը։<br>Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է «Հայաստանի գործարար և ներդրումային միջավայրի գերազանցության կենտրոնե համազգային ծրագրի հայեցակարգի և Գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի, ինչպես նաև տեսչական բարեփոխումների շարունակական իրականացումը։<br>Աշխատանքներ կտարվեն «Գործարարությամբ զբաղվելըե դասակարգման համար հիմք հանդիսացող բաղադրիչների բարելավման ուղղությամբ, մասնավորապես, հարկային և մաքսային գործընթացների պարզեցում և թափանցիկության բարձրացում և այլն։<br>Գործարարությամբ զբաղվելու համար Հայաստանը տարածաշրջանային գերազանցության կենտրոն դարձնելու խնդիրը ՀՀ Նախագահի նախընտրական ծրագրի և ՀՀ կառավարության հռչակած համազգային նախագծերից մեկն է, որի հետևողական իրականացումը ՀՀ հեռանկարային զարգացման երաշխիքներից է։ Արդյունքում` ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունը դարձնել տարածաշրջանում գործարար և ներդրումային լավագույն միջավայր ունեցող երկիր, մասնավորապես, բարելավել Հայաստանի դիրքը Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելըե դասակարգման մեջ։ |
| **ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե** | |
| 90. | **Հանրապետության մի շարք քաղաքների և գյուղական բնակավայրերի ջրամատակարարման բարելավում, մատակարարվող խմելու ջրի որակի ապահովում, կայուն և հուսալի ջրամատակարարում, ջրի կորուստների կրճատում,** |

**Սևանա լճի բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում, ինչպես նաև խմելու և ոռոգման ոլորտներում շուրջ 500 կմ ջրագծերի և ջրանցքների վերանորոգման ու կառուցման աշխատանքների իրականացում։**

**Ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացում՝ նախորդ տարվա նկատմամբ առնվազն 1 ժամով (իսկ կառավարման պայմանագրերով նախատեսված լինելու դեպքում՝ պայմանագրերով նախատեսված չափերով), այդ թվում՝ Աբովյան քաղաքում 4 ժամով, Նոյեմբերյանում՝ 5.5 ժամով, Չարենցավանում՝ 6 ժամով, Ազարակում՝ 9 ժամով, Գորիսում՝ 4 ժամով, Արթիկում՝ 6 ժամով, Արտաշատում՝ 4 ժամով, Վանաձորում՝ 2 ժամով, Մարալիկում՝ 15 ժամով, Ախուրյան և Ազատան համայնքներում՝ 10 ժամով, Լեռնապատ, Շահումյան, Դարպաս համայնքներում՝ շուրջօրյա ջրամատակարարման ապահովում։**

**Նոր ներդրումային ծրագրերի համար դոնոր կազմակերպությունների հետ բանակցությունների վարման գերակա խնդրի**

Գերակա խնդրի անհրաժեշտությունը կայանում է հանրապետության մի շարք քաղաքների և գյուղական բնակավայրերի ջրամատակարարման բարելավմանը, մատակարարվող խմելու ջրի որակի ապահովմանը, կայուն և հուսալի ջրամատակարարմանը, ջրի կորուստների կրճատմանը, ջրամատակարարման տևողության աստիճանական ավելացմանը, Սևանա լճի բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների կազմակերպմանը, ինչպես նաև նոր վարկային ծրագրերի ներգրավման ուղղությամբ բանակցությունների վարմանը։

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում նկատելի արդյունքներ են արձանագրվել խմելու ջրի հասանելիության, ջրամատակարարման շարունակականության և անվտանգ ջրամատակարարման առումով։ Ավելացել է կենտրոնացված ջրամատակարարման սպասարկման ընդգրկվածությունը գյուղական բնակավայրերում։

Միաժամանակ պետք է նշել, որ դեռևս կան խնդիրներ մի շարք բնակավայրերի անխափան, հուսալի և անվտանգ ջրամատակարարման գործում։ Ջրամատակարարման և ջրահեռացման սակագներն ինքնածախսածածկող չեն, որոնք խոչընդոտ են հանդիսանում համակարգի կառավարման բարեփոխումների հետագա խորացման ճանապարհին և գործնականում չեն նպաստում մասնավոր ներդրումների ներգրավմանը։

Նշված խնդիրները մասամբ լուծվում են գործող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում։

Առաջարկվող լուծումները հնարավորություն կտան ջրային համակարգերի կառավարման բարեփոխումների հետագա խորացմանը, մասնավոր ներդրումների ներգրավմանը։ Նախատեսվում է բանակցություններ վարել համակարգի կառավարման գործընթացների շարունակման և ընդլայնման ուղղությամբ։

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հետագա բարեփոխումները նպատակ են հետապնդելու բարձրացնելու այդ համակարգերի շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, կրճատելու ջրի կորուստները և բարելավելու ծառայությունների մատուցման որակը։

Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվում է Հայաստանի ամբողջ տարածքում հուսալի և անվտանգ խմելու ջրի մատակարարման հասանելիության ապահովում, բնակավայրերի ջրամատակարարման ներդրումային ծրագրերի մշակում և իրականացում։

Գործող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում կիրականացվի Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կոյուղաջրերի մաքրման կայանների նախագծումը և շինարարական աշխատանքների իրականացում, Գավառ, Մարտունի, Վարդենիս, Սևան և Ջերմուկ քաղաքների կոյուղու ցանցերի և կոլեկտորների վերականգնումը, ինչպես նաև «Արփա-Սևանե թունելների վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել գետերից Սևանա լճի մակարդակի բարձրացման և բնապահպանական կայունության պահպանման նպատակով Սևանա լիճ ջուր տեղափոխվող 48 կմ երկարությամբ «Արփա-Սևանե հիդրոհամակարգային թունելի որոշ

| | |
|---|---|
| | հատվածների վերականգնումը, վերանորոգումը և շինարարությունը: |
| 91. | **Ջրային տնտեսության ոլորտի ընկերությունների կառավարման բարեփոխումների շարունակության գերակա խնդիր**<br><br>Գերակա խնդրի նպատակն է «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունքե ՓԲԸ-ներում մասնավոր կառավարչի միջոցով բարձրացնել ընկերությունների կառավարման արդյունավետությունը:<br>Կառավարչի ծառայություններ իրականացնելու համար միջազգային մրցույթով ընտրվել է Էմ Վի Վի դեկոն Ջի էմ բի էյչ, Էմ Վի Վի Էներջի Էյ Ջի և «Էյ-Ի-Ջի-Սերվիսե ՍՊԸ ընկերությունների կոնսորցիումը, որի հետ ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն 2009 թ. հուլիսի 14-ին ստորագրել է կառավարման պայմանագիր՝ երեք տարի ժամկետով՝ անհրաժեշտության դեպքում ևս մեկ տարով երկարաձգելու հնարավորությամբ: Պայմանագիրը մեկնարկել է 2009 թ. օգոստոսի 1-ից:<br>«Հայջրմուղկոյուղիե ՓԲԸ-ի մասով անհրաժեշտ է կազմակերպել ջրային համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման շարունակման գործընթացը:<br>Միաժամանակ անհրաժեշտ է ամրապնդել ոռոգման համակարգերի մասնակցային կառավարումը, ինչպես նաև ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը:<br>ՀՀ ջրային օրենսգրքի 49-րդ հոդվածով սահմանվում են ջրային համակարգի օգտագործման իրավունքի փոխանցման ձևերը: «Հայջրմուղկոյուղիե ՓԲԸ-ի կողմից սպասարկվող ջրային համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցման ձևի որոշումը և հետագա գործընթացի կազմակերպումը հնարավորություն կտան ապահովելու ջրային համակարգում մասնավոր կազմակերպման շարունակման ապահովումը:<br>«Համայնքային ենթակառուցվածքների II ծրագրիե շրջանակներում գերմանական ֆինանսական համագործակցությունը ֆինանսական միջոցներ է տրամադրել ՀՀ-ում ընտրված տարածաշրջաններում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը վերականգնելու համար, որը ֆինանսավորվում է KfW-ի կողմից և 2 ընտրված տարածաշրջանների՝ Լոռու, Շիրակի ջրամատակարարման և ջրահեռացման վերականգնման աշխատանքների իրականացումը:<br>Առաջարկվող լուծումները հնարավորություն կտան բաժանորդներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, հուսալիության ապահովմանը, ջրամատակարար ընկերությունների ֆինանսական կայունությանը:<br>Միաժամանակ նշված գերակա խնդիրը նպատակաուղղված է ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում իրականացվող բարեփոխումների շարունակմանը, ջրային համակարգերի կառավարման գործում մասնավոր հատվածի հետ համագործակցության խորացմանը և սպառողներին մատուցվող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակի ու արդյունավետության բարձրացմանը:<br>Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հետագա բարեփոխումները նպատակ են հետապնդելու բարձրացնելու այդ համակարգերի օգտագործման հուսալիությունը և արդյունավետությունը, կրճատելու ջրի կորուստները և բարելավելու ծառայությունների որակը:<br>Գերակա խնդրի լուծումը հնարավորություն կտա ապահովելու ջրային համակարգերի արտադրողականության, արդյունավետության և կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների խորացմանը:<br>Ակնկալվում է՝<br>«Հայջրմուղկոյուղիե ՓԲԸ-ի կողմից օգտագործվող ջրային համակարգերի մասնավոր կազմակերպման շարունակման կազմակերպում, սպառողներին մատուցվող ծառայությունների ռիսկի բարձրացում, ջրային համակարգերի կառավարման արդյունավետության բարելավում: |

| | |
|---|---|
| | «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունք» ՓԲԸ-ներում մասնավոր կառավարչի գործունեության միջոցով կառավարման արդյունավետության բարձրացում, սպառողներին մատուցվող ծառայությունների որակի բարելավում: Ոռոգման ոլորտում ակնկալվում է ոռոգման համակարգերի մասնակցային կառավարման ամրապնդում, ինչպես նաև ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում: |
| 92. | **Մարմարիկի ջրամբարի շահագործման հանձնման գերակա խնդրի**<br><br>Գերակա խնդրի անհրաժեշտությունը պայմանավորված է ոռոգման ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացման ու շարունակականության ապահովմամբ:<br>Մարմարիկի ջրամբարի կառուցումն ավարտական փուլում է: Նախատեսվում է ավարտին հասցնել 2011 թվականին, ապահովել Մարմարիկի ջրամբարի շահագործման հանձնումը:<br>Առաջարկվող լուծումները հնարավորություն կտան բարձրացնելու ոռոգման ջրի մատչելիությունը, ինչպես նաև Մարմարիկի ջրամբարում կուտակելու լրացուցիչ ջրաքանակ:<br>Կարգավորման առարկան է Մարմարիկի ջրամբարի միջոցով ոռոգման համակարգերի իշխման տակ գտնվող հողերը ոռոգելու համար անհրաժեշտ ջրաքանակի ապահովումը:<br>Արդյունքում հնարավորություն է ստեղծվում նոր կառուցված ջրամբարում կուտակելու լրացուցիչ ջրաքանակ` ջրօգտագործողներին շարունակական ջրաքանակով ապահովելու նպատակով: |
| **Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով** | |
| 93. | **Մրցակցային միջավայրի բարելավում**<br><br>Համապատասխան ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն առաջարկում է իրականացնել կենտրոնացվածության բարձր աստիճան ունեցող ապրանքային շուկաներում ինստիտուցիոնալ ուսումնասիրություն և այդ շուկաներում օրենսդրության պահանջների հնարավոր խախտումների բացահայտում: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Դ. ՍԱՐԳՍՅԱՆ